

«ՀԱՅՐԵՆԻՔ» մատենաշար, թիվ 22

ՎԱՐԴԱՆ ԳԵՈՐԳԵԱՆ

**ԼԵՌՆԱՐԱՅԱՍՏԱՆԻ  
ՋԵՐՈՍԱՄԱՐՏԸ  
(1919-1921)**

Հրատարակիչ՝ «ՀԱՅՐԵՆԻՔ» ակումբ

Երեւան – 2010

## Տպագրվում է Հայաստանի Հանրապետական կուսակցության աջակցությամբ

Խմբագիր՝ Ավագ Հարությունյան

Վարդան Գեորգեան, Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921): Հրատարակիչ «Հայրենիք» ակումբ: Երևան, 2010, 169 էջ:

1923թ. Բուխարեստում, «Ջահակիր» տպարանում, առաջին անգամ հրատարակված այս գիրքը Գ. Նժդեհի առաջնորդած Լեռնահայաստանի հերոսամարտի պատմության վերաբերյալ առաջնակարգ սկզբնաղբյուր է: Մանավանդ, պետք է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ գրքում ներկայացվող փաստաթղթերը հեղինակին տրամադրել է հենց Գ. Նժդեհը:

Այդ առումով, ներկա գիրքը պատմաբաններին անսպառ նյութ է տրամադրում: Միաժամանակ, ինչն ավելի կարևոր է, Լեռնահայաստանի հերոսամարտն անվիճելիորեն ապացույց է այն գաղափարի, որ Հայրենիքի ազատությունը նվաճվում է զինյալ պայքարով, Հայության հերոսական ներուժի հավաքական դրսևորմամբ:

«Հայրենիք» ակումբ

*«Քանի դեռ սուրն է կառավարում աշխարհը,  
ձիթենիի ճիւղով գինւած լինելը և ծիծաղելի է,  
և անմտութիւն»:*

**ԶՕՐԱՎԱՐ ՆԺԴԵՅ**

*«... Ողջո՞յն ու յարգանք քեզ ...*

*Ողջոյն, բովանդակ Ձանգեգուրի հայութեան խուստուփեան  
և Ալանգեագի, Ղափանի ու Արևիքի արթուն հսկիչ ու պահապան,  
մեր այս լեռնոտ երկրի ազատութիւնը մարմնացնող Զօրավար  
Սպարապետ Նժդեհին:*

*Դու, որ քեզ շրջապատող բարձրաբերձ ժայռերին յատուկ  
հպարտութեամբ և վեհութեամբ միշտ բարձր պահեցիր ազատ-  
ութեան և ճշմարտութեան վեհ դրօշակը և այդ կարմիր ու պայծառ  
դրօշակի և սիւնների տակ փշրեցիր օտարամուտ թշնամի  
ոհմակներին ...*

*Ողջո՞յն ու մեծարանք քեզ ...»*

«Ազատ Սիւնիք», թիւ 5, 20 Մարտ 1921

## ԻՆՔՆԱՎԱՐ ՍԻՆՏԵԶԻ ՔԱՅԼԵՐԳԸ

Մեր սարեր անառիկ և հպարտ,  
Մեր որդիք կորովի և անպարտ,  
Խոր ձորեր Սիւնիքի ահաւոր,  
Շիրին են թշնամու դարաւոր:

Թշնամին հազարով միշտ մեր դէմ,  
Կուրծք կրծքի մենք կանգնած նրա դէմ,  
Չենք դողում, չենք սարսում մենք մահից,  
Մեր մահը՝ թեթև թիթեռի թևից:

Ինքնավար Սիւնիքին ցանկանք,  
Միշտ լինել թշնամու սպառնանք,  
Շատ ապրի մեզ համար այսուհետ,  
Քաջ հերոս Նժդեհ սպարապետ:

*Տ[իզրան] Ս[ազանդարեան]*

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Վերջին տարիներու ազգային մեր կեանքը իր լայն գիծերուն մէջ տառապանքի և ըմբոստութեան, կամաւոր պարտութեան և հերոսական պայքարներու շարք մը եղաւ:

Համաշխարհային պատերազմի հետևանքով մեր ցեղին կրած աննախընթաց կորուստներուն և անոր գոյութեան բերուած եղերական սպանդին ի տես՝ մեր մէջ զուգահեռաբար խորացան երկու ուրոյն տեսակետներ, որոնք շեշտուած ու տիրականօրէն կը վարեն մեր քաղաքական միտքը: Ընդհանուր լքումի ու վիատութեան մէջ, շատեր, անոնցմէ նոյնիսկ, որոնք դեռ երէկ կարմիր ուղիներու ուխտաւորներ էին, վերադարձ մը կը փորձեն դէպի կրաւորականութիւն: Դէպքերը սակայն պատմութեան ու հասնող սերունդին կը կտակեն ուրիշ ճշմարտութիւններ:

- Կրաւորականութեան մէջ ցեղը կորսնցուց այն՝ ինչ որ շահեցաւ, երբ իր գոյութեան նախապայման ընդունեցաւ արիւնի ու զէնքի ճամբան:

ժամանակաշրջանն է ալ ժողովուրդներու և քաղաքացիներու ազա՞նտ ապրելու իրաւունքներուն ու պահանջներուն:

Ու Կրոպոտկինի ձայնը դեռ վաղն ալ պիտի ունենայ իր ոյժը. *«Ազատութիւնը չեն մուրար»:*

Յոդ պէտք է փնտռել բովանդակ արժէքը 1919-1921 տարիներու հերոսական կռիւներուն, զոր մղեց Լեռնահայաստանի քաջարի ժողովուրդը, առանձինն՝ ռազմական ու տնտեսական ամենադժնդակ պայմաններու մէջ, կառչած իր անկախութեան գաղափարին, կառչած իր անառիկ լեռներուն ու կողք կողքի՝ իր երիտասարդ և անձնուէր հրամանատարին՝ Սժդեհի հետ<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Ջօրավար Գարեգին Սժդեհ ծնած է 1888 Յունվ. 1-ին Նախիջևան գաւառի Կզնութ գիւղը: Իր միջնակարգ կրթութիւնը աւարտած է ռուսական գիմնազիոնի մէջ, որմէ յետոյ հետևած է իրաւաբանութեան: Դեռ ուսանող՝ կը տարուի յեղափոխական մտքերով, կ'ընդհատէ ուսումը և 1907-ին կ'անցնի Պուլկարիա ու կը հետևի Սօֆիայի գիւնուորական վարժարանի դասընթացներուն: 1908-ին որպէս սպայ կը գործէ Պարսկաստանի մէջ: 1909-ին կը վերադառնայ Անդրկովկաս, ուր իբրև յեղափոխական կը ձերբակալուի և կը նետուի բանտ: Երեք տարի բանտարկուելէ վերջ կ'աքսորուի Ռուսաստանի սահմաններէն դուրս: 1912-ին Սժդեհ Անդրանիկի հետ կը մասնակցի Պալքանեան պատերազմի իբրև Հայկական Լեգէոնի հրամանատար: Այդ թուականէն ան

Արդարև տխուր և ողբերգական պիտի ըլլար ճակատագիրը վաղուայ մեր սերունդին, եթէ վերջին տարիներու մեր կրաւորական մեծ սպանդին մօտ չունենայինք ընդվզումի մէկ քանի սրտապնդիչ ու լուսաւոր գիծեր՝ ցեղին մարտական ոգին ու անոր անկախութեան խորունկ ձգտումները յայտնակերտող:

Լեռնահայաստանի հերոսամարտը մէկն է այդ լուսաւոր գիծերէն: Անոր կը պարտինք ո՛չ միայն մեր մտաւորականութեան ու զօրքին մէկ մասին փրկութիւնը, այլև պատիւը հայ զէնքին:

Եթէ ազգային պատմա-հասարակական արժէքներու գնահատութեան գործին մէջ մեր յամեցումը այլապէս վիատեցուցիչ դարձած է ա՛յլ, օտարներ սակայն, անգամ հակառակորդներ, խոստովանած են Լեռնահայաստանի մղած պայքարին ռազմական արժէքն ու տարողութիւնը:

*«Մոսկւայի թերթերը գտնում են,- կը գրէր Վրացեան 1921 Յունիսին,- որ Լեռնահայաստանի կռիւները հերոսական են և զարմանք պատճառող»:* Իսկ *«Ատրբէջանի զօրքերէն շատերը, որոնք մասնակցած էին Չանգեզուրի և Ղարաբաղի կռիւներուն, մեծ պատկառանքով կը յիշէին Աժդահա փաշային՝ Նժդեհին: Անոնք անկեղծօրէն կը խոստովանէին իրենց պարտութիւնն ու փախուստը»*<sup>1</sup>:

Լեռնահայաստանի նորագոյն պատմութեան մէջ զօրավար Նժդեհը կը մնայ եզական դէմք մը: Ան եղաւ կեդրոնաձիգ այն ոյժը, որ իր ռազմական և կազմակերպչական տաղանդին շնորհիւ կրցաւ առաջին իսկ օրէն իր վրայ հրաւիրել ժողովուրդին ուշադրու-

---

կ'սկսի ցոյց տալ ռազմական բացառիկ կարողութիւններ, արժանանալով նոյնիսկ օտարներու գնահատութեան: 1914-ի համաշխարհային պատերազմի առաջին իսկ օրերուն Նժդեհ կը վերադառնայ Կովկաս և կը մասնակցի հայ կամաւորական շարժումին, ստանձնելով երկրորդ հայկական գումարտակի փոխ-հրամանատարութիւնը: 1918-ին վճռական և գնահատելի մասնակցութիւն կը բերէ Ղարաքիլիսէի կռիւներուն, ղեկավարելով հայ-եզիտական խառն զօրախումբ մը: 1919-ի օգոստոսին ՀՀԴ Բիւրօի հրաւերով կ'անցնի Չանգեզուր, ուր կը մնայ մինչև 1921 Յունիսի կէսը, ղեկավարելով ու կազմակերպելով հերոսական շարք մը կռիւներ: 1920-ի Օգոստոս 25-ին Կաւարտի մէջ կը հռչակուի Սիւնեաց սպարապետ: 1921-ին կ'ընտրուի Լեռնահայաստանի դիկտաթոր: Նոյն տարուայ Մայիսին կ'ստանձնէ ՀՀ զինուորական նախարարի և սպարապետի պաշտօնները, զոր կը վարէ մինչև Լեռնաշխարհի խորհրդայնացումը:

<sup>1</sup> «Սիւնիք» թերթ, N. 8, 24 Մայիս 1921, Գորիս:

թիւնը, որուն ազատութեան համար երկու տարի շարունակ անոր հետ կողք կողքի կռուեցաւ ու զայն առաջնորդեց փառահեղ յաղթութիւններու:

Ինք էր, որ պարտութեան մատնեց Մեծամասնական ԺԱ. զօրաբանակի հեծելազօրաց հրամանատար Կուրոչկինը, որ Ռուսիոյ մէջ հռչակ էր հանած իբրև անպարտելի ու Դենիկինի, Գուլչակի և Վրանգէլի բանակները ջարդող:

Ու հայ աշուղը երգեց իրեն համար.

*«Սիւնիքը մոռցած նախնեաց քաջերին,  
Ուժըդ է երգում, տաղանդ երկնային,  
Եւ Վրանգէլը և քաջ Դենիկին,  
Նախանձում են քո անլուր փառքին»:*

Ինք եղաւ, որ կռուեցաւ Պրենս Ղաջարներու և Խալիլ փաշաներու դէմ, յաղթեց ու կոտորեց անոնց բանակները:

Ինք եղաւ նոյնպէս, որ Հայկական Լեռնաշխարհի երեսէն սրբեց երկու հարիւրի մօտ թշնամի գիւղեր, որոնք տարիներէ ի վեր դամոկլեան սուրի նման կախուած էին Սիւնիքի գլխուն<sup>1</sup>:

Ոչ այնքան նիւթական, որքան հոգեկան ազդակներ, վերացական միստիկ ապրումներ կը խանդավառեն ազգերը:

---

<sup>1</sup> Սիւնիքի ժամանակակից դէպքերու մէջ իր հեղինակաւոր դերը ունեցած է նաև ողբացեալ Աշոտ Մելիք Մուսեան, որ եղած է գաղափարի և սրտի մտերիմ ընկերը Ջօրավար Նժդեհին, որուն օրագրէն կ'արտագրենք անոր յիշատակին նուիրուած հետևեալ տողերը.

«Առաքեալ և դերվիշ - ահա՛ մեր կրտսեր Գողթանցին՝ մէկն այն եզակի նահատակներից, որոնք ամենից քիչ՝ իրենց կուսակցութեան, ամենից շատ՝ իրենց ազգին, ամբողջապէս պատմութեան կը պատկանին: Մի կրօն ունէր՝ ժողովրդասիրութիւնը, մի Աստուած՝ հայ ժողովուրդը: Նա ազատ էր կրկնելու Մեծ Լեհացու խօսքերը՝ ես և հայրենիքս նոյնն ենք: Հին Հռովմէացի էր նա, ծնւած մեր դարում՝ Հայաստանի մէջ: Անձնւիրութիւն, անշահասիրութիւն և արհիւթիւն - ահա՛ առաքինութիւններ, որոնք աւելի ևս արժէքաւորում էին երկրպագութեան հասնող նրա բարձր ազգասիրութիւնը, և աւելի քան հմայիչ դարձնում նրա զօրեղ անհատականութիւնը: Հնարաւորութիւն ունէր հարուստ լինելու, բայց ապրում էր աղքատ: Թոյլերի հետ հեզ էր, ուժեղների հետ՝ հպարտ. գիտէր խարազանել և անխնայ էր: Սիրում էր և գիտէր անգիտանալ վտանգը: Միշտ շարժման մէջ, ժողովրդի հետ էր միշտ: Եւ մարդս, եթէ հրէշ չէր, չէր կարող տեսնել ժողովրդի այդ վշտակրին և չմատնանշել հիացմունքով՝ Ահա մարդը»:

«Անցնիւթական ուժեր իրական ղեկավարներն են կռիւներու» (Լը Պոն): Խոյանքներու հզօր արտայայտութիւնը, զոր երևան կը բերէ ժողովուրդ մը իր գոյութեան պայքարին մէջ, հետևանք է իր հոգեկան ապրումներուն, որոնց ներշնչումն է ու պիտի մնայ՝ ընդմիշտ գաղափարական, և կապուած որքան ցեղին հոգիին մէջ թագուն ուժի նոր ակերուն, նոյնքան և աւելի՝ փաստօրէն մեզի կտակուած նախնիքներու սխրագործութիւններու և քաջագործութիւններու հետ: Հայկական Լեռնաշխարհը հարուստ է դէմքերու և դէպքերու այդ պատմական օրինակներով:

ԺԸ. դարու Դաւիթ-Քէզերու, Մխիթար սպարապետներու, Բայինդուրներու, Թորոս Իշխաններու, Թիւլի Արզումաններու, Տէր Աւետիքներու և Դալի Մահրասաներու հերոսական յաղթութիւններով հարուստ Սիւնիքն ու Ղարաբաղը չէին կրնար իրենց ճգնաժամային օրերուն մոռնալ փաղանգը հայ ազատագրական անդրամիկ շարժումին՝ ընդհակառակը անոնց գործերը ներշնչումի և խանդավառութեան մեծագոյն օրինակը կը մնար իրենց համար:

Դաւիթ-Քէզեան Ուխտը, զոր կը հիմնէր Նժդեհ գերագանց գիտակցութեամբ մը 1920 Օգոստոս ամսուն, ոգևորումի անսպառ աղբիւր կը դառնար բովանդակ Լեռնահայաստանի ժողովուրդին համար:

Լեռնահայաստան, երբ դեռ լքուած ու մեն մինակ կը տքար, երբ օրհասականի իր աղետարշ ճիչերուն խուլ կը ձևանար իր շրջապատը, երբ արտաքին օգնութեան յոյսը իսպառ մեռած էր ալ իրեն համար, երբ խօսքերէ և պղատոնական համակրանքէ զատ դրական ոչինչ կը բերէին իրեն անգամ Երևանն ու Պարսկաստանը, անգամ Անդրկովկասն ու Արտասահմանը, ան՝ իր հրամանատարին հետ ցոյց տուաւ աշխարհին, որ գիտէ արժեցնել հայ զէնքին ուժը, գիտէ նախընտրել պատուաւոր մահը ստրուկի կեանքէն:

Այդ ոգին էր, որ 1920 Օգոստոս 7-ին Գորիսի ձորին մէջ վիրաւորուելէ ետք, Նժդեհը կը կապէր Սիւնիքի հողին, տեղացի ժողովուրդին հետ մեռնելու պատրաստ:

Լեռնահայաստանի հերոսամարտը տարերային գուպար մըն էր, զոր մղեց արնաքամ ժողովուրդը անոնց դէմ, որոնք Հայաստանի դռներուն կը մօտենային հայ մտաւորականութեան, հայ մարտիկին, մէկ խօսքով հայ ցեղին բնաջնջման դիւային ծրագիրներով:

Ու Լեռնաշխարհի ամբողջ հայութիւնը, մեծ ու փոքրիկ, այր թէ կին, անխտիր, կուռ բանակի մը վերածուած՝ կը ծառանար թշնամիին դէմ զանգուածօրէն:



Ասոր համար մեն միմակ իր մղած կռիւները կրկնօրէն կը գեղեցկացնեն զինք, բարձրացնելով արժէքը իր մարտունակ ու ռազմավար կորովին:

Հոն, սովորական, դասականացած ռազմավարութենէ բարձր ոյժ մը կ'երաշխաւորէր յաղթութիւնը հայ վաշտերուն, որոնք կռուի սկսելէ առաջ արդեն ապահով էին իրենց յաղթութեան: Ասկէ ահա այն ջերմ տրամադրութիւնը, որ տեսակ մը նուիրական ուխտագնացութեան կը վերածէր զինուորներու ռազմերթը:

Այդ հոգեբանութիւնը գեղեցկօրէն կը բացատրեն զօրավար Նժդեհի մեզի ուղղած իր հետևեալ գրութիւնները.

*«... Բարեկամս,*

*Կռւի բախտը վճռում է թշնամի կողմերից մէկի բարոյական հաւասարակշռութեան խախտումը: Սրան հետևում է անխուսափելի խուճապը: Իսկ այդ վերջինին՝ նիւթական պարտութիւնը:*

*Անհաւասար կռիւը չէ կործանում այս կամ այն բանակը, այլ խուճապը, որին մատուած կողմը առնւազն եռապատկում է իր կորուստը, երբեմն էլ՝ ոչնչանում իսպառ:*

*Սպանւածների, վիրաւորների, գերւածների, ինչպէս և պատերազմական ակաւորի քանակը եղել է և կը մնայ պարտութեան երկրորդական էլեմենտը:*

*Էականը - դա այն բարոյական ազդեցութիւնն է, որը ունենում է կռուող կողմերից մէկը միւսի վրայ: Ուրեմն, յաղթելու համար պէտք է բարոյապէս ազդել գիտենալ:*

*Իմ մշակած և գործադրած տակտիկական գրեթէ միշտ էլ յաջողում էր որևէ տարերային անակնկալով խախտել թշնամու հոգեբանական հաւասարակշռութիւնը, ապահովելով իմ մարտական յաջողութիւնը:*

## ԶՕՐԱԿՈՐ ԽՕՍՔԸ

*Գուցէ և միակ տեղն է կռւադաշտը, ուր ամէն բանից աւելի և ամէն բանից սուր է զգացում բարոյապէս ազդելու՝ մտքերի, սրտերի և կամքերի վրայ իշխելու կարիքը:*

*Կարողանալ բանականօրէն իշխել հոգիների վրայ - ահա՛ ղեկավարի ամենամեծ կարողութիւնը, առանց որին զօրանոցն ու մարզադաշտը զինուորներից յաղթանակներ ստեղծելու կարողութիւնից շա՛տ են հեռու:*

*Այն, ինչ որ յաճախ դժարանում է կատարել արդիական արագածիզ ու հեռածիզ թնդանօթը, հեշտութեամբ կատարում է ղեկավարի զօրաւոր խօսքը:*

*Խօսքը՝ երբեմն հրամայող, իշխող ու ահեղ, երբեմն՝ կանչող, մղող ու քաղցր: Խօսքը՝ միշտ պատկերաւոր ու սեղմ, սրտերին կրակ, բազուկներին թափ, կամքերին մղում տուող խօսքն է իշխելու և վարելու միակ միջոցը:*

*Եւ որքան զօրաւոր է նա, այնքան մեծ է նրա հմայքը, այնքան ընդարձակ՝ տիրապետութիւնը:*

*Խօսքը - դա ինքը ղեկավարն է:*

*Քիչ է, յաղթելու համար քիչ է խելքը, տաղանդը, անգամ հանճարը, եթէ պակասում է զօրաւոր խօսքը:*

*Առանց զօրաւոր խօսքի՝ բութ են սրերը, թոյլ՝ բազուկները, անվճռական՝ կամքերը:*

*Առանց խանդ վառող, արիւն եռացնող խօսքի չկայ իշխանութիւն հոգիների վրայ, իսկ առանց այդ իշխանութեան՝ չկայ յաղթութիւն»:*

Բարևներով ՆԺԴԵՅ

Սօֆիա, 25 մայիս 1923

Ի զուր թշնամին Արևմուտքի և Անդանտայի մատը կ'որոնէր Ջանգեզուրի ռազմական յաջողութիւններուն մէջ, ի զուր իր քաղաքական հակառակորդները կը ջանային Անգլիոյ ազդեցութիւնը փնտռել<sup>1</sup> հոն, երբ ամիսներէ ի վեր ամբողջ կիսաքաղց շրջաններ կը դժուարանային նոյնիսկ իրարու հետ կապ հաստատել:

Լեռնահայաստանի ուժին, անոր յաղթանակներուն գաղտնիքը ո՛չ Արևմուտքի, ո՛չ Անդանտայի և ոչ ալ Բրիտանիոյ երևակայական ազդեցութիւններու մէջ պէտք է փնտռել, այլ հոգիին խորը տառապակոծ, չարչարուած հերոս ժողովուրդի մը, որ ապրելու յամառ հաւատքով գօտեպնդուած՝ կը քալէր դէպի իր ազատութիւնը, դէպի բարձունքը իր դարաւոր քաղաքական իտեւալներուն:

---

<sup>1</sup> Մոսկուայի մէջ 1921 Յունիս 22-ին գումարուած երրորդ Միջազգային կոմունիստական ժողովը իր լոյս ընծայած «Protokoll der III Kongresses kommunistischen Internationale» գրքին մէջ կը հրատարակէ Կասեանի հետևեալ տողերը՝ այդ իմաստով գրուած. Es gelang uns aber dennoch, den Feind zu verdrängen, der in des Beggelände flüchtete, wo ihm die Hilfe der englischen imperialisten zuteil wurde. (Kassian)

Այսինքն՝ «Բայց և այնպէս յաջողեցանք թշնամին փախցնել դէպի Լեռնաշխարհ, ուր իրենց օգնութեան եկան անգլիական էմբերեալիստները»: Նիստ 23-րդ., էջ 1011: Կասեան:

\* \* \*

Դէպքերու ճակատագրական դասաւորութեամբ մը վաղուան մեր սերունդը կարմիր կտակ մը ունի ժառանգելիք, ինչ որ քիչ մը ևս պիտի խորացնէ իր խիզախութիւնն ու ապրելու անյողողոյ կամքը:

Ու ան պիտի սորվի, թէ առանց Հայկական Լեռնաշխարհի, առանց այսինքն Ղարաբաղի և Ջանգեզուրի, չի կրնար խաղաղ ու ապահով ապրիլ Հայկական կառավարութիւն մը ներկայ իր աշխարհագրական սահմաններուն մէջ:

Վաւերաթուղթերու և փաստագրերու հաւաքածոն, զոր սիր-այօժարօրէն տրամադրեց մեզ զօրավար Նժդեհ, կը կազմեն ահա բովանդակութիւնը ներկայ հատորին, որ պատմութիւնն է Լեռնա-հայաստանի հերոսամարտին:

Անոր հրատարակութիւնը կոչուած է առատ նիւթ հայթայթելու հայ պատմագրին և մատենագրին, ու, մանաւանդ, ցոյց տալու մեր ապագայ սերունդին, որ ժողովուրդներու քաղաքական ազատագրութիւնն ու բարգաւաճումը հետևանք է միայն ազատութեան գաղափարին՝ ի սպաս անոնց յառաջ բերած զոհողութեան հաւաքական արդիւնքին, թէ քաղաքականապէս ազատ Հայրենիքը միայն պիտի կրնայ յառաջդիմութեան ուղին բանալ մեր առջևը:

Այս հաւատքով վարեցին ահա Լեռնաշխարհի ժողովուրդն ու զօրավար Նժդեհ իրենց պայքարը, որուն վերապահուած էր փառքի և հպարտութեան նոր էջեր աւելցնել հայ ազատագրութեան ժամանակակից պատմութեան վրայ:

Վ[արդան] Գ[ևորգյան]

Պուրթշ, 1923 Օգոստոս 30

# I ՏԱՐԵՐԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

*Ալնարկ մը Լեռնահայաստանի աշխարհագրական դիրքին վրայ.– Ռուս մեծամասնական շարժումը և քաղաքական կեանքը Անդրկովկասի մէջ.– Բանդուրանիստական հովեր.– Թուրքերու կողմէ Շուշիի գրաւումը 1919 Մարտ 12-ին.– Ապրիլ 9-ի բողոքի ցոյցերը.– 33 Կառավարութեան մէկ պաշտօնագիրը Ատրբէյանի կառավարութեան.– Աշոտ Սելիք Սուսեանի մէկ գրութիւնը 33 Կառավարութեան. – Նժդէի Զանգեզուրի մէջ:*

**ԶԱՆԳԵԶՈՒՐ** կամ **ԶԱՆԿԵԱԶՕՐ** նախկին Հայոց տիրապետութեան ժամանակ մաս մը կը կազմէր Սիւնեաց աշխարհին: Կը գտնուի Փոքր Կովկաս լեռներու մէջ: Ունի 7800 քառ. քլմ. տարածութիւն և 110.000 հայ բնակչութիւն: Իր բարձր լեռներու կոհակներուն խորը կը կորսուին բազմաթիւ անյատակ ձորեր ու հովիտներ: Կեդրոնն է Գորիս քաղաքը՝ շինուած համանուն գետակին վրայ, որ կը թափի Բարկուշատի մէջ:

Զանգեզուր գաւառին պատմական վայրերէն անուանի են Տաթևի վանքը, որուն մերձ՝ Որոտան գետին վրայ կայ «Սատանի Կամուրջ»-ը, գոյացած կրային աղբիւրներու նստումաձեւ:

Գորիսէն դէպի հարաւ կը գտնուի Քարահունջ գիւղը, որուն հիւսիսային կողմը 32 մեթր բարձրութենէ վար կը թափի Գորիս գետը՝ գեղեցիկ տեսարան մը ձևացնելով:

Գորիսէն ութը քլմ. դէպի արևելք շինուած է Խնձորեսկ մեծ գիւղը՝ անուր դիրքի մը վրայ, շրջապատուած խորունկ ձորերով:

Բուն Զանգեզուրի շրջանին մաս կը կազմեն Կոռնձոր, Տեղ, Արաւիս, Խնածախ, Բայանդուր, Խոզնաւար, Քարաշէն, Բռուն, Հին Գորիս, (Վերին-Շէն) Գորիս գիւղ, Մաղանջուկ, Գերու, Ալղուղի-Շէն և Հալաք հայկական գիւղերը:

Զանգեզուրի հարաւ-արևմուտքը Զաւրնդուր գետի հովիտին մէջ կ'իյնայ Ղափանի գաւառակը, որ յայտնի է իր պղնձահանքերով:

Այս շրջանի գիւղերէն ծանօթ են. Վերին և Ներքին Խոտանան, Շրղնանց, Նորաշէնիկ (Նորաշենիկ<sup>1</sup>), Առաջածոր, Խլաթաղ, Կաւարտ, Բեխ, Բաղաբուրջ (Բաղաւիրջ), Վաչագան, Բարաբա-

<sup>1</sup> Փակագծի մէջ առնուած անունները՝ ըստ Բնաշխարհիկ Բառարանի:

թում, Արծուենիկ, Չափնի, Ըրկենանց, Սևաքար, Ձեյվա, Մողես, Վժենես (Վժանիս), Եղավարդ, Ագարակ, Խդրանց, Գիւտ-Կում, Ճակատեն, Շիկահող, Ներքին Հանդ, Սրաշեն, Ծաւ, Կենանց և Շիշկերտ (Շաշկերտ):

Աւելի հարաւ՝ Արևիքի կեդրոնը կը գտնուի Մեղրի աւանը, համանուն գետակին վրայ: Մեղրիէն քիչ հեռու կայ Կարճևան հայկական անառիկ և պատմական մեծ գիւղը:

Ղափանէն ոչ հեռու կը գտնուին Կաքաւաբերդ և Բաղաբերդ ամրոցները:

Բուն Ջանգեզուրի մաս կը կազմեն նոյնպէս Խոտ, Շինուհայր (Շնիէր), Հալիձոր, Տանձատափ, Երիցաթումբ, Սուարանց, Տաթև և Եայջի գիւղերը՝ Տաթևի շրջանին մէջ: Լժեն, Դարապաս, Լոր, Գետաթաղ, Շնաթաղ՝ Դարապասի շրջանին մէջ, և Ուզ, Ղարաքիլիսա, Ախլաթեան, Տուլորս (Տլորս), Բնունիս, Աղքեանդ, Ալիլու, Բոնակոթ, Թագագեղ, Բալաք, Մագրա, Շաղատ, Անգեղակոթ, Սուխուրթուլեան, Ղալաջուղ, Բարիսովկա և Բազարչայ գիւղերը՝ Սիսեանի շրջանին մէջ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂ** կամ հին անունով Արցախի նահանգը ամբողջովին և Փայտակարանի ու Ուտիի նահանգներու որոշ տարածութիւնները մաս կը կազմեն Հայկական Բարձրաւանդակին:

Լեռնային Ղարաքաղը կը գտնուի Ջանգեզուրի արևելեան կողմը ու կը գրավէ մօտաւորապէս 12.000 քառ. քլմ. տարածութիւն 350.000 չափ բնակիչով, որուն 250.000ը զուտ Հայեր են, մնացեալը Թաթարներ, Քիւրտեր և Ռուսեր են:

Լեռնային Ղարաքաղը հարուստ է ձորերով և հովիտներով: Լեռնաշխարհի (Ջանգեզուր-Ղարաքաղ) ձմեռը խիստ է և երկարատև, ամառը՝ զով է և անձրևային: Ունի ճոխ բուսականութիւն: Ղարաքաղի լեռները, մանաւանդ ընդարձակ տարածութեան վրայ, ծածկուած են անտառներով, ուր վարազը, վայրի այծը, գայլը և եղջերուն դրած են իրենց ողջերը: Գետերը ունին ընտիր տեսակի մեծ քանակութեամբ ձուկեր: Երկիրը հարուստ է նաև հանքերով:

Ջանգեզուրի և Ղարաքաղի բնակիչները մեծ մասամբ երկրագործ են: Այգեգործութիւնը զարգացած է գետահովիտներու մէջ: Անասնապահութեամբ կը պարապին լեռնային մասերու մէջ:

Կիները կը պատրաստեն ընտիր գորգեր, կարպետներ, շալեր և մետաքսէ գործուածեր:

Ջանգեզուրի և Ղարաքաղի հայերը, որոնք դարերէ ի վեր երկրին բնակչութեան մեծագոյն տոկոսը կը կազմեն, ծանօթ են

իրենց քաջութեամբ և ազգասիրութեամբ: Նոյն իսկ մահմետական տիրապետութեան օրով, մասնաւորապէս Ղարաբաղի Մելիքները, կիսանկախ վիճակ մը ունէին: 1722-ին, ճիշտ երկու դար առաջ, Յայկական Լեռնաշխարհը ապրեցաւ իր մղած յաղթական կռիւներուն ամբողջ դիւցազնական շքեղութիւնը: Դաւիթ Բեգի և իր հրամանատարութեան ներքև կռուող զօրքին մղած հերոսամարտներու արդիւնքն էր այդ, պարսկական լուծին դէմ, որ կը վերջանար Ղափանի և Յալիճորի յաղթանակներով:

1813-ին սակայն Կիւլիստանի դաշնագրութեամբ Ռուսաց Եկատերինա Բ. կայսրուհին կը կցէր Ղարաբաղն ու Ջանգեզուրը իր կայսրութեան, իրականացնելով Մեծն Պետրոսի ծրագիրը:

Այդ թուականներէն մինչև համաշխարհային մեծ պատերազմը՝ պատմական Սիւնիքն ու Արցախը չղաղրեցան երբեք գօտեպնդուելու հօօր ոգիովը 17-րդ դարու իրենց դիւցազն հերոսներուն, մինչև որ ցարական բռնակալութեան յաջորդող ռուսական յեղափոխութիւնները քայքայեցին թրքական ճակատին վրայ համախմբուած ռուս բանակները, որոնք հեռացան այնուհետև ժամանակի մը համար իրենց ճակատագրին ձգելով Անդրկովկասեան երկրամասերը, որոնց կարգին և Ղարաբաղն ու Ջանգեզուրը:

Ռուսական յեղափոխութեան յաջորդող դասալքութիւնները հրճուելու առիթ տուին թրքական հորդաներուն, որոնք երջանիկ օր մը թոպէն ներկայացած համարեցին համադուրանական իրենց կարմիր երազները իրականացնելու:

Առաջին օրէն իսկ երևան եկած Անդրկովկասեան նորակազմ պետութիւններու սահմանային անհամաձայնութիւնները մեծապէս կը նպաստէին ատոր: Բագուի մէջ ռուս զօրավար Պիչերախօվը պարտութեան մատնելէ և քաղաքը գրաւելէ վերջ՝ անոնք ուղղութեան դէպի Ղարաբաղ-Ջանգեզուր: Տեղական ասպատակախումբեր միացած թրքական զօրամասերու՝ Երասխի արմով առաջացան և գրաւեցին Ղարաղշլաղը, զոր փլատակներու կոյտի մը վերածեցին: Ապա, շրջապատեցին Լեռնային Ղարաբաղը և 1918 Սեպտեմբեր 24-ին գրաւեցին Ղարաբաղի սիրտը – Շուշին, ու ենթարկեցին Ատրբէջանի կառավարութեան:

Գինովցած իրենց առժամեայ յաղթութիւններէն՝ անոնք կը քալէին առաջ՝ դէպի Ջանգեզուր, զոր գրաւելով՝ տիրած պիտի ըլլային լեռներու այդ անխորտակելի կամուրջին – ողնաշարը Յայկական Յանրապետութեան:

Համադուրանականութեան գաղափարը հետևանքը չէր ցարական իրաւակարգի տապալման. ան նախ ծագում առած էր Ռու-

սիրոյ Թաթարներուն մէջ: Ապրելով Ռուսիոյ գերիշխանութեան տակ, անոնք իրենց մորթին վրայ զգացած էին օտար լուծի ծանրութիւնը: Մտաւորապէս աւելի բարձր, քան Թուրքերը, անոնց մէջ շուտով առաջ եկաւ ազգայնական գաղափարը և անոր յաջորդող անկախութեան ձգտումը: Համադուրանական գաղափարը իր բոլոր ձևերուն մէջ մեծագոյն առիթը կ'ընծայէր Օսմանեան կառավարութեան դէպի իր միջնադարեան աշխարհակալութիւնը փորձ մը ընելու<sup>1</sup>:

Հասկնալի էր ուրեմն խելայեղ այն արշաւանքը, որուն ձեռնարկած էին թաթար Մուսավաթն ու թուրք Իթթիհատը – հաւատարիմ դրօշակիրները բանդուրանական գաղափարին:

Խոյանքը, սակայն, որուն յենարան կը ծառայէր չմարտած տիրակալութիւն մը, առաջին իսկ վայրկեանին կը կորսնցնէր իր թափը, ազգային հերոս Անդրանիկի կազմակերպած փոխ-վրէժով:

«Քաջ գիտնալով, որ Չանգեզուր առանց Ղարաբաղի կեանք չի կրնար ունենալ, Անդրանիկ դէպի Ղարաբաղ արշաւանքի կը ձեռնարկէր, ուր մօտաւորապէս 300 հազար հայութիւն կը տառապէր տաճիկ փաշաներու ձեռքին տակ, սակայն կէս ճամբան այդ յառաջխաղացումը կը դադրեցուի, միջամտութեամբ Բագու գտնուող անգլիացի զօր. Թամսընի<sup>2</sup>:

Ու Անդրանիկի կը մերժուէր լուծել նոյնիսկ վրէժը Գեղուածորի մէջ 1918 թուականին թշնամի սուրին զոհ գացած 2000 հայերու:

Անգլիացւոց միջամտութիւնը առժամապէս կը խրախուսէ Թուրքերը, որոնք զանազան ուղղութեամբ յարձակումներ կը կատարեն Չանգեզուրի դէմ: Այդ յարձակումները ետ կը մղուին թշնամիին համար մեծամեծ կորուստներով:

Ղարաբաղի ու Չանգեզուրի սահմաններուն վրայ մղուած կռիւներու և աւերակ դարձած քանի մը հայ գիւղերու սրտաճմլիկ տեսարանը ցնցած էր տեղացի ազգաբնակչութիւնը, որ կռահելով իրեն սպառնացող վտանգը, իր աչքերը յառած էր Հայաստանի

---

<sup>1</sup> Տես՝ Բանդուրանիզմը Պոլսոյ մէջ, յօդ. Ենի Գօմշուեանի, Չահակի Գրական Հաւաքածոյ Բ. Գիրք, տպգ. Գահիրէ:

<sup>2</sup> Ազատ Սիւնիք, էջ 8, Հրատ. Գորիս, 1921: Տես նոյնպէս Ա. Միքայէլեանի յօդուածաշարքը «Ղարաբաղի Վերջին Դէպքերը», 1923, «Հայրենիք» Ամսագիր, թիւ 7, Պոսթըն: Լեզուի միօրինակութիւնը մասամբ պահելու համար կարգ մը մէջբերումներու ոճը թեթևօրէն փոխած ենք:

Հանրապետութեան, իր ճակատագիրը միանգամ ընդմիջտ անոր քանակներուն ու ռազմական ուժերու ճակատագրին կապելով:

Անդրկովկասեան նորակազմ պետութիւններու համար գոյութիւն ունեցող սահմանային խնդիրները առկախ կը ձգէին Չանգեզուրի և Ղարաբաղի հայութեան հարցը: Մինչև իրերու պարզուիլը Հայաստանի կառավարութիւնը կ'զգուշանար Լեռնահայաստանը իր հողային ամբողջութեան իրաւական և անբաժան մասը ճանչնալէ, ու Չանգեզուր և Ղարաբաղ կը կառավարուէին Տեղական Խորհուրդներով:

Պարագան բոլորովին այլ էր Ատրբէջանի համար, որ ո՛չ միայն կ'աճապարէր Չանգեզուրի և Ղարաբաղի պատմականօրէն Հայաստանի Հանրապետութեան մաս կազմելը ժխտել, այլ և առաջ կը քէր իր արմախանձ հորդաները, խրամատելով այդպէսով անջրպետը Անդրկովկասի հարևան ցեղերու միջև, որ ուշ կամ կանուխ պիտի ծառայէր Հիւսիսի ապագայ ծաւալական քաղաքականութեան զօրացումին:

Հայաստանի Կառավարութեան այդ վարանումը, որ հետևանք էր Անդրկովկասեան ժողովուրդներու միջև բարդութիւնները կանխելու քաղաքականութեան, առիթ չէր տար իրեն դրական օժանդակութեամբ ընդառաջ երթալու Ղարաբաղ-Չանգեզուրի հայութեան կողմէ քանիցս եղած օգնութեան առաջարկներուն: Ան կը գոհանար շատ շատ գործիչներ ու ներկայացուցիչներ ուղարկելով հոն: Այսպէս, 1919 Մարտ 12-ին Չանգեզուր կը հասնէր Ա. Շահմազեան, իբրև ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետութեան:

Նոյն ամսոյ 25-ին Անգլիացոց կարգադրութեամբ զօրավար Անդրանիկ և իր զօրամասը կը ձգէին Չանգեզուրը ու կը հեռանային, յանձնելով երկիրը Հ. Հանրապետութեան ներկայացուցիչին<sup>1</sup>:

Թշնամին դեռ կը շարունակէր իր յարձակումները, որոնք կը փշրուէին տեղացիներու կորովի դիմադրութեան առջև:

Հայ Լեռնաշխարհը ապրիլ կ'ուզէր, իրեն համար անհանդուրժելի էր Ատրբէջանեան և Տաճկական լուծը:

1919 Ապրիլ 7-ին իրարու ետևէ կը կազմուին շարք մը բողոքի միթինգներ և ցոյցեր՝ Չանգեզուրը բռնի ուժով Ատրբէջանին հպատակեցնելու ոտնձգութեանց դէմ:

Ապրիլի յաջորդող ամիսներուն դէպքերը կը զարգանան գահավէժ արագութեամբ, թշնամին գիտակցելով Լեռնաշխարհի

---

<sup>1</sup> Ազատ Սիւնիք, էջ 8-9:



դիմադրական ոգիին գերազանց ուժերով Ղափանի ուղղութեամբ յառաջ կը շարժի, և շնորհիւ իր թուի առաւելութեան՝ կը գրաւէ Ղարաբաբա, Ագարակ, Ուժանիս և Մողես գիւղերը, որոնց բնակիչները թէև կը հեռանան, բայց երիտասարդները կռուելով կը կասեցնեն թշնամիին յառաջխաղացումը, մեծամեծ կորուստներ պատճառելով անոր:

Նոյն ատեն արևմուտքէն – Նախիջևանի կողմէ ևս, դէպի Ջանգեզուր կը շարժին Թուրքեր, որոնք կը գրաւեն Նորս, Գիւմրի, Գժաձոր և Մազրա հայկական գիւղերը, որոնց բնակիչները սուրի և կոտորածի մատնելէ ետք՝ կը մօտենան Ջանգեզուրի դուռներուն:

Իրենց արշաւանքը յաջողեցնելու և Ջանգեզուր-Ղարաբաղի ճամբով Լեռնաշխարհի «դիակներու կամուրջը» վայրկեան մը առաջ ձգելու համար տաճկական զօրամասերը կը յորդորեն Ատրբէջանը՝ աւելի մեծ ուժերով յարձակիլ Լեռնաշխարհի վրայ:

Այդ դէպքերուն առթիւ ԶԶ կառավարութիւնը Ատրբէջանի Կառավարութեան արտաքին գործոց նախարար Խանխոյսկուն գրութիւն մը կ'ուղղէր, ուր ի մէջ այլոց կ'ըսուէր. «Յայկական Կառավարութիւնը ունի ստոյգ տուեալներ, որոնց համեմատ Ատրբէջան անկանոն ու կանոնաւոր զօրամասեր կեդրոնացնելով խախտած է անցեալ տարուայ Օգոստոս 22-ին Ղարաբաղի Հայ Ազգ. Խորհուրդին հետ իր ունեցած համաձայնութիւնը, և վերջնագիր է ներկայացուցեր Ղարաբաղի հայ ազգաբնակութեան զինաթափման համար: Ատրբէջանի կառավարութիւնը ստանալով օրինաւոր մերժում, Մարտ 20-ին սկսած է ազգաբնակութեան բռնի զինաթափումին, նոյն ատեն մի քանի կողմերէ յարձակում՝ Ջանգեզուրի և Ղարաբաղի վրայ»:

Հայկական Լեռնաշխարհի մէջ իրերը այսպէս լարուած դրութեան մէջ էին: Ամէն կողմէ և ամէն օր յարձակումներու ենթարկուած երկիրը, որ քանիցս իր մարտական ուժին հարուածը զգացուցեր էր թշնամիին՝ ճգնաժամային օրեր կ'ապրէր:

Եթէ գերազանց խոյանքներու ի խնդիր մեռնելու պատրաստակամութիւնը չէր պակսեր իրեն, կը բացակայէր սակայն կազմակերպող երկաթէ ձեռքը՝ գոնէ սուղ արժեցնելու համար Սիւնեաց աշխարհի ճիւղերուն արիւնը: Այս պարագան կը մտահոգէր Լեռնաշխարհի հայ ղեկավար շրջանակները: 1919 Օգոստոս 18-ին Երևանի Կառավարութեան իր ուղղած մէկ գրութեամբ Գողթանի

կառավարիչ Աշոտ Մելիք-Մուսեան այսպես կը նկարագրէր Ձանգե-  
զուրի դրութիւնը.

«Կռիւր Գողթանում սկսուել է Յունիս 25-ից: Հայկական գիւ-  
ղեր Աղան, Դերը, Շուռուքը, Փառադաշտը, Գեալը և մօտ 500 հոգի  
Ղազանչիներ թուրքերի ճնշման տակ անցել են Գողթանի լեռնա-  
յին մասը: Մենք աւերել ենք թրքական Բիլաւ և Բէյրուտ գիւղերը:  
Տասնօրայ կռիւներից յետոյ մեծ կորուստներով Օգոստոս 6-ին  
ընկաւ Տանակերտը: Ագուլիսցիների հետ կապ չունինք: Տեղեկու-  
թիւնների համաձայն նրանք յանձնուել են թուրքերին, վայր դնելով  
զէնքերը: Ամենաստոյգ տեղեկութիւններ ունենք, թէ թուրքերը  
վճռել են ամէն գնով ոչնչացնել Գողթանը և կապել Գեղուաձորի  
հետ: Գեներալգում դրութիւնը աննկարագրելիօրէն սպառնական է:  
Սովը, ռազմամթերքի և արտաքին աշխարհի հետ հաղորդակցու-  
թեան չգոյութիւնը դրել են մեզ անել կացութեան մէջ: Փրկութիւն  
փնտռել գաղթելու մէջ՝ անհնար է, որովհետև բոլոր ճանապարհ-  
ները գտնուում են թուրքերի ձեռքը: Անհամբեր սպասում ենք այս  
գրութեան Ձեր պատասխանին: Մեր օրերը համրած են, դիմադրել  
10-15 օր այլևս անհնար է: Տւէք մեզ ցուցմունքներ և փութացէք  
փրկելու Գողթանը»:

Մելիք-Մուսեանի նամակին հետ գրեթէ միաժամանակ Երևան  
կը հասնի Գողթանի հայ միլիցիայի պետ Սովսէս Գիւլնազարեանը,  
օգնութեան գործը արագացնելու առաքելութեամբ:

ՀՀ Կառավարութիւնը զբաղուած Վետի-Բազարի և Շարուրի  
անյաջող կռիւներով, անգամ մը ևս կը դժարանար կանոնաւոր  
գործնասեր ղրկել Գողթան:

Ահա այդ օրերուն Հ.Յ.Ղաշնակցութեան Բիւրօյի առաջարկ-  
ութեամբ այդ վտանգուած շրջանը կը ղրկուի փոխ-գնդապետ  
Գարեգին Նժդեհը, որուն ներկայութիւնը այնուհետև անսպառ  
ողկորութեան աղբիւր պիտի դառնար պատմական աւանդութիւն-  
ներով արգասաւոր Հայկական Լեռնաշխարհի այդ քաջարի  
ժողովուրդին համար:

## II ԿՐԱԻՈՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ

*Նժդեհ Ղափանի մէջ.– Կազմակերպական աշխատանք.– ՀՀ Կառավարութեան մէկ գրութիւնը Գողթանի Ե. Համագումարին.– Ջինուորական հրամաններ.– Խրամատներ.– Պայթուցիկ տակառներ.– Միջնաբերդեր.– Լուսախօսութիւն.– Յղնա Կապարգողթի հետ.– Կապարգողթ միացեալ ճակատով.– Բարոյական մթնոլորտ:*

Պայքարի ճամբան գեղեցիկ է և լուսաւոր անոնց համար, որ ցեղին հպարտութիւններուն ու անոր փառքին ի խնդիր զոհուիլ գիտեն:

Այս ոգին կ'առաջնորդէր հայ մարտիկը, որ դեռ Գողթան չհասած՝ կը լսէր Ղափանէն ու Գենուազէն հասնող օգնութեան աղաղակները: Ու ինքնապաշտպանութեան աշխատանքը այդ շրջաններէն կ'սկսէր:

Քանի մը օր վերջ հոն կը ժամանէր նաև Գողթանի միլիցիայի պետ Գիւլնազարեանը, իր հետ բերելով ՀՀ Կառավարութեան մէկ գրութիւնը, ուղղուած Գողթանի Ե. Համագումարի նախագահութեան, ուր կ'ըսուէր. «ՀՀ Կառավարութիւնը այժմ ձեզ որևէ դրական օգնութիւն չի կրնար հասցնել: Գաղթեցուցէք Գողթանի ժողովուրդը Գենուազի և Ղափանի շրջանները»:

Խորհրդակցութենէ մը յետոյ՝ կ'որոշուի ժողովուրդին սեփականութիւնը չդարձնել վիրոյիշեալ պաշտօնագիրը, նախ՝ որ այդ կերպով խուճապ, ու ծայրայեղ պարագային՝ բարոյալքում յառաջ պիտի գար Գողթանի բնակչութեան մէջ, ու երկրորդ, ամենակարևորը, Գողթանը պարպել՝ կը նշանակէր ձեռքէ հանել Զանգեզուրի և Ղարաբաղի ամրութեանց բանալին:

Ու կազմագիտօրէն անկարելի էր ատիկա:

Այս նկատումներով կը յետաձգուի Գողթանի գաղթը:

Ղափան-Գենուազի Ազգ. Խորհուրդի կողմէ եղած հրաւերին վրայ Նժդեհ կ'ստանձնէ այդ շրջաններու զինուորական ընդհ. հրամանատարութիւնը:

Այսպէս Կապարգողթի<sup>1</sup> 60.000 հայ բնակչութեան ճակատագիրը կը դառնար օրուայ հարց ու կը յանձնուէր երիտասարդ զին-

<sup>1</sup> Ղափան, Գենուազ, Գողթան շրջան:

ուորականին, որ անմիջապես կը ձեռնարկէր տեղական միլիցիայի կազմակերպման անյետաձգելի գործին:

Ղափանի Հանքերը, ուր կը մնայ գինուորական սպայակոյտը, վառարանը կը դառնայ տենդայոյզ գործունէութեան մը, որուն զսպանակը հրամանատարը ինքն էր:

1919թ. օգոստոս 10-ին Նժդէի հետևեալ հրամանը կ'արձակէ Ղափանի Հանքերէն.

### ՂԱՓԱՆ-ԳԵՆՈՒԱԶ-ԳՈՂԹԱՆԻ ՄԻԱՅԵԱԼ ԶՕՐԱՍԱՍԵՐԻՆ

*1. Այսօրուանից ես ստանձնում եմ Ղափան-Գենուազ-Գողթանի միացեալ ուժերի հրամանատարութիւնը: Ընդամին, հրամայում եմ բոլոր պաշտօնական գործերով դիմել ինձ:*

*2. Զօրամասերի շտաբը գտնուում է Հանքերում, ուր բոլոր ռազմաշրջանների պետերը պէտք է ուղարկեն իրենց հաղորդագրութիւնները:*

*3. Ոչ ուշ, քան ամսոյս 12-ի ժամը 16-ը տեղեկացնել գինուորների հրացանների ինչ սիստէմի լինելու, փամփուշտների քանակի մասին:*

Ղափան-Գենուազ-Գողթան Միացեալ  
Ռազմ. Ուժերի Ընդհ. Հրամանատար  
ՆԺԴԵՀ

Բովանդակ Կապարգողթի շրջանը մշտատև յարաբերութեան մէջ դնելու համար կը հաստատուին գիշերային լուսախօսութեան և ցերեկեայ մշանատուութեան կապեր, այդ նպատակով հրամանատար Նժդէի իր վաշտերուն կ'ուղղէ Բ. հրամանը.

*1. Սայիս 12-ին և 13-ին եղայ Զէյվա-Ազարակ ռազմաճակատում: Բոլոր գիւղերը, բացառութեամբ Սողէսի, բաւարար կերպով տանում են դիրքապահութիւնը: Հիւղեր ունին ոչ բոլոր պահակախմբերը: Դրութիւնը պահանջում է աւելի լուրջ վերաբերմունք:*

*2. Հրամայում եմ վաշտային շրջանների մէջ ստեղծել կենդանի կապ ու ամէն օր երեկոյեան ժամը 9-ին և առաւօտեան 4-ին մշանատութեամբ տեղեկացնել զօրամասերի շտաբին ճակատներում տեղի ունեցած փոփոխութիւնների և դրութեան մասին: Նշանատութիւնից զատ՝ շաբաթական երկու անգամ, հինգշաբթի և կիրակի օրերը, ուղարկել հաղորդագրութիւն և այլն:*

ՆԺԴԵՀ

Հանքեր 1919 Հոկտեմբեր 15

Թիւ 3 հրամանը կը վերաբերի զէնք կրելու ի վիճակի եղող 18-52 տարեկան բոլոր ուժերը կարգապահօրէն զինուորական աշխատանքի մղելու, հիմքը դնելով ժողովրդային վաշտերու կազմակերպութեան.

1. *Գենուագի ամբողջ գաւառամասը բաժանում են վեց վաշտային շրջանների և հրամայում նշանակածս վաշտապետերին իրենց յանձնուած շրջանների ռազմական ուժերից (18-ից 52 տարեկան) կազմակերպել ժողովրդական-միլիցիոն վաշտեր ըստ հետևեալ շտատի. 1 վաշտապետ, 2 փոխ-վաշտապետ, 4 յիսնապետ, 8 փոխ-յիսնապետ, 16 օղակի աւագներ, 128 զօրաշարքային զինուորներ:*

2. *Գենուագի ժողովրդական վաշտերը ղեկավարուելու են մի ընդհանուր հրամանատարի կողմից, որին նշանակելու են ես: Մինչև վերջինիս նշանակումը՝ վաշտապետները ենթարկուելու են զօրամասի շտաբի պետին:*

3. *Գենուագի ժողովրդական զօրամասի պետ նշանակում են պօտ-պարուհիկ Անուշեանին, որին և հրամայում՝ Մեղրիում հիմնել զօրամասի շտաբը:*

4. *Գենուագի սահմաններն ամրացնելու համար խրամատաշէնների պետ Համազասպ Եպիսկոպոսեանին՝ հաւաքել շրջանում եղած ամբողջ ուժանակը և ամբարել մի տեղ:*

5. *Հրամայում են բոլոր վաշտապետներին խրամատաշէնների պետի տրամադրութեան տակ դնել 5 ական բանիմաց զինուոր՝ ռմբակոծութիւնը և ուժանակային գործը ուսումնասիրելու համար:*

6. *Ժողովրդական վաշտերը ունենալու են շաքաթական երկու ռազմափորձ՝ շաքաթ ու կիրակի օրերը: Ռազմափորձերին և մարզանքներին չմասնակցող զինուորները կրում են կարգապահական պատիժներ:*

ՆԺՂԵՅ

Հանքեր, 1919 Յոկտեմբեր 18

Ինքնապաշտպանութեան գործը լուրջ հիմերու վրայ դնելու համար անհրաժեշտ էր ժամ առաջ գիւղերու մէջ կազմակերպել ժողովրդական այդ վաշտերը:

Զինուորական տեսակէտով անոնք թէև զօրքերէ պահանջուած արդիական պայմանները չեն լրացներ՝ զոհողութեան և կարգապահութեան ըմբռնումը սակայն բարձր է իրենց մօտ:

Խաղաղ պայմաններու մէջ զինուոր ու ղեկավար կը մնան գաղափարի և զէնքի անբաժան ընկերներ:

Վաշտապետ և զինուոր կ'ապրին իրենց սեփական միջոցներով: Ո՛չ ոք վարձ կ'ստանայ: Վաշտերը բաղկացնող զինուորը ինքը՝ զիւղացիութիւնը ու տեղացի ազգաբնակչութիւնն է, որ իր ժամերէն մէկ քանին պարտական է յատկացնել հասարակաց՝ հետևապէս նաև իր ինքնապաշտպանութեան գործին:

Ատկէ ահա բարոյական այն բարձր տրամադրութիւնը, որ էլեկտրականացած կը պահէ վաշտերը:

Կռուող ուժը - վաշտը այսինքն, վարձկաններու դասակարգ մը չէ հոն, այլ ժողովուրդը, որ կ'զգայ, թէ իրմէ դուրս ո՛չ մէկ ձեռք, ո՛չ մէկ ոյժ կայ իր ընտանիքը, իր ինչքն ու պատիւը պաշտպանող:

Զինուորներուն մէջ բարոյական և հայրենասիրական զգացումները վառ պահելու նպատակով հրամանատար Նժդեհի 1919 Յոկտեմբեր 23-ին Լիջկէն կ'արձակէ իր թիւ 4 հրամանը, որ զօրքին ուղղուած սոսկական յայտարարութիւն մը չէր, այլ ոգեկոչումը մեր Յեղափոխութեան հրամանատարին փշոտ ուղիներուն վրայ ինկող գաղափարի ռահվիրաներու յիշատակին:

Ամէն օր, այնուհետև, թշնամի գրոհները դարանակալող հայ ռազմիկի հոգիին ընդմէջէն ճառագայթի մը նման զուարթ պիտի անցնէր դիմաստուերը անոնց, որ հայ անկախութեան գաղափարին ուխտաւորները հանդիսացան:

Ու այդքանը բաւական էր զայն յանդուգն ու խելայեղ նուիրումներու առաջնորդելու համար:

Այդ հրամանը ահա.

*1. Մի շարք ժողովուրդների զօրքի մէջ կայ մի շատ գեղեցիկ սովորութիւն, այն է՝ զինուորների անուանացուցակների ստուգման ժամանակ նախ յիշատակել իրենց երկրի ազատագրութեան ճանապարհին ընկած հերոսների անունները:*

*Երբ ստուգողը տալիս է այդ նուիրական անունները՝ «Ընկան» պատասխանում է զօրաշարքի այ թևի առաջին զինուորը:*

*- «Փառք», - կրկնում է այ թևի երկրորդ զինուորը:*

*- «Յաւերժ փառք», - աւելացնում է ամբողջ զօրաշարքը:*

*Ազգային նահատակների անունների ամենօրեայ յիշատակումը զինուորների մէջ ստեղծում է բարոյա-հայրենասիրական բարձր տրամադրութիւն, ընկած նահատակների հաւատարմութեամբ ու անձնուիրութեամբ ծառայելու ու մեռնելու քաջօրէն իրենց Յայրենիքին համար:*

*Հրամայում են Ղափան-Գեղուազ-Գողթանի զորամասերի պետերին որդեգրել այդ գեղեցիկ սովորութիւնը և ամենօրեայ ստուգումների ժամանակ յարգել մեր ցեղի ընտիր որդիների խնկելի անունները՝ Քեռի, Խեչօ ...*

ՆԺՂԵՅ

Շրջաններու բոլոր գիւղերու մէջ կը կառուցուին միջնաբերդեր: Կառուցուած միջնաբերդերը կը կոչուին այս կամ այն յեղափոխական նահատակի անունով. Քրիստափորաբերդ, Խեչօաբերդ և այլն:

Բոլոր ժողովրդական վաշտերը ունին իրենց «Յեղափոխական Սուրբը»՝ իրենց զօրավիգը:

Վաշտի մը զօրավիգը կը դառնայ Քրիստափորը, ուրիշի մը՝ Խեչօն, երրորդի մը՝ Դումանը, չորրորդի մը՝ Ռոստոմը և կռիւներու ժամանակ կը պաշտպանէ զայն:

Այսպէսով, երկրի կռուող ուժերուն ոգևորութեան աղբիւր կը դառնայ նահատակ հերոսներու յիշատակը, ստեղծելով կիսաքաղց վաշտերու մէջ բարոյա-յեղափոխական բարձր տրամադրութիւն՝ պատուով վարելու համար իրենց վիճակուած ծանր գոյամարտը:

**ԽՐԱՍԱՏՆԵՐ:** Կրաւորական շրջանի չորս ամիսները արդիւնաւոր կ'ըլլան նոյնպէս խրամատներու շինութեամբ:

Խրամաշինութիւնը պարտադիր է ամէն գիւղի և ամէն ճակատի համար:

Գիւղացիութիւնը շաբաթական որոշ օրեր այր, կին և երախայ, անխտիր, մէկ մարդու պէս ոտքի վրայ է: Լեռան մը զառիթափին կամ ձորի մը հարթ լանջքին վրայ՝ արևին կիզիչ ճառագայթներուն ներքև կամ ձմրան բուքին, անտրտունջ և իր պարտականութեան գիտակ՝ ան բահերու ու բրիչներու գոռ ժխորին կը խառնէ իր մարտական աշխատանքին խանդավառ և հզօր երգը: Հասարակաց գործին իսպառ դրուելիք ճիգին մէջ աշխատանքի բաժանումն ևս հասարակաց է:

**ՊԱՅՈՒՑՅԻԿ ՏԱԿԱՈՒՆԵՐ:** 10էն մինչև 80 քիլօ ծանրութեամբ մետաղէ տակառներ են ասոնք, լեցուած պղինձի կտորներով ու պայթուցիկ նիւթերով: Կռուի պահուն կը գործածուէին թշնամի բանակներու մէջ ահաբեկում առաջ բերելու նպատակով: Լեռներու և ժայռերու կատարներէն վար կը ձգէին զանոնք այն պահուն, որ թշնամին ձորերու մջ կը գտնուէր, և ահա անդունդներէ վար իրենց

գահավէժ անկումին՝ անոնք միասին կը տանէին ծուխի և ժայռերու կտորներ: Սարսափը և աւերը, որ առաջ կու գար այս կերպով թշնամի շարքերու մէջ, աննկարագրելի է:

**ՄԻՋՆԱԲԵՐՂԵՐ:** Խրամատներու ու պայթուցիկ տակառներու մօտ միջնաբերդերը կռիւներու պահուն կը մատուցանէին եզական ծառայութիւն: Արդիական ըմբռնումով կառուցուած շինութիւններ չէին անոնք: Տեղական կարիքը և ղեկավար միտքը ծնունդ տուած էին անոնց: Բլուր մը, գիւղերու կողքին բարձրացող ժայռերու կարկառ մը կամ շատ անգամ եկեղեցի մը իր քովընտի տուններով պատուած՝ ամբարտակ կը ծառայէր թշնամի գրոհներու դէմ: Այս նպատակին համար կ'օգտագործուէին նոյնիսկ անտառներու մէջ իրենց դիրքով ուշագրաւ ծառեր, որոնց վրայ դրուած գնդացիները նախճիր կը գործէին հակառակորդ բանակներու մէջ:

**ԼՈՒՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ:** Բոլոր ճակատները սպայակոյտի կեդրոնին հետ յարաբերութեան մէջ պահելու և թշնամի շարժումներու մասին կտրուկ և անմիջական լուրեր հաղորդելու համար կը կիրարկուէր գիշերային լուսախօսութիւնը:

Գիշերային պահնորդները թշնամի վտանգի մը ներկայութիւնը պիտի իմացնէին նահիկածն լուսախօսութիւններով, իսկ խաչածն լուսահրթիռներ՝ ճակատներու վտանգէ գերծ ըլլալը պիտի հաղորդէին:

Տորեկ ատեն նշանախօսութիւններ նոյն նպատակին կը ծառայէին՝ կենդանի յարաբերութեան կապը պահելով հանդերձ:

Ապաստողական քանի մը ամիսներու այս շրջանին երկրէն կը հեռացուէին նաև եօթը հարիւրի չափ իսլամ հովիւներ ու աշխատաւորներ, որ հայ հարուստ տանուտէրերու հօտերը կ'արածէին, և որոնք իրենց աշխատանքին բերումով ամէն տեղ էին ու ականատես՝ կատարուած շարժումին:

Չանգեզուր, երբ դեռ օտար ոհմակներու մահուան սպառնալիք տակ էր՝ ո՛չ ոք խորհած էր չէզոքացնել այդ վտանգաւոր տարրերը, որոնք ամէն օր սահմանէն անդին անցնելով կը յարաբերէին թշնամիին հետ: Հրամանատար Նժդեհի կարգադրութեամբ պարսիկ հովիւները կը ճամբէին Պարսկաստան իրենց ընտանիքներով, իսկ թուրք և թաթար հովիւները կը բանտարկուին իբրև պատեհրազնական գերի:

Կապարգողթ այլևս զուտ հայկական կը դառնար:



Կրաւորական շրջանի կարևոր գործերէն մէկն ալ պէտք է համարել Յղնա գիւղի Կապարգողթի մաս կազմելու պարագան:

Ազուլիսցիները վաղուց ընդունած էին Ատրբէջանի Կառավարութեան հպատակութիւնը և կը կառավարուէին Էդիֆ Բէյի ձեռքով: Գողթանի և Չանգեզուրի միջև կապ ստեղծելու համար հրամանատար Նժդեհ 200 Ղափանցի և Գենուազցի զինուորներով կը մաքրէ Օխչի-Չորի թուրք գիւղերը ու Գողթան կ'անցնի: Ճիշտ այդ օրերուն Յղնա հայ գիւղի բնակչութիւնը բժիշկ Գարեգին Սարգիսեանի հիւանդոտ թելադրութիւններէն վարակուած՝ կը պատրաստուէր նետուիլ Ատրբէջանի գիրկը: Արդէն պատուիրակութիւն մը ուղարկուած էր Օրտուբադ՝ Ատրբէջանի հպատակութիւն յայտնելու նպատակով:

Յրամանատար Նժդեհի Գողթան մուտքը կ'ոգևորէ Յղնացիները, որոնք կը հրաժարին Ատրբէջանի հպատակութիւնը ճանչնալէ ու կը կապուին Կապարգողթի:

Այսպէս քառամսեայ այս շրջանին Կապարգողթի 60.000 հայութիւնը շնորհիւ թափուած ջանքներու կը կազմէ միացեալ և զօրաւոր ճակատ մը՝ դիմագրաւելու պատրաստ արտաքին յարձակումները:

Գործը, որ կատարուած էր, պերճախօս ապացոյց էր անվկանդ կամքին զինուորականին, որուն վերապահուած էր այնուհետև իր ձեռք բերած յաղթանակներով աւելի ևս գրաւել վստահութիւնը ժողովուրդին:

Այդ չորս ամիսներու ընթացքին Կապարգողթի բնակչութեան հոգիին մէջ դրուած էին խոյանքի զօրաւոր կայծեր, որոնք պիտի բռնկէին շուտով՝ լուսաւորելու համար իր անունը ժամանակակից հայ պատմութեան մէջ:

### III ԿՈՒՆԵՐՈՒ ՇՐՋԱՆ

*Կրաւորական շրջանին թշնամի գործունէութիւն.– Թաթարական երկու վաշտ Օխչի-Չորի մէջ.– Գողթանի դրութիւնը ճգնաժամային.– Առաջին յարձակողականը.– Գեղւածորի արշաւանքը.– Մեղրի խանդավառ.– Շուռնուխի արշաւանքը.– Գողթանի արշաւանքը.– Գորիսի հրամանատարութեան մէկ հաղորդագրութիւնը.– Թշնամի նահանջը դէպի Ջուլֆա.– Թշնամի կարծիքներ.– Որոտանի, Ասկիւլումի և Չաւընդուռի կռիւները.– Կռիւներու նոր շրջանի մը նախօրեակին:*

Ինքնապաշտպանութեան կրաւորական չորս ամիսներուն թրքօ-թաթար հորդաներ դեռ կը կողոպտէին ու կը ջարդէին Կապարգողթի սահմաններէն դուրս մնացած հայ գիւղացիութիւնը:

Գեղուածորի մէջ 1918-ին 2000-ի չափ Նախիջևանցի հայերու եղերական ջարդին ահաւոր կսկիծը դեռ կը կտտար ժողովուրդի սրտին խորը: Ուշ կամ կանուխ նոյնը պիտի ըլլար նաև ճակատագիրը Ջանգեզուրի և Ղարաբաղի հայութեան, եթէ երբեք թոպէին պահանջած արթնամտութեամբ չկանխուէր վտանգը:

Նոր շարժումներ կը նկատուէին Օրտուբադի և Նախիջևանի թաթարներու մէջ:

Ջանգեզուրի ու մասնաւորապէս Կապարգողթի համար ճակատագրական նշանակութիւն էին ստացած Օխչի և Գեղուայ թրքաբնակ գիւղերը, որոնք սերտ կապեր ունենալով Ատրբէջանի և Նախիջևանի մահմետականներու հետ, տենդոտ պատրաստութիւններ կը տեսնէին կոտորելու համար Գողթանի ու Բաղաբերդի հայութիւնը, և այդ կերպով տէր դառնալու այդ շրջաններու ռազմագիտական կարևոր կէտերուն:

1919 Նոյեմբեր 2-ին Օրտուբադէն տաճկական երկու վաշտեր իրենց սպաներով կ'անցնին Օխչի-Չոր: Երկու օր վերջ՝ ձորը կը յայտարարուի Ատրբէջանի անբաժան մասը: Ապա, թուրք սպաներ զօրահաւաքի կ'ենթարկեն տեղական թուրք տարրը, կը կապուին Գեղուածորի հետ և կը փակեն Գողթանը Ջանգեզուրին միացնող միակ ճանապարհը: Սովէն ու թշնամի սպառնալիքներէն տանջահար՝ Գողթանի ու Բաղաբերդի հայութեան համար կ'ստեղծուէր ողբերգական դրութիւն մը:

Աշխարհէ անջատուած այդ երկու շրջանի հայութիւնը իր ճակատագրին ձգել՝ գիտակցորէն թշնամիին սուրին մատնել կը նշանակէր: Խաղաղ միջոցներով Չանգեզուրի և վտանգուած շրջաններու միջև հաղորդակցութիւն պահել անկարելի էր:

Թրքական վաշտերու ներկայութենէն շփացած Օխչիի թուրք բնակչութիւնը լսել անգամ չէր ուզեր Կապարգողթի հայ զինուորական հրամանատարութիւնը, որ կ'առաջարկէր ճանապարհները չխափանել: Դանդաղիլ աւելի քան ոճիր պիտի ըլլար:

Տրուած հրամանին վրայ, Նոյեմբեր 18-ի գիշերը Գենուազի երկու վաշտերը՝ մօտաւորապէս 200 հոգի, յանկարծակիի բերելով Օխչիի թրքական գիւղերը, կ'առաջարկեն զինաթափ ըլլալ, յանձնել թուրք սպաները ու ենթարկուիլ Չանգեզուրի Ազգ. Խորհուրդին: Պատասխանը կ'ըլլայ մերժողական և թշնամական գործողութիւններ վերստին կ'սկսին:

Կը տրուին կռուի նշանները և առաջին օրէն իսկ պայթուցիկ տակառները մահ կը սփռեն հակառակորդ բանակներու մէջ: Թշնամի ոչ մէկ զինուոր և սպայ կ'ազատի: Նոյն օրը կը գրաւուին Շաբաղին, Օխչի, Փերդովտան, Արալըխ ու քանի մը ուրիշ գիւղեր:

Կռուի այդ առաջին յաջողութիւններու շնորհիւ հաղորդակցութիւն կը հաստատուի Գողթանի, Բաղաբերդի և Չանգեզուրի միջև: Նոյեմբեր 15-ի կռուի ընթացքին ձեռք կը ձգուին որոշ քանակութեամբ զէնք, ռազմամթերք, հացահատիկ և պատերազմական աւարներ: Թշնամին գրեթէ բոլորովին կը փճանայ:

## **ԳԵՂՈՒԱԾՈՐԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ**

*Գեղուածորը Չանգեզուրի համար այն է,  
ինչ որ Կարտագինէն Յռոմի համար:*

«Սիւնիք» թերթ

Օխչի-Չորի կռիւներէն ետք՝ թշնամի բեկորները կը փախչին դէպի Նախիջևան, և այդ շրջանը կ'անցնէր Հայոց ձեռքը:

«Հերթական միւս գործողութիւնը պիտի սկսէր Գեղուածորի աւազակաբարոյ թուրք տարրին դէմ, որ իր կատարած գազանութիւններով ու թալանով յուսահատութեան մատնած էր Գենուազի գիւղացիութիւնը: Գեղուածորի թուրք մասսան սերտ կապեր կը

պահպաներ մէկ կողմէ Նախիջևանի, և միւս կողմէ Ջանգեզուրի և Ջիբրայիլի, երրորդ՝ Շխլարի վրայով նաև Հաջիսամլուի թրքութեան հետ, և հայկական գիւղերը չորս կողմէն օղակելով՝ ամէն չարիք կը նիւթր անոնց բնակիչներուն: Ասկէ զատ, Գեղուածորի ամէն մէկ գիւղին մէջ կային հայկական հին եկեղեցիներ, գերեզմանատուներ և այլ հնութիւններ, ուրկէ պարզ կ'երևէր, որ ան հայկական շրջան մըն է եղած պատմական հարուստ անցեալով, զոր յետոյ հայ ժողովուրդը լքած է թշնամի ցեղերու արշաւանքին պատճառով»<sup>1</sup>:

Արդարև, Գեղուածորը՝ պատմական Բաղաց իշխաններու այդ ոստանը, առաջին օրէն իսկ իր վրայ հրաւիրած էր Ատրբեջանի և Նախիջևանի ուշադրութիւնը և օրէ օր անտանելի կը դարձներ Ջանգեզուրի հայութեան դրութիւնը:

Անդրկովկասեան հանրապետութիւններու գոյութեան առաջին օրէն իսկ Թաթարներ կը ձգտէին Ղափանի և Գենուազի վրայով միանալ Ատրբեջանի, որմէ ընդամէնը տասը վերստ հեռու էին:

Հսկայական լեռներու ծոցին մէջ թաղուած այդ հռչակաւոր ծորը լայն հնարաւորութիւններ ունէր ի հարկին իրարմէ բաժնելու հայկական շրջանները ու մշտական սարսափի ներքև պահելու անոնց ազգաբնակչութիւնը:

Գեղուածորի բարբարոս բնակչութիւնը պատուհաս էր դարձեր Ղափանի, Տաթևի, Դարապասի և Սիսեանի հայութեան գլխուն, որ իր կռուող ուժերուն խոշոր մէկ տոկոսը ստիպուած գիշեր ցերեկ սահմաններու վրայ կը պահէր:

1918-ին այնտեղ ինկած 2000 հայ դիակներու արիւնը դեռ չցամաքած՝ այդ ծորը տակաւին կը շարունակէր իր հայաջինջ քաղաքականութիւնը: Իր աւազակախումբերը պարբերաբար կը քշէին այս ու այն գիւղի տաւարն ու ոչխարը, կ'սպաննէին դաշտերու խաղաղ հայ բնակչութիւնը, կ'առևանգէին հայ կիներն ու աղջիկները և գերի կը տանէին պատահական ճամբորդները փրկագին ստանալու նպատակով:

«Ահա թէ ինչո՞ւ Ջանգեզուրի հայութիւնը յանուն խաղաղութեան շարունակ կը պահանջէր պատժել չարագործները և ազատել գերութեան մէջ գտնուող 40-ի չափ հայ կիներն ու աղջիկները»<sup>2</sup>:

<sup>1</sup> Արմնոտ գիրք, էջ 29: Հրատ. Լեռնահայաստանի Կառավարութեան, Գորիս, 1921:

<sup>2</sup> «Սիւնիք» թերթ, 1919 Մայիս 23, թիւ 18, Գորիս:

Ձենքը, ուրեմն, վերջ պիտի դնէր խաղաղ ազգաբնակչութեան վրայ գործուած անլուր բարբարոսութեանց:

Ալ վճռուած էր, պէտք էր կռուիլ:

Տասը օրուայ մէջ՝ քսանի չափ ուժանակի գործածութեան ծանօթ Ղափանցիներ կը պատրաստեն երեք հարիւրի մօտ 1-5 փութնոց պայթուցիկ տակառներ և հազարէ աւելի 1-10 ֆունտ ծանրութեամբ ձեռնառունքեր:

Այդ օրերուն տեղի կ'ունենան թուրքերու կողմէ երկու սպանութիւններ, որուն վրայ Ղափանի ընդհանուր հրամանատարութիւնը 25 Նոյեմբեր 1919-ին իր թիւ 13 հետևեալ հրամանը կը դրկէ վաշտապետերուն.

*«Նկատուում է, որ վերջին ժամանակներս թշնամին խոր և յանդուզն խուզարկութիւններ է կատարում, ինչպէս օրինակ՝ Վերին Խոտանանի դէպքը և Սիւնիքի մօտ մի Վաչագանցու և Ագարակցու սպանելը օրը ցերեկով: Թշնամին դորանով նախ մերկացնում է մեր դիրքերը և ուժերի դասաւորութիւնը ու միաժամանակ իր աւագակային խմբերով ահաբեկում է մեր ամբողջ հասարակութիւնը: Հրամայում եմ բոլոր վաշտապետներին՝ անմիջապէս ուղարկել ինձ մօտ երկուական աչքի ընկնող, կտրիճ տղաներ՝ գայլախումբերը<sup>1</sup> կազմակերպելու համար»:*

ՆԺՂԵՀ

Գայլախումբերու կազմութեան յաջորդող երեք օրուայ ռազմափորձերէ յետոյ, 1919 Նոյեմբեր 30-ին ժողովրդային զօրամասերուն կ'ուղղուի թիւ 4 հրամանը.

*«Զինուորներ, թշնամու ցանկութեամբ սկսուում է մեր արշաւանքը, մեր խաչակրաց արշաւանքը Գեղուածորի դէմ:*

*Վաղը, երբ ձեր խենթ գրոհներից և զարկերից թշնամին շշմած կը թողի իր գիւղերը, ձեզ կը ողջունեն մեր հիմաւուրց, այսօր թշնամու կողմից պղծուած բերդերի և վանքերի աւերակները:*

*Վաղը, երբ այդ ծորում կը լսուի ձեր ոտների ձայնը, ձեր գէնքերի շաչիւնը, հայ գերիները, Քէյֆաշէնի բէգերի շնաբարոյ կրքերի առարկան դարձած հայ կանայք ծնկաչոք կ'աղօթեն ձեր գէնքի յաջողութեան համար:*

---

<sup>1</sup> Ուժանակներով ու ռունքերով զինուած խումբեր են ասոնք, որ գիշերային յարձակումներու ատեն իրենց համարձակ գործողութեամբ սարսափ կը տարածէին թշնամի շարքերու մէջ: Ծ. Հ.:

*Վաղը, երբ քաջերդ Աջիբաջ հասաք, յիշէք խալիլ-բէգեան սև օրերը, երբ այս գիւղի մօտ թշնամին բարբարոսաբար մորթոսեց երկու հազարի չափ օսմանեան սրից ճողոպրած հայ կին ու երեխաներ: Ասում են, այժմ այնտեղ մի ամբողջ ձոր լիքն է կմախքներով, գանկերով, ուր յաճախ հիւր են գալիս Գեղուածորի շներն ու գիշատիչները:*

*Յիշէք այդ, և եղէք անխնայ ձեզ դիմադրողների նկատմամբ, ասպետ և մարդ եղէք կանանց, երեխաների և ծերերի նկատմամբ:*

*Ուրեմն, յառաջ, մեզ հետ Աստուած և Ղաւիթ-Բէգի վրիժակ հոգին»:*

ՆԺՂԵՅ

Նոյն օրը կը յայտարարուի գօրահաւաք:

Քսանըչորս ժամուայ մէջ Ղափանի վաշտերը կազմ ու պատրաստ կը հաւաքուին Յանքերը, Գենուազցիները՝ Բաղաբերդ, իսկ Դարապասի ու Տաթևի ուժերը կը կեդրոնանան Մալտաշ: Նոյեմբեր 31-ի ցերեկը զօրքը ռազմախաղերով ժամանակ կ'անցընէ:

Երեկոյեան դէմ Նժդեհ իր զօրքին կը խօսի կատարուելիք արշաւանքի նշանակութեան մասին: Կը բացատրէ, թէ աւարի և կողոպուտի տենչը չէ իրենցը այդ կռուին մէջ, թէ յափշտակութենէ ու կողոպուտէ բարձր նպատակ մը զիրենք կը տանի ռազմադաշտ, ուր պիտի վճռուի այդ երկրին հարազատ զաւակներուն ապրելու անկորնչելի իրաւունքը: Հերոսներու անունով կ'զգուշացնէ զօրքին ձեռք չբարձրացնել կիներու և երախաներու վրայ:

Գիշերուայ ժամը 12-ին զօրքը շեփորի ձայնէն կազմ ու պատրաստ ոտքի վրայ է արդէն, գիշերուայ 1-ին կը տրուի արշաւանքի հրամանը: Ժամը 4-ին տրուած մարտագրի համաձայն գրուած են իրենց դիրքերը ու կ'սպասեն ընդի. յարձակողականի ազդանշանին: Ժամը 6-ին Ղափանցիք բռնած են Գեղուածորի բարձունքները և պայթուցիկ տակառի մը տուած նշանին վրայ՝ գրոհը կ'սկսի: Կռուի առաջին օրը թշնամին ուժեղ դիմադրութիւն մը ցոյց կու տայ, երկրորդ օրը հայ զօրքը կը մտնէ Շհարջիկ: Դեկտեմբեր 2-ը կ'անցնի առանց վճռական արդիւնքի: Դեկտեմբեր 3-ին կը հասնի Յանքերը Նոյեմբեր 24-ին Գորիսէն ուզուած թնդանօթը, որ երկու հրանօթ արձակելէ ետք՝ կը փճանայ:

«Պահեստում ընդամենը մէկ օրուայ հաց կայ», - կը գրէ տնտեսական բաժնի կառավարիչը: Գորիսէն կը հաղորդեն. «Մթերանոցներում ռազմանիւթը սպառած է»:

Հակառակ այս բոլորին՝ կռիւը կը շարունակուի դեռ:

Հետևեալ օրը Բաղաբերդի բարձունքին վրայ կը ծածանի հայկական եռագոյնը:

Կռուի եօթներորդ օրը (Դեկտեմբեր 7-ին) կը գրաւուի Աղջի-բաշին՝ Գեղուածորի վերջին գիւղը: Պարտուած՝ թշնամին կը նահանջէ դէպի Նախիջևան: Դեկտեմբեր 10-ին շրջանի ամբողջ հայութիւնը կը տօնէր զօրքին տարած փառաւոր յաղթանակը:

Գեղուածորի յաղթութեան լուրը շուտով կը տարածուի ամէն կողմ: Այս առթիւ Ջանգեզուրի Ազգ. Խորհուրդի անդամ Մելիք Սմբատ Ստեփանեան հետևեալ գրութիւնը կ'ուղղէ հրամանատար Նժդեհին.

*«Սիրելի՛ Գարեգին,*

*Կատարածներդ անվերջ շնորհակալութիւն: Կ'ուզենայի այս պատմական օրերին գեղեցիկ յաղթական շարքերը այստեղ ընդունել և ապա վերադառնալ կենտրոն»:*

ՍՄԲԱՏ ԲԷԿ

Ղափան, 1919 Դեկտեմբեր 8

Քանի մը օր վերջ զօրքին ցանկութեամբ և անոր անունով, քսանըհինգ վաշտապետներ հետևեալ նամակը կը գրէին իրենց հրամանատարին.

*«Մենք Ղափանի զինուորութիւնն ու վաշտապետներս, ի նկատի առնելով այն, որ Դուք լինելով Ղափանի ռազմական ուժերի հրամանատարը, ո՛չ թէ միայն զերծ պահեցիք մեր երկրի սահմանները թշնամի ոտնձգութիւններից, այլև մաքրեցիք անառիկ Գեղուածորը, որ մահու չափ վտանգ էր սպառնում մեր Հայրենիքին: Որոշեցինք երախտագիտութեամբ նուիրել Ձեզ, սիրելի՛ հրամանատար, Դաւիթ-Բէկեան պատուոյ սուր հետևեալ մակագրութեամբ. **ԳԱՐԵԳԻՆ ՆՇՂԵՅԻՆ**, որին Ղափանն անուանեց երկրորդ Դավիթ-Բէկ, իսկ թշնամին՝ **Աժդահա Փաշա**»:*

Ի դիմաց զինուորութեան՝  
Վաշտապետներ (25 ստորագրութիւններ)

Ղափան, 1920 Յունվար 15

Նոյն խանդավառութեամբ Մեղրիի հայութիւնը կ'ողջունէ Կապարգողթի հրամանատարին Մեղրի մուտքը.

*«Ողջունում ենք յաղթանակից յետոյ Ձեր կրկին այցը Մեղրիին, որի հարազատ զաւակը լինելու բախտն ունինք: Ողջունում ենք Ձեր տարած յաղթանակն ու ասում. Բարի գալուստ: Դուք մեր*

*ազգի սրբութեան զինուորներով կատարեցիք մի մեծ պատմական  
ակտ. հոժ հայ բնակչութեան մէջ որպէս մշտական արգելառիթ՝  
թուրք ազգաբնակչութիւնից մաքրեցիք Օխչին և Գեղուածորը, ընդ  
միշտ ապահովելով հայերիս սպառնացող թիկունքը: Դուք ճշմար-  
տացրիք մեր անմահ ռազմիկ բանաստեղծ Ռ. Պատկանեանի  
Աստուած վկայ, որ մէնք կը յաղթեինք,  
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք,  
խօսքը և մեր ազգի անձնուրացներից մէկը հանդիսացաք  
այս արիւնոտ օրերին: Դուք բարձրացրիք հայ զինուորութեան  
ոգին ու նրա համբաւը: Կեցցէ՛ք Դուք, կեցցէ՛ն Ձեր բոլոր զինուոր-  
ները»:*

Ի դիմաց Սեղրիի Հայութեան  
ԵՓՐԵՄ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Սեղրի, 1919 Դեկտեմբեր 26

## ՇՈՒՆՈՒՄԻ ԱՐՇԱԲԱՆՔ

Գեղուածորի գրաւումն վերջ Բարկուշատի և Գողթանի  
թրքութիւնը արհաւիրքի օրեր կ'ապրէր:

Իսկ Օրտուբաղը - Համադուրանական շարժումին այս բոյնը,  
համոզուած, որ իրեն պիտի տրուէր նոր հարուածը՝ սկսած էր  
Արաքսի պարսկական ափը փոխադրել իր հարստութիւնները:

Հայ զօրքը սրտատրոփ կ'սպասէր յառաջ շարժուելու  
հրամանին:

Այդ օրերուն Նժդեհ Երևանէն Գորիս ժամանած զօր. Ղազար-  
րովի կը ներկայացնէ Օրտուբաղի դէմ ձեռնարկուելիք արշաւան-  
քին մարտագիրը: Իսկ զօր. Ղազարով կը հրաւիրէր Նժդեհը  
խորհրդակցութեան մը, որուն նպատակն էր Դրօժի և զօրավարին  
կողմէ Շուռնուխի դէմ կատարելիք արշաւանքը:

Նժդեհ աւելի նպատակայարմար կը գտնէ Օրտուբաղի դէմ  
սկսուելիք արշաւանքը, ու կը բացատրէ Շուռնուխի դէմ ձեռնարկ-  
ուելիք գործողութեան ռազմագիտօրէն վտանգաւոր ըլլալը:

Այն պահուն, երբ հայկական Ղարաբաղի մէջ ապստամբ-  
ական շարժումներ կը խմորուէին՝ Շուռնուխի արշաւանքը առիթ  
պիտի տար Ատրբեջանի մեծ ուժեր փութացնել թէ Ղարաբաղի և թէ  
Զանգեզուրի արևելեան ճակատներու վրայ կռիւներու մասնակցող  
թուրքերուն: Շուռնուխի ուղղութեամբ զինուորական գործողու-  
թիւններ սկսիլ՝ կը նշանակէր բարդացնել Ղարաբաղի դրութիւնը,



ուր այդ օրերուն ո՛չ կանոնաւոր կազմակերպութիւն կար, ո՛չ ալ բաւարար ռազմամթերք: Կար և Գողթանի վտանգուած այդ շրջանի պարագան, զոր անտեսել կարելի չէր:

Հրամանատար Նժդեհ Շուռնուխի արշաւանքին մասնակցելէ առաջ գրութիւն մը կ'ուղղէ Դրօսի, ուր ի մէջ այլոց կ'ըսէր.

*«Որպէս յեղափոխական իմ բարոյական պարտքն եմ համարում վերջին անգամ նախազգուշացնելու Ձեզ, որ Շուռնուխի գործողութիւնները շատ ծանր հետևանքներ պիտի ունենան Ղարաբաղի և Գողթանի համար:*

*Ի հարկէ, իմ տեսակէտները տուեալ հարցերի մասին ինձ՝ որպէս զինուորականի, իրաւունք չեն տալիս չի կատարելու Գորիսի հրամանը: Եղէք համոզուած, որ տրուելիք խնդիրները իմ ուժերի կողմից կը կատարուին ամենափայլուն կերպով»:*

ՆԺԴԵՅ

1920 Յունվար 17-ին Նժդեհ թիւ 17 հետևեալ մարտագիրը կ'ուղղէ իր վաշտերուն.

1. Շուռնուխի ուղղութեամբ թշնամին իր ձեռքին պահելով Ալի-Ղուլի Ուշաղի, Էյվազլար, Շամսագ, Ղուրթղալա, Մազըթտի, Ային գիւղերը և Քեափագ, Ային-Տաղ և խանակա բարձունքները, փակել է Ղափան-Գորիս խճուղին: Հրամայուած է մաքրել և ապահովել այդ ճանապարհը թշնամու յարձակումներից:

2. Զինուորներ, անհաշտ թշնամին նորից մեզ իր ձեռնոցն է նետել: Վերցնենք առանց տատանումի: Օրեր առաջ իմ արևմտեան ուժերի խենթ հարուածներից ընկաւ անառիկ Գեղուածորը: Օրեր անց՝ ձեր նոյն Գեղուածորեան թափի ու կրակի առաջ պիտ ընկնի Որոտանի աջ ափը:

Այստեղ, Գեղուայ բարձունքներում և ձորերում մեզ զօրավիզեց Դաւիթ-Քէզի վրիժավառ ստուերը, այստեղ, Որորտանի ճակատում, մեզ կ'առաջնորդէ թորոս Իշխանի հայրենամէր հոգին: Եօթ բարձունք ունի այս ճակատը, հպարտ բարձունքներ, որոնց տիրելու մէջ, որոնց վրայ է մեր փրկութիւնը: Ով տիրեց այդ լեռներին՝ նա է տէրը Զանգեզուրին: Ուրեմն յառա՛ջ, իմ եօթն անգամ սիրած և քաջ Ղափանցիներ, յառա՛ջ դէպ այդ բարձունքները, դէպ Քեափագ, Ային-Տաղ, դէպ Հարթիզ:

Մեր հետ Աստուած և մեր պատերազմական բախտը, յառա՛ջ:

ՆԺԴԵՅ

Յունվար 19-ին առաւօտուն կ'սկսի յարձակողականը, որ հետեւեալ օրը յաղթութեամբ կը վերջանայ: Թշնամի զօրամասեր կը խորտակուին, և վեց գիւղերու փոխարէն, զոր գրաւելու հրահանգ տրուած էր, Կապարգողթի ուժերը կը գրաւեն երեսունէ աւելի գիւղեր ու կը տիրանան բազմաթիւ կարևոր պատերազմական դիրքերու: Գեղուածորէն վերջ Շուռնուխը պատուաւոր էջ մը կը գրաւէ հայ Լեռնաշխարհի կռիւներու պատմութեան մէջ: «Իսկ թէ որչափ սարսափ կ'ազդէր թշնամիին Նժդեհի ներկայութիւնը, և թէ ինչպիսի հմայք ունէր ան իր զինուորներուն համար՝ բաւական է յիշել այդ կռուի մէջ Խալաջ գիւղի անառիկ դիրքերը, երբ հայ զինուորները հնարաւորութիւն չունեցան գրոհ տալով գրաւել ու մուրը վրայ հասնելուն պատճառով կը կամենային թողնել զանոնք, Նժդեհ ինքն անծամբ անվեհերութեան և անճնազոհութեան օրինակ հանդիսանալով՝ միայն տասը հեծեալ զինուորով կը յարձակի թշնամիին վրայ և կորագլուխ փախստեան կը մատնէ զայն, դիրքերը գրաւելով»<sup>1</sup>:

Դժբախտաբար, շատ կարճ կը տևէ Շուռնուխի յաղթութեանց ձգած ուրախ տպաւորութիւնը: Գորիսի հրամանատարութեան ռազմավարական սխալները խորապէս կ'անդրադառնան տեղւոյն հայ ազգաբնակչութեան վրայ: Էդիֆ Բէյ՝ օգտուելով հայկական ուժերու Շուռնուխի ճակատին վրայ կեդրոնացած ըլլալու պարագայէն կը դիմէ Ազուլիսներու տեղահանութեան: Վտանգի ներքև կը գտնուէր նաև Գողթանը – հայ աշուղներու պատմական այդ հողամասը:

Սօտ 12.300 ոտնաչափ բարձրութիւն ունեցող Ղափուջուղի լեռնանցքով Սիւնիքէն անջատուած այդ երկրամասը կը մնար մեն մենակ՝ լեռնանցքի անանցելիութեան պատճառով:

1919-ին իր ճակատագրին ձգուած՝ Գողթան ապաստան ու սնունդ էր տուած թշնամիներէ հալածական՝ Աղայի, Գեալի, Ղազանջու, Շուռութի և Փառադաշտի հայ գաղթականներուն:

Այդ թուականներուն Կապարգողթի ընդհ. հրամանատարը զօր. Ղազարովին գրած իր մէկ գրութեան մէջ Գողթանի մասին կ'ըսէր հետևեալը. «Չաղորդագրում եմ Ձեզ, որ մի քանի օր ևս, և Գողթանի տեղ մենք կ'ունենանք մի հսկայական գերեզմանատուն: Յրէշաւոր չափերի հասած սովը սկսել է իր աւերածութիւնները: Օր չէ անցնում, որ սովամահութեան դէպքեր տեղի չունենան գրեթէ բոլոր գիւղերում: Ժողովուրդի մի մասը կերակրւում է շների և

---

<sup>1</sup> Արնոտ գիրք, էջ 30-31:

կատուների մտով, մի բան, որից առաջացած տարափոխիկ հիւանդութիւնները լրացնում են սովի կատարած հունձը»:

Իսկ գաւառամասի կօմիսար ողբացեալ Աշոտ 1920 Ապրիլ 16-ին կը գրէր հրամանատար Նժդեհին. «ժողովուրդի դրութիւնը ուղղակի ողբերգական է: Ղափուջուղի երկու երեսների վրայ թափօթուած ահագին քանակութեամբ կանանց ու ծերերի դիակները պերճախօս ապացոյցներ են հաստատելու, որ մարդիկ կամաւոր կերպով մահուան են դիմում միայն սովից ազատուելու համար: Գողթանին պահողը ներկայ մօմենդում միայն Ղափուջուղն է: Այդ հսկան հենց որ մի քիչ հնարաւորութիւն տայ անասուններ անցկացնելու՝ Գողթանում ոչ մի մարդ չմնայ: Մարդիկ պարզ ասում են. Գողթանը մեզ պէտք չէ, եթէ Հայաստանի Հանրապետութեան համար նա ռազմագիտական քաղաքական կարևորութիւն ունի, ապա Գողթանը իւր տեղում պահել կարող է Հանրապետութիւնը իւր միջոցներով: Ժողովուրդը մեռնում է սովից: Նա անընդունակ է դառել դիմագրաւելու թշնամու ամենաթեթև գրոհին»:

Այս դժնդակ պայմաններու մէջ Գողթանի ժողովուրդը ենթակայ անվերջ յարձակումներու՝ իր վերջին համագումարի մէջ կ'որոշէ. *կամ Կռիւ կամ գաղթ*:

Հայկական Լեռնաշխարհի ինքնապաշտպանութեան գործով զբաղվողներու համար պարզ էր Զանգեզուրի և Ղարաբաղի վերապահուած դրութիւնը. եթէ Գողթան յուսահատած գաղթէր մշտական սպառնալիքի պիտի մատնուէր նորակազմ Հայ Հանրապետութիւնը:

Գողթանի վերջին համագումարէն յետոյ Կապարգողթի ընդհ. հրամանատարը Աշոտ-Մելիք-Մուսեանէ կ'ստանայ հետևեալ գրութիւնը. «Մենք կը մեռնինք, մեր ձեռքով կը կոտորենք մեր որդիներին, մեր քոյրերին, հայրերին ու մայրերին, որպէս զի շան նման սովից չսատկեն, իսկ տղամարդիկ կը կռեն մինչև վերջին շունչը»:

Ժամանակը սուղ էր: Կորսուած իւրաքանչիւր օր կրնար աղիտալի հետևանքներով անդրադառնալ Գողթանի վրայ: Պէտք էր փշրել այդ գաւառակի շուրջ թշնամիին ստեղծած օղակը:

Հակառակ Գորիսի հրամանատարութեան տատանումներուն, Նժդեհ կ'որոշէ օգնութեան հասնիլ Գողթանի: «Ըստ Գողթանի ռազմական ուժերի հրամանատարի վերջին հաղորդագրութեան, կը գրէ ան Գորիսի հրամանատարութեան, յուսալքուած ու քաղ-

ցած ժողովուրդը պարզ եղանակի է սպասում, որ անցնի Ղափու-  
ջուղը, որ գաղթի, թողնի Գողթանը, որը յանուն Զանգեզուրի ինք-  
նապաշտպանութեան իր գողգոթան դարձրեց: Երէկ Քաջարանում  
ինձ և Աշոտին ներկայացան 200-ից ավելի Գողթանցիներ, որոնք  
նոր էին թողել Գողթանը և փախել սովի ձեռքից: Առաջարկեցինք  
վերադառնալ: Նրանք լաց ու աղաղակով պատասխանեցին: Յուս-  
ադրեցինք, որ մինչև ամսի 18-ը դրսի ուժերով պիտ անցնին Գող-  
թան: Խոստացան վերադառնալ: Ինչպէս տեսնում էք սովը ու իր  
առաջացրած մասնակի գաղթերը հասարականապէս օր ըստ օրէ  
քայքայում են Գողթանը և սպանում նրա մարտունակութիւնը,  
որից մօտիկ ապագայում մեծ չափերով կարող է օգտուել թշնամին:  
Կրկնում են, մի քանի օր ևս և պարտաճանաչ ու մարտնչող Գող-  
թանը, մեր հանրապետութեան այդ Բելգիան, որը երկրորդ տարին  
է, ինչ հաւատարիմ պահակի պէս ամենադժնդակ պայմաններում  
պաշտպանում է Զանգեզուրի նախադուռը՝ կ'ընկճւի և կը կորչի  
ընդ միշտ: Զանգեզուրի վերջնական փրկութեան ձգտողը նախ  
պիտ մտածէ Գողթանի մասին, որի մի բուռ ժողովուրդը այլևս  
առանց դրսի օգնական ուժերի չի կարող մնալ Ղափուջուղի այն  
կողմը: Այս անգամ էլ ինձ և Աշոտին յաջողուեց մի կերպ խափանել  
Գողթանի մասսայական գաղթը, որն այնքան աղէտալի պիտ լինէր  
Զանգեզուրի համար: Տուածս խօսքը Գողթանցիների դժեւ չեմ  
կարող, դա ոճիր և դաւաճանութիւն կ'լինէր: Վճռել եմ մինչև ամսիս  
18-ը մի քանի հարիւր Ղափանցիներով անցնելու Ղափուջուղ: Եթէ  
չկարողացայ փրկել ժողովրդի դրութիւնը, կը մեռնիմ նրա հետ,  
նրա կողքին»:

ՆԺՂԵՅ

1920թ., 11 Փետրվար

Վերոհիշեալ գրութենէ վերջ Նժդեհի հետևեալ հրամանը  
կ'ուղղէ զօրքին.

*1. Երկրորդ տարին է, ինչ թշնամին անվերջ կրկնում է իր  
յարձակումները Զանգեզուրի նախադուռը պաշտպանող Գողթանի  
մի բուռն ժողովրդի վրայ՝ այդ շրջանին տէր դառնալու ու այդպի-  
սով միացնելու երկու մուսուլման երկիրները - Ատրբեջան ու Տաճ-  
կաստանը: Տանակերտը տեղահանելուց յետոյ թշնամին աննախ-  
ընթաց բարբարոսութեամբ սրի և հրի մատնեց Գողթանի կուլտուր-  
ական փառքը կազմող Ազուլիսների ուղղամիտ ազգաբնակչու-*

թիւնը: Գողթանը ցայսօր ամենադժնդակ պայմաններում իր վրայ է քաշել, զբաղեցրել Նախիջևանի և Օրտուբադի շրջանների բովանդակ մուսուլման ուժերին և այսպիսով ապահովել Ձանգեզուրը թիկունքից: Այժմ նա՝ թշնամու յամառօրէն կրկնող յարձակումներից տնտեսապէս ու հասարակականապէս ծայր աստիճան քայքայուած, իւր վերջին համագումարում որոշել է՝ «կամ կռիւ կամ գաղթ»:

Խորապէս գիտակցելով Գողթանի ռազմագիտական խոշոր նշանակութիւնը, զնահատելով նրա Ձանգեզուրի համար կատարած դերը և նկատի առնելով նրա արդի աննախընթաց կրիտիկական դրութիւնը՝ հրամայում են Կապարզողթի ռազմական կամաւոր ուժերին, մի շարք մուսուլման գիւղերի տեղահանութեամբ և աւերումով Գողթանի ժողովրդի համար ստեղծել ռազմագիտական ու տնտեսական հնարաւորութիւն շարունակելու իր գոյութիւնը հայրենի երկրում:

2. Զինակիցներ, հասել է օրը, անօրինակ հերոսութեամբ աւելի քան երկու տարի ամենադժնդակ պայմաններում Ձանգեզուրի նախադուռը պաշտպանող այն մի բուռն ժողովրդի փրկութեան օրը, այն քաջահուն ժողովրդի, որն ամիսներ առաջ խորապէս գիտակցելով իր շրջանի ռազմագիտական խոշոր նշանակութիւնը, բաց ճակատ յայտնեց մեզ իր որոշումը. «Գողթանը կը մեռնի, բայց չի գաղթի»:

Հասել է ժամը, երբ երկու մեծ ու ընտիր հայորդիների՝ Աստուածաշունչ Քրիստափորի և Ռոստոմի արիւնաներկ ու սրբապղծուած ծննդավայրը՝ երբեմնի չքնաղ Ազուլիսները պիտ վերագրաւուին, պիտ վերականգնին իրենց շենութեամբ ու բարոյական մեծութեամբ:

Լսէք, հնչել է ժամը զինակիցներ, երբ վախկոտ Էդիֆների տմարդ սրից զարնուած հազարաւոր անթաղ մեռելները ձեզնից արդար ու արիւնոտ հատուցումն են պահանջում:

Լսէք, և հարիւրաւոր գերուած ու լլկուած հայ կանանց, որոնք ձեր գոռ արշաւի և ուռաների սպասումով, ձեզ հերոսութեան են կանչում:

Լսէք, և ինձ, ձեր ղեկավարին, որը ձեզնից ծուխ, թշնամի գիւղերի հրդեհն ու քաղցր ծուխն է պահանջում, այն փրկարար ծուխը, որն այնքան բարձր ու առատ բարձրացրիք և պատմական Ռոտանի ափերում, և Գեղուածորերում:

*Լսէ՛ք, իմ քաջ ու հայրենասէր զինակիցներ, լսէ՛ք, լցուէ՛ք բոցով ու վրժով, առէ՛ք զէնքներդ ու յառա՛ջ: Յառա՛ջ, մեզ հետ Աստուած և մեծ հայրորդիների՝ Քրիստափորի և Ռոստոմի անհանգիստ հոգիները: Յառա՛ջ:*

Հրամանատար ՆԺՂԵՅ

Փետրվար 12, ժամը 7-ին

Իր աշխարհագրական դիրքով Գողթան առանձնայատուկ դիրք մը կը գրաւէ Սիւնեաց աշխարհին մէջ: Տարւայ ութը ամիսը՝ տիրող սաստիկ ձիւներուն պատճառով առանձնացած կը մնայ ան իր շրջապատէն: Ղափանցին քաջ գիտէր, թէ տարուայ այդ խստաշունչ շեղանակին դէպի Գողթան որևէ արշաւանք վտանգաւոր փորձ մըն էր, բայց համոզուած, որ օգնութեան գործին մէջ վարանում դնել՝ թշնամիին սուրին մատնել կը նշանակէր իր եղբայրը՝ մէկ մարդու պէս ոտքի կանգնեցաւ ան:

Մարտ 8-ին Ղափանի և Գենուազի ուժերուն մէկ մասը կը համախմբուի Բաղաբերդ: Մարտ 9-ին կը տեսնուին ուտեստեղէնի պատրաստութիւններ:

Ժողովուրդի կողմէն զօրքին կը տրուի սպիտակ կտաւ պատրաստուած դրօշակ մը, մէկ կողմը՝ *«Ղափանը Գողթանի համար»*, և միւս կողմը՝ *«Պատանակրաց արշաւանք»* մակագրութեամբ: Ընդհանուր խանդավառ ցոյցերուն մէջ հրամանատար Նժդեհ կ'ըսէ իր զօրքին. *«Մենք մեզ հետ տանում ենք մի պատան: Յաջողութեան դէպքում կը հազցնենք թշնամուն. մեռնելու դէպքում՝ մեզ կը հազցնեն»:*

Արդարև սովորական արշաւանք մը չէր ասիկա, այլ նուիրական ուխտագնացութիւն մը, երբ ուխտաւոր-զինուորը մոռցած ճամբու իրեն սպասող վտանգները, մոռցած հաւանական մահը, կը հրճուէր իր ուխտին հասնելու մոլեռանդ ցանկութեամբ:

Մարտ 9-ին երեկոյեան զօրավար Ղազարովէն կ'ստացուի հետևեալ հրամանը. *«Յետածգել Գողթանի օպերացիան: Մեր հակահետախուզականներու տուած տեղեկութիւններից երևում է, որ Ջիբրայիլ-Կարեազիի շրջաններում երևացել են Նուրի փաշան և զենեալ Մեխմանդարովը: Ատրբէջանը պատրաստում է մեծ ուժերով մի քանի կէտերից յարձակելու Ջանգեզուրի վրայ»:*

Նոյն գիշերուայ ժամը 1-ին Նժդեհը կը պատասխանէր զօր. Ղազարովիին. *«Ձեր տուած տեղեկութիւններից յետոյ Գողթանի արշաւանքը ինձ համար դառնում է աւելի իմաստալից և անյետաձգելի: Հենց այս գիշեր Քաջարանում հաւաքուած զօրքը իմ ղեկա-*

վարութեամբ շարժվելու է առաջ»: Կը տրուի արշաւանքի հրամանը: Տարուայ խստաշունչ այդ եղանակին զօրքը կը քալէր դէպի իր պայքարի Գողգոթան:

Մարտ 15-ին ան կը կեդրոնանայ Բիստ գիւղին մէջ: 17-ին Ցղնայի մէջ տեղի կ'ունենայ վաշտերու և պայթուցիկ տակառներու կեդրոնացումը: 19-ին երեկոյեան զօրքը կ'ոգեկոչէ մեր ցեղին ազատագրութեան համար ինկած նահատակներու անունները: Առտուան դէմ կը տրուի յարձակողականի առաջին հրամանը, ու լոյսը դեռ չբացուած՝ հրամանատար Նժդեհի ուժերը կը գրաւեն Խարաբակիլան հինաւուրց բերդը և Դոյլուն, Քալանթար, Տիսար, ՎալաՎիր, Աղբին, Տիզէն, Վանանդ, Դոնիս գիւղերը ու Օրտուբադի նախադուռը, և սուրէ կ'անցընեն ամբողջ պահակախումբը:

Մարտ 21-ին Գողթանի բոլոր թուրք գիւղերը կ'անցնին Յայոց ձեռքը, բացի Արաքսի ափին վրայ ինկած Եաջին և Դաստակ թաթար գիւղերէն, որոնց դէմ որևէ թշնամական գործողութիւն չսկսուիր քաղաքական նկատումներով:

Կռուի երկրորդ օրը Նախիջևանէն Գողթանի Մահմետականներուն ղրկուած օգնութիւնը առիթ կու տայ, որ թշնամին դաշտային թնդանօթի քանի մը հրանօթներ արձակելէ վերջ՝ դէպի Ջուլֆա նահանջէ:

Նոյն օրը ռազմական բոլոր կարևոր կէտերը Յայերու ձեռքը կ'անցնէին: Ուժերու նոր դասաւորումով մը Նժդեհ կը պատրաստուէր հարուածել Օրտուբադը<sup>1</sup>, որ արդէն խուճապի մատնած էր,

---

<sup>1</sup> Վերջին կռիւներու առթիւ 1920 Յունվարի սկիզբը Ատրբէջանի պարլամենտի անդամ Ջէլիլ Բէգ Սուլթանովը Ջիբրայիլէն կը հեռագրէ Բագու իր կառավարութեան. «Գաւառի դժբախտ ազգաբնակութեան անունով կ'աղերսեն թուղթի վրայ բողոքներէն անցնիլ ակտիւ գործունէութեան ու կործանումէ փրկել Ատրբէջանի լաւագոյն անկիւնը: Ձանգեզուրէն յետոյ հերթը Դարաբադին է»:

Գողթանի այդ կռիւներու մասին *Ատրբէջան* թաթար թերթէն Թաւրիզ հրատարակուող *Միմարէթ* հայ թերթը իր 1920 Ապրիլ 22 թիւ 13-ի մէջ թարգմանաբար կ'արտատպէր հետևեալը. «Օրտուբադի հասարակական գործիչ Ասքիեր Խանը, որ կ'ապրի ներկայումս Թաւրիզ, Ջուլֆայէն ուղղարկած է հետևեալ հեռախօսականը. «Նէվրուզի առաջին օրը Մարտ 21-ին հայկական զինուած ուժերը բաղկացած 10.000 հոգիէ յարձակեցան հետևեալ թաթարական գիւղերուն վրայ՝ Դայլուն, Վանանդ, Վալաւիր, Յանան, Տիսար, Աղրի և Տիաս: Գրաւելով այդ գիւղերը՝ այրեցին և յարձակեցան Օրտուբադի վրայ: Հեռախօսային հաղորդակցութիւնը ոչնչացուած է: Օրտուբադի կողմէ կը լսուին

երբ Ղափանէն սուրհանդակ մը Գողթան կը հասնի բերելով յետագայ հաղորդագրութիւնը.

*«Ամսոյս 23-ին սկսուեցին մեր ճակատներուն կռիւները: Թշնամին մեծ ուժերով առաջանում է: Թուրքերը վերցրել են իրենց նախկին դիրքերը: Ազարակ-Չէյվա գծի վրայ եղած գիւղերի*

---

ուժեր քնդանօթածգութեան ձայներ: Օրտուբադի ժողովուրդը կը խնդրէ ձեզմէ օգնութիւն մուսուլմաններուն ազատելու համար: Յայտնեցէք Ատրբէջանի Կառավարութեան և Եւրոպական պետութիւններու ներկայացուցիչներուն ու միջոցներ ձեռք առէք պաշարուած Օրտուբադը ազատելու համար»: Երկրորդ հեռախօսականը կ'ստացուի Ջուլֆայէն. «Յայերը գրաւած են Օրտուբադ տանող բոլոր ճանապարհները: Նախիջևանէն եկած օգնական ուժը կ'աշխատի անցնիլ Օրտուբադ Ահարի վրայով: Շրջակայ գիւղերու ազգաբնակչութիւնը սարսափի մատնուած՝ հաւաքուած է Օրտուբադ: Ուտեստեղէն չի ճարուիր: Դիմեցէք Պարսից Կառավարութեան և օգնութիւն խնդրեցէք Ղարադաղէն: Օրտուբադը կը ռմբակոծուի: Երկու կողմէն ալ մեծ կորուստներ կան: Յայկական ուժերը կազմուած են կանոնաւոր կառավարական զօրքերէ՝ Չանգեզուրցիներէ, Պարսկահայերէ և տեղացիներէ»:

Տարակոյս չկայ, որ Ասքիեր խանի տուած լուրերուն մէջ կային քանի մը դիտումնաւոր խեղաթիւրումներ. առաջին՝ Երևանեան կանոնաւոր զօրքեր և Պարսկահայեր երբեք չեն կռուած Գողթանի ճակատին վրայ, երկրորդ՝ հայ ուժերու թիւը 700-է աւելի եղած չէ, երրորդ՝ Յայերուն զոհերը եղած են շատ չնչին: Ունեցած են 3 սպաննուած և վիրաւորուած է Գողթանի հրամանատար Ղազարը: Թափանցելով Չանգեզուրի մէջ կատարուած այս շարժումներու ռազմական արժէքին՝ Բագուի *Ատրբէջան* թերթը իր խմբագրականին մէջ մասնաւոր յաւակնութեամբ մը կը գրէր. «Չանգեզուրը Ատրբէջանի ամենէն արժէքաւոր և անբաժան (?) մասն է: Որեւէ ոտնձգութիւն անոր վրայ՝ կայծակի արագութեամբ յուզում յառաջ կը բերէ ամբողջ Անդրկովկասի մէջ»:

1920 Փետրուարին Իթքիհատի Բագու կայացուցած համագումարը ի մէջ այլոց կ'անցընէ հետևեալ որոշումը. «Պահանջել Ատրբէջանի կառավարութենէն, որ վերջինս ամենակտրուկ միջոցներ ձեռք առնէ լիկվիտացիայի ենթարկելու Չանգեզուրի դէպքերը»: Իսկ խան-խոյսկին, Ատրբէջանի Արտ. Գործոց Նախարարը, սպառնազին կը բողոքէր Յայաստանի Կառավարութեան. «Պարտք կը համարեն Ձեզ տեղեկացնել, որ մահմետական ազգաբնակչութեան դէմ ռազմական գործողութիւններու չդադրեցնելու պարագային իմ կառավարութիւնս ստիպուած վճռական միջոցներ ձեռք պիտի առնէ՝ պաշտպանելու համար իր քաղաքացիներու կեանքն ու գոյքը: Ատկէ առաջանալիք ամբողջ պատասխանատուութիւնը թողնելով Հ. Կառավարութեան վրայ»:



*դրութիւնը օրհասական է: Մեր դէմ գործում է երեք թնդանօթ մեծ ուժերով: Խնդրում են շտապէք մեզ հասնելու, բերելով ձեզ հետ թարմ ուժեր»:*

Շտաբի Կապիտան ՆԱՐԻՆԵԱՆ

Ղափանի Հանքեր, 25 Մարտ 1920

Երկու ժամ անց կը հասնի երկրորդ սուրհանդակը, Ղափանի Ազգ. Խորհուրդի անդամ Ա. Բ.-ի հետևեալ գրութեամբ.

*«... Հրամանատար Նժդեհին,*

*Քո սիրեցեալ Ղափանը ձեռքից գնում է, այս գիշեր Ձեյվան յանձնել են թուրքերին, Ձեյվան ձեռքից գնալուց յետոյ պարզ է, որ Մողես, Ուժանիս, Եղավարդ և Ագարակն էլ էսօր կամ վաղը կ'գնայ, հրամանատարութիւն չը կայ, զինուորութիւնը սրտով չի կռոււմ, ի սէր այն նեղութիւններին, որ դու կրել ես մեր Հայրենիքին համար, հասիր մեզ, եթէ մինչև 3 օրը այստեղ չլինես քո քաջարի զինուորներով, այլևս Ղափանը կորած կը տեսնես»:*

Տեղակալ Ա. Բ.

Գիւտ-Կում, 1920 Մարտ 26

Կռուի դաշտին մէջ շահուած իւրաքանչիւր յաղթանակ փառքի էջ մը ունի վերապահած անոր, որ կռուիլ և մեռնիլ գիտէ: Անտարակոյս, մեռնելու այդ պատրաստակամութիւնը չէ, որ հրամանատարի մը տաղանդին ամենէն անհերքելի ապացոյցը կը կազմէ, որքան շղթայազերծուած անակնկալներ թափալախ դիմագրաւելու անոր կամքը: Այդ կամքով վճռեց Կապարգողթի հրամանատարը ճակատել Նուրի փաշային խորամանկ ռազմավարութեան՝ մօտաւոր ապագային թողնելով Օրտուբադի տրուելիք հարուածը:

## ՈՐՈՏԱՆԻ ԿՈՒԻՆԵՐԸ

Ձեյվան իյնալու վրայ էր, մնացած գիւղերը գաղթել սկսած էին, երբ դիրքերուն մէջ լսուեցաւ. «Հրամանատարը կը հասնի, անցեր է սարը...»<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Յետագային ձեռք ինկած տօքիւմաններէն կ'իմացուէր, որ Խալիլ փաշայի և Պրենս Ղաջարի սպայակոյտը լուրջ մտավախութիւններ ունէր հայ ուժերու նկատմամբ: Իր 1920 Մարտ 7 թիւ նամակով վերջինը կը գրէր թաթարական ուժերու փոխ. տեղակալ Մահմետովին.

Ապրիլ մեկի լուսաբացին կ'սկսի հակայարձակողականը: Գնականատային կարճ, բայց շեշտակի գրոհներով հայ զորքը կը շարունակէ թշնամին Հարթիզի և Սուսանի բարձունքներէն, կէս օրուայ մօտ, իրենց թիկունքը սարերուն տուած՝ հայ վաշտերը հեղեղի նման կը թափին Որոտանի թուրք գիւղերուն վրայ: Նուրի փաշայի և Պրենս-Ղաջարի զորքերը կորսնցուցած իրենց բարոյական կորովը՝ կը նահանջեն դէպի Դոնդուրլու և Խոջահան: Յաղթական հայ հրամանատարութիւնը կը վճռէ մեջտեղէն վերցնել Ջանգեզուրի և Ղարաբաղի միջև գտնուող թաթարական սեպը - մօտ հարիւր գիւղ, և այսպէսով կենդանի կապ ստեղծել երկու հայկական երկրամասերու միջև:

Ապրիլ 2-ի լուսաբացին հայ վաշտերը կը շարունակեն իրենց յանդուգն գրոհը: Թշնամին խոշոր կորուստներով տեղի կու տայ, ձգելով գերիներ, ձիեր, մեծ քանակութեամբ հացահատիկ և սպայակոյտի արխիւր: Ձեռք անցուած վաւերաթուղթերէն կ'իմացուի, որ Ատրբէջանի զօրամասերուն մէջ կը գտնուին թուրք սպաներ:

Կռուի երրորդ օրը վերջին կատաղի յարձակումով մը Հայերը կը գրաւեն Որոտանի ծախ ափին վրայ փռուած հարիւրի մօտ թաթար գիւղեր, ուրկէ բարձրացող բոցերը հրոյ ճարակ կը դարձնեն աւազակաբարոյ այդ որջերը:

Այդ օրերու ծնունդն է ահա հայկական Լեռնաշխարհի գաղափարը հրամանատար Նժդեհի մտքին մէջ:

## ԱՍԿԻԼՈՒՄԻ ԿՈՒԷ

Ջանգեզուրի և Ղարաբաղի միջև տարածուած թաթարական հողամասի առաջին շերտը մաքրելէ վերջ, կռուի ծանրութիւնը Ասկիլուն կը փոխադրուի: Իր սեպածն ու անառիկ դիրքով Ասկիլուն երկար ատեն պատուհաս էր դարձեր հայ բնակչութեան գլխուն:

Ձայն պատժելու նպատակով Ապրիլ 6-ին կը տրուի յարձակողականի հրամանը, երկու թևերու բաժնուած՝ հայ զորքը կը յառաջանայ: Թշնամին այս անգամ ալ կը խուսափի ճակատ առ

---

«Ստացուած տեղեկութիւններու համաձայն Հայերը մեծ ուժերով հասած են Չարալու և Կօզալուն, որոնք կը գտնուին Դոնդուրլուէն հարաւ: Հաւանական է, որ լուսաբացին Հայերը անցնեն յարձակողականի: Կը հրամայեն այդ առթիւ տեղեկացնել տաճիկ սպային՝ Դոնդուրլու-Դեմիրչլար հաղորդագրութիւններ ուղարկել զօրամասի շտաբը»: Գնդապետ Պրենս Ղաջար:

ճակատ կռուելէ, և պարտուած՝ կը նահանջէ: Հայ վաշտերը յաղթական՝ կը տիրեն Ասկիւլումի և շրջակայ քանի մը բլուրներու: Երեկոյեան դէմ անոնք կրակի կու տան Խոջահանի հարուստ շուկան:

## ՉԱԼԸՆԴՈՒՐԻ ԿՈՒԷ

Իր այս ճակատը զօրացնելու համար թշնամին օգնական ուժեր ստացած էր Ջիբրայիլէն ու Ղարատաղի պարսիկ խաներէն:

Կարճատև կռիւէ մը վերջ Ապրիլ 13-ին հայ ուժերը կը գրաւեն Շիւքիրադասի բարձունքը և կը մաքրեն Չալընդուրի (Բարթազ) շրջանը թշնամի թափթփուքներէ:

Յաղթութիւնը եղած էր փայլուն և վճռական:

Օրտուբադը շնորհիւ Խալիլ փաշայի խորամանկութիւններուն փրկուած էր, բայց փոխարէն թշնամի հարիւր գիւղեր աւերակ էին դարձեր<sup>1</sup>:

Չեռք ձգուած էր մեծ քանակութեամբ ցորեն և ռազմամթերք: «Այսքան մեծ ջանքերու և անձնագոհորութեան շնորհիւ է, որ ժողովուրդն սկսաւ ազատ շնչել և պաշտել իր հերոսը»: («Սիւնիք» թերթ)

Կրաւորական շրջանին յաջորդող 4-5 ամիսներու ընթացքին հրամանատար Նժդեհ Օխչիի, Գեղուածորի, Շուռնուխի, Որոտանի, Ասկիւլումի և Չալընդուրի փառահեղ յաղթութիւններով կ'ար-

---

<sup>1</sup> Այս նոր յաղթութեան առթիւ *Ատրբէջան* թերթը իր 1920 Ապրիլ 15 թիւին մէջ կը գրէր հետևեալը, զոր թարգմանաբար կը հրատարակէր Թաւրիզի *Միւնարթ* հայ օրաթերթը իր 1920 թիւ 15 համարով. «Պարլամենտի անդամ Ջալիլ-Բեգ Սուլթանովը Ջիբրայիլէն պարլամենտին կը հեռագրէ, որ Չանգեզուրի հայերուն վերջին յարձակումը սկսած է Մարտ 29-ին և վերջացած է Ապրիլ 4-ին: Մահմետական գիւղերը բոլորովին այրած են: Թալանէ գերծ մնացած մահմետականները փախած են Պարսկաստան: Պարսկաստանի մէջ մօտ 10.000 Ատրբէջանցի թուրքեր կը մնան անպատսպար ու քաղցած: Բնակչութիւնը խուճապի և սոսկումի է մատուած: Պարսիկները փոխանակ օգնելու փախստականներուն՝ կը կողոպտեն: Սուլթանովը ինքն ալ փախստականներու մէջ է»: Նոյն թերթի 1920 թիւ 14-ին մէջ կը կարդանք. «Գորիսէն կը հեռագրեն, որ Ղափանի ուղղութեամբ գործող թուրք ուժերու մէջ երևան է հանուած ատրբէջանեան հետիոտն տիպիզիայի մասնակցութիւնը: Չանգեզուրի և Ղարաբաղի միջև գտնուած հողամասը գրաւեր

դարացներ իր վրայ դրուած յոյսերը: Կռիւներու երկրորդ շարքը, որ պիտի յաջորդէր այնուհետև առաջին այս յարձակումներուն - զարգացած ու խորացած՝ օղակաւորումը պիտի դառնար հոգեբանական համեմատաբար աւելի պայծառ ապրումներու, որոնց հիմքերը տքնաջան և անխոնջ աշխատանքն էր դրած:

Քանի մի ամսուայ կռիւներու ընթացքին ճանչցուած էր հայ զէնքին ոյժը:

Ամբողջ շրջաններ մաքրուած էին թշնամի տարրերէ ու աւելի ազատ, աւելի վճռական գործունէութեան մը ասպարէզ բացուած էր հայ ուժերու առջև: Պարտուած թշնամին յուսահատած չէր սակայն, ու կը պատրաստուէր նոր ուժերով քալել Չանգեզուրի վրայ, մտահոգութիւնը և ջղայնութիւնը, զոր ան ցոյց կու տար վերջին դէպքերու առթիւ հասկանալի էր, ու հայ զօրքը կ'ասպրէր կռիւներու նոր շրջանի մը նախօրեակին:

---

Են հայ գիւղացիները: Գրաւուած են նաև Դեմիրչիլար, Գուրաթլու, Դոնդուրլու և Խաչմաս գիւղերը, մինչև Բարթազ»:

## IV ՂԱՐԱՔԱՂԻ ԴԵՊՔԵՐԸ

*Ատրբեջանեան զօրքեր դէպի Ղարաբաղ.– Շուշիի գրաւումը.– Ղարաբաղ օգնութեան կարօտ.– Հանդէս մը Գորիսի մէջ.– Օգնութիւն Ղարաբաղի.– Դրօ կը շնորհաւորէ Ձանգեզուրի ուժերը.– Մեծամասնականները Անդրկովկասի և Ձանգեզուրի մէջ.– Ներկայացուցչական ժողով մը Կապարգողթի մէջ.– Գորիս կը գրաւուի մեծամասնականներու կողմէ.– Իվանովի վերջնագիրը Նժդէհին.– Ղափանի երկրորդ Համագումարը.– Նժդէհի վերջնագիրը Իվանովին.– Գորիսի վերագրաւումը.– Սև մահապատիժ մը.– Գորիս Բ. անգամ Մեծամասնականներու ձեռքը.– Նժդէհ վիրաւոր:*

Ձանգեզուրի մէջ կատարուած ռազմական դէպքերը աննշմարելի պիտի չմնային Ատրբեջանի մոլեռանդ Սուսավաթիստներու համար, որոնք քաղաքական իրենց երազներուն խորտակուիլը կը տեսնէին Հայերու ձեռք բերած յաղթութիւններու մէջ:

Արդարև, Ձանգեզուրի մարտական յաջողութիւններուն կրնար յաջորդէր եւ Ղարաբաղի անկախութիւնը - ատիկա տապանաքարը պիտի ըլլար Ատրբեջանի համադուրանական ցնորքներուն: Պէտք էր շարժիլ, գերագոյն ճիգով մը խորտակել պէտք էր Ղարաբաղը, այնուհետև վճռական հարուածով մը միանալու համար Թուրքիոյ:

Եթէ երբէք Ղարաբաղի գիւղացիութեան անժամանակ ապստամբութիւնը կը փութացնէր իրեն համար որքան ողբերգական, նոյնքան և օրհասական կացութիւն մը՝ իրեն սպառնացող վտանգը, սակայն բացարձակ հետևանքը չէր իր որդեգրած քաղաքական սխալին:

Դեռ Հայաստանի անկախութեան առաջին օրերուն իսկ Սուսավաթիստները համաձայնած Իթփիհատի ներկայացուցիչ Խալիլ և Նուրի փաշաներու հետ՝ ծրագրած էին տապալել Հայկական Կառավարութիւնը և խլել Ղարաբաղ-Ձանգեզուր Լեռնաշխարհը:

Դեռ 1917-ին Ատրբեջանի համար մղձաւանջի չափ ծանր էր Ձանգեզուրն ու Ղարաբաղը իր տիրապետութեան սահմաններէն դուրս տեսնելու միտքը:

Այդ օրերուն արևելքի մէջ՝ ընդդէմ Ռուս մեծամասնական շարժումին՝ Անգլիոյ կողմէ կը մշակուէր Իսլամներու նպաստաւոր քաղաքականութիւն մը:

Անգլիա ո՛չ միայն պաշտօնապես կ'ստեղծեր ու կը ճանչնար Ատրբեջանի Հանրապետութիւնը, այլև այս վերջնոյն հողային անբաժանելի մասը կը համարէր Ջանգեզուր-Ղարաբաղը:

Ու հիմա, հակառակ իր յաւակնութիւններուն, Ջանգեզուր խորտակած էր դէպի իր սահմանները արշաւող ատրբեջանեան բանակները: Միւս կողմէ ապստամբական շարժում մը ծայր կու տար Ղարաբաղի մէջ, ուր չկար դժբախտաբար ոչ կանոնաւոր զինուորական կազմակերպութիւն, ոչ ալ կանոնաւոր ռազմամթերք<sup>1</sup>:

Ահա, այդ օրերուն Ղարաբաղ կը մտնէին թաթարական հորդաները՝ կրակի տալով երկու տասնակ մը հայ գիւղեր և Շուշին:

Օգնութիւն կ'աղաղակէր Ղարաբաղը: Դիմելով Ջանգեզուրի ռազմական ուժերու հրամանատար զօրավար Ղազարովին (պատճէնը Փոխ-Գնդապետ Նժդեհին) Ղարաբաղցիք կը խնդրէին 1920 Ապրիլ 8-ին.

*«Այժմ, երբ Ղարաբաղը բարձրացրել է ապստամբութեան սրբազան դրօշը և արնաքամ է լինում, պէտք է օգնել նրան ոչ թէ զօրանասերով կամ դրամական միջոցներով, այլ մի փորձառու առաջնորդով և ռազմամթերքով: Այդպիսի առաջնորդ այժմ Փոխ-Գնդապետ Նժդեհն է, որի անունը թշնամիների համար դառել է վրժխնդրութեան խորհրդանշան, և որի անունից թշնամին սարսափահար փախչում է, ինչպէս ցոյց տուեցին մօտիկ անցեալի դէպքերը, երբ թշնամու կանոնաւոր զօրքերը լսեցին Նժդեհի Գողթանից վերադառնալու մասին, խուճապահար փախստի դիմեցին: Գնդ. Նժդեհն ստեղծուած է ժողովրդի համար և նա պիտի լինի այնտեղ, ուր նրա կարիքն աւելի է զգացւում»:*

Մի խումբ Ղարաբաղցիների Ներկայացուցիչներ  
Փոխ-Տեղակալ՝ ՅՈՎՍԷՓԵԱՆ  
Զինուորական Աստիճանաւոր՝ ՌՈՒԲԵՆ

---

<sup>1</sup> 1920 փետրովար 2-ին Հարաւ գիւղի մէջ կը նշանակուի Ղարաբաղի Ինքն. Կեդր. Սարմնի անդամներու խորհրդակցութիւն՝ քննելու ստեղծուած կացութիւնը: Այդ խորհրդակցութիւնը կը վճռէ ի մէջ այլոց. «Ղարաբաղի մէջ ունեցած սակաւաթիւ ռազմամթերքով, որևէ կռուի ատեն, միայն երեք օր կրնանք դիմանալ»: Ա. Միքայէլեան, «Հայրենիք» Ամսագիր, թիւ 8, Պօսթըն:

Բարկուշատ-Հաքեարի շրջանի մօտ հարիւր թաթարական գիւղերու քարակոյտերու վերածուելովը մաքրուած էր Ջանգեզուրը թշնամի տարրերէն:

Եւ այն պարագային, երբ Ղարաբաղը օրհասական աղաղակներ կ'արձակէր, Ջանգեզուր անտարբեր մնալ չէր կրնար անոր ձայնին:

\* \* \*

Վերջին յաղթութիւնները աննախընթաց խանդավառութիւն մը ստեղծած էին Կապարգողթի ժողովուրդին մօտ: Տօնելու համար այդ յաղթութիւնները, 1920 Ապրիլ 22-ին Գորիսի մէջ տեղի կ'ունենայ զօրահանդէս մը. «Հրապարակը ամբողջապէս լեցուած էր երկսեռ հասարակութեամբ,- կը գրէ Երևանի *Յառաջի* թղթակիցը,- վերջին փառաւոր յաղթութիւններու առթիւ զօրքին շնորհակալական խօսք ըսին Ջանգեզուրի գէն. զօմիսար Ա. Մելիք Եօլչեանը, Հայաստանի պարլամենտի անդամ Զ. Եօլեանը և Ջանգեզուրի հերոս Գ. Նժդեհը: Ղափանի հայ աշխատաւորութեան կողմէ սիրելի հերոսին տրուեցաւ դրօշակ մը անոր կատարած վերջին քաջագործութիւններու առթիւ:

Ա. Մելիք Եօլչեանը Բագուի կռիւներու ընթացքին ցոյց տուած գործունէութեան համար իր ստացած Գեօրգիւսկի խաչը անձամբ կախեց մեր սիրելի հերոս Նժդեհի կուրծքէն և ցանկութիւն յայտնեց մօտ ապագային տեսնել այդ խաչի կողքին կախուած Հայաստանի Հանրապետութեան «Մեծն Վարդանի զինուորական շքանշանը»:

Ժողովուրդին ու զօրքին ապրած հոգեկան այդ խոյանքներէն վերջ Ղարաբաղի օգնութեան գործը վճռուած էր: Ջանգեզուրցիները կը պահանջէր ատիկա:

Ապրիլ 17-ին կատարուելիք նոր արշաւանքին առթիւ Մելիք-Մուսեան կը գրէր հրամանատար Նժդեհին.

«Հասկանում եմ քեզ, ազիզ ընկեր, աւանդիւրան փոխուեց իսկական տրամայի: Տմարդի է նա, ով խեղդուողին ձեռք չէ մեկնում, խեղդուում եմ սակայն և՛ Գողթանը և՛ Ղափան-Գենուազը և՛ Սիսեան-Ջանգեզուրը և՛ Ղարաբաղը իր ամբողջութեամբ: Ո՞ր խեղդուողին առաջին ձեռքը մեկնել: Ո՞րի հաւարին հասնիլ...: Գնա՛ վճռականօրէն, գնա՛ անկաշառ զինուորականի շաւղով: Թող չը խենթացնի քեզ այն հանգամանքը, որ Ղարաբաղցիներն ևս լսել

են քո քաջագործութիւնները: Քո մահարձանի պիտեստալը վաղուց է, որ ես կոփում եմ, որպէսզի նա լինի յաւիտենական՝ բոլոր քարերն անխառն մաքուր կռանդից պիտի պատրաստեն»:

Բարկուշատ-Յաքեարուի (Ջանգեզուրի և Ղարաբաղի միջև ընկած թրքական սեպ) աւազանին մօտ ամբողջ ամիս մը յաղթական կռիւներ մղելէ վերջ հրամանատար Նժդեհի ուժերը կ'անցնէին բուն Ղարաբաղի Դիզակի շրջանը, չէզոքացնելով այդպէսով Դրօսի զօրքի աջ թևին սպառնացող վտանգը: Դրօսն հետևեալ բառերով կը դիմաւորէ Ջանգեզուրցիներու Ղարաբաղ մուտքը.

«Շնորհաւորում եմ քաջարի Ջանգեզուրցիների մուտքը Ղարաբաղ, որ ցանկալի թոպէին նոքա օգնութեան հասան հարազատ Ղարաբաղին: Իւրաքանչիւր Ջանգեզուրցի թող յիշէ, որ կռուելով պատմական Ղարաբաղի լեռներում, դորանով նա կռում է ամբողջ Յայաստանի և մասնաւորապէս Ջանգեզուրի ազատութեան և խաղաղութեան համար: Վստահ եմ, սպաներ և զինուորներ, առաջնորդութեամբ ձեր արժանաւոր հրամանատար փոխ-գնդապետ Նժդեհի, քաջարի տեղացիների հետ, որ ահա ամբողջ մի ամիս է կռում են, ո՛չ միայն կը թեթևացնէք Ղարաբաղի հայերի վիճակը, այլև ձեր կորովի ասպետական գործողութիւններով կը հանդիսանաք Ղարաբաղի հայ ժողովրդի բախտաւորութեան և ազատ գոյութեան ապագայի գրաւականը»: (1920 ապրիլ 26)

Ամբողջ ամիս մը՝ դաշտային աշխատանքի ամենաբեղուն օրերուն, Կապարգողթի մարտիկները կառչած կը մնային իրենց դիրքերուն՝ թշնամին դիմակայելու կազմ ու պատրաստ:

Ատրբեջանը, սակայն, առանց Ղարաբաղն ու Ջանգեզուրը կարենալ գրաւելու՝ կ'ենթարկուէր Մեծամասնականներու մականին՝ այնուհետև քաղաքական նոր վերիվայրումներու թատերաբեմ դարձնելով Անդրկովկասը:

## **ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԵՒ ՋԱՆԳԵԶՈՒԻ ՄԵՋ**

Մեծամասնական ժԱ. զօրաբանակը 1920 Մայիսի սկիզբները գրեթէ առանց ընդդիմութեան հանդիպելու կը գրաւէր Բազուն: Քաղաքական այդ դէպքը կարգ մը առաւելութիւններ կ'ապահովէր ռուս Մեծամասնականներու. առաջին՝ իրենց այդ քայլով անոնք ձեռք կը ձգէին իր նաւթահորերով աշխարհահռչակ Բազուն՝ արդիւնաբերական այդ մեծ ու հարուստ շուկան, երկրորդ՝ կը կանխէին դէպի արևելք Անգլիոյ ծաւալական ձգտումները, երրորդ՝ կը ջան-



ային հոգեբանական նպաստաւոր մթնոլորտ մը ստեղծել իրենց շուրջ, արևմտեան ճակատի վրայ իրենց կրած պարտութեան տպաւորութիւնը մեղմելով, և չորրորդ՝ ժամանակաւորապէս իրենց քաղաքական նպատակներուն կ'ենթարկէին Էնկիւրիի Քեմալական Կառավարութիւնը:

Այս տեսակէտներէն առաջին երկուքը կ'իրագործուէին Բագուի գրաւման առաջին օրն իսկ: Յառաջացող ռուս զօրաբանակը կը տապալէր Մուսավաթ հանրապետութիւնը, որուն կը յաջորդէր մեծամասնական ռեժիմը, իսկ Բագու իրենց մուտքէն վերջ Անդրկովկասի մէջ կը շոգիանար Անգլիոյ ազդեցութիւնը:

Քաղաքական մնացած նպատակին համար իրենց կը ներկայանար բարեբեր գետին մը՝ շահագործել Ղարաբաղ-Չանգեզուրը նուաճելու ատրքէջանեան վաղեմի տեսակէտը՝ այդ կերպով շահելու առաջին՝ թաթար խուժանավար տրամադրութիւնները, և երկրորդ՝ Յայկական Լեռնաշխարհին վրայով պահել Քեմալականները իրենց ազդեցութեան ներքև:

«Արդարև հարկաւոր էր արտաքուստ ցոյց տալ, թէ Ռուս Բոլշևիկը ստեղծելով Ատրքէջանի խորհրդային հանրապետութիւն, միաժամանակ և անոր վաղուց փայփայած քաղաքական իտեաներու պաշտպան կը հանդիսանար, և քանի որ Մուսավաթիստ Ատրքէջանի հանրապետութիւնը տարիներէ ի վեր անյաջող փորձեր կ'ընէր խլելու Վրաստանի Չաքաթալա շրջանը, իսկ Յայաստանի Յանրապետութենէ՝ Ղարաբաղն ու Չանգեզուրը, ուստի Բոլշևիկները ձեռնամուխ եղան Ատրքէջանի և անոր մահմետական ժողովուրդի այդ իղձն իրագործելու: Մեծամասնական ուժերը Մայիս ամսուն գրաւեցին Չաքաթալայի շրջանը չնայելով, որ քանի մը օր առաջ Մոսկուայի Սովետական Յանրապետութիւնը համաձայնութեան էր եկած Վրաստանի հետ, գծելու անոր հանրապետութեան սահմանները, իսկ Չաքաթալայի շրջանը համարած էր չէզոք»<sup>1</sup>:

Միևնոյն ամսոյ վերջը՝ նոյն վիճակին պիտի մատնուէր նաև հայկական Ղարաբաղը: Մեծամասնականներու Անդրկովկաս երևումէն առաջ տեղացի թաթար գործակալներ վրէժխնդրութեամբ լեցուած՝ հայ աշխատաւորութեան դատին նուիրուած հարիւրաւոր մտաւորականներու բանտերու մէջ փճանալուն պատճառ կը դառնային:

---

<sup>1</sup> Արնոտ գիրք, էջ 1-2:

Մեծամասնականներու Բագու և մասամբ Ղարաբաղ երևելու պարագան լուրջ կերպով կը մտահոգէր Զանգեզուրի ղեկավար շրջանակները:

Սայիս 17-ին Ղափանի Զանքերը տեղի կ'ունենայ Կապարգողթի հայութեան ներկայացուցչական ժողովը: Անդրկովկասի մէջ յառաջ եկած քաղաքական նոր դէպքերու հետևանքով Ղարաբաղ-Զանգեզուրի սպառնացող վտանգին մասին լսելէ ետք հրամանատար Նժդեհի զեկուցումը՝ ժողովը կ'որոշէ:

*«Ա. Բոլոր շարժումները՝ ներքին թէ արտաքին, ուղղուած Զայաստանի Զանրապետութեան և Անկախութեան՝ մասնաւորապէս Ղարաբաղ-Զանգեզուրի ազատագրական ձգտումների դէմ, համարել հակայեղափոխական և դաւաճանական ու ամէն հնարաւոր միջոցներով աջակցիլ Կառավարութեանը երկիրը դէպի կորուստ տանող նման երևոյթները իւր սաղմի մէջ խեղդելու համար:*

*Բ. Ատրբէջանի կարմրացումը համարել քաղաքական շանդած՝ ստեղծուած Տաճկա-ատրբէջանեան միլիտարիստների ու պանիսլամիստների ձեռքով, յատկապէս Զայաստանի անկախութիւնը և հայ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը վտանգելու նպատակով:*

*Գ. Ամէն մի Ղափանցի 18 տարեկանից մինչև 60-ը այսուհետև, ինչպէս եղել է մինչև օրս, գէնքը ձեռքին կռուելու է Ատրբէջան կոչուած անամօթ թշնամու դէմ մինչև վերջին փամփուշտն ու արեան կաթիլը, քանի նա կը շարունակէ իւր հայակեր քաղաքականութիւնը:*

*Դ. Ամուր պահելով կառավարութեան բարոյական ու ֆիզիքական հմայքը՝ գիշեր ցերեկ հսկել դիրքերում և կոչ անել Զանգեզուրի ողջ ազգաբնակչութեանը վարել նոյն ձևով»:*

Քանի մը օր վերջ Ղափան կը հասնին Վահան Խորէնին և Արշակ Շիրինեան:

Յուլիսի վերջերը Դրօն ստացուած հաղորդագրութիւն մը կ'իմացներ, որ Մեծամասնականները ուժեր կը կեդրոնացնեն Զաբուղի ձորը և կը պատրաստուին անցնիլ Զանգեզուր:

Այդ գործին մեծապէս կը նպաստեն և՛ հայեր. «Որոնք կ'որոշեն ամէն գնով ծախել Զանգեզուրը և ենթարկուիլ Սօվետական Ատրբէջանին»<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Ազատ Սիւնիք, էջ 11-12:

Յուլիս 29-ին 15 հոգի է բաղկացած պատգամաւորութիւն մը կ'ուղարկուի Ջանգեզուրի Տեղ գիւղը բանակցութիւններ վարելու հայ գիւղացիութեան ներկայացուցիչներու հետ. «Բայց իրօք ատիկա ոչ թէ պատգամաւորութիւն էր, այլ լրտեսութեան համար ուղարկուած հակա-հետախուզականներու խումբ մը»<sup>1</sup>:

Նոյն օրը Տեղ կը հասնին Ջանգեզուրի Քաղ. Իշխանութեան կողմէն երկու ներկայացուցիչներ, Մեծամասնական պատուիրակները կը յայտարարեն, որ իրենք լիազօրուած են ԺԱ. բանակի և մեծամասնական իշխանութեան անունով յայտարարելու, որ ան պիտի տարածուի նաև Ջանգեզուրի վրայ: Ջանգեզուրի ներկայացուցիչները կը յայտարարեն, որ հայ գիւղացիութիւնը գէնքի ուժով պիտի պաշտպանէ իր ազատութիւնը և պիտի չենթարկուի օտար որևէ լուծի:

Բանակցութիւնները դեռ չվերջացած մեծամասնական պատուիրակութիւնը կը հեռանայ: Յուլիս 5-ին Մեծամասնականներ առաջ կը շարժուին դէպի Ջաբուղ, յանկարծակիի բերելով կը ձերբակալեն ռազմաճակատի քանի մը հայ սպաները<sup>2</sup>: Կը շրջապատեն Կոռընձոր գիւղը ու գնդացիի կը բռնեն բնակիչները՝ տղամարդիկ և կիներ ահաբեկած ասդին անդին կը փախին, ձեռք իյնողը կը դառնայ հրացանագարկ<sup>3</sup>:

Չայկական փոքրաթիւ զօրքը կ'ստանայ դիմադրելու հրաման, բայց Քարաշէնի մօտ՝ կարճ ընդհարումէ մը ետք, տեղի տալով՝ կը քաշուի դէպի Դարալագեագ:

Յուլիս 3-ին Գորիսը կը գրաւուի 9-րդ մեծամասնական զօրաբանակի 28-րդ հրացանաձիգ զօրաբաժնի 84-րդ *բրիկատի* կողմէ: Քանի մը ժամ վերջ Ջանգեզուր կը ժամանեն 83-րդ բրիգատի 247, 248, 249 գունդերը:

Նոյն առտուայ ժամը 11-ին Վահան Խորէնի, Արշակ Շիրինեան և Մելիք-Մուսեան կը հասնին Քարահունջ, ուր ականատես կ'ըլլան մեծամասնական միթինկի մը: Առաջին անգամ ըլլալով կ'իմանան անոնք, որ Դրօսի ուժերը տեղի տալով մեծամասնական յառաջխաղացումին՝ նահանջած են դէպի Վայոց-Ձոր, իսկ Գորիսը անցեր է Կարմիրներու ձեռքը:

Կապարգողթի հրամանատարը Գորիսի անկման լուրը կ'իմանայ Աշոտ Մելիք-Մուսեանէ ստացած իր մէկ գրութենէն:

---

<sup>1</sup> Արնոտ գիրք, էջ 3:

<sup>2</sup> Արնոտ գիրք, էջ 3-4:

<sup>3</sup> Ազատ Սիւնիք, էջ 19-20:

Յուլիս 7-ին Նժդեհ նախագգուշական հետևեալ խօսքերը կ'ուղղէ Ձանգեզուրցիներուն.

*«Յայ ժողովուրդ, Կապարգողթի և Բաղաբերդի հերոս ժողովուրդ, վտանգը՝ բուշկիզմի կեղծ-կարմիր փետուրներով զարդարւած Ատրքէջանեան վտանգն է կանգնած դրանդ: Ուրեմն, ինչպէս և միշտ, եղիր արթուն, սպառազէն ու միշտ պատրաստ դիրքերուն, յանկարծակիի չգալու համար:*

*Աստուած և իմ սուրը քեզ հետ»:*

Հրամանատար ՆժԴԵՅ

Ձաբուղի, Տեղի, Քարաշէնի և Գորիսի գրաւումէն վերջ մեծամասնական ուժերը կը հետապնդեն դէպի Դարալագեազ նահանջող հայ զօրասիւները ու կը գրաւեն Սիսեանը՝ մինչև Բազարչայի արևմտեան լեռնաշղթան և կապ կը հաստատեն Նախիջևանի մահմետականներուն հետ: Նախիջևանի թուրքերը սարսափի մատնուած Յայ Հանրապետութեան զօրքերու դէպի Շարուր ձեռնարկած յուլիսեան արշաւանքներէն, կ'աճապարեն հրաւիրել Մեծամասնականները, որ գրաւեն Նախիջևանը: Կարմիրներու 252-րդ գունդէն 100 ձիաւորներ կ'անցնին Նախիջևան և առանց ընդդիմութեան հանդիպելու՝ կը գրաւեն քաղաքը:

Նախիջևանի գրաւումէն վերջ՝ Խորհրդային Հրամանատարութիւնը Յուլիս 8-ին կը հրամայէ իր ուժերուն յառաջ շարժիլ, գրաւելու համար իր ձախ թևի վրայ գտնուող Կապարգողթի շրջանը: Խոտանանի մէջ սակայն՝ առաջին անգամ ըլլալով, անոնք կը հանդիպին գիւղացիներու ուժեղ դիմադրութեան և կանգ կ'առնեն:

Յուլիսի 10-ին մեծամասնական զօրամասի զինուորական փոխանորդ կօմիսար Իվանով հետևեալ գրութիւնը կ'ուղղէ Կապարգողթի Հայ Հրամանատարութեան.

*«Գնդապետ Նժդեհին,*

*Արդէն Ղարաբաղ Ձանգեզուր է մտեր կարմիր բանակը, բոլոր տեղերումը կազմակերպած են ռևկոմներ (Յեղափոխական Կօմիտէ - Ծ. Դ.): Կը հրամայեն այդ առթիւ յայտարարել ժողովուրդին և ճանապարհ տալ Վերին Խոտանան գտնուող մեր զօրամասին՝ անցնելու Սեդրիի վրայով Օրտուբադ-Ձուլֆա<sup>1</sup>»:*

Զօր. գին. կօմիսար Իվանով

Վ. Խոտանան

<sup>1</sup> Լեռնահայաստանի Ձինուորական Գլխաւոր Շտաբի Արխիւ, թիւ 135:

Յուլիս 12-ին Առաջածոր գիւղի մէջ կը գումարուէր Ղափանի երկրորդ արտակարգ ներկայացուցչական ժողովը, որուն կը մասնակցի ամբողջ շրջանը երկուական պատգամաւորով:

Օրակարգի հարցն է՝ կարմիր հրամանատարութենէ ստացուած վերջնագիրը և Կապարգողթի հրամանատարութեան տրուելիք պատասխանը:

Ժողովին տրամադրութեանց վրայ ճնշում չբանեցնելու և իր վճիռներուն մէջ զայն ազատ պահելու դիտումով Նժդէհ չմասնակցիր նիստին:

Ստեղծուած բարդ կացութիւնը մղծաւանջի պէս կը ճնշէ ամենուն վրայ: Հետզհետէ տրամադրութիւնները կը քայքայուին, ընդհանուր տատանստութեան մէջ տեղի տալու շշուկներ կը լսուին: Նոյն պահուն՝ վաշտապետ մը կը փութայ հրամանատարին մօտ և կ'իմացնէ ժողովին հոգեբանութիւնը, Նժդէհ ըմբռնելով ապագայ ահաւոր վտանգը, որ կրնայ այդ կերպով կախուիլ Կապարգողթի հայութեան գլուխն՝ կը փութայ ժողովատեղի և գերագանց յուզումով մը կ'ըսէ ժողովրդակաւաններուն.

*«Ղափանցիներ, եկայ՝ ձեր վերջին խօսքը լսելուց առաջ իմ վերջին խօսքն ասելու ձեզ: Չէ՛, էլ ոչինչ չունիմ ասելու ձեզ: Միայն մի խնդիր ունիմ, որը չէք կարող չկատարել: Վաղուց է, ինչ կուուծ եմ ձեր երկրում ձեզ համար: Որպէս բարոյական վարձատրութիւն, կ'ուզէի, որ հանէիք իմ աչքերը, կուրացնէիք ինձ, որ անբախտութիւն չունենայի ձեր գլխին գալիք աղէտը տեսնելու»:*

Կէս ժամ վերջ Ղափանի ներկայացուցչական ժողովը միաձայնութեամբ կ'արձանագրէր. *«Թող չտայ, ինչ գնով էլ ուզում է լինի, Կարմիրներին, ներխուժելու Ղափան»:*

Նոյն օրը հրամանատար Նժդէհ հետևեալ վերջնագիրը կը դրկէ Մեծամասնականներու զինուորական կոմիսար Իվանովին.

*«Խոտանանու կարմիրների գոր. պետին,*

*Կապարգողթի գիւղացիական ներկայացուցչական խորհուրդը հրամայել է ինձ ուղարկելու ձեզ վերջնագիր՝ վաղն, ամսոյն 13-ին, միջև ժամը 7-ը, թողնել Ղափանի սահմանները. հակառակ դէպքում ստիպուած կը լինեն անցնելու յարձակողականի և զինու ուժով վանելու ձեզ»:*

Կապարգողթի Ռազմ. Ուժերի  
Հրամանատար ՆժԴԵՀ

Ղափանի Հանքեր, 1920 Յուլիս 12

Սոյն վերջնագրին վրայ հետևեալ օրը ժամը 4-ին Մեծամասնական ոյժերը կը քաշուին Խոտանանէն, իրենց հետ պատանդ վերցնելով վերջնագիրը տանող պատուիրակ Սմբատ-Բէգ Մելիք Ստեփանեանը, զոր կ'աքսորին Բագու:

Յուլիս 29-ին Ղափանի Ձէլվա գիւղը յարձակում կրելով կարմիր զօրքերու կողմէ՝ նախ դիմադրութեան կը դիմէ, կռուող երիտասարդութիւնը, սակայն, յոռետես կռուի վախճանին նկատմամբ՝ իր զէնքը վերցուցած կը հեռանայ: Ղարաբաղի, Ջանգեզուրի և Նախիջևանի գրաւումով կը վտանգուէին Հայաստանի արևելեան սահմանները: Մեծամասնական շարժումը հետզհետէ կ'սպառնար նաև Երևանի: Ջանգեզուրը վերագրաւելու նպատակով Դրօն իր հետ վերցուցած փոքրաթիւ զօրամաս մը և Ջանգեզուրէն ու Սիսեանէն գաղթած զօրքերը, Օգոստոս 1-ին Դարալագեազէն կը շարժի դէպի Սիսեան: Օգոստոս 2-ին կը գրաւէ Գորիսը և բանտէն կ'արձակէ քաղաքական բանտարկեալները: Մեծամասնական ուժերը կը նահանջեն դէպի Ջաբուղ:

Նահանջէն առաջ, Օգոստոս 2-ի գիշերը՝ Ջանգեզուրի Չեկայի հրամանով Խորհրդային 11-րդ բանակի գինուորայեղափոխական մարմնի լիազօր Ա. Ղարազէօգեան, քաղաքի պատերուն վրայ կը փակցնէ հետևեալ յայտարարութիւնը.

*«Ղաշնակների կառավարութեան կարմիր Ջանգեզուրի վրայ նենգութեամբ յարձակուելու պատճառով գիշերը՝ լոյս 2-ին Օգոստոսի, զնդակահարուած են դաշնակներ՝ Արշակ Շիրինեան, Վահան Խորէնի, Ջաքար Տէր Ղազարեան և Ս. Աղամեան»<sup>1</sup>:*

Զեկա

Այսպէս, յանուն աշխատաւոր դասակարգի շահերու հրապարակ իջած համամարդկային գաղափարներու դրօշակակիր փառանգի մը հաճութեամբ *սև մահապատիժ* մը կը գործադրուէր անոնց վրայ, որ նոյն այդ գաղափարներու նոյնքան և թերևս անելի մոլեռանդ ու անշահախնդիր առաջապահներն էին հանդիսացեր:

Շուշիէն ստացած իրենց թարմ ուժերու շնորհիւ Մեծամասնականներ կ'անցնին հակայարձակողականի և Օգոստոս 7-ին կը վերագրաւեն Գորիսն ու Սիսեանը:

Երևանի զօրքերու նահանջի գիծը կ'ապահովէ հրամանատար Նժդեհ իր ուժերով: Նահանջի անկանոնութեան պատճառով

<sup>1</sup> Լեռնահայաստանի Գլխաւոր Շտաբի արխիւ, թիւ 241:

սակայն կը վտանգուին իր տասնի չափ զինուորները Գորիսի ձորին մէջ, որոնց օգնելու պարագային կը վիրաւորուի ինք՝ հրամանատարը:

Դէպի Հայաստան իր վերադարձին Դրօն Ուչթափալարի մէջ կ'առաջարկէ իրեն անցնիլ Երևան ու դարմանիլ, բայց Նժդեհ կը նախընտրէ *մնալ ժողովուրդի հետ ու մեռնիլ*, քան թէ վտանգի այդ ծանր օրերուն լքել գայն:

Իր փոքրաթիւ ուժերու, գրեթէ առանց լուրջ պատերազմական պատրաստութեանց, Դրօսի կատարած արագ արշաւանքը և նոյնքան արագ նահանջը աւելի կը ծանրացնէին Սիւնիքի հայ բնակչութեան դրութիւնը: Այդ արշաւանքէն յետոյ Մեծամասնականներ կը դիմեն ծայրայեղ միջոցներու:

Նահանջի պահուն Երևանեան զօրքի հրամանատարութիւնը իր հետ կը տանէր Ղափանի երկու թնդանօթները և թոյլ կու տար Կապարգողթի թնդանօթային դասակին ու քանի մը զինուորներու իր զօրամասին հետ անցնիլ Դարալագեազ:

## V ԱՊՍԱՄԲ ԿԱՊԱՐԳՈՂՈՑ

*Ջինադադար մը Երևանի և Մեծամասնականներու միջև.– Նժդեհի և Ղափանի Ներկայացուցչական Խորհուրդի Նախագահու լթեան գրութիւնները 33 Կառավարութեան.– 33 Ձին. Նախարարի մէկ պաշտօնագիրը Նժդեհին.– Դաւիթ-Քէզեան Ուխտ.– 3անդիսաւոր հաւաքում մը Կաւարտի մէջ.– Եօթը պատուէրներ Կապարգողթի զօրքերուն.– Եօթանասունօրեայ կռիւներ.– Նժդեհ Խուստուպի վրայ:*

Մեծամասնականներ երկրորդ անգամ Ձանգեզուր ներխուժումով՝ պահանջ կը ներկայացնէին 3այաստանի կառավարութեան զիջել Լեռնաշխարհը կարմիր Ատրքէջանի: 3. 3անրապետութեան զինուորական նախարարը համաձայն մեծամասնականներու հետ իր կնքած Օգոստոս 11-ի զինադադարին, Դրօի միջոցով կը հեռագրէր հրամանատար Նժդեհի՝ *թողուլ Ղափանն ու Գենուազը և անցնիլ Երևան:* Օգոստոս 15-ին Դրօն պատերազմական նախարարի անունով կը գրէր.

*«Ղափանի զօրամասի պետ Նժդեհին,*

*3աղորդում եմ Ձեզ զինուորական նախարարի հրամանի պատճէնը: Ջինուորական նախարարը հրամայում է Ձեզ կապ պահելով Նժդեհի հետ տեղեկացնել նրան, որպէսզի համաձայն կնքուած զինադադարի հաւաքէ իր զօրամասերը նոյնպէս և բոլոր ցանկացողներին, ու նախազուշական միջոցները ձեռք առնելով՝ անցնի մեր տերիտորեան, բերելով իր հետ ամբողջ զէնքերը»:*

Թիւ 01025, 10 Օգոստոս 1920  
Ձին. Նախ. 3ամարգ ԳԻԼԱԶԻՉԵԱՆ  
Ձանգեզուրի Զօրամասի Պետ ԴԲՕ

Դուշչի, 11 Օգոստոս 1920

Նժդեհ սոյն պաշտօնագրին իր Օգոստոս 13 գրութեամբ կը պատասխանէր.

*«3այաստանի 3անրապետութեան Նախարարին, պատճէնը՝ Գեներալ Նազարբէկովին,*

*Դրօն զինուորական մինիստրի անունից հրամայում է ինձ, համաձայն կնքուած զինադադարի, վերցնել իմ զօրամասը և անցնիլ մեր տերիտորիան: Ես չգիտեմ.*



Ա. Ի՞նչ պայմաններով, ո՞ւմ հետ (Ատրեջանի թե՛ Սովետական Ռուսաստանի) և որքա՞ն ժամանակով է կնքուած զինադադարը:

Բ. Եթէ Կապարգողթի իմ ոյժերը, համաձայն զինադադարի, պէտք է թողնեն իրենց երկիրը և քաշուեն մեր տերիտորիան՝ ապա Մեծասանականները և արեջանեան բանտաները երբ և ո՞ւր են քաշուելու:

Գ. Ի՞նչ է լինելու Գողթանի դրութիւնը, որ ատմինիստրատի տեսակէտից չի մտնում Ձանգեզուրի մէջ:

Դ. Չէ՞ք կասկածում, որ թշնամին կարող է դաւադրել, այն է, որ մեր դուրս գալուց յետոյ յանկարծակիի բերելով անտիրացած ազգաբնակութիւնը՝ կարող է տէր դառնալ Կապարգողթի չորս սպաստամբ շրջաններու:

Ե. Մեր խոր հետախուզութիւնը պարզել է, որ Այրի Չայրում կուտակուած են բաւականին մեծ ուժեր: Չէ՞ք ենթադրում, որ իմ Ձանգեզուրը թողնելուց յետոյ այդ ուժերը հեշտութեամբ կարող են տէր դառնալ Գողթանին: Սա ի՞նչ զինադադար է, որի ժամանակ Մեծասանականները շարունակում են իրանց շահատակութիւնները, թալանը և զինաթափութիւնը Սիսեանում և բուն Ձանգեզուրում: Ժողովուրդը բարձր տրամադրութեամբ սպասում է Հայաստանի զօրքերի գալուն, որ միացեալ ուժերով քչէ թշնամուն Ձանգեզուրից»:

ՆԺՂԵՅ

Օգոստոս 21-ին Ղափանի Գիւղացիութեան Ներկայացուցչական Խորհուրդի Նախագահութիւնը հետևեալ գրութիւնը կ'ուղղէր Հայաստանի Խորհրդարանին, պատճենը՝ Ձին. Նախարարին.

«Երկրորդ անգամն է, ինչ Ղափանը, Գենուազը, Բաղաբերդը և Գողթանը պ. Դրօի ռազմական անմիտ խաղերի շնորհիւ մնում են մենակ, պաշարուած, կտրուած աշխարհից: Մեր ժողովուրդը՝ Գորիսի առաջին անկումից յետոյ, անհամբեր սպասում էր և ջերմօրէն հաւատում, որ իր կառավարութիւնը այսօր վաղը կը հասնի իրեն՝ կը վերագրաւի Ձանգեզուրը:

Սակայն մեր մտքով անգամ չէր անցնում, որ տեղի կ'ունենայ մի վտանգաւոր խաղ, մի անմիտ յարձակում, որ Երևանեան զօրամասը կը վտանգի մեր դրութիւնը և երրորդ օրը վերստին կը լքի Ձանգեզուրը և կը քաշուի Դարալագեազ: Այդ անմիտ խաղին մասնակցելու էին կանչուած նաև Ղափանի ուժերի մի մասը:

*Նրանք սպասելու են եղել, որ երևանեան գորքը չի կրկնի իր հին սխալը, որ նա կ'անցնի Ղափան-Գողթան, ասելի ուժեղացնելու այդ շրջանները, բայց դժբախտաբար սխալը, կատաստրոֆիկ սխալը, կատարուել է և Դրօն այսօր Ձանգեզուրից դուրս է գտնուում: Սրանից զատ, Ձանգեզուրի նախկին հրամանատարութիւնը թոյլ է տուել մի աղաղակող անարդարութիւն: Նա իր թնդանօթները Ղափանին տալու փոխարէն, իր հետ Դարալագեազ է տարել Ղափանում եղած երկու թնդանօթները, պատճառաբանելով, որ ոչ մի թնդանօթածիգ սպայ չէ համաձայնում վերադառնալ Ղափան: Ի՞նչ: Դրօն եկել էր գինաթափ անելու մեզ, թուլացնելով: Ի՞նչ է նշանակում սա: Մենակ մնացած ժողովուրդը հազար ենթադրութիւններ է անում: Վերջին անգամ դիմում ենք Ձեզ և խնդրում արագացնելու գորքերի առաքումը Սիսեան: Մեր հրամանատարը գտնում է, որ կարիք չկայ կռուով վերագրաւելու Գորիսը և պահելու Ջաբուղի ճակատը: Սիսեանը գրաւելով մինչև Տաթև մենք տէ ֆաքթօ տէր ենք դառնալու ամբողջ Ձանգեզուրին: Ուշքափալար, Տաթև, Ինջաբէլ (Ղափան) գիծը բռնելով, մենք կ'ստիպենք Մեծասանականներին թողնելու Գորիսը»:*

Ղափանի Գիւղաց. Ներկայաց. Խորհուրդի  
Նախագահութիւն

Ի պատասխան հրամանատար Նժդեհի 13 Օգոստոս 1920 թուակիր գրութեան, Զ. Դանրապետութեան պատերազմական Նախարարը իր 1920 Սեպտեմբեր 23 պաշտօնագրով կը հաղորդէր.

*«Համաձայն ենք, որ Ձեր դուրս գալուց յետոյ Ղափան-Գողթանը ձեռքից կը գնայ և նրանք սրի-հրի կը մատնուին և նոցա համար կը ստեղծուի ասելի վատթար վիճակ, քան ուրիշ վայրերում:*

*Համաձայն ենք նոյնպէս Ձեզ հետ, որ դուք դուրս չպիտի գաք և պիտի զբաղուէք ինքնապաշտպնութեամբ յանուն Ղափանի փրկութեան:*

*Ղափանի ժողովրդի բախտը կ'որոշուի մօտ օրերու բանակցութեան միջոցով, որից յետոյ կ'ստանաք ասելի որոշ հրահանգներ:*

*Միք յուսահատուի, եղէք ժողովրդի հետ և նահատակուէք նրա հետ մինչև վերջին վայրկեանը»:*

Զին. Նախ. ՌՌԻԲԷՆ

Օգոստոս 13-էն մինչև Սեպտեմբեր 23 զիրար հրմշտկող հրամաններու այս կատակերգութիւնը արդարանալի ոչ մէկ պատճառ ունէր արդարև:

## ԴԱԻԹ-ԲԷԳԵԱՆ ՈՒՏՏ

Անձկութեան օրեր էին:

Մարտական գործը ի դէպ յեղափոխական ուղիով և յեղափոխական հոգեբանութեամբ առաջ տանելու նպատակով Նժդեհ կը հիմնէր *Դաւիթ-Բեգեան Ուխտը*:

Ուխտին մարտական ուժերը կը բաժնուէին թեթև միաւորներու, որոնք կը կոչուէին *գայլախումբեր*: Ասոնք ունէին իրենց ահաբեկիչները և սուրհանդակները: Նոր անդամներ կ'ընդունուէին միայն հիմներու երաշխաւորութեամբ:

Իւրաքանչիւր նոր անդամ պարտ էր արտասանել երդման բանաձևը:

Զինուորները իրարու հանդիպած ատեն կ'ըսէին.

- «Յիշիր Գեղուածորը» - նաև «Դաւիթ Բեգին»:

- «Մեզ համար չկայ մահ», - կ'ըսէին իրարմէ բաժնուած ատեննին:

- «Մա'հ մեր թշնամուն», - կ'ըլլար պատասխանը:

Ընկերութեան նշանաբանն էր՝ *Յանուն Հայրենիքի՝ Դաւիթ-Բեգաբար*:

Ստեղծուած կացութիւնը աւելի քան մտահոգիչ էր Կապարգողթի համար:

Օգոստոս 25-ին և 30-ին թիւ 24-25-26 Հ. Հանրապետական Կառավարութեան, պատճէնը՝ Ներքին Գործոց Նախարարութեան ուղղած իր պաշտօնական գրութիւններով Նժդեհ անմիջական օգնութիւն խնդրելով կը գրէր և հետևեալը.

*«Բազւի մի քանի տասնեակ հայերով կաշառած Ատրբէջանը տէր դարձած է Ղարաբաղին: Սովետական Ղարաբաղը վարակեց բուն Զանգեզուրի որոշ գիւղերն և թշնամու թալանի տենչով խելագարուած խումբերը գրեթէ առանց կռուի մտան Գորիս:*

*Վերջինս իւր հերթին արագացրեց Սիսեանի անկումը: Ու այսօր այդ բոլորը և՛ Ատրբէջան և՛ Ղարաբաղ և՛ բուն Զանգեզուր ոտքի հանած իւր բովանդակ ուժերը և՛ զօրք և՛ տեռօր և՛ թղթադրամների դէգեր, կաշուից դուրս են գալիս ընկճելու իրենց դէմ ծառացած Ղափանը, Գենուազը, Բաղաբերդը և Գողթանը: Այդ շրջանների ապստամբ ժողովուրդը, որ Ատրբէջանի հետ մէկից աւելի անգամ է չափուել և միշտ էլ յաղթել է, ջերմ հաւատով սպասում է Հայաստանի զօրքերի շուտափոյթ երևալուն իւր երկրի սահմաններում»:*

Իր ձեռք բերած մասնակի յաջողութիւններէն քաջալերուած՝ Մեծամասնական զօրքը կը ջանար ուժգին հարուածով մը մէջտեղէն վերցնել Ղափանն ու Գենուազը և Հայկական սեպի վրայով կապ պահել Քէմալական ուժերու հետ:

Այս պայմաններու մէջ Օգոստոս 25-ին Կապարգողթի ամբողջ հայութիւնը կը հաւաքուէր Ղափանի Կաւարտ գիւղի եկեղեցին և կ'ուխտէր. «Պատմական մեծ հերոս Դաւիթ Բէգի և Մխիթար սպարապետի անունով հաւատարիմ մնալ հայրենի երկրի ազատութեան, հրամանատար Նժդեհին և կռուիլ մինչև վերջին շունչը»:

Այդ րուպէին գնդապետ Նժդեհի մէջքը կը կապէին կարմիր գօտի և բոլոր հանդիսականների ցնծութեան տարափին տակ զայն կը կոչէին իրենց Սպարապետը<sup>1</sup>:

Այդ օրը Նժդեհ իր զօրքին կ'ուղղէ հետևեալ եօթը պատուէրները.<sup>2</sup>

### ԵՕԹԸ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐ ԻՄ ԶԻՆԱԿԻՑՆԵՐԻՆ

*Քաջերին, միայն քաջերին է լսում և զօրավիգում պատերազմների քմահաճ Աստուածը:*

*Վախկոտներն ի զուր են կանչում նրան: Խուլ է նա նրանց համար:*

*Նա է միշտ յաղթում, որը արդէն յաղթել է իրեն, այսինքն՝ որն իր մէջ մեռցնելու չափ թուլացրել է մահուան երկիւղը:*

*Նրանք, որոնք ծառայում են բարձր հայրենասիրութիւնից կամ փառասիրութիւնից դրդուած, միայն նրանք են աւելացնում իրենց զէնքի ու ցեղի փառքը:*

*Չենց այնպէս ծառայել, ծառայել, որովհետև պահանջում են կամ ստիպուած են մի զոյգ ուսադիրներ կրել մի կտոր հացի համար – նշանակում է դատապարտուած լինել կատարելու սովորական մահկանացուի յատուկ ամենաանշան ու անփառունակ գործեր:*

*Վա՛յ քեզ բանակ, եթէ նմաներով հարուստ են շարքերդ: Ունեցիր բոլոր մարտական առաքինութիւնները, բայց մի՛ մոռա-*

<sup>1</sup> Արմոտ գիրք, էջ 34:

<sup>2</sup> Սոյն եօթը պատուէրները, ինչպէս նաև ուրիշ կոչեր «Խուստուպեան Կանչեր» վերնագրով գրքոյկով մը հրատարակուած են 1921-ին Գորիսի մէջ:

նար, որ առաջինը, առանց որին պատերազմների քմահաճ Աստուածը քեզ քիչ անգամ կը ժպտայ - դա խիզախութիւնն է:

Քեզ վրայ նայիր որպէս դատապարտուածի, որը յանուն իր երկրի ու ժողովուրդի պաշտպանութեան՝ պիտ միշտ պատրաստ լինի ընդունելու մահը: Եղիիր խիզախ, խստաբարոյ ու չարքաշ, յատկութիւնների այդ բարձր երրորդութիւնը քեզ կը մօտեցնէ կատարեալին:

Երկար ու լուրջ տքնութեամբ մեռցնելու աստիճան թուլացրիր քո մէջ մահուան վախը և դու չես մնայ առանց փառքի, պատմութիւնից դուրս:

Ճապոնացու արևոտ սիրով սիրիր հայրենիքդ և ամէն օր, որպէս աղօթք, կրկնիր ճապոնական կայսրի խօսքերը՝

Եթէ խորապէս գիտակցենք, որ սէրը դէպի հայրենի երկիրն ու ժողովուրդը անելի բարձր է կանգնած մեծ ու գեղեցիկ արևին, քան մեր հայրենիքի ամենաբարձր լեռները՝ այն ժամանակ մահը ամէն մէկիս համար թռչնի փետուրից էլ թեթև կը թւայ:

Հրամանատար ՆԺՂԵՅ

Օգոստոսի վերջերը Խորհրդային Ռուսաստանի թիւ 248, 249, 250, 251 և 252 գունդերէն կազմուած զօրամաս մը կը քալէ Ղափանի և Գեճուազի վրայ:

Հարուածը վճռական ըլլալու համար Նախիջևանի և Օրտուբադի կողմէ ռուսօ-թաթար զօրամաս մը կը յառաջանայ Գեճուազի Կարճևան գիւղի ուղղութեամբ: Ջիբրայիլէն մեծամասնական ուժեր կը յարձակին Շիւանի ձորի վրայ, կը շրջապատուի Կալեր գիւղը իր ամբողջ տարածութեամբ:

Կռիւր կ'սկսի Յուլիսի սկիզբները: Կռուի երրորդ օրը, երբ թշնամին ընկճուած Գորիսի ուղղութեամբ կը պատրաստուի ետ քաշուելու՝ հիւսիս-արևելեան երեք գիւղեր՝ Սևաքար, Արծունեմիկ (Մելիք-Ֆրանգիւլի հայրենիքը) և Ըրկեմանց, արտաքին բրթականտէ բարոյալքուած՝ կը միանան թշնամիին, տկարացնելով այդ ճակատը:

Բաղաբերդի ուղղութեամբ թշնամին կը յառաջանայ և Շհարջիկի վրայով կը գրաւէ Ղափանի Հանքերը, առանց որևէ ընդդիմութեան հանդիպելու օգտուելով նոյն շրջանի կռուող ուժերու ժամանակ առաջ այդ ճակատէն հեռանալու պարագայէն:

Յուլիսի սկիզբէն մինչև Սեպտեմբեր 1 կռիւը ընդհատումնե-  
րով կը տևէ եօթանասուն օր:

Եօթանասունօրեայ այդ կռիւներու ընթացքին կիսաքաղց  
գիւղացիութիւնը իր գէնքին փարած՝ դիմադրեց գերագանց ուժե-  
րու գրոհներուն, ու երբ մէկ կողմէ մեծամասնական գաղտնի գոր-  
ծակալներու ըրած երջանիկ խոստումները, և միւս կողմէ հասնող  
հունձքը գրաւեցին իր ուշադրութիւնը, ան դիմեց կամովին զինա-  
թափութեան՝ թոյլ տալով, որ թշնամին քալէ յառաջ դէպի Գողթան:

Ձօրքը խրախուսելու և նոր ոգևորութեամբ գօտեայնդելու  
համար Նժդէհ քանի մը ձիաւորներ վերցուցած կը թէր դիրքէ  
դիրք: Հրաշքի նման բան մը կ'ըլլայ ստոյգ մահէ իր ազատուիլը  
Բերդակ կոչուած դիրքին վրայ: Բերդակէն կը լսուի գնդացիրային  
հրացանածգութիւն: Այդ դիրքը պաշտպանող հայ ուժերը գնդացիր  
չունէին, կը նշանակէ թշնամին կը յառաջանար այդ ուղղութեամբ:  
Սրարշաւ իր ձիուն սանձը դէպի այդ կողմ դարձուցած «գալիս  
ենք, գալի՛ս», - կ'աղաղակէ բարձր ձայնով Նժդէհ:

- Հասի՛ր, պ. հրամանատար,- ձայն կու տան Բերդակէն: Իր  
հետ առած երեք ձիաւոր՝ Նժդէհ կը նետուի առաջ և ահա երեսուն  
քայլի վրայ գնդակներ կը թաղուին իր ձիուն կուրծքը և գետին կը  
թաւալեն կենդանին:

Ղաւադրութիւն մըն էր կատարուած:

Ուժանակային ռումբերը կը գոռան ահա և, «Գենուազցիներ,  
դէպի թշնամու թիկունքը, յառա~ջ», Նժդէհի աղաղակը կը խաբէ  
թշնամին, որ ըրպէ մը կը տատանի իր շարժումներուն մէջ և  
այդքանը բաւական կ'ըլլայ հրամանատարին, կրակի գիծէն դուրս  
նետելու ինքզինքը:

Եօթանասունօրեայ այդ կռիւներուն մէջ մինչև վերջին վայր-  
կեանը իր ուխտին հաւատարիմ Ձէյվան կը մնայ միայն, որ նոյն-  
պէս տեղի կու տայ ի վերջոյ առանձին մնացած - հերոսական այս  
գիւղը, ուրկէ վերջին պահուն հիւանդ Աշոտ Մելիք-Մուսեանի և  
քանի մը սպաներու ու վաշտապետներու հետ Նժդէհ կը քաշուի  
Խուստուպի<sup>1</sup> կողին վրայ ինկած Վաչագան գիւղը:

Ղափանի անկման լուրը կը խարանդէր Հայկական Լեռնաշ-  
խարհի ճակատագրով հետաքրքրուող իւրաքանչիւր հայու սիրտը:  
Խախտած էին տրամադրութիւնները կռուի ճակատներէն հեռու  
մնացող նոյնիսկ մտաւորական շրջանակներու մօտ:

---

<sup>1</sup> Խուստուպ լեռը կը գտնուի Ղափանի և Գենուագի սահմանին վրայ,  
ծովի մակերևոյթէն մօտ 9000 ոտք բարձրութիւն ունի, դէպի Ղափանի  
կողմը ծածկուած է անտառներով, գագաթը լերկ:

Մեծամասնականներ Ղափանը գրաւելէ վերջ կը պատրաստուէին շարժիլ դէպի Գեւուազ, դէպի Մեղրի՝ միանալու համար թրքական ուժերու:

«Մեղրին վերցնելէ ետք շատ պարզ է, որ անոնք գիծը պիտի միացնէին Օրտուբադի և Նախիջևանի հետ ու պիտի իրականացնէին խալիլ փաշաներու փայփայած երազները, որոնք շարունակ խորտակուեցան հայ քաջերու կողմէ»<sup>1</sup>:

Ստեղծուած ծանրակշիռ կացութեան մէջ Նժդէի Խուստուպի բարձունքին վրայ թառած՝ գործունէութեան նոր ծրագիր կը մշակէր: Մէկ կողմէ նա կը ջանար Կապարգողթի ապրած նեղ օրերու մասին իրազեկ պահել Երևանը, անհրաժեշտ գինուորական օժանդակութիւն խնդրելով անկէ, միւս կողմէ՝ կ'աշխատէր մարտական ոգին բարձր պահել գիւղացիութեան ու կռուող զօրքին մօտ:

Անդրադառնալով անգամ մը ևս երկրին մէջ տիրող ծանր կացութեան վրայ՝ 1920 սեպտեմբեր 11-ին իր թիւ 35 պաշտօնական զեկուցագրով հետևեալը կը հաղորդագրէր ան Հ.Ի Զին. Նախարարին և Սպարապետ Նազարբէկովին.

*«Աշխարհից կտրուած հերոսական Ղափանն իր եօթանասունօրոյ կռիւներուն վառելով իր վերջին փամփուշտը ռազմական ոյժերի մի մասով քաշուեց լեռները: Թշնամին ինձ վրայ յարձակուեց միաժամանակ և՛ Չէյվայից և՛ Ինջաբէլլից և՛ Գեղուածորից և՛ Գեղաջբէլից:*

*Մեծամասնականներն ոտքի էին հանել Բարկուշատի, Հաքեարի, Այրիչայի և Գեղուածորի բովանդակ ոյժերը: Օգնական ոյժեր էին բերել և՛ Զիբրայիլից:*

*Չէյվայի կատաղի կռիւներուն, որտեղ Ղափանցի ռազմիկը դուրս բերեց իւր անընկճելի հոգու ամբողջ թափը, թշնամին կրեց մեծ կորուստ: Սեպտեմբեր 3-ի կռուում Ջալիհնգէօլի մօտ ոչնչացրել ենք Մեծամասնականների մի ամբողջ դիւիզիոն: Թշնամին առաջանում է թղթադրամների դէգեր ցրելով, կաշառելով բոլոր տեսակի թափփուլքներին»:*

ՆԺՂԵՅ

<sup>1</sup> «Այգ» շաբաթաթերթ, 1920 թիւ 36, Թաւրիզ:

## VI ԳԵՆՈՒԱԶ ՄԻՆԱԿ ԲԱՅՑ ԶԵՐՈՍԱԿԱՆ

*Կալերի ժողովը.— Նժդեհ Շիւանձորի մէջ.— Մեղրի կռուի պատրաստ.— Թուրք պատուիրակութիւն մը Արևիքի մէջ.— Քիւրտիքենդ, Հանդ և Փուխրուք թշնամիին հետ.— Քաջարան և Մազրա հերոսական.— Վերջնագիր Մեծամասնականներու.— Գենուազ յաղթական.— Կոչ Ղափանցիներու:*

1920 սեպտեմբեր 6-ին Կալերի մէջ ժողովի կը հրաւիրուին Գենուազի 13 գիւղերու երկուական ներկայացուցիչները:

Օրակարգի հարցերն էին.

1. Ստեղծուած քաղաքական կացութիւնը:
2. Գենուազի բռնելիք դիրքը:

Կը նախագահէր Աշոտ Մելիք Մուսեան, որ հակառակ իր հիւանդ ըլլալուն՝ ամենալաւ տրամադրութեան մէջ կը գտնուէր, որովհետև այդ օրը Գենուազի 13 գիւղերը յայտարարած էին կռուիլ մինչև վերջին թոպէն իրենց հրամանատարին կողքին:

Ըսուած էր հերոսական խօսքը: Այնուհետև «Գենուազի էր վերապահուած դառնալու ազատութեան Բեթլեհէմ, ուր պիտի ծնէր ու զարգանար Սիւնիքի ազատութիւնը»<sup>1</sup>:

Մեծամասնականներ խուստուպի ուղղութեամբ յարձակելու իրենց ծրագրին կից Շիւանձոր-Արաքս-Մեղրի ուղղութեամբ՝ հարաւ-արևելքէն, և թրքօ-թաթար զօրքեր Նախիջևան-Օրտուբադ-Արևիք արևմտեան գծով՝ կը պատրաստուէին խորտակել հայկական Լեռնաշխարհի վերջին մնացորդը:

Սեպտեմբեր 7-ին հրամանատար Նժդեհ կը հասներ Շիւանձոր տեղացիներուն ըսելու իր վերջին խօսքը.

*«Գիւղը ձերն է, ձերն է և՛ կռուելու չկռուելու իրաւունքը, բայց գիտցէք, որ ձեր գիւղի դիրքերը, որպէս ռազմաճակատ, որպէս կարևոր ռազմագիտական կէտ՝ Հայաստանինն են, իսկ կռիւն սկսելու իրաւունքը՝ իմը: Վաղը կը տեսնէք, որ ոչ ոք չէ կարող խանգարել ինձ և իմ զինուորներին՝ մեռնելու այդ դիրքերու վրայ»:*

Այնուհետև, Նժդեհ դիրքերը կը յանձնէ իր զինուորներուն ու կ'անցնի Մեղրի:

---

<sup>1</sup> Ազատ Սիւնիք:



**ՄԵՂՐԻ:** Սեպտեմբեր 8-ի առտուն Նժդեհ Մեղրի կը հասնի:

Արևիքի շրջանին համար Մեղրիի կարծիքը առաջնակարգ նշանակութիւն մը ունէր: Ու չվարանեցաւ ան ըսել իր վճռական խօսքը. *«Հրամանատարին հետ և մինչև վերջը»:*

Թշնամի խլրտումներ կը նշնարուէին արդէն Օրտուբադի ուղղութեամբ, ուր կեդրոնացած էին տաճկական չորս գումարտակներ և Շարուրի տեղահան թաթարներէ կազմուած զօրամաս մը: Անհրաժեշտ էր ապագայ յարձակումներու դէմ պաշտպանել այդ ճակատը՝ Կաքաւաբերդ Կարճևան, ուր կը փութար հասնիլ այժմ Նժդեհ:

Վահրավար, Կուրիս, Ագարակ և Գուտեմնիս, չորս գիւղերէ բաղկացած Արևիքի այս հերոսական շրջանը, ինկած է Ալազեազ լեռան արևելեան կողին վրայ:

Սեպտեմբեր 8-ին թուրք պատուիրակներ հոն կը տանին հորհրդային Հրամանատարութեան վերջնագիրը.

*«Անմիջապէս մաքրել Արաքսի ափին վրայ ձգուած խճուղին և հնարաւորութիւն տալ հորհրդային Ատրբեջանին միանալու Նախիջևանի»:*

Պատուիրակներու հեռանալէն քիչ յետոյ Կարճևան կը հասնի Նժդեհ, որուն ներկայութիւնը բաւական կ'ըլլար կռուի ուխտին կապելու նաև հերոսներու այս բոյնը:

**ՔԻՐՏԻՔԵՆԴ:** Լեռնաշխարհի հերոսամարտի ժամանակակից պատմութեան մէջ Քիւրտիքենդ մին եղաւ այն գիւղերէն, որոնք մինչև վերջ պատնէշին վրայ առնական կեցուածք մը ցոյց տալ չկարողանան:

Սեպտեմբեր 8-ին ան Գեղուածորէն աղ ու հացով դիմաւորեց մեծամասնական զօրամասերու: հորհրդային Իշխանութեան նոյն օր հպատակութիւն կը յայտնէին նաև Հանդ և Փուխրութ հայ գիւղերը: Հերոսական էր կեցուածքը սակայն Քաջարան ու Մազրա գիւղերուն:

Սեպտեմբեր 9-ի լուսաբացին՝ յարձակողականէ առաջ, հրամանատար Նժդեհ Քիւրտիքենդցիներուն խարանող կոչ մը ուղղելէ ետք հետևեալ վերջնագիրը կը դրկէ կարմիր զօրամասերու հրամանատարութեան.

*«Եթէ չէք ուզում գերեզման գտնել ձորերում՝ թողէք Բաղաբերդը: Երկու ժամ ժամանակ ունիք փրկելու»:*

ՆԺԴԵՅ

Վերջնագիրը ունեցաւ իր վճռական ազդեցութիւնը. կարմիր գօրքը կը բռնէր նահանջի ճամբան:

Բաղաբերդը կը մնար գերօ վտանգէ:

Ղասալիք երեք հայ գիւղերը բարոյապէս դիակնացած էին. Կապարգողթի հրամանատարը սակայն կը մերժէր ընդունիլ անոնց ստրջանքը:

## ԳԵՆՈՒԱԶ ԿՈՒԻ ՊԱՏՐԱՍ

Սեպտեմբեր 10-ին Շիւանձորի ուղղութեամբ կը գոռային Կարմիրներու երկու թնդանօթները: Նոյն օրը թշնամին յարձակողականի կ'սկսէր նաև Ալագեազի ճակատին վրայ:

Արևելքէն ու Արևմուտքէն՝ թնդանօթներու և գնդացիներու մահասփիւռ կրակին ներքև թշնամին կը նկրտէր բուռ մը քաջերու դիակներուն վրայէն երկարածգել իր նոր երազին կարմիր յաղթանակը:

Ամէն կողմ ճակատ, իսկ թիկունքը՝ Արաքսը:

Զգալի էր հացի և ռազմամթերքի պակասը: Տարերային կռիւ մըն է, որ տեղի կ'ունենար. կը կռուէր մէկը տասնի դէմ: Կռիւը տեղի կ'ունենար 700 քայլի վրայ:

Կռուի երրորդ օրը թշնամին արդէն տկարացած էր:

Սեպտեմբեր 13-ին գիշերը Գենուազի վաշտերէն մէկը զինուած ձեռնառումներով ու պայթուցիկ տակառներով՝ թիկնային խիզախ շարժումով մը յանկարծակիի կը բերէ թշնամին, որ կը փախի դէպի Նիւվատի, նահանջի իր խուճապին մէջ մեծամեծ զոհեր թաղելով անդնդախոր ձորերը:

Մեծամասնականներ դէպի Գենուազ իրենց առաջին յարձակողականին մէջ ձախողած՝ ուժերու նոր խմբաւորումներով կ'աշխատէին կրկին անգամ արշաւանքի դիմել: Ղափանը՝ երեկի այդ մոլորած հսկան, միւս կողմէ կը հեծէր թշնամի լուծին տակ: Գենուազի տարած յաղթութիւնները պէտք է վիրաւորած ըլլային իր ինքնասիրութիւնը: Նժդեհ օգտուելով առիթէն 17 Սեպտեմբեր 1920-ին Ղափանցիներու կ'ուղղէր իր երրորդ կոչը.<sup>1</sup>

---

<sup>1</sup> Ղափանցիներու ուղղուած առաջին երկու կոչերը՝ Սեպտեմբեր 12 և 15 թուակիր, ինչպէս նաև ներկայ կոչը և ուրիշներ՝ հրատարակուած են «Խուստուպէան կանչեր» գրքոյկին մէջ, Գորիս 1921-ին:

## ՂԱՓԱՆԻ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ

Ժողովուրդ, քեզ հետ խօսողը քո հրամանատարն է, քո վիրաւոր, սրտից գարնուած հրամանատարը, որի սուրը վաղուց է, ինչ յանուն քո ինքնապաշտպանութեան, չի հանգստացել պատեանում:

Լսիր, մի աւելորդ, գուցէ և վերջին անգամ նա դիմում է քեզ, խօսում քեզ հետ: Նա ասում է.

- Քո սև ու նեղ օրին, երբ հայակեր Գեղուայ և Օխչու ծորը, երբ Բարկուշատն ու Չաքեարուն սպառնում էին քո կին ու երախաների արիւնով քո երկիրը ներկելու - դու կանչեցիր ինձ և ես հասայ քո հաւարին: Ասա՛, ժողովուրդ, այն օրէն քո երկրում մնա՞ց մի բարձունք, մի սար, մի քար, որի վրայ դրած չլինէի իմ յոգնած գլուխը: Ասա՛, դու ինձ տեսե՞լ ես մի օր, մի ժամ անհոգ, հանգիստ: Դու ինձ տեսե՞լ ես փափուկ տեղաշորում, հարուստ սեղանների շուրջը: Դու լռում ես. քարերը, քարերը կ'աղաղակեն, կ'ասեն՝ ո՛չ: Ասա՛, մնա՞ց մի բան, որ խնայէի, չը գոհաբերէի քո ազատութեան, քո փրկութեան, քո փառքի գործին: Քո դաշտերում, քո հողի վրայ իմ արիւնն է թափուել: Դեռ չէ փակուել թշնամու ինձ հասցրած վէրքը, իսկ քոնը, ժողովուրդ, քո հասցրածը միշտ թարմ պիտի մնայ ու հազար վէրքերի ցաւով պիտ մորմոքայ:

Ժողովուրդ, այսօր, երբ Ատրբէջանեան չէկերով կաշառուած բօլշևիկները, քո գերեզմանափորները, կեղծ ու պատիիր խոստումներով քո դուռն են բաղխում և քո ձեռքով պղծած աղ ու հացիդ սպասում՝ դու դաւաճանաբար լքում ես, մենակ թողնում քո վիրաւոր հրամանատարին: Այդ հերիք չէ, քո լրտեսներն ու ահաբեկիչները իմ գլուխն են փնտռում, երեք միլիօնով Ատրբէջանին ծախելու: Ապերախտ ժողովուրդ: Քանի՞ քանի՞ անգամ քո կինն ու երախան կռիւներից վերադառնալիս փաթաթուել են ձիանս վզով, համբուրել ձեռներս. «փաշա ջա՛ն» կանչել: Քանի՞-քանի՞ անգամ փրկել են քեզ վերահաս վտանգից, կոտորածից: Ի՞նչ, մոռացա՞ր Պրինց Ղաջարին, որի զօրքերին պատերիդ տակից են քշել: Վա՛յ քեզ ժողովուրդ, ի՞նչ պատասխան պիտ տաս Աստծուդ. խղճիդ, պատմութեանը:

Ժողովուրդ, կ'անցնեն օրեր, թշնամին քեզ զինաթափելուց ու դեկավարներիցդ զրկելուց յետոյ, երբ այլևս չի լսի «Աժդահա

փաշա» անունը, կ'սկսուի հազար ծնով ու ճանապարհով բնաջնջել քեզ: Այն ատեն դու կը վերոյիշես քո հրամանատարին, որի սուրը եօթն անգամ մեծացրել էր քո երկիրը և քեզ համար բացարձակ ապահովութիւն ստեղծել, այն ժամանակ հայեացքդ կը դարձնես խուստուպին նրա կատարին նստած սև ամպերին, կը նայես, կը կանչես, բայց հրամանատարիդ փոխարէն սարերիդ ու ձորերիդ թոյլ արծազանգը կը պատասխանի քեզ: Գուցէ մի օր էլ թշնամուց հալածական սարերն ընկնես ու թափառումներիդ ժամանակ յանկարծ մի թփի տակ, մի ժայռի վրայ իմ սառած դիակը գտնես, ծունկի գաս ու արիւն լացես:

Ժողովուրդ, ինձ լքելուց, ինձ դաւաճանելուց առաջ զլացար իմ խնդիրը կատարել: Դու չուղարկեցիր վարպետներիդ բութ գործիքներով հանելու իմ աչքերը, կուրացնելու ինձ, որ չտեսնեմ քո գլխին գալիք զուլունը, քո բարոյական անկումը: Ներում եմ, թեև պատմութիւնը չի ների քեզ և խնդրում՝ երբ ինձ սպանուած գտնես, դիակս թաղիր խուստուպի ամենաբարձր կատարին, որտեղից երևայ ինձ և՛ Ղափանը և՛ Գենուազը և՛ Գեղուածորը և՛ Գողթանը:

Իսկ մինչ այդ՝ հայեացքդ մի կտրիր խուստուպից: Որքան յաճախ, որքան շատ նայես այդ սէզ ու սև ամպերով ծածկուած սարին, այնքան շուտ կը գայ, կը հասնի փրկութիւնդ:

Աստուած և իմ սէրը քեզ հետ, ապերախտ ժողովուրդ»:

Հրամանատար ՆԺԴԵՅ

1920 Սեպտեմբեր 17  
Խուստուպեան լեռներ

## VII ՂԱՓԱՆԻ ՎԵՐԱԳՐԱՒՈՒՄԸ

*Բարեկամություն պարսից իշխանության հետ.– Մեծամասնականներու երկրորդ յարձակողականը.– Պարտուած թշնամիին փախուստը դէպի Օրտուբար.– Գենուագ նորէն յաղթական.– Նժդեհի մէկ զեկուցագիրը ԴԴ Ձին. Նախարարին.– Բախտորոշ գիշեր.– Ատրբէջանի ԴԴ դիւանագիտական ներկայացուցիչին թիւ 5 պաշտօնագիրը.– Կոչ Ղափանցիներու.– Ղափանի վերագրաւումը.– Գնահատական խօսքեր.– Աշոտ Մելիք-Սուսեանի մէկ նամակը.– «Այգ» շաբաթաթերթի կարծիքը.– Արևիքի Դ.Յ. Ղաշնակցութեան Կոմիտէի ազդը.– Թաւրիզի Դնչակեան օրկան «Չանգ»-ի դրուատալից տողերը.– Խալիլ փաշայի ձախող արշաւանքը.– Ութը հարիւր բոլշևիկ գերիներու մէկ հանրագրութիւնը.– Շիւանձորցի հայ կին մը.– Սիսեանի ապստամբութիւնը և Պօղոս Տէր-Ղաւիթեան.– Ղափան կրկին վտանգի ներքև.– Մեծամասնականներու ծրագրուած մեծ արշաւանքը:*

Մեծամասնականներ դէպի արևելք իրենց արշաւանքի ժամանակ ոտք էին նետեր նաև պարսկական հողի վրայ: Գրաւուած էր Լենկորանը, Ղազիւնը և Ռէշտը:

ԺԱ. բանակի հեծելազօրաց 20-րդ բրիգատայի և երկու հրացանաձիգ զոււնդերու հրամայուած էր անցնիլ Ղարատաղ և շարժումներ յառաջացնել Ատրպատականի մէջ:

Մեծամասնականներէ դրդուած Պարսից Կառավարութեան դէմ ապստամբած էր Շիրինդիլ Խանը ու Ամիր Արշադ Խանի դէմ թշնամական գործողութիւններ էր սկսեր:

Երևան եկած սահմանային վտանգները կրնային աւելի լայն չափով զարգանալ ու ծաւալիլ, եթէ երբեք Սիւնիքը պարտուէր:

Այս իրողութիւնը հաւասարապէս կ'ըմբռնէին Պարսից Կառավարութիւնն ու ժողովուրդը:

Վերջին յաղթութիւններէն օր մը վերջ Մութալիմ Սահրանկ Խան ցանկութիւն կը յայտնէ տեսակցիլ հրամանատար Նժդեհի հետ: Նժդեհ Կարճևանի մէջ կ'ընդունի երիտասարդ Խանը, որ կը յայտնէ, թէ. *«Եկած է իր կառավարութեան կողմէ ուրախութիւն յայտնելու վերջին յաղթութիւններու առիթով»:*

Օգտուելով առիթէն Նժդեհ կը խնդրէ, որ Պարսիկ Կառավարութիւնը թոյլադրէ Գենուագի և Թաւրիզի միջև Կապարգողթի ներկայացուցիչներուն երթևեկը:

Առաջարկը կ'ընդունուի և նոյն օրն իսկ Գ. Տ. Մ.<sup>1</sup> որպես Նժդեհի ներկայացուցիչ՝ որոշ յանձնարարություններով կ'անցնի Ատրպատական: Հետևեալ օրը տեսակցութիւն մը տեղի կ'ունենայ նաև Խանին եղբօրը հետ, որ թշնամիին Օրտուբադի շարժումներուն նկատմամբ Գենուազը իրագեկ պահել կը խոստանայ:

Այդ նպատակով նոյն օրերուն Մեղրի կը հասնի Ղարատաղի Սուժանբար գիւղի հայ քահանան՝ Տէր Մեսրոպը:

Շնորհիւ այն հանգամանքին, որ ներկայ պարագաներու մէջ Ջանգեզուր գերագանց ծառայութիւն մը կը նատուցանէր Պարսկաստանի, հայ և պարսիկ յարաբերութիւնները կը մնային աւելի քան բարեկամական և Երասխի ուղղութեամբ կռուող հայ ուժերու թիկունքը կը մնար գերծ վտանգէ:

\* \* \*

Ալանգեագի ձախող յարձակողականէն վերջ թշնամի արևելեան ուժերը ժամանակաւորապէս կը քաշուէին Նիւվատի, արևմտեան զօրամասերը՝ Օրտուբադ, իսկ հիւսիսային ճակատի վաշտերը՝ Ղափան: Իր առաջին ձախողութիւնը այս ճակատին վրայ՝ չէր յուսահատեցուցեր թշնամին:

Արաքսի ափով դէպի Բարթազ կը շարժին նոր ուժեր: Նոր գումարտակներ կը հասնէին Շուշիէն. կամրանար եւ Օրտուբադը:

Գենուազի ուժերը կռթնած մարտի իրենց սովորական ձևերուն վրայ՝ կը մնային դիրքերուն մէջ կռուի պատրաստ:

Չգալի էր սակայն ռազմանիւթի պակասը: Միւս կողմէ ճակատներու պաշտպանութեամբ զբաղած գիւղացիութիւնը հնարաւորութիւն չունէր իր հունձքը քաղելու, պարագայ մը, որ մեծապէս կը վնասէր իր տնտեսութեան, և որուն տեղեակ էր թշնամին...

## **ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՅԱՐՁԱԿՈՂԱԿԱՆԸ**

Սեպտեմբեր 17-ին Ալանգեագի ուղղութեամբ կը լսուէին թշնամիին լեռնային թնդանօթներու ձայները: Շղթայազերծ իր նոր կռիւին մէջ յաղթական դուրս գալու նպատակով արևելեան ճակատի վրայ (Շիւանձոր) ան կը պահէր խոր լռութիւն: Կռահելով ռազմական այդ խաղը հրամանատար Նժդեհ դէպի Շիւանձոր կը

---

<sup>1</sup> Գեղեոն Տեր-Մինասյան: Խմբ.:

փութացնէր փոխզնդապետ Մ. Օ.-ի անհրաժեշտ հրահանգները, իսկ ինք կ'անցնէր Կարճևանի ճակատը:

Երկրորդ օրը, երեկոյին, կռիւը դեռ կը պահէ իր սաստկութիւնը: Արաքսի վրայով Պարսիկներ կը տեղեկացնեն, թէ թշնամի բազմահազար խուժան մը թալանի և կողոպուտի նպատակով կռուող զօրքին հետ միասին կը շարժուի դէպի Գենուազ:

Հրամանատար Նժդեհ ըմբռնելով վայրկեանին լրջութիւնը, կը փութայ դիրքէ դիրք, կը խրախուսէ, կը քաջալերէ Գենուազի իր քաջարի մարտիկները: «Եթէ այս անգամ էլ մեզ չը յաջողուեց ի դերև հանել թշնամու ճիգերը, վաղն էլ հայրենիք չենք ունենայ», - կ'ըսէ զօրքին, որ խորապէս կ'ըմբռնէ այդ խօսքերուն իմաստը:

Իրենց կարգին Փրկութեան Կոմիտէի անդամներ գիւղերն ինկած՝ դէպի դիրքերը կ'ուղարկեն վերջին փամփուշտն ու զէնք կրելու կարող ամէն մարդ:

Գենուազ ըմբռնած վայրկեանին բովանդակ լրջութիւնը՝ վճռած էր տեղի չտալ երբեք:

Կ'սկսին կռիւներ արևելեան ճակատին վրայ ևս, ուր մէկ քանի անգամ ձեռքէ ձեռք կ'անցնին դիրքերը:

Սեպտեմբեր 25-ի լուսաբացին Գենուազի հայ մարտիկները գիշերային զօրեղ գրոհով մը կը ջարդեն թշնամի քնաթաթաղ զօրքը, որ բազմաթիւ դիակներ ձգած՝ կը փախի դէպի Օրտուբաղ:

Թշնամին երկրորդ անգամ պարտուած՝ կը դիմէր իր վաղեմի զէնքին – թռուցիկներով և բրօբականտով կը ջանար գիւղացիութիւնը հանել իր հրամանատարին դէմ:

Ինչ որ զէնքին չէր յաջողած ընել՝ թուղթին յաջողած էր սակայն:

Քիւրտիքենդը երկրորդ անգամ ըլլալով՝ կ'անցնէր Մեծամասնականներու կողմը, որոնք իրենց երկու գունդերը հոն կեդրոնացնելով՝ կը փորձէին անցնիլ Խուստուլաի թիկունքը:

Սօտ երեսնօրեայ յաղթական կռիւներէ յետոյ Շիւանձորի գինուորութեան մէկ մասը դաւադրօրէն իր արևելեան թաղին մէջ էր մտցուցած թշնամին: Օգտուելով այդ ճակատի վրայ իրենց ժամանակաւոր աժան յաջողութենէն՝ Մեծամասնականներ կը գրաւեն նաև Շահբագիւրդ բարձունքը - Գենուազի ռազմագիտական բանակին:

Հրետանին ուժեղ է նաև արևմտեան ճակատին վրայ: Բոպէն գերագոյն: Երիտասարդներ իրենց դիրքերուն վրայ են ու մեռնելու

պատրաստ: Կիներ և երեխաներ դաշտերու և արտերու մէջ կը հնձեն:

Կէս գիշերէն վերջ հայկական բոլոր ճակատներու վրայ մթութեան մէջ կը վառի ուժանակային խաչը: Կատարուած թանցքէն թշնամին յանկարծակիի եկած սարսափահար կը վախեր ռազմադաշտէն, նահանջի ճամբուն վրայ լքած հրացաններ, գնդացիներ՝ թնդանօթի կազմածներ ու հարիւրաւոր դիակներ:

Գենուազը անգամ մը ևս յաղթական էր:

Հոկտեմբեր 1-ին հրամանատար Նժդեհի հետևեալ գրութիւնը կը դրկէր Երևան.

*«ՀՀ Զինուորական Նախարարին,*

*Գենուազում կռիւները շարունակուում են: Թշնամին սեղմում է մեզ երկու կողմից՝ Շիւանձորի և Օրտուբադի: Կասկածից դուրս է, որ Ատրբեջանը որոշել է կապուել Նախիջևանի հետ, վերացնելով մէջտեղից Գենուազը:*

*Թշնամին իւր ուժերը սկզբում կենտրոնացրած էր Շիւանձորի ճակատում, այժմ, չթուլացնելով Շիւանձորի գործողութիւնները, կրկնակի յամառութեամբ նա գործում է Օրտուբադից: Մեծամասնականներու մեծապէս աջակցում են ու անմիջական մասնակցութիւն ցոյց տալիս տեղական թուրք մասսաները և տաճկական զօրքերը, վերջինս Օրտուբադի ճակատում: Մենք թնդանօթներ չունենք: Թշնամու կողմից գործում են 4 թնդանօթ և մեծ քանակութեամբ գնդացիներ:*

*Գենուազի մի բուռը հայութիւնը հերոսութեան աննախընթաց օրինակներ է ցոյց տալիս: Յաջողութիւնը մինչև օրս մեր կողմն է: Թշնամին տուել է մեծ կորուստներ. վերցրել ենք գերիներ և աւար: Ընդհանուր առմամբ՝ սպասելով ձեզանից որոշ հրահանգներ, ցուցմունքներ մեր անելիքի մասին, ժամանակաւորապէս առաջնորդուում ենք հետևեալ երկու սկզբունքներով.*

*1.Արաքսի ափը (Շիւանձոր-Սեղրի-Կարճևան, որոնցից վերջինս գտնուում է Նախիջևանի գաւառում) ոչ մի գնով չի զիջել թշնամուն, որովհետև դա միակ ճանապարհն է, որով նա կարող է և կամենում է ուժ մատակարարել Նախիջևանին, նախ՝ կանգնեցնելու հայկական առաջխաղացման վտանգը, ապա յետ շարտելով հայկական զօրքերը մինչև հին դեմարկացիօն գիծը՝ միանգամ ընդմիշտ միանալ Քէմալ փաշայի զօրքերին:*



2. Ժողովրդի ֆիզիքական ինքնապաշտպանութիւնը վերահաս կոտորածների հանդէպ:

Օրտուբադի ճակատում այսօր թշնամին չտեսնուած եռանդ է գործադրում պատռելու մեր շղթան: Ընթակծում են մեր բոլոր դիրքերը: Ալանգեազի վրայ նկատուում են թշնամու նորանոր ուժերի կուտակումն: Բարծունքները գտնուում են նրա ձեռքին: Մեր տղաները փամփուշտ, փամփո՜ւշտ և փամփո՜ւշտ են խնդրում: Արագացրէ՛ք օգնութիւնը»:

Հրամանատար ՆԺԴԵՅ

Կարճևան, 1 Հոկտեմբեր 1920

### ԲԱԽՏՈՐՈՇ ԳԻՇԵՐ

Գենուազի կռիւներու քառասներորդ գիշերը սուրհանդակը հետևեալ գրութիւնը կը բերէր հրամանատար Նժդեհին.

«Միրելի Նժդեհ,

Հայաստանը ի վիճակի չէ Ձեզ ներկայունս թեալ օժանդակութիւն ցոյց տալ: Դուք, ինչպէս մինչ այժմ, այնպէս և հիմա, պիտի մեն-մենակ շարունակէք Ձեր հերոսական գոյամարտը: Միայն գիտցէք, որ մեր և ամբողջ հայ ժողովրդի համակրանքը դէպի Ձեզ է»:

Ե. ՄԻՐԱՔԵԱՆ<sup>1</sup>

Ջուլ, 11 Հոկտեմբեր 1920

Գենուազ թէև յաղթական, բայց յոգնած էր: Երեսի վրայ կը մնային դաշտային աշխատութիւններն ու այգեկութիւնը: Միւս կողմէ թշնամի յարձակողական նոր շարժումներ կը նշմարուէին ճակատներու դէմ:

Հ. Հանրապետութեան Ատրբէջանի դիւանագիտական ներկայացուցիչը իր 7 Հոկտեմբեր 1920 թիւ 5 պաշտօնագրով հետևեալը կը գրէր իր կառավարութեան Ջիբրայիլի ուղղութեամբ Խորհրդային Ատրբէջանի այդ մութ ձեռնարկներուն նկատմամբ:

«ՀՀ Արտ. գործոց Նախարարին,

---

<sup>1</sup> Ե. Միրաքեան Նժդեհի հետ հատկապէս կապակցութիւն հաստատելու համար ուղարկուած էր Դարալագեազ ՀՀ Կառավարութեան կողմէ:

*Այսօր ամենահաւաստի աղբիւրներից տեղեկացանք, որ Ատրբէջանի Սովետական իշխանութիւնը 70-ի չափ ինժիններն, տեխնիքներ է ուղարկել դէպի Ջիբրալիլ, որպէսզի փութով այդ տեղից սայլի ճանապարհ կառուցանեն դէպի Ջանգեզուրի գաւառի մասերը: Ենթադրում է ճանապարհը անցկացնել Ջիբրալիլից դէպի Ջանգեզուրի գաւառի Թումալու-խօջահան և Խանլըղ գիւղերը: Խանլըղից ենթադրում է մի ճանապարհ տանիլ դէպի Գորիս և ապա Ղափան, իսկ միւսը Գորիսից դէպի Յաջիսամլու: Գնացողներին տրամադրել են խոշոր գումարներ, որպէսզի աշխատանքները արագօրէն առաջանան և հնարաւորութիւն ստեղծեն դէպի Ջանգեզուրի լեռնային մասերը արտելերիա փոխադրելու և կանոնաւոր երթևեկութեան համար սայլի, կառքի ճանապարհ ունենան այդ գաւառում:*

*Հարկ եմ համարում այս մասին յայտնել Ձեզ ի գիտութիւն»:*

Մ. ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ

Անհրաժեշտ էր կռուի ծանրութիւնը Ղափան փոխադրել:

Ղափան Մեծամասնականներու տիրապետութենէն զոհ մնալու ոչինչ ունեցած էր՝ ընդհակառակը: Այդ իրողութիւնը խորապէս կը գիտակցէր Նժդեհ, որ խորհրդային այդ շրջանը ըմբոստացնելու և կռիւը այդ ճակատին վրայ փոխադրելու համար 1920 Յոկտեմբեր 5-ին Ղափանցիներու կ'ուղղէ իր հետևեալ կողը:

## ՂԱՓԱՆ

*Դու ինձ լքեցիր, մենակ թողեցիր: Սակայն իմ պատերազմական բախտը, իմ Աստուածը մնաց ինձ հետ և ես ամբողջ ամիս է, ինչ աննախընթաց յաջողութեամբ ջարդում եմ թշնամուն հերոսական Գենուազի ռազմաճակատներում:*

*Չգիտեմ, Ղափան, դու հաշտուե՞լ ես քո դրութեան հետ թէ ոչ, բայց հայ ժողովուրդը ցաւում է, անասելիօրէն ցաւում և ափսոսում, որ դու միամտօրէն վիզդ թշնամու ծանր լծի տակ պարզեցիր և ծով փառքդ, փառքի մէջ կորած անունդ աշխարհի չորս քամիներին տուիր: Այն օրէն, քո անկման այն սև օրէն, Ղափան, քուն ու դադար կորցրած, սար ու քար ընկած մի քանի հարիւր ինձ հաւատարիմ մնաց Գենուազցիներով կուրծք եմ տալիս թշնամու գերա-*

դաս ուժերին ու քո կորցրած փառքի փոխարեն նորն ստեղծում քո երկրի, քո անունի համար:

Ղափան, զղջո՞ւմ ես արարքիդ համար: Ի՞նչ եղաւ Ատրբէջանին ծախուած մի խումբ հայերի քեզ խոստացած արքայութիւնը:

Խե՛ղճ ժողովուրդ, ասում են՝ արդէն զինաթափել, զլխատել, տնտեսապէս քայքայել են քեզ:

Ա՛հ, դեռ ինչ ես տեսել: Սև օրերդ դեռ չեն հասել, բայց գալիս են և շուտով կը հասնեն թաթար զօրքերի հետ:

Ոտքի՛, խաբուած ժողովուրդ, ոտքի՛ ել, փրկութիւնդ մօտ է:

Ոտքի՛, զէնքը ձեռքիդ, կազմ ու պատրաստ ինձ սպասիր հուստուպից:

Հրամանատար ՆժդեՅ

1920 Հոկտեմբեր 5

Խուստուպեան լեռներ

Ապա մշակուած մարտագրին համաձայն իր հետ վերցուցած եօթը ձիաւոր զինուորներ Հոկտեմբեր 9 կէս գիշերին Նժդեհ կը շարժի դէպի Խուստուպի կատարը: Հոն պիտի կեդրոնանային Գեմուազի արևելեան և արևմտեան ճակատներէն, ինչպէս և հերոսական Շիշկերտե՛<sup>1</sup> հետևակներ, ընդամենը երեք հարիւր հոգի:

Որոշեալ ժամուն սպասուած ուժերը չեն հասնիր, որովհետև թշնամին երևցեր է կրկին Շիւանձորի ճակատին վրայ:

Այն իրողութիւնը սակայն, որ Ղափան առանձին բաւական երթօթափելու իր լուծը, եթէ կամենար, անգամ մը ևս՝ խելայեղ յանդգնութիւններու կ'առաջնորդէ Կապարգողթի հրամանատարը:

Կէս գիշերը արդէն անցեր է. եօթը ձիաւորներ խաւարին մէջէն կ'իջնեն դէպի Ղափան, ամէն կողմ կը տիրէ մեռելային լռութիւն: Ժամանակ վերջ Ղափանի առաջին գիւղերէն կը լսուի շուներու հաչիւնը. ձիաւորները մօտ են Սևաքար գիւղին: Համաձայն նախապէս եղած կարգադրութեան՝ հոն պիտի սպասեն Ղափանցի երկու զինուորներ՝ հրամանատարն ու իր ուղեկիցները, դէպի Գիւտ-Կունի ձորը առաջնորդելու համար:

Տրուած նշանի մը վրայ՝

- Ո՞վ է ան,- ձայն կու տայ մէկը մութին մէջէն:

- Յիշիր Գեղուածորը,- կը պատասխանեն ձիաւորները:

<sup>1</sup> Շիշկերտ միակ գիւղը եղաւ Ղափանի շրջանին մէջ, որ մինչև վերջ մնաց զէնքը ձեռքին և չենթարկուեցաւ Մեծամասնական դրօշին:

Նոյն վայրկեանին ժայռի մը տակէն դուրս կը ցատքեն երկու զինուած քաջեր և հրամանատարն ու իր խումբը կ'առաջնորդեն առաջ:

Կէս ժամ վերջ արդէն հաւաքուած են 50-ի չափ զինուած ու անզէն երիտասարդներ: Վաշտապետ Գ.-ի տուած համառօտ զեկուցագրին վրայ հրամանատար Նժդեհ կը գծէ իր յանդուգն ծրագիրը:

Ապստամբները երեք խմբակի բաժնուած կը շարժուին դէպի Գիւտ-Կում: Ուրքի վրայ է գիւղացիութիւնը ուրախ, բայց անհանգիստ: Քանի մը վայրկեան վերջ երկու խմբակները կը գրաւեն տեղական դպրոցը, ուր կը քնանար կարմիր զօրքը՝ առանց գիշերային պահակ նշանակելու: Երրորդ խմբակը հրացանները կրակելու պատրաստ՝ շէնքէն ներս կը մտնէ:

- Ուրքի՛,- կ'աղաղակէ Ղափանի կտրիճներէն մէկը: Գիշերային լռութեան մէջ թշնամին յանկարծակիի եկած կը փորձէ զէնքի դիմել, բայց ի գուր:

«Մեր կռիւը ձեր դէմ չէ,- կը թնդայ հրամանատար Նժդեհի ձայնը,- այլ ձեր Բագուի հրամանատարութեան դէմ: Նա չուզեց հասկանալ քայքայուած ժողովրդի լեզուն և դրա համար այժմ անպատեհութիւնն ունի զգալու մեր սրի լեզուն: Ձեր զէնքերից և ռազմամթերքներից զատ մեզ պէտք չէ ոչինչ: Անարիւն պիտի զինաթափեմ ձեր բոլոր զօրամասերը»:

Արդարև դեռ լոյս չբացուած՝ պայթուցիկ տակառներու բարձրացուցած խուլ ժխորէն և հրացաններու ուժեղ համազարկի ահաւոր բոմբիւններէն շշմած՝ Յանքերու քնաթաթախ Կարմիր զօրքը դուրս կը ցատքէր իր զօրանոցէն ու զգալով, որ փրկութիւնը անձնատուութեան մէջ է, կը յանձնէր իր զէնքը: Դիմադրել կը փորձէ հարիւրեակ մը միայն, որ կորուստներով տեղի կու տայ:

Յոկտեմբեր 10-ի առաւօտուն վերագրաւուած էր ամբողջ Ղափանը: Այդ օրը Ղափանի ուժերը կը զինաթափէին մեծամասնական 251-252 հրացանաձիգ և Կովկասեան երկրորդ գունդը, որմէ 400 հոգի միայն Յանքերու շրջանը կը գտնուէր: Կը գրաւէին 20-է աւելի գնդացի, 200 ձի, երկանիւ շատ մը կառքեր, արշաւանքային խոհանոցներ, թշնամի ամբողջ արխիւը և պատերազմական ւարք:

Այսպէս, առանց որևէ զոհ տալու, Ղափան կը թօթափէր մեծամասնական լուծը իր իսկ սեփական ուժերով:

1920 Յոկտեմբեր 17-ին Ղարաբաղ-Չանգեզուրի հայութեան իր ուղղուած կոչով՝ Ղափանի վերջին հերոսական կռիւներու

առթիւ, հետևեալ տողերը կը հրատարակէր Երևան գտնուող Բանւորա-Գիւղացիական Կոմիտէն.

## ՀՊԱՐՏ ՂԱՓԱՆ

*Փա՛ռք քեզ, որովհետև կարողացար քո հերոս հրամանատար Նժդեհի շուրջը համախմբուել և գլուխ չծնել թշնամու առաջ:*

*Դու ցոյց տուիր քո տղամարդութիւնը, քո հպարտ հոգին, քո սէրը դէպի անկախութիւնն ու ազատութիւնը:*

*Կա՛ց միշտ կանգուն:*

*Մի՛ ընկճուիր<sup>1</sup>:*

Ղափան-Նախիջևան-Ղարաբաղ-Զանգեզուրի  
Բանւորա-Գիւղացիական Կոմիտէ

1920 Յոկտեմբեր 16 նամակով Թաւրիզէն, ուր Կապարգողթի վերաբերեալ կարևոր առաքելութեամբ մեկնած էր Աշոտ Մելիք-Մուսեան, կը գրէր հետևեալը Գեճուազի և Ղափանի վերջին յաղթութեանց առթիւ.

«Գեճուազի և Ղափանի դէպքերը քաղաքական լուրջ նշանակութիւն են ստանում, պետութիւնների ներկայացուցիչները, իսկ մասնաւորապէս Ամիր Արշատը (որը միշտ բարեացական է եղել դէպի մեզ) առանձին հետաքրքրութեամբ են լսում կատարուած դէպքերու մասին»:

Խօսելով Ղափան-Գեճուազի յաղթութիւններու մասին, Թաւրիզի Այգ աշխատաւորական շաբաթաթերթը հետևեալ խանդավառ տողերը կը գրէր.

*«Ապստամբ Ղափանն ու Գեճուազը խլեցին Հայաստանից, իրենց իսկ Հայաստանի համար յաղթութեան դափնեայ պսակները. ծիծաղում է Զանգեզուրը, հրճում Զանգեզուրը, բայց չեն վերջացել նրա ցաւերի շարանը, շուտով իւր ժողովրդի կենսունակութեան շնորհիւ կը դարմանեն և այդ... Փա՛ռք ու պարծանք Զանգեզուրի հերոսներին, պատի՛ւ ու յարգանք Յ.Յ. Դաշնակցութեան ծնունդ Նժդեհին, հայ անվեհեր կտրիճ զինուորներին, որոնք փարած գէնքին հայ ազատագրութեան գոյամարտն են մղում ձիւնապատ բարձունքներում, սոված ու տկլոր»<sup>2</sup>:*

<sup>1</sup> «Այգ» շաբաթաթերթ, 39 թիւ, 17 Յոկտեմբեր 1920, Թաւրիզ:

<sup>2</sup> «Այգ» աշխատաւորական շաբաթաթերթ, թիւ 41, 1920 Յոկտեմբեր 28, Թաւրիզ:

Արևիքի Յ.Յ.Դաշնակցութեան Կոմիտէն նոյնպէս ցնծութեամբ կ'ողջունէր Ղափանի վերագրաւունը.

### ԱՐԵՒԻՔԻ ԵՒ ՂԱՓԱՆԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ ԱԶԴՆ

*Չքնաղ Արևիքի սեզ ու հպարտ Սոյուզների, Ալանգեազի և Խորիաստի բարձունքներից աւետում ենք Ձեզ այն մեծ ու փառաւոր յաղթութիւնների աւետաբեր լուրը, որպիսին տարաւ մեր պաշտելի Յրամանատարն, Արևիքի ժողովուրդը:*

*Յպարտ Ղափանի Սիւնեաց աշխարհի էն շուրջպար լեռների երկնամբարձ գագաթներից, Դաւիթ Բէգի հոգեշունչ վայրերից բախտ ենք ունենում հաղորդելու Ղափանի լեզենդար վերագրաւունը, թշնամու խայտառակ պարտութիւնը:*

*Թո՛ղ հպարտանայ մեր Կուսակցութիւնը, թո՛ղ ժպիտը փայլի նորա շուրջն բոլորած շիտակ ու անկեղծ կուսակցականների դէմքերին, որ իւր շարքերում ունի **ՆԺՊԵՅ**, որ իւր ծոցում սնել, մեծացել է Գեղուածորի աժդահա փաշան, Չաւրնդուրի փատիշահը, Բալկան Դարասիի իգիդը, Կապարգողթի (Ղափան-Գենուազ-Գողթանի) սիրելի հրամանատարը: Թո՛ղ հրճուին մեր բոլոր ընկերները, ցնծան նրանց սրտերը, վառուեն հայրենասիրական զգացումները և տօնական հանդիսաւորութեամբ աւետեն, ողջունեն միմեանց՝ մեծ հերոսի մեծ յաղթանակը:*

*Թող վե՛ր, շատ բարձր ծածանի, փողփողայ Դաշնակցութեան դրօշակը, թող վե՛հ հպարտութեամբ, ընկերասիրական քաղցր զգացումներով լցուեն բոլոր ընկերների սրտերն ու մի բերան, մի հոգի, մի սիրտ գոռան.*

*Կեցցե՛ Դաշնակցութիւնը*

*Կեցցե՛ Նժդեհը*

*Կեցցե՛ն Արևիքի հերոս զաւակները*

*Կեցցե՛ Ղափանը:*

Յ.Յ. Դաշնակցութեան  
Արևիքի կոմիտէ

Արևիք, 16 Յոկտեմբեր 1920

Խօսելով Ձանգեզուրի վերջին յաղթական կռիւներու մասին Յնչակեան Կուսակցութեան Թաւրիզի խմբակի օրկան *Ձանգ* թերթը կը գրէ.

*«Պատմական Սիւնիքը - Ջանգեզուրը - դարձեալ կոր ի գլուխ ջարդել է 4000 թաթար թալանիչների, որ ծածկուած բոլշևիկ անուան տակ՝ ուզել էին խուժել հայ առիւծների բոյնը և աւերակ դարձնել մեր սեզ Ջանգեզուրը»<sup>1</sup>:*

\* \* \*

Խալիլ փաշա Էնվերի և Իբրահիմ Թալիի հետ Բագու Մահմետական աշխարհը Մեծամասնականներու Յանագումարին մէջ ներկայացնելու իր միսիան նոր վերջացուցած՝ Յոկտեմբեր 10-ին, Ղափանի վերագրուման օրն իսկ, Օրտուբադի կողմէն դէպի Կարճևան, դէպի Կաքաւաբերդ նոր արշաւանք մը կ'սկսէր Կապարգողթի դէմ:

Գենուազի Փրկութեան Կոմիտէն անտեղեակ Նժդեհի վերջին յաղթանակին Յոկտեմբեր 11-ին կը փութար հաղորդել անոր Գենուազի սպառնացող նոր վտանգը, խնդրելով նոյն ատեն ժամանակաւորապէս յետաձգել Ղափանի ապստամբութիւնը:

Նժդեհ իր հետ կը վերցնէ երեք մեծամասնական, որոնք պարսկական ափով Մեծամասնականներու ԺԱ. բանակի հրամանատարութեան և Անդրկովկասեան ռազմաճակատի զինուորական կոմիսարին կը տանին Ղափանի մէջ գերի ինկած կարմիր զօրքերու մէկ հանրագրութիւնը, հետևեալ բովանդակութեամբ.

«Ջանգեզուրում տեղի ունեցող հայ-բոլշևիկեան կռիւների գլխաւոր պատճառներն են. Ա. Ջանգեզուրը Կարմիր Բանակի բարձր հրամանատարութեան կողմից Խորհրդային Ատրբէջանի անբաժան մասը յայտարարելը, Բ. Տաճկական փաշաների և զօրամասերի ներկայութիւնը Կարմիր Բանակի շարքերում: Սուտ են այն լուրերը, թէ Նժդեհի մօտ անգլիական սպաներ կան: Սրա բանակը զինուած է գիւղացիներէ, որն ուզում է ազատ ապրել իր լեռների վրայ: Նժդեհը յեղափոխական է և ո՛չ ցարական գեներալ, և մեզ հետ շատ լաւ է վարում»:

(800-ի մօտ ստորագրութիւններ)

Յոկտեմբեր 12-ին Մեղրիի Փրկութեան Կոմիտէն Ալանգեազի ճակատէն Խալիլ փաշայի արշաւանքին նկատմամբ իր ստացած

---

<sup>1</sup> Արտատպուած «Այգ» շաբ. 1920 Յոկտեմբեր 24, թիւ 40-էն:

հաղորդագրութեան վրայ կը հրամայէ նոյն ճակատի պետին. *«Վարուէք այնպէս, ինչպէս նման դէպքում, հրամայում է վարուել հրամանատարը: Նա կը հասնի շուտով»* - այսինքն գիշերանց անցնիլ թշնամու թիկունքը: Հրամանը կը կատարուէր նոյն իրիկունն իսկ և թշնամին ջախջախիչ պարտութեան մը մատնուած՝ կը լքէր կռուի գիծերը:

Իսկ արևելեան ճակատին վրայ Հոկտեմբեր 11-ի երեկոյեան թշնամին մեծ ուժերով կը թափի Շիւանծորի արևելեան թաղը:

Թշնամի հեծեալ ջոկատ մը Շահբազիւրդի ուղղութեամբ թևանց կատարել կը փորձէ: Թշնամի շարժումները նկատող Շիւանծորից հայ կին մը՝ բարձրանալով իր տանը կտուրին վրայ, կ'սկսի պոռալ հայ զօրքերուն. *«Կռուեցէք, տղերք ջան, ահա գալիս է, ահա եկաւ, ահա հասաւ հրամանատարը»:*

Խրախուսուած, հայ զօրքերը թշնամի հեծեալ ջոկատ մը Ղափանէն գալիք Նժդեհի զինուորները կարծելով՝ կը կռուին աւելի մեծ խանդավառութեամբ, ու նորանոր գրոհներով հակառակորդը կը քշեն գիւղէն դուրս ու կը ջարդեն Արաքսի ափերուն վրայ:

Ղափանի և Գեւուազի յաղթանակներու լուրը անհուն ուրախութեամբ կը համակէր նաև Սիսեանցիները. «Սիսեանը ևս իր հայեացքը կը դարձնէ դէպի Ղափանի հերոսը, կապ հաստատելով անոր հետ՝ կ'սպասէ ապստամբութեան ու կռուի»<sup>1</sup>:

Սիսեանի ժողովրդային ապստամբութեան գործին մէջ աչքառու դեր կը խաղայ Ղափանցի անձնուրաց տեղակալ Պօղոս Տէր-Դաւիթեանը, որ Հոկտեմբեր 5-ին Ջուլիի մէջ իր շուրջը համախմբած կարգ մը զէնքի ընկերներ՝ կ'որոշեն կապ հաստատել հրամանատար Նժդեհի, Սիսեանի և Զանգեզուրի բնակչութեան հետ և բարձրացնել ապստամբութեան դրօշակը: «Դէպքերը կ'արագացնեն այդ ապստամբութիւնն ևս, որովհետև Սիսեանցիք իրազեկ էին, որ Գորիսի ռևկոմի կարգադրութեամբ շուտով պատանդներ պիտի վերցնէին Սիսեանի գիւղերէն, պիտի սկսէին նոր բռնագրաւումներ, զինակոչի ենթարկելով ամբողջ երիտասարդութիւնը: Այդ տեղեկութիւնները ստանալէ վերջ, Պօղոս Տէր-Դաւիթեանը քանի մը վստահելի անձեր թռուցիկներով կը դրկէ Սիսեանի գիւղերը ժողովուրդի տրամադրութեան մօտէն ծանօթանալու և զինուորու-

---

<sup>1</sup> Արնոտ Գիրք, էջ 41:



թիւնը կազմակերպելու նպատակով: Տեղեկութիւն ստանալով, որ հրամանատար Նժդէհի առաջնորդութեամբ Ղափանն ազատագրւած և թէ Սիսեանի զինուորութիւնը կազմ ու պատրաստ է, Տէր-Դաւիթեանն Յոկտեմբեր 12-ին 200 զինուորի հետ կ'անցնի Սիսեանի գիւղերը, ուր իրեն կը միանայ տեղական ամբողջ զինուորութիւնը: Կ'սկսի ապստամբութիւնը: Ամենուրեք, ուր բուլշևիկեան զինուորներ կան յեղափոխական կոմիտէներ կային կամ կը ձերբակալուին կամ խուճապի մատնուած կը փախչին Գորիս: Մինչև Յոկտեմբեր 14-ը կը մաքրուի ամբողջ Սիսեանը»<sup>1</sup>:

Յոկտեմբեր 13-ին Տէր-Դաւիթեան կը հաղորդէր Նժդէհին.

**ՂԱՓԱՆԻ ԶԻՆՈՒԱԾ ՈՒԺԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ  
ԳՆՂԱՊԵՏ ՆԺԴԵՀԻՆ**

*Ամսիս 11-ին ժամը 6-ին ես իմ զօրախմբով մեկնեցի Զուլից Ղալաչաղ գիւղը, նպատակ ունենալով գրաւելու Մեծամասնականների կողմից թողած գիւղերը՝ համաձայն Սիսեանի ժողովրդի ցանկութեան: Շրջակայ գիւղերը ուղարկւած մարդիկ հաղորդեցին ու գիւղացիութիւնը գրգռուած է Մեծամասնականներու դէմ և սպասում է ընդհանուր ապստամբութեան ազդանշանին:*

*Ղալաչաղ, Մազրա, Կարակլիս, Բելեակ արդէն գրաւուած է իմ զօրքերով: Մնացած գիւղերը բացի Անգեղակոթից և Բազարչայից տրամադրել են ինձ իրենց զինուած ուժերը:*

*Մեծամասնականները քաշել են իրենց մասերը դէպի Գորիս: Բազարչայում և Անգեղակոթում ունեն ընդամենը ոչ աւել քան երեք տասնեակ ձիաւորներ: Ես խուսափում եմ առ այժմ ընդհարելու նրանց հետ: Անգեղակոթը գրաւելուց յետոյ պիտի բռնեն Ուչթափալարն և այդպիսով կատարած կը լինեն իմ մօտակայ նպատակը, այն է՝ բարձրացնել ապստամբութիւն և պաշտպանել այդ ապստամբութիւնը:*

*Մազրայի ռևկոմը Աղալոյի գլխաւորութեամբ բռնուած է գիւղացիների ձեռքով: Գիւղացիք ռումբ են նետել ռևկոմի ժողովատեղը:*

*Հաղորդեցէք Ձեր դրութեան մասին:*

Տեղակալ ՏԵՐ-ԴԱՒԻԹԵԱՆ

Մազրա, 1920 Յոկտեմբեր 13

<sup>1</sup> Արնոտ գիրք, էջ 42:

Իր վերջին պարտութիւններէն ետք՝ թշնամին կը պատրաստուէր աւելի մեծ ուժերով և աւելի ծրագրուած մեթոդով սկսելու իր յարձակումները: Մեծամասնական ուժերը կարմիր Ատրբէջանի ախորժակին լաւագոյն կերպով ծառայելու նկատումով անգամ մը ևս դէպի Ջանգեզուր, դէպի Հայկական Լեռնաշխարհ կը նետուէին իրենց բանակները, կռուելու համար երևակայական թշնամիներու և նոյնքան երևակայական «հայ բանտաներու» դէմ, որոնք գոյութիւն ունեցած ըլլան երբեք այդ բարձունքներուն վրայ, յորմէիտէ մանաւանդ, երբ քաղաքակրթութեան յառաջապահի անունին ներքև մութ ուժեր կիսաքաղց և աւերակ վիճակի մը մատնած էին այդ երկիրը:

Սև ամպեր վերստին կը կախուէին արևելեան սահմաններուն վրայ: *«Նորից խնդրում եմ, աղաչում, հասէ՛ք, հասէ՛ք: Այսօր մեծ կռիւ կար: Տղաներին իսկոյն ուղարկեցի, դեռ լուր չունիմ»*, - կը գրէր 16 Հոկտեմբերին Սամսոն-Բէգ հրամանատար Նժդեհին:

Նժդեհ դեռ Խուստուպի կատարը չհասած՝ երկրորդ սուրհանդակ մը կը տանէր իրեն կացութեան մասին մտահոգիչ լուրեր. *«Ղափանում դրութիւնը շատ լուրջ է: Խոտանանից միմչև Ձէյվա ամբողջ տարածութեան վրայ թշնամին կանգնած է: Անհամբեր սպասում ենք Ձեր գալստեան»*:

ՍԱՄՍՈՆ-ԲԵԳ

Հանքեր, 17 Հոկտեմբեր

Մեծամասնականներ Կապարգողթը ընկճելու նպատակով շարժման մէջ էին դրած իրենց 28-րդ հետևակ զօրաբաժինը, Խորհրդային Ատրբէջանի երկու հետևակ *բրիգատաները*, մեծամասնական ամբողջ գումարտակ մը, Հաքեարի ու Խանլըղի շրջանին թաթարները, Գենուազի ճակատին վրայ պարտուած 20-րդ հեծեալ *բրիգատան* և Կովկասեան երկու հետևակ գունդեր:

Այսպէս, միմչև իր ատամները զինուած կարմիր բանակը անգամ մը ևս կը մօտենար Սիւնիքի սեգ լեռներուն, անոր բնակիչներու հպարտութիւնն ու անկախ ապրելու անկորնչելի իրաւունքը խորտակելու յամառ որոշումով:

## VIII ՄԵԾ ԿՈՒԻՆԵՐՈՒ ՇՐՋԱՆ

*Նեստորովսկիի ռազմական գաղտնի հրամանները.– Մեծամասնական 84-րդ բրիգատայի անձնատրուքները.– Բագուի «Կրասնիյ Աւանկարտ»-ի յորջորջումը.– Աղաղակ մը Եայջիէն.– Կարմիր զօրքին պարտութիւնը Անգեղակոթի վրայ.– Տեղակալ Տէր-Դաւիթեանի յաղթանակը Մալտաշի մէջ.– Կուրոչկիւնի հեծելազօրքը Ջանգեզուրի մէջ.– Պարտութիւն և նահանջ դէպի Գորիս.– Տաճկական զօրագունդի մը բարբարոսութիւնները.– Տեղակալ Տէր-Դաւիթեանի մահը.– Վերջնագիր Գորիսի Մեծամասնական Իշխանութեան.– Գորիսի գրաւումը.– Բողոք Գորիսի հայ կանանց կողմէ.– Ա. Մելիք-Մուսեանի յիշատակագիրը 33 Կառավարութեան.– Կարմիր հրամանատարութեան և Նժդեհի գրութիւնները.– 1920 Դեկտեմբեր 2-ի պատմական դէպքը Երևանի մէջ.– Կոչ Սիւհանցիներու.– Դրօհ և Աւիսի կոչը Ջանգեզուրի գիւղացիութեան:*

Խորհրդային ուժերու 28-րդ զօրաբաժնի պետ Նեստորովսկի իր այս նոր արշաւանքին առիթով կը մշակէր կարգ մը մարտագրեր, որ կռիւներու ընթացքին կ'անցնէին հայ հրամանատարութեան ձեռքը:

Շուշիի կարմիր զօրքերու պետը կը հրամայէր իր այդ մարտագրերով ըլլալ անողոք ամեն կարգի հակամեծամասնական շարժումի դէմ, ի հարկին արտօնելով նոյնիսկ հիմնայատակ կործանել բոլոր այն գիւղերը, որոնց բնակչութիւնը ամենաթեթև դիմադրութիւն մը կը փորձէր: Նեստորովսկի 30 Դեկտեմբեր 14-ին կը հրամայէր իր զօրամասերուն<sup>1</sup>.

Գաղտնի Ռազմ. Գործ.

ՀՐԱՄԱՆ

ԺԱ. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ 28-ՐԴ ՀՐԱՑԱՆԱԶԻԳ ԴԻԻԻԶԻԱՅԻ

ԶՕՐԱՄԱՍԻՆ

Թիւ 29

«Գրեթէ ամբողջ Ջանգեզուրը բռնկած է ապստամբութեամբ: Ապստամբած Հայերը գրաւած են Անգեղակոթ-Ղարաքիլիսէն, ամբողջ Ղափանի շրջանը և Օխչի չայի ու Մեղրի չայի աւազանները:

---

<sup>1</sup> Այդ հրամաններուն կարևոր մէկ մասը հրատարակուած է «Արևոտ գիրք»-ի մէջ, Գորիս, 1921-ին:

Նիւվադի գիւղի շրջանը գործող 252-րդ հրացանաձիգ և Կովկասեան 2-րդ գունդի միջև կապը խզուած է:

Ղափանի աննշան զօրամասը շրջապատուած է, իր վիճակը անյայտ է: 251-րդ հրացանաձիգ գունդը կը կռուի թշնամիին հետ Տանձավերէն 4 վերստ դէպի հարաւ գտնուող Ինջաբէլի բարձունքներուն վրայ:

20-րդ դիւիզիայի Կովկասեան *բրիգատային* հրամայուած է Արաքսի ափով առաջ անցնիլ և Յոկտեմբեր 16-ին գտնուիլ Նիւադիի շրջանը, ուր իրեն ենթարկելով 252-րդ հրացանաձիգ և Կովկասեան 2 գունդերը, վճռականութեամբ և դաժանութեամբ ջարդել Նժդեհի աւազակախումբերը:

Այդ գործողութենէն յետոյ հարուածելով Ղափանի շրջանը՝ վերջ տալ ապստամբութեան: Մեր դիւիզիային հրամայուած է պատրաստել հարուածող բռունցք և ուժեղ թափով ջնջել ապստամբութիւնը, կենդանի չձգելով ոչ մէկ աւազակի, կանգ չառնելով ամբողջ գիւղերը աւերի ենթարկելու առաջ:

#### ԿԸ ՀՐԱՄԱՅԵՄ

83-րդ Բրիգատայի հրամանատար ընկ. Լիտվինենկոյին

247-րդ գունդ և 248-249-րդ հրացանաձիգ միացեալ գունդ, 248 և 249-րդ հրացանաձիգ գունդերու հագուստ ունեցող բոլոր զինուորներէն կազմել միացեալ գունդ և 247-րդ հրացանաձիգ գունդի հետ միացնելով՝ պատրաստել հարուածող բռունցք և Յոկտեմբեր 15 ժամը 16-ին կեդրոնացնելով Տեղ գիւղը՝ Յոկտեմբեր 16-ի լուսաբացին վճռական յարձակումի անցնելով Ձէյվայի, Արծուենիկի և Բարաբաթումի վրայ՝ օղակել Ղափանի շրջանը արևելեան կողմէն ու ճնշելով՝ դաժանութեամբ վարուիլ ապստամբներու հետ, ոչ մէկ աւազակի կենդանի չձգելով:

Ղէպի աջ կապ պահպանել 84-րդ *բրիգատայի*, իսկ Ղափանը գրաւելէն յետոյ կապուիլ նաև 20-րդ հրացանաձիգ դիւիզիայի Կովկասեան *բրիգատայի* հետ:

Թիկունքն ապահովելու համար վերցնել Տեղ գիւղի կուլակներէն 100 պատանդ և Կարմիր զօրքի թիկունքէն մինչև իսկ գնդակ մը արձակելու պահուն՝ բոլորը գնդակահարել: Ստանալ 84-րդ *բրիգատայի* հրամանատարէն դասակ մը հեծեալ լեռնային հրետանի և եթէ հնարաւոր չըլայ յարձակումի ատեն օգտագործել,

այն ժամանակ գետեղել Տեղի դիմացը դիրքերուն վրայ՝ գիւղը ռմբակոծելու, եթէ պէտք զգացուի:

#### ԿԸ ՀՐԱՄԱՅԵՄ

83-րդ և 84-րդ *բրիգատ*ներու հրամանատարներուն խուսափիլ ամէն տեսակ մարդասիրական միջոցներէ և դաժան ըլլալ ապստամբ բնակչութեան հանդէպ, որպէսզի զգայ ան բանւորական բռունցքի թափը: Դիմադրողներուն գերի չվերցնել և կենդանի բաց չթողնել ոչ մէկ աւագակի: Միմիայն ապստամբ կուլակները ոչնչացնել և անոնց ամբողջ կայքը գրաւելով կը հասնինք խաղաղութեան: Եթէ հանգամանքները կ'ըստիպեն՝ աներել ամբողջ գիւղերը, յիշելով այն, որ աններողամտութիւնն և դաժանութիւնը, նամանաւանդ Կովկասի մէջ, կը հասցնէ լաւ հետևանքի: Գրաւուած գիւղերու մէջ սովէն ապահովել զօրամասերը ի հաշիւ ապստամբներու»:

28-րդ Դիւիզիայի պետ ՆԵՍԵՐՈՎՍԿԻ  
Ձին. Կոմիսարի փոխանորդ ՍԱՐԱԵՎ  
28-րդ Դիւիզիայի շտաբի պետ ՓԸՐՈՒՈՎ

Հոկտեմբեր 16-ին Ձանգեզուր գաւառի Կոռընձոր գիւղին մէջ իբրև հակամեծամասնական կը գնդակահարուին 13 հայ բանտարկեալներ: Ռուներու տարափով կը յառաջանար ահա կարմիր բանակը, որ կը կռուէր Ասկիւլում-Ղզլդաշ-Ինջաբէլ գծի՝ այսինքն Ղափանի հիւսիս-արևելեան ամբողջ սահմաններուն վրայ:

Իր ձախ թըր ճակատէն գիւղի դէմ սկսած ձախող յարձակումէ մը վերջ ծեծուած ու պարտուած՝ ետ կը քաշուէր: Կեդրոնը՝ գրաւելով Արծուենիկ գիւղը, կ'աշխատէր օգտուիլ իր ժամանակաւոր յաջողութենէն: Աջ թըր մխրճուած Ղափանի և Տաթևի միջև՝ կը ջանար գրաւել Խոտանան գիւղը: Կեդրոնէն կը ռմբակոծեն երկու թնդանօթներ: Թևերուն վրայ քառասունի չափ զնդացիրներ կը գործեն անդադրումօրէն:

Կռուի երկրորդ օրը, 17 Հոկտեմբեր, Նժդեհ դէպի Ինջաբէլ հետևեալ հրահանգը կը դրկէ.

*«Խուսափիլ ցերեկայ գրոհներից և զոհեր տալուց, ընդունել մուրճ և ոստայն ձևը և սպասել ինձ: Ձեզ մօտ կը լինեն մի ժամէն»:*

Վաշտապետ Կ.-ի ղեկավարութեամբ զօրախումբ մը թշնամիին թիկունքը անցնելու համար Գետաթաղի բարձունքներով կը շարժի դէպի Տափասար:

Որոշեալ ժամուն Եժդեհ կը գտնուի Ինջաբէլ:

Տրուած մարտագրին համաձայն Հոկտեմբեր 18-ի լուսաբացին ուժանակային գրոհով մը Խոտանանի զօրասիւնը շփոթի կը մատնէ հակառակորդ ուժերը Ինջաբէլի ամբողջ ճակատին վրայ: Նոյն ժամուն վաշտապետ Կ.-ի զօրախումբը թևանցային շարժումով մը Տափասարէն կը հարուածէ թշնամին թէն ու թիկունքէն: Գրեթէ նոյն ատեն կապ պահելով Տաթևի կողմէն թշնամին կը հարուածեն Պօղոս Տէր-Դաւիթեանն ու սպայ Տէր-Պետրոսեանը:

Կռուի ընթացքին Մեծամասնական ուժերու մէկ մասը անձնատուութեան կը դիմէ, իսկ մնացած մասը կը նահանջէ խուճապահար: Նահանջող թշնամին կը հետապնդուի տեղակալ Տէր-Դաւիթեանի ուժերէն: Իրենց կարգին Ղափանի հետևակ վաշտերը մեծ խանդավառութիւնով կը սուրան դէպի Արծուենիկ: Այդ ճակատին վրայ կռուող մեծամասնական 84-րդ բրիգատան թեթև դիմադրութենէ մը վերջ կը յանձնուի գրեթէ ամբողջովին:

Հոկտեմբեր 18-ին Կապարգողթի սահմաններուն վրայ մեծամասնական ուժերու հետքը չէր մնար:

Յաղթական հայ վաշտերը բազմաթիւ գերիներով, ձեռք ձգած գնդացիներով, հրացաններով, հեռախօսային գործիքներով, խրամաշինութեան վերաբերեալ կազմածներով ու դրօշակներով կը վերադառնան դէպի Հանքերը՝ տօնելու Սիւնիքի ժամանակակից պատմութեան մէջ փառքի շքեղ էջ մը գրկող իրենց այս նոր յաղթանակը:

Կռիւը շահուած էր՝ հայերու կողմէ գրեթէ ո՛չ մէկ մարդկային զոհի:

Մեծամասնական ուժերու պարտութենէն ետք Բագու հրատարակուող «Կրասնիյ Աւանկարդ» թերթը «ՀԶՕՐ ՁԵՆՔ – ՄԵՐ ԿՈՒՒԻ ՉԵԲԸ» խորագրին ներքև այսպէս կ'արտայայտուէր.

*«Արևելքի մէջ յայտնուած է կրտսեր քոյրը մեծ դաշնակիցներու – Արևելեան Համաձայնութիւնը, Հայաստանի, Վրաստանի, Ռումանիոյ և Յունաստանի պուրժուազիաներն են կազմած այդ դաշնակցութիւնը, որպէսզի խեղդեն ծաւալող յեղափոխական շարժումը արևելքի մեջ: Արևելեան Համաձայնութեան անմիջական*

ներկայացուցիչներէն մեկը աւագակապետ Նժդեհն է, որ իր բանակը կազմած է ազգային ատելութեամբ լեցուած հայերէ: Մինչդեռ, Նժդեհը Չանգեզուրի լեռներուն վրայ աւագակութեամբ կ' զբաղուէր, Կարմիր սուլիմները փախցուցին ուրիշ գայլ մը՝ Դրօն:

Ընկեր կարմիրները պէտք է ամուր սեղմեն իրենց հրացանները և քշեն սև գայլ Նժդեհին:

Կարմիր բանակի հանդէպ խորամանկ և յամառ թշնամին՝ Նժդեհը, Դրօն և այլն հին գայլեր, լաւ գիտեն զհնուորական գործը: Ուստի և այդ ապստամբներու դէմ անհրաժեշտ է մեծ ուժ ջարդելու համար անոնց հրոսակախումբը: Նոյն ատեն մենք պիտի չմոռնանք, որ ապստամբներու յաջողութիւնը մեծապէս կախուած է ազգաբնակչութեան տրամադրութիւններէն: Ահա թէ ինչու կարմիր բանակը, թշնամիին կենդանի ուժերը խորտակելէ զատ, պիտի ձգտի ժողովուրդը ըմբոստացնել, թշնամացնել ապստամբութեան դեկավարներուն դէմ»<sup>1</sup>:

Պարտուած մեծամասնական զօրքը օգնութեան հասնող նոր ուժերով կրկին կը մօտենար Չանգեզուրի սահմաններուն:

Անձկութեան օրերու մէջ էր Եայջին, որ պաշտամունքի հասնող հաւատքով մը օգնութիւն կը խնդրէ Նժդեհէն.

«Հայաստանի միակ միսիթարիչ քաջը Նժդեհ, Չորերի և Եայջու թափառական ժողովուրդը աչքերն չռած է դէպի արևելք, թէ արդեօք կը տեսնե՞նք արեգակի ճառագայթները: Ոչ մի տեղից փրկութիւն չկայ: Մի գլուխ է հարկաւոր, որ մեզ փրկէ այս փոթորկից: Հասիր, ով Սուրբը Սարգիս, Հայրենիքը տապալման վրայ է: Մնաց՝ քոնն է, կորչի՝ քոնն է, պարծանքը: Յոյսներս միայն դուք էք, յոյսներս մի կտորէք: Գիտենք, որ այդտեղ էլ թուխայ է: Ուրեմն, ատենահաս հասէք, կարճ ժամանակով, էլի կը գնաք ձեր սիրեցեալ Դափանը»:

Կարմիր զօրքերը Հոկտեմբեր 20-21 անցնելով Եայջի և Անգեղակոթ՝ վերջնագիր կը ներկայացնեն բնակչութեան զինաթափութիւն պահանջելով, հակառակ պարագային կը սպառնան «հիմնայատակ կործանել գիւղերն և բոլորին սրի քաշել»<sup>2</sup>: Մինչ այդ Սիսեանցիք առաջնորդութեամբ իրենց քաջարի դեկավար տեղակալ Պօղոս Տէր-Դաւիթեանի՝ Անգեղակոթի վրայ բուռն յարձա-

<sup>1</sup> «Կրասնիյ Աւանկարտ», թիւ 52, 1920 Հոկտեմբեր 30, Բագու:

<sup>2</sup> Արմոտ գիրք, էջ 46:

կումով մը կը ջարդեն մեծամասնական ուժերը և կը վանեն մինչև Ղարաքիլիսէ: Թշնամին յանկարծակիի բերելու նպատակով Տէր-Դաւիթեան կողմնակի ճամբով կը գրաւէ Եայջին, ուրկէ կ'անցնի Տաթև հրամանատար Նժդեհի հետ կապ պահելու համար: Մալտաշի մէջ կրկին կռուի կը բռնուի մեծամասնական ուժերու հետ, զոր վերստին պարտութեան կը մատնէ ու գրաւելով բաւականաչափ ռազմամթերք՝ կ'անցնի Խոտանան և կը միանայ Նժդեհին:

## ԿՈՒՐՈՉԿԻՆԻ ՀԵԾԵԼԱԶՕՐՔԸ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԷՋ

Մեծամասնական 28-րդ զօրաբաժնի պարտութենէն յետոյ Հիւսիսային Կովկասէն օգնութեան կը հասնի ԺԱ. բանակի հերոս հռչակուած հեծելազօրքի հրամանատար յայտնի Կուրոչկինը:

Զանգեզուր-Գորիսի ազգաբնակութիւնը սարսափի ներքև պահելու և հեծելազօրքի Կարմիր հրամանատարին համբաւը տարածելու նպատակով՝ Զանգեզուրի և Ղարաբաղի Խորհրդային Կոմիսար Ղարազեօզեան յետագայ ազդարարութիւնը կ'ընէ հայերուն.

*«Զգոյ՛ջ, սրան Կուրոչկին կ'ասեն, որը կատակ չի սիրում, սա է ջարդել Ղենեկինին, Կոլչակին և շատերին, կը տեսնէք այսօր վաղն էլ Նժդեհի և Ղափանի փոշին քամուն կը տայ»:*

Գորիսի մեծամասնականները ցնծութեան մէջ էին, դէպք մը սակայն կը վրդովէ քիչ մը տրամադրութիւնները: Հարիւրի մօտ կօզաքներ կը հրաժարին Նժդեհի դէմ կռուելէ: Քաղաքի յեղափոխական կոմիտէն ըմբոստներու այդ քայլը համարելով «հակայեղափոխական», կը զնդակահարէ անոնց կէսէն աւելին:

Սօտ 1800 ձիաւոր, մարզուած և կռուելու ընդունակ կարմիր հեծելազօրքը կը շարժի առաջ:

Հեծելազօրքին կը միանան նաև մեծամասնական 83-րդ և 84-րդ *բրիգատ*ները, ինչպէս և 1200 հոգի<sup>1</sup> նախկին թուրք գերիներէ կազմուած հետևակազօրաց գունդ մը. «Որ չի դաւաճաներ իր պատմական դերին, կը պղծէ հայ ընտանիքի պատիւը, կը վիրաւորէ հայ ազգային արժանապատուութիւնը, ոտքի տակ կու տայ ամէն սրբութիւն և կը թալանէ գիւղերը»<sup>2</sup>:

<sup>1</sup> Ազատ Սիւնիք, էջ 41:

<sup>2</sup> Արնոտ գիրք, էջ 44:



Հետախուզական երկու կողմի խմբակներու առաջին բաղ-  
խումը տեղի կ'ունենայ 1920 Նոյեմբեր 3-ի լուսաբացին:

Նոյն օրը ժամը 10-ի մօտերը Կարմիրներու աջ թևը յախուռն  
յարձակողականի մը կ'սկսի. Նժդեհի ուժերը կը մնան պաշտպան-  
ողական դիրքի վրայ:

Կուրոչկին՝ անծանօթ հրամանատար Նժդեհի ռազմավարա-  
կան խաղերուն, միշտ կը յառաջանայ և անընդհատ խտացնելով  
իր շարքերը՝ կը լեցուի ձորերու մէջ:

Իր խափուսիկ նահանջին վերջ կու տայ այլևս հայ զօրքը:  
Կը գոռան պայթուցիկ տակառները՝ մահ սփռելով թշնամի շարքե-  
րու մէջ: Դժնդակ պայմաններու մէջ անձնատուր կ'ըլլայ մեծա-  
մասնական բանակին աջ թևը:

Կռուի երկրորդ օրը պարտութեան կը մատնուի նաև ձախ  
թևը: Կեդրոնը մեծ կորուստներով կը նահանջէ դէպի Շուռնուխ:

Ձախջախուած զօրամասերու բեկորները իրենց ամօթը  
ծածկելու մտածումով գիշերանց կը մտնեն Գորիս:

Իր պարտութեամբ մեծամասնական զօրքը Կապարգողթի  
ուժերուն ձեռքը կը ձգէր 500 գերի, 24 գնդացի, հրացաններ,  
ռազմամթերք, հացի պաշար և պատերազմական զանազան իրեր:

Կռուի ամբողջ տևողութեան Հայերը կ'ունենան միայն մէկ  
սպաննուած և երկու վիրաւոր: Այս յաղթութիւնները ցնծութեամբ  
կը լեցնեն ժողովուրդին հոգին, մամուլը իր կարգին արծազանգը  
կ'ըլլայ անոր խանդավառ զգացումներուն:

Այդ առթիւ Այգ-ի մէջ կը կարդանք.

*«Ողջո՞յն Ղափանի Գործադիր Մարմնին և Գեներալի Փրկու-  
թեան Կոմիտէին, որ սկիզբէն մինչև վերջը անյողորդ ու հաւատա-  
րիմ մնացին ժողովուրդին տուած իրենց ուխտին:*

*Ողջո՞յն, բի՛ւր ողջոյն քեզ, Ղափան-Գեներալ-Գողթանի եօթն  
անգամ սիրած հրամանատար հերոս Նժդեհ, բեղմնաւոր էին քու  
ցանած սերմերդ և ատոք եղան անոնց տուած պտուղները: Դուն էս  
ու կը մնաս Ղափան-Գեներալ պատմութեան մէջ «երկրորդ Ղափթ-  
Բէզ», «Աժդահա փաշա», և ամէն կռուի յաղթող «Փատիշահ»,  
տիտղոսներ, որ տուաւ քեզ պաշտելու չափ սիրող զինուորութիւնն  
ու ժողովուրդը<sup>1</sup>:*

<sup>1</sup> «Այգ», 43 թիւ, 1920 Նոյեմբեր 15, Թաւրիզ:

«Ղափանի հերոսական կռիւները և Նժդեհի քաջանուն գործերու արձագանգը կը տարածուի ամենուրեք. ճնշուած գիւղացի-ուրիւնը իր փրկութեան միակ յոյսը կը դնէ այդ անձնագոհ հայրենասէրի անխորտակելի և անյողողող կամքին վրայ: Ղափանի շրջանի մօտ գտնուող Ջանգեզուրի գիւղերը իրարու ետևէ գլուխ կը բարձրացնեն, առաջին օրինակը կու տայ Տաթևը, որ ապստամբութիւն կը կիռչակէ, առաջնորդութեամբ Յրամանատարին սպաներէն մէկուն»<sup>1</sup>:

Նոյեմբեր 12-ին տաճկական «կարմիր»? զօրագունդը Նախիջևան անցնելու նպատակով Մեծամասնականներու կարգադրութեամբ կը ղրկուի դէպի Ուզ և Ղարաքիլիսէ հայ գիւղերը: Կանխելու համար անոր գործելիք չարիքները, որոնց ապացոյցը տուած էր ան Ջանգեզուրի մէջ. «*Քարահունջ, Խոտ, Շինուհայր, Յալիժոր, Եայջի, Ձէյվա և ուրիշ գիւղերու մէջ գործադրելով իր գազանային և բարբարոս բնագոյները հայ կնոջ և կոյս աղջիկներու վրայ*»<sup>2</sup>, տեղակալ Տէր-Դաւիթեան կը վերադառնայ Ղարաքիլիսէ և օգտուելով տիրող մառախուղէն՝ խիզախ թևանցով մը պարտութեան կը մատնէ թշնամին, որ երեք ժամ կռուելէ վերջ Եայջիի ուղղութեամբ կը դիմէ փախուստի, ձգելով 100-ի չափ դիակներ ռազմադաշտին վրայ: Այդ կռուի ընթացքին մահացուօրէն կը վիրաւորուի Տէր-Դաւիթեանը՝ Սիսեանցիներու հերոս այդ ղեկավարը, որ իր ստացած վէրքին անխնամ մնալուն պատճառով Նոյեմբեր 20-ին կը վախճանի<sup>3</sup>:

Մառախուղին և իրենց հրամանատարին վիրաւորուելուն պատճառով Սիսեանցիք հնարաւորութիւն չեն ունենար հարուածելու նահանջող թշնամին, որ մատնելով անպաշտպան Եայջի, կոտորածի և թալանի կը մատնէ ամբողջ գիւղը՝ իբր փոխ-վրէժ Ղարաքիլիսէի ճակատին վրայ կրած իր պարտութեան:

Խուսափելով աւելորդ արինահեղութենէ, Նոյեմբեր 14-ին Նժդեհի հետևեալ վերջնագիրը կը ղրկէ Գորիսի մեծամասնական հրամանատարութեան.

---

<sup>1</sup> Արնոտ գիրք, էջ 46:

<sup>2</sup> Ազատ Սիւնիք, էջ 48:

<sup>3</sup> Տեղակալ Տէր-Դաւիթեանին մարմինը Դեկտեմբեր 4-ին կ'ամփոփուի իր ծննդավայր Խոտանան գիւղը, տանելով իր հայրենակիցներուն խորունկ կսկիծն ու ջերմ արցունքները:

## ԲՈՒՇԵՒԿՆԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹԵԱՆ, ԳՈՐԻՍ

*«Ղարաբաղի և Ձանգեզուրի հայութիւնն արդէն գլխատուած և տնտեսապէս ու հասարակականապէս քայքայուած է Կարմիր բանակի ձեռքով: Ձեր զօրքերի ներկայութիւնը Սիւնիքի սահմաններում այլևս անհանդուրժելի է: Հրամայում են, եթէ չէք ուզում ժԱ. բանակի մնացորդներն էլ կոտորածի և գերութեան մատնել, անմիջապէս դատարկել Ձանգեզուրը, հակառակ դէպքում ստիպուած կը լինեն կռուով տիրելու ձեր ձեռքին գտնուած երկրամասին»<sup>1</sup>:*

Կապարգողթի Հրամանատար ՆԺՂԵՅ

Հանքեր, 14 Նոյեմբեր 1920

Վերջնագրին իր պատասխան մեծամասնական զօրքի հրամանատարութիւնը դէպի Ձանգեզուր կը դրկէ տաճկական զօրքը և Գորիս մնացած Կուրոչկիւնի հեծելազօրքը: «Կուրոչկիւն ջարդուելէ յետոյ՝ կը նախընտրէ թողնել իր հեծելազօրքի մէկ մասը Ձանգեզուր, իսկ ինքը կ'անցնի Բագու, հաստատ համոզուած, որ Կարմիրները Ձանգեզուր և Ղարաբաղի մէջ դատապարտուած են ոչնչանալու»<sup>2</sup>:

Ատրբեջանի կարմիր բանակը Նոյեմբեր 14-ին կը խուժէ դէպի Հալիձոր, որուն օգնութեան կը հասնի Տաթևի զօրամասը:

Նոյեմբեր 19-ին Տաթևէն և Ղարապասէն օգնութիւն կը խնդրեն: Նժդէհի հարիւրեակ մը ձիաւորներով կ'անցնի այդ շրջանը:

Թշնամին իր ձեռքը պահելով Եայջին՝ կը պատրաստուի պատժել Հալիձորը:

Ան կը յաջողի Շինուհայրի կողմէ մտնել ապստամբ հայ գիւղի արևելեան թաղը ու կրակի տալ մէկ քանի տուներ:

Համաձայն մշակուած մարտագրին Նոյեմբեր 20-ին Սիսեանի ուժերը կը քալեն Ուչթափալար-Ղարաքիլիսէ-Գորիս խճուղիով և լուսաբացին թիկունքէն կը հարուածեն հակառակորդը:

Ղարապասի ուժերը գիշերը կը գրաւեն Եայջիի ետևի հուրթիս կոչուած բարձունքը:

<sup>1</sup> Լեռնահայաստանի Գլխաւոր շտաբի արխիւ, թիւ 138:

<sup>2</sup> Արնոտ գիրք, էջ 48:

Տաթևի զօրասիւնը գիշերանց Որոտան գետը անցնելով կը գրոհէ թշնամի ուժերու կեդրոնին դէմ: Իսկ Յալիժորի մարտիկները կը հարուածեն թշնամիին ձախ թևը:

Լուսաբացին Խութիսի բարձունքէն առաջացող զօրաշղթայի բացած կրակէն ու պայթուցիկ տակառներու հրաբողխային որոտներէն թշնամին շուարած կը լքէ Եայջիի իր դիրքերը ու կը քաշուիի դէպի Ուչթափալար:

Նոյն օրը, ժամը 11-ին, Կապարգողթի և Սիսեանի ուժերը վերջին թափով մը կը նետուին կարմիր զինուորներուն վրայ, որոնք կարճ դիմադրութիւն մը ցոյց տալէ յետոյ կը նահանջեն դէպի Գորիս:

Նոյեմբեր 20-ի կռիւներուն իբր արդիւնք՝ կը փրկուին Եայջին և Յալիժորը:

## ԳՈՐԻՍԻ ԳՐԱԽՈՒՄԸ

Եայջիի և Ուչթափալարի ճակատներուն վրայ թշնամին իր կրած պարտութենէն վերջ նոյնքան ահաւոր պարտութեան մը կ'ենթարկուի նաև Գորիսի մէջ:

Գորիսի և շրջապատի ազգաբնակութիւնը, որ մեծամասնական զօրքերու ձեռքով. «Թալանուեր, տնտեսապէս քայքայուեր հագուստեղէնէ, տնային կահ-կարասիներէ զրկուեր և դառնութեան բաժակը մինչև վերջ քամած էր՝ օր առաջ գաղտնի կերպով պատրաստուած էր ապստամբութեան. կապ հաստատելով մէկ կողմէն հրամանատար Նժդէհի և միւս կողմէ՝ Սիսեանի ապստամբներու ղեկավարին հետ»<sup>1</sup>:

Նոյեմբեր 21-ին գիշերուայ ժամը 4-ին Գորիսի սուրհանդակները հետևեալ գրութիւնը կը բերէին Նժդէհին.

«Երէկ Ուչթափալարի ջարդուած թշնամիին մնացորդները խուճապով թափուեցան քաղաք: Քիչ վերջ՝ քաղաքի Կարմիրներուն մէջ տարածուեցաւ *պանիկա* և բոլորն սկսան փախչիլ Չաբուղ: Գորիսի և Վերին Շէնի երիտասարդութիւնը տեսնելով այդ բոլորը յարձակեցաւ փախչողներու վրայ և զինաթափեց շատերուն, քաղաքն այժմ մեր ձեռքն է: Թշնամին անրացեր է Քարաշէնի բարձունքներուն վրայ և կը ռմբակոծէ քաղաքը: Տղաներն օգնու-

<sup>1</sup> Արնոտ գիրք, էջ 49:

թիւն կը խնդրեն: Պէտք է շուտ հասնիլ, թէ չէ լուսաբացին նոր ուժեր ստանալով թշնամին կարող է վերագրաւել քաղաքը և սրի քաշել ժողովուրդը»:

Նժդեհ կը պատասխանէ. *«Գալիս եմ, դիմադրեցէք»:*

Եայջի և Զալիժոր անրացած Զանգեզուրի և Սիսեանի մարտիկները անտեղեակ Գորիսի, Վերին Շէնի և Բուրունի շրջանին մէջ կատարուած ապստամբական շարժումին, դեռ կը հետապնդեն Շինուհայր գտնուող մեծամասնական ուժերը, զոր վանելով՝ Նոյեմբեր 21 առտուան ժամը 10-ին Գորիս կը մտնեն:

«Նոյեմբեր 22 առտուայ ժամը 12-ին ամբողջ Գորիսի և շրջանի ժողովուրդն ու զինուորուքիւնը՝ խռնուած Վահան Խորէնիի, Արշակ Շիրինեանի և Սաքօի շիրիմներու շուրջ, «ՄԵՐ ԶԱՅՐԵՆԻՔ ԱԶԱՏ ԱՆԿԱՆ» երգելով, հայ եկեղեցիի զանգակներու քաղցր ղօղանջներուն տակ, աղ ու հացով կը դիմաւորէ *իր սիրելի ազատարար* Նժդեհին և անոր յաղթական մուտքը կը շնորհաւորէ: Զազարաւոր շրթունքներ օրհնութեան մրմունջներ կը թոթովեն. բոլորին դէմքին վրայ կը փայլի ազատութեան ժպիտը»<sup>1</sup>:

Գորիսէն նահանջող մեծամասնական զօրքը յուսահատօրէն դեռ կը ռմբակոծէր հայկական դիրքերը:

Զասնելով Քարաշէն հրամանատար Նժդեհ կու տայ վերջին յարձակումի ազդանշանը: Կը բարձրանայ յաղթութեամբ արբեցած մարտիկներուն գոռ աղաղակը, որ լռութեան կը դատապարտէ թշնամի թնդանօթներու ձայները: Երեկոյեան դէմ մեծամասնական ժԱ. զօրաբանակին վերջին զօրամասերը կը քշուին դէպի Ապտալլար:

Զանգեզուր կը տօնէ իր ազատութիւնը:

Զանգեզուրի վերջին յաղթութիւններու առիթով ԶԶ Կառավարութեան քարտուղարը կը գրէր Նժդեհին.

*«Ամբողջ ընկերները հիացմունքով կը հետևին Դաւիթ-Քէզի հոգեզաւակի հերոսական պայքարին և կարող եմ ըսել, թէ ամբողջ մեր կուսակցական մարմինների և առ հասարակ հայութեան լայն խաւերի ջերմ համակրութիւնը Ձեզ հետ է»:*

ՏԵՎԷՆԵԱՆ

Երևան, 30 Նոյեմբեր 1920

Իր Գորիսը գրաւելու օրն իսկ Նժդեհ տեղացի հասարակութեան կ'ուղղէ հետևեալ յայտարարութիւնը.

<sup>1</sup> Ազատ Սիւնիք, էջ 43:

*«Յայտնում են ի գիտութիւն հասարակութեան, որ ընտրուած բուն Զանգեզուրի գիւղացիութեան ժամանակաւոր Խորհուրդը հաստատում են իր պաշտօնում և հրամայում են նախկին Խորհուրդից եղած կարգադրութիւններին:*

*Հակառակողները կը պատժուին ամենախիստ կերպով»:*

Հրամանատար ՆժԴԵՂ

Գորիս, 22 Նոյեմբեր 1920

Նոյն օրը Գորիսի հայ կիները հետագայ գրութիւնը կը ներկայացնեն ՆժԴԵՂի.

### ԲՈՂՈՔ ԳՈՐԻՍԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԿՈՂՄԻՑ

*Այսպէս անուանուած Խորհրդային իշխանութեան ալիքը նոյնպէս հասաւ և մեզ հայ կանանց: Այդ կառավարութեան անունը լսել էինք, բայց երանի կը լինէր իրեն չտեսնէինք և նրա դառը բաժակը մինչև վերջը չծծէինք` նրա դաժան խաղերը մեր կաշու վրայ փորձելով: Մի քանի աւանտիւրիստների խօսքերով Սովետական իշխանութիւնն էր միակ պաշտպանը աշխատաւորների, հարստահարուածների, նա է միայն, որ պիտի ազատութիւն բերէր - ազատութիւն մտքերի, խօսքի և իրաւունքի, բայց մենք դժբախտաբար տեսանք իրականութեան մէջ Խորհրդային կոչուած իշխանութեան քաղաքագիտական խաղերը իր ամբողջ սարսափելիութեամբ: Նա անգթութեամբ թալանեց խեղճ ու աղքատ գիւղացիներին, որից վերցնելով լծկան եզր, որից ձին, որից կովն ու ոչխարը, չարքաշների հիւժած ֆիզիքական գոյութիւնը պահպանելու վերջին յոյսը, մատնելով նրանց անկշտում սովին: Չբաւականալով դրանով նա իւր ճիրաններն ուղղեց դէպի անզօր ու խեղճ հայ կիներ, նրա գլխի գարդն ու ոսկէ գօտին խլելով, ոմանք էլ ծաղրելու ու աւելի անպատելու համար հայ կնոջն նրա զարդարանքներով իրենց ձիանները զարդարեցին: Հերիք չհամարելով այս ամէնը` Խորհրդային իշխանութիւնը ուղարկեց այստեղ իր կարմիր կոչուած ասկեարներին, առիթ տալով աւելի բարբարոսութեամբ շարունակման, «ազաւներին յանձնելով սոված գայլերին»:*

*Այդ ուղարկած «կարմիր» ասկեարները էլ կարմիր արեան վրժից չվախենալով, մտնելով հայաբնակ գիւղերը ազատութիւն*

տուեցին իրեն վաղեմի վրէժին ու զազանաբարոյ կրքերին, կոտորելով երիտասարդներին, բռնաբարելով հայ կանանց ու անմեղ օրհորդներին, նետելով նրանց զանազան անբուժելի հիւանդութիւններին գիրկը:

Մենք շատ էինք լսել Տաճկաստանի սարսափ ու զուլումների մասին, բայց այսպիսի բարբարոսութիւններ ինչպիսին կայ Ջանգեզուրում՝ չէինք տեսել: Բայց ինչո՞ւ, չէ՞ որ կոմսոնան է միակ պաշտպանը աղքատների, չէ՞ որ նա է միայն ազատութիւն տալիս, իրենց ասելով՝ հարստահարուածների:

Յայտնելով Ձեզ պ. Չրամանատար մեր խորին շնորհակալութիւնները, որ դուք մեզ ազատեցիք մեր անունը արատաւորելուց, աղաչում ենք Ձեզ եղէք այսուհետև էլ մեր պաշտպանն ու փրկիչը որպէսզի երկրորդ անգամ նրանք չյանդգնին ոտք կոխելու մեր երկիրը, թէ, չէ մեր ազատարար, մենք պատրաստ ենք կանայքս էլ դուրս ելնելու նրանց դէմ կամ աւելի շուտ մեռնելու, քան թէ նորից տեսնելու կարմիր աւազակները:

Մեր միակ յոյսը դուք էք, դուք, որ կանգ չառաք ոչ մի խոչընդոտի առաջ, դուք, որ կարողացաք մեզ փրկել Խորհրդային կոչուած Մուսաւաթական կառավարութեան չարիքներից, եղէք և մեր փրկիչը ապագայում և ընդ միշտ:

(100 ստորագրութիւններ)

Մեծամասնականներու շառաչուն պարտութիւնը բնաւ չէր մոլորեցներ Ջանգեզուրի ազգաբնակչութեան ազատագրական շարժումին նուիրուած հայ ղեկավար շրջանակները: Կանխատեսելով ապագայ նոր վտանգներ, անոնք կը ջանային ապահովել ի նպաստ իր ճակատագրին լքուած Լեռնաշխարհի այդ կտրիճ ժողովուրդին՝ Երևանի յամեցած օժանդակութիւնը:

Այդ նպատակով վերջին անգամ Երևան կը մեկնէր Ջանգեզուրի Գիւղացիական Խորհուրդի Ներկայացուցիչ Աշոտ Մելիք-Մուսեան, որ Ջանգեզուրի վերջին դէպքերու և անմիջական կարիքներուն մասին հետագայ յիշատակագիրը կը ներկայացներ Կառավարութեան.

«1920 թուի Յուլիսի 5-ին մեծամասնականները տիրելով Գորիսին՝ Բուն Ջանգեզուրը և Սիսեանը կտրեցին Գ. Չանրապետ-

ութիւնից: Դրօսի փորձը վերագրաւելու յիշածս երկրամասը՝ վերջապաւ Օգոստոսի 7-ի պարտութեամբ:

Մեծամասնականների անվերջ փորձերը գրաւելու Ղափան-Գենուազն ու Արևիքը ապարդիւն անցան: Սեպտեմբեր 8-ին նրանք թէև ժամանակաւորապէս յաջողութիւն ունեցան Ղափանում ու մուտք գործեցին Ջանգեզուր և այդ գաւառամասը, բայց նրանց չյաջողուեց փաստօրէն տիրել Ղափանին: Ձիւնուած երիտասարդութիւնը քաշուեց լեռները ու իր սիստեմատիկ յարձակումներով Յոկտեմբեր 9-ին քեց թշնամուն: Յոկտեմբեր 19-ին միացաւ Ղափանին ևս Սիսեանը և նոյնպէս քեց թշնամուն իւր սահմաններից:

Գենուազն ու Գողթանը Մեծամասնականներին երբեք իրենց մէջը չընդունեցին: Սեպտեմբերի 19-ից մինչև Յոկտեմբերի 14-ը այստեղ տեղի են ունենում օրհասական կռիւներ Շիւանձորի, Աստազուրի և Օրտուբադի ճակատների վրայ: Թշնամին միացած Օրտուբադի ճակատում տաճիկ ասկեարների և թուրք խուժանի, իսկ Շիւանձորի ճակատում հայ և թուրք կամաւորների հետ, աշխատում էր գրաւելով Գենուազը Նախիջևանը միացնել Ատրբէջանի Ալիադ Ջուլֆա երկաթուղագծով:

Մեր դէմ գործող բոլշևիկ բանակը բաղկացած էր մօտ 9000 սիւններից: Յոկտեմբեր 19-ից մինչև Նոյեմբեր 9-ը Սիսեան, Ղափան, Գենուազ և Գողթան, Օրտուբադ ճակատների վրայ յետ են շարտուում թշնամու 14 շատ ուժեղ և անհամար մանր գրոհները:

Այս կռիւների ընթացքում թշնամին թողել է մօտ 5000 դիակ, 1600 գերիներ, 67 գնդացի, 400-ի չափ ձիաններ և մեծ քանակութեամբ ռազմական զանազան իրեր և մթերքներ:

Այսօր ջախջախուած թշնամին անընդունակ մեր դէմ վարելու, որևէ ռազմական գործողութիւն վընտուած է Ջանգեզուրի մեր նախկին տիրապետութեան բոլոր սահմաններից, ի բաց չառեալ և Բուն Ջանգեզուրն, իւր Գորիս քաղաքով: Ամբողջ կռիւների ընթացքում մենք ունեցել ենք 22 սպանուած...

Ջանգեզուրը, ինչպէս յայտնի է, փաստօրէն երբեք Յայաստանի անբաժան մասը չի կազմել, նա ունեցել է ինքնուրոյն կեանք, կառավարուելով սեփական ինքնավարութեամբ: Յայաստանի կառավարութիւնը անտես առնելով այս հանգամանքը ի վնաս իւր սեփական շահերի իսկ մասնաւորապէս Ջանգեզուրի՝ առանց ժողովրդի կամքը իմանալու. տոյն թուի Օգոստոս 10-ին



կնքուում է Մեծամասնականների հետ անպատուաբեր մի դաշնագիր Չանգեզուրի անկախ ժողովրդի դատը համարելով վիճելի, իսկ կառավարութիւնը՝ սովետական: Թէ ինչ կորստաբեր հետևանքներ պիտի ունենար այդ դաշնագրի իրականացումը ողջ Հայաստանի համար, եթէ ի չիք դարձնէր դրա զօրութիւնը՝ ինքը ժողովուրդը յանձինս իր սիրելի հրամանատար Նժդեհի, դա ակներև կարող էր լինել, երբ Կարմիրների 9000 սուխնը Նախիջևան անցնելով՝ այսօր ոտք կոխէր Հայաստանի մայրաքաղաքը:

Այս բոլորից յետոյ թւում է կառավարութիւնը որոշ ողջախոնութեան պիտի եկած լինի համոզուելով, որ իւր վերոյիշեալ ընթացքը տանում է ինչպէս Չանգեզուրը, նոյնպէս և ողջ Հայաստանը, դէպի կորուստ:

Չանգեզուրը ապահովելու և նրա իտէալների իրականացումը՝ միանգամ ընդմիշտ մայր երկրին միանալ անհրաժեշտ է:

1. Յանձնել մեզ թնդանօթների մի բատարիա:

2. Բաց թողնել անհրաժեշտ քանակութեամբ ռազմամթերք և զէնք:

3. Որոշել մեր բռնելիք դիրքը և սկսել լուրջ ծրագրուած գործողութիւններ Չանգեզուրում:

4. Հնարաւորութեան դէպքում լէկալ, իսկ հակառակ պարագայում անլէկալ ճանապարհով Չանգեզուրը ճանաչել Հայաստանի տերրիտորեան և նրա կարևորագոյն ռազմաճակատներից մէկը:

Չանգեզուրի ժողովրդի, Նժդեհի և իմ անուաններից խնդրում եմ դրած հարցերին շուտ պատասխանել մեզ, որովհետև ամէն մի դանդաղում Ձեր կողմից Չանգեզուրը կարող է մատնել վերջնական կորստի: Այս հանգամանքներում մենք շարունակել սկսած գործը անկարող ենք և Ձեր կողմից բացասական պատասխան ստանալու դէպքում ստիպուած կը լինենք երկիրը յանձնելու Մեծամասնականներին, իսկ մենք, այսինքն դեկավարներս, անցնելու Հայաստան, ամբողջ պատասխանատուութիւնը թողնելով Կառավարութեան վրան»:

Ա. ՄԵԼԻՔ ՍՈՒՍԵԱՆ

Երևան, 24 Նոյեմբեր 1920

Գորիսի անկումէն յետոյ Խորհրդային ուժերու Անդրկովկասեան 28-րդ հրացանաձիգ զօրաբաժնի զինուորական կոմիսար

Սեմենով՝ Ձանգեզուրի ապստամբական... շարժումին վերջ տալու և հաշտութիւն առաջ բերելու համար հետագայ գրութիւնը կը դրկէ Նժդեհին.

## ՁԱՆԳԵԶՈՒՐԻ ԱՊՍԱՄԲ ԶՕՐ. ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ԳՆԴԱՊԵՏ ՆԺԴԵԻՆ

*Ձանգեզուրի հայ ժողովուրդին և Ղարաբաղի մէկ մասին ու ՌՍՖՍՀ Կարմիր Բանակի միջև տեղի ունեցող փոխադարձ կռիւներու հիմնական պատճառներէն մէկն է ժողովրդական մասսայի մէջ Սովետական Իշխանութեան իսկական հիմունքներու մասին առաջ բերած թիւր կարծիքը՝ մանաւանդ ազգայնական հարցը, որ արդիւնք է ապստամբ հայ զօրամասերու հրամանատարութեան ազգային-թշնամական բրորականտայի, որ առաջ կը բերէ հայ և թուրք բնակչութեան փոխադարձ մասսայական ջարդ:*

*Յեղափոխական Ատրբէջանի Խորհրդային Հանրապետութեան Սով. Իշխանութիւնը և ՌՍՖՍ Հանրապետութեան Կարմիր Բանակի Հրամանատարութիւնը հեռու են ազգայնական անջատ քաղաքականութենէ և Ձանգեզուրի ու ամբողջ Անդրկովկասի աշխատաւոր ժողովուրդի ճնշումէն:*

*Բովանդակ աշխարհի կապիտալիստներու դէմ ուղղուած յեղափոխական անողորք կռուով ՌՍՖՍՀ, Կարմիր Բանակը և Ռուսաստանի ու Ատրբէջանի Խոր. հանրապետական կառավարութիւնները կը կիրարկեն իրենց դասակարգային յեղափոխական ծրագիրը, աշխարհի աշխատաւորութեան վրայէն ճնշողներու ամէն տեսակ զրկանքները վերջնականապէս ոչնչացնելու նպատակով:*

*Ամբողջ աշխարհի աշխատաւորութեան մէջ եղբայրական յարաբերութիւններ ստեղծելու համար առաջ եկած այդ յեղափոխական ձգտումները, մասնաւորապէս Անդրկովկասի ազգերու նկատմամբ, աւելորդ անգամ մը ևս կ'ընդգծէ այն հանգամանքը, որ ՌՍՖՍՀ արդէն փաստօրէն ճանչցած է Ղաղստանի ինքնավարութիւնը:*

*Ոչնչացնելով արևմուտքի և հարաւի իր թշնամիները Սով. իշխանութիւնը վճռած է ամենակտրուկ միջոցներով, խաղաղ ճանապարհով վերջ դնելու ռազմական գործողութիւններուն նաև Անդրկովկասի մէջ (Ձանգեզուր-Ղարաբաղ): Ուստի, Ձանգեզուրի և Ղարաբաղի մէկ մասին բնակչութեան ազգայնական խմբակցու-*

թեան եղբայրական յարաբերութիւնները ամուր հիմքերու վրայ դնելու նպատակով Ջանգեզուրի և Ղարաբաղի մէկ մասին մէջ գտնուող ՌՍՖՍՀ Կարմիր Բանակի զօրամասերու զին. հրամանատարութիւնը կ'առաջարկէ Ձեզ նախնական համաձայնութեան հետևեալ կէտերը.

1. Չցանկալով ապագայ արհմատակցութիւնը հայ աշխատաւոր ժողովուրդի, որ արդէն ապստամբեր է Հայաստանի մէջ Սով. իշխանութիւն հաստատելու նպատակով, անմիջապէս դադարեցնել ռազմական գործողութիւնները և զոր վերջացնելու համար դիմել բանակցութեան:

2. Ռազմական գործողութեանց վերջ դնելու նպատակով բանացութիւններ վարելու համար ուղարկել ներկայացուցիչներ Ջարուղ գիւղը, ուր Ձեր հաւանութիւնը ստանալէ յետոյ կու գան ՌՍՖՍՀ Կարմիր Բանակի հրամանատարութեան ներկայացուցիչները:

Ջանգեզուրի մէջ ռազմական գործողութիւններուն վերջ դնելու համար մեր առաջարկած պայմաններն են.

Ա. Անմիջապէս արձակել իրենց հայրենի գիւղերը հայ բնակչութեան ապստամբ զօրամասերը՝ իրենց խաղաղ աշխատանքին անցնելու:

Բ. Վերջ դնել մահմետականներու նկատմամբ ամէն տեսակ թշնամական գրգռութիւններու, որպէսզի առիթ չը մնայ զիրար բնաջնջող հետագայ կռուի գործողութեանց:

Գ. Բացի ժողովուրդին մօտ գտնուած սուրերէն՝ յանձնել ՌՍՖՍՀ Կարմիր Բանակի օրկաններու թէ՛ ձեռքի տակ գտնուած և թէ՛ պահեստներու մէջ ունեցած բոլոր տեսակի զէնքերը, որովհետև ազգայնական հողի վրայ տեղի ունեցած նորանոր կոտորածներու վերջ կը դրուի միայն այն ժամանակ, երբ հայ և մահմետական ժողովուրդները ամբողջովին կը զինաթափուին:

Դ. Վերադարձնել Կարմիր Բանակի զօրամասերէն խլուած բոլոր գոյքերը, հիւանդները, վիրաւորները և գերի ինկած կարմիր զինուորները:

ՌՍՖՍՀ Կարմիր Բանակի զին. հրամանատարութիւնը և Ատրբէջանի Սով. իշխանութիւնը կ'երաշխաւորեն կատարեալ ապահովութիւն հայ ժողովուրդի խաղաղ աշխատանքին և ապստամբներու անարգել վերադարձը դէպի իրենց բնակավայրերը:

*ՌԱՖՍՄ Կարմիր Բանակի զին. հրամանատարությունը կ'առաջարկէ Ձեզ աջակցիլ Սով. իշխանութեան օրկաններուն և Կարմիր Բանակի զօրամասերուն Ձանգեզուրի և Ղարաբաղի հայ և թուրք ժողովուրդներու մէկ կեանքի կայուն ու խաղաղ պայմաններ ստեղծելու գործին:*

*ՌԱՖՍՄ Կարմիր Բանակը եկել է Ձանգեզուր և Ղարաբաղ ոչ թէ պատերազմելու նպատակով, այլ այդ շրջաններու երկու իրար թշնամի և իրարու ոչնչացնող խմբերու միջև եղբայրական յարաբերութիւն հաստատելու և բարձրացնելու անոնց մշակոյթն ու բարգաւաճումը: Ներկայ ըրպէիմ Ռուսաստանի Սով. կառավարութիւնը միջնորդի դեր կը կատարէ՝ բանակցութիւններ վարելով Չայաստանի և թուրք յեղափոխական զօրքերու մէջ՝ հաշտութիւն կնքելու համար:*

*Մի՛ խանգարէք այդ գործը, մի՛ մղէք սակաւ գիտակից հայ ժողովուրդը դէպի ապարդիւն կռիւներ, որովհետև Ձեր յաջողութիւնները չեն կրնար պայմաններ թելադրողի յաջողութիւններ ըլլալ:*

*Չաշտութեան պայմաններ կը թելադրէ Չայաստանի ապստամբ ժողովուրդը և հայկական կարմիր բանակը՝ ինչպէս ՌԱՖՍՄ Կարմիր Բանակի նոր օղակը:*

Մարտ. Զօրաճակատի Չրամանատար ՍԵՄԵՆՈՎ

1920 Նոյեմբեր 26

Բանակցութեանց համար իրեն եղած հրաւերը ընդունելով Նոյեմբեր 30-ին հրամանատար Նժդեհ կը պատասխանէ Մեծամասնական Իշխանութեան.

ԿԱՐՄԻՐ ԶՕՐ.-Ի ՊԵՏԻՆ ԵՒ ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻՆ

*«Ձանգեզուրի ապստամբական հրամանատարութիւնն ընդունում է Ձեր առաջարկութիւնը՝ հաշտութեան բանակցութիւններ սկսելու համար, բայց ոչ Ձաբուղ գիւղում, այլ Գորիսում, որտեղ և առաջարկում է ուղարկել Ձեր լիազօր ներկայացուցիչներին:*

*Օգտւելով առիթից ատելացնում եմ:*

Դուք Ձեր անթիւ ու անհամար թերթերում, թռուցիկներում, ինչպէս և Ձեր ինձ ուղարկած վերջին երկու գրութիւնների մէջ Ձանգեզուրի աշխատաւոր մասսաների ապստամբութեան և Ձեր անյաջողութեան պատճառը համարում էք Ձանգեզուրի ապստամբական հրամանատարութիւնը:

*Ինչպիսի՞ ինքնախաբէութիւն:*

Արեան ու երկաթի սիստեմը, որով դուք կառավարել էք ու շարունակում էք կառավարել ժողովուրդը, յեղափոխական տենդ-կրատիայի ու պատմութեան կողմից վաղուց ի վեր թքուած ու դատապարտուած այդ սիստեմը Ձեզ շատ հեռուն բնական է տանել չէր կարող:

*Խօսեն կօնկրետաբար:*

Ղափանին տիրելու համար դուք աւանգարդ ունենալով դարեր շարունակ հայի արիւն քրտինքով ապրող ռեակցիոն թրքութիւնը, հրի ու սրի էք մատնում շրջանիս գիւղերից ամենաբարեկեցիկը - Ձէյվան, և Ձեր այդ վանդալական ակտը համարում յեղափոխական:

Դուք կրկնում էք Ձեր յարձակումները Արծուենիկի վրայ և Ձեր սանձարձակ արարքներով, կին ու երախաների կոտորածով ու բռնաբարումներով մեզ յիշեցնել էք տալիս տխրահռչակ Եէնիչէրիների ձեռքով կատարուած բարբարոսութիւնները:

Դուք քառասուն օր շարունակ ռմբակոծում էք Շիւանձորը, և երբ երկու հայ դաւաճանների դաւադրութեամբ Ձեզ յաջողում է մտնել այդ չարաբախտ գիւղը՝ դուք այնտեղ քարը քարի վրայ չէք թողնում: Տեղի են ունենում սովորական սպանութիւններ, կին ու աղջիկների բռնաբարումն, ալան-թալան և նման Եէնիչէրիական ակտեր:

Ես հրամայել եմ հաւաքել Ձեր թնդանօթներից, ռմբածիգներից ու գնդացիներից այս գիւղի գլխիսն թափած ամբողջ երկաթն ու արծիճը և նրանից Արաքսի ափին, մը բարձր սարի վրայ, կանգնեցնել մի տխուր կոթող այս սեղմ արձանագրութեամբ. «Նրանց անունը Կարմիր էր, գործերը սև: Թող յաւերժ անիծուած լինեն նրանք»:

Դուք տաճիկ ասկեարներով պաշարում էք Եայջին, տեղահանում ժողովրդին և թալանում: Պանիկայի մատնուած ժողովրդի մի մասը կոտորում է գիւղի պատերի տակ, մի մասը թափում

գետր, խեղդուում, իսկ ազատուածները գիւղի վերագրաւումից յետոյ, անիծելով իրենց օրն ու արևը, մերկ ու քաղցած, զալիս ու ծաւրուում են իրենց աւերուած տներում:

Եւ այդ բոլորից յետոյ դուք միամտօրէն զայրանում ու զարմանում էք և առանց խղճի խայթի շարունակում էք ճառել աշխատաւորութեան շահերից:

Ահա, ինչով և ինչպէս աշխատաւոր գիւղացիութեան զգուանքն ու թշնամանքը շահեցիք և ստիպեցիք նրան անպատիւ կեանքին գերադասել պատուաւոր մահը:

Այլևս գաղտնիք չէ աշխարհի համար, որ Ձեր դրօշակի տակ գործում են արևելքի անէծքն ու ամօթը կազմող օսմանեան ջարդարար ու հայակեր փաշաները:

Տաճկա-Յայաստանի վեց վիլայէթներում մահուան թագաւորութիւն ստեղծող (ուժ հարիւր հազար անթաղ մեռելները) հռչակաւոր Էնվէր ու Խալիլ մարդակերներն այսօր Ձեր քաղաքական և զինուորական խորհրդատուներն են հանդիսանում:

Դուք յանուն Ձեր ուսօպիստական ցնորքների չվարանեցիք Քէմալի հայաջինջ հորդաները Յայաստան քաշելու և նրանց սրին ու սուլինին մատնելու հայ աշխատաւորութեան ֆիզիքական գոյութիւնն ու նրա դարաւոր քրտինքի արգասիքը:

Ու այդ բոլորից յետոյ դեռ Ձեզ զարմացնում է հայ մասսաների ապստամբութիւնը:

Օսմանեան ռէակցիոն փաշաներն ու սոցիալիզմը!

Արևելքի բորենիներն ու յեղափոխական աշխատաւորութիւնը!

Ի՞նչ արսուրդ, ի՞նչ պղծանք ու հայիոյանք սոցիալիզմի ու յեղափոխութեան հասցէին:

Պատմութիւնը, անկաշառ պատմութիւնն իր խօսքը, իր անէծքի խօսքն ունի ասելու նրանց, որոնք յանուն իրենց քաղաքական ու ռազմագիտական նպատակների պրօֆանացիայի ենթարկեցին մարդկութեան տառապող մասի կրօնը հանդիսացող սրբազան սոցիալիզմը:

Դուք գիտէք, որ Ղարաբաղի գիւղացիութեան ամէն մի շունչն ամբողջ տարուայ համար ունի մի փթից մի քիչ աւելի հացահատիկ, իսկ Ձանգեզուրցին՝ մօտ մէկ ու կէս փութ: Դուք գիտէիք այդ, կայ ստատիստիկա: Գիտէք և այն, որ երկու ամսից յետոյ սովն ու

տիֆն այդ դժբախտ գիւղացիութեան մէջ կ'ունենան առատ հունձ: Այդ գիտենալով հանդերձ դուք շարունակուիմ էիք նոր ուժեր քաշել Ձանգեզուր:

Ձեր տրանսպորտն ուժեղացնելու նպատակով դուք վերջին գրաստը խլեցիք հայ աշխատաւորներից: Գորիսի պատերի տակ ու ճանապարհների վրայ թափթփուած հազարաւոր բեռնակիր անասունների լէշերը շատ բան են ասում Ձեր դաժան անմարդասիրութեան մասին: Սակայն միայն տնտեսական քայքայումով չէք բաւականացել դուք: Սոցիալապէս քայքայել էք ու զլխատել Ձանգեզուրի բոլոր հասարակութիւնները:

Ով Ձեր շարքերում չի եղել, դուք նրան Ձեր թշնամին էք համարել ու ոչնչացրել:

Ձաբուղի սպանդանոցն ու Գորիսի բարդուղիմէոսեան գիշերները դեռ չեն մոռացուել: Ես տեսայ Ձեր ստեղծած կատակոմբներն և Ձեր գոհերից շատ Ձեզ համար ցաւեցի:

Եւ հէնց Ձեր այդ խելագար ու մասսայական տերրորը, Ձեր տերրորի հունձը մեծապէս արագացրեց Ձեր պարտութիւնը: Դա ճշմարտութիւն է, ընդունեցէք:

Դուք վաղուց էք թքել բոլոր տեսակի բարոյական սկզբունքների ու հասկացողութիւնների վրայ:

Ձեզ համար չկայ սրբութիւն:

Ձեր չեկերի դեզերը, Ձեր բօսիզմը, կաշառման սիստեմը, Ձեր առանձին պոստերը, որոնց առաջ նսեմանում են ցարական բոլոր տեսակի ժանդարմական վարչութիւններն ու օխրանկաները, Ձեր յարուցած կատաղի հալածանքն ազատ խօսքի ու մտքի դէմ, Ձեր արճճի և սուիմի լեզուն, որ ժողովուրդը չուզեց հասկանալ, Ձեր էսպիոնաժը, Ձեր չրեզվըչայկաները, Ձեր խորհրդաւոր սպանութիւններն ու հարիւրներով պատանդ վերցնելու խայտառակ սիստեմը, Ձեր քաղաքական անհամբերութիւնն ու աղանդաւորութիւնը - ահա Ձեր պարտութեան պատճառները: Ընդունեցէք, դա էլ է ճշմարտութիւն:

Ձեր նուաճած վայրերում դուք զինեցիք հասարակութեան տակաւնքները և նրանցով՝ նախկին ժանդարմներով, լրտեսներով, գրպանահատներով, գողերով, աւազակներով, շանտաժիստներով ու նման քրէական տիպերով խտացրիք Ձեր շարքերը:

Ահա՛ ճշմարտութիւններից ամենատարրականը, ընդունեցէք:

Դուք անվերջ խօսում էք, գրում հայ և թուրք աշխատաւորութեան համերաշխութեան և եղբայրութեան մասին և միաժամանակ շատ տեղերում թուրք աշխատաւորութիւնը հանում հայերի դէմ, նրանց ձեռքով թափում հայի արիւնը, ակերում հայ գիւղերն և այսպիսով ակելի խորացնում ազգային անտագոնիզմը:

Դուք հաշտութիւն էք առաջարկում ինձ, իսկ Ատրբէջանի 70 ինժինեըներն ու տեխնիքները Յոկտեմբեր 5-ից սկսած աշխատում են Ջիբրալիլի գաւառում, որպէսզի Չանգեզուրի լեռնային մասերը թնդանօթներ տեղափոխելու հնարաւորութիւն ստեղծեն:

Դուք զինաթափել էք հայ աշխատաւորութիւնն և շարունակում էք այդ տխուր գործը, երբ մինչև ատամները զինուած Մուսավաթական Ատրբէջանը յարմար առիթի է սպասում Չանգեզուրն առանց հայի թողնելու:

Ձեզ խաբուածներիդ համար Ատրբէջանը սովետական է, իսկ հայ աշխատաւորութեան համար դա մնում է նոյն ռեակցիոն հայահալած Մուսավաթական «հանրապետութիւնը», որի դիւիզիաները՝ դեռ տարին չէ լրացել, ինչ փորձեցին Չանգեզուրը հրի և սրի մատնել, սակայն ջարդուելով Չաբուղում՝ յետ քաշուեցին:

Լսէք և այս ճշմարտութիւնը:

Մեր ձեռքն են ընկած մի շարք դոկումենտներ, որոնք այլ բան են ասում Ատրբէջանի մասին: Թուում է, որ այժմ քիչ բան չէ պարզուած և Ձեր լիազօր ներկայացուցիչ Լեգրանի համար:

Մոսկւան և դուք, բոլորդ խաբուած էք Քէմալիստներից: Այդ բանը, ըստ իմ ունեցած տեղեկութիւնների, արդէն պարզուած է և՛ Մոսկւայի և՛ Լեգրանի համար:

Յեղափոխական լոզունգներով Քէմալն և ընկերութիւնը քողարկել են իրենց պանիսլամական ամենարեակցիոն նպատակները: Պանիսլամիստների, որոնք շատ են Ձեր դրօշակի տակ, նպատակն է միանալ Ատրբէջանի հետ, տիրել Բազին, կապուել Դադստանի հետ և քշել Ռուսներին Յիւսիսային Կովկասից:

Եթէ լայն և ստոյգ ինֆորմացիա ունէք քաղաքական աշխարհից, ապա այդ բանը վերջին օրերս պէտք է յայտնի լինէր և կարմիր հրամանատարութեանը:

Վերջացնելով երկար գրութիւնս՝ երկու խօսք էլ ասեմ իմ մասին: Ես, որին այնքա՛ն հայիոյում են Ձեր թերթերն ու թռուցիկները, ակելի շեշտուած ու հին սոցիալիստ եմ, քան ձեզ մոլորեցնող Նարիմանովներն ու Կարանները:



*Յանուն իմ յեղափոխական հաւատամքի եղել են բոլոր բանտերուն, Արաքսի ափից մինչև Պետրոգրադ: Աւելի քան երեք տարի ես շղթաներ են մաշել բանտերում և արքորավայրերում: Կռուել են և կռուելու են բռնութեան դէմ, ինչ քողի տակ և ինչ գոյնով էլ որ դա երևան գայ՝ ճնշելու յեղափոխական աշխատաւորութիւնը:*

*Կռուել են թուրք աշխատաւորութեան ազատութեան համար Պարսկաստանում, Բալկաններում՝ Սակեդոն ժողովրդի փրկութեան համար: Կռուում են և այսօր:*

*Եթէ իմ օգնութեան կարիքն երբևիցէ զգացիք, դիմէք, կը հասնեն»:*

ՆԺՂԵՅ

Գորիս, 3 Նոյեմբեր 1920

Սինչդեռ, Սիւնիքի մէջ, շնորհիւ մղուած հերոսական պայքարներու, կացութիւնը հետզհետէ նպաստաւոր կը դառնար, Երևանի մէջ գահավէժ դէպքեր իրարու կը յաջորդէին սակայն:

1920 Դեկտեմբեր 2-ին Հայաստանի Հանրապետութիւնը տեղի կու տար մեծամասնական ուժերու առջև և կառավարութիւնը կ'անցնէր այս վերջիններուն ձեռքը: Դեկտեմբեր 3-ին, Հ. Հանրապետական Կառավարութեան անկումին ճիշտ հետևեալ օրն իսկ, Ե. Իշխանեան հետևալ գրութիւնը կ'ուղղէր Նժդեհին.

*«Անշուշտ, այս բոլորը պէտք է Ձեզ չափազանց մեծ ցաւ պատճառեն և յոյժ տրտմեցմեն, սակայն մենք չենք մեղաւորը, այլ պայմաններն ու հանգամանքները: Դուք, որ ձեր ամբողջ կեանքում եղել էք ժողովրդի հետ և Ձեր կեանքի լաւագոյն օրերն էք գոհաբերել մեր ժողովուրդի փրկութեան գործին, մանաւանդ վերջին կիսամեակում Ձեզ էր վիճակած գերմարդկային ճիգ ու ջանք թափել, հերոսին յատուկ անվեհերութեամբ մի բուռն հերոսներով հայ ժողովրդի փրկութեան դրօշակն ամուր պահել, պարզ է, որ պէտք է նոյն անվեհերութեամբ ու տոկունութեամբ պատրաստ լինէք մեր ժողովրդին վիճակուած ծանր խաչը նրա հետ Գողգոթային բարձունքը հասցնելու: Մենք բոլորս հաւատացած ենք եղել և շարունակում ենք հաւատալ Ձեր տոկունութեան: Դուք մինչև այժմ մենակ էք եղել և յենուած ժողովրդի և սոսկ Ձեր ոյժերի վրայ»:*

Եւ Նժդեհ երբեք չդաւաճանեց իր ուխտին, ժողովուրդին հետ և անոր համար միշտ:

Երբեք չմոռցաւ կանգնելու այն բարձրութեան վրայ, որ իրենը պէտք էր ըլլար: Իր հերոս գինակիցներուն կատարած սխրագործութիւններէն յիշեց դրուագներ, որոնք զայն խանդավառելու, իր հոգեկան տրամադրութիւնները բարձր պահելու պիտի նպաստէին:

Ժողովուրդին դիմեց միշտ, զայն ապագայ մեծ խոյանքներու առաջնորդելու ի խնդիր:

Այդ շունչով զրուած էին գրեթէ իր բոլոր կոչերը, այդ շունչը կը սաւառներ նաև 5 Դեկտեմբերին Սիսեանի ժողովուրդին ուղղած իր կոչին մէջ այսպէս.

### ՍԻՍԵԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ

*«Դուք հետևելով ապստամբ Ղափանի օրինակին, թօթափեցիք Բոլշևիկ-Ատրբէջանեան անարգ լուծը, ու ստեղծեցիք ձեզ համար ազատ ու անկախ կեանք:*

*Փառք ու պանծանք Ձեզ: Յարգանք Ձեր տուած զոհերին ու թափած սրբազան արիւնին, խղճացած, բայց չար թշնամին, որ մինչև Ձեր ապստամբութիւնը անարիւն կոտորածով էր բնաջնջում, ոչնչացնում Ձեզ՝ խլելով Ձեզմից Ձեր զէնքը, Ձեր ղեկավարներին, Ձեր արիւն քրտինքով ձեռք բերած մի կտոր հացը, միացած աշխարհի ամօթն ու անէծքը հանդիսացող օսմանեան ջարդարար ասկեարներին՝ նա փորձեց նորից ձեր վզին դնել բռնութեան ծանր լուծը:*

*Այդ փորձի ժամանակ, որը շնորհիւ Ձեր անօրինակ քաջութեան փորձանք դարձաւ պարտուած թշնամու համար, վիրաւորուեց մեր պաշտելի Պօղոսը և մի քանի օր անց վախճանուեց:*

*Փա՛ռք այդ մեծ ու հերոս նահատակին:*

*Այսօրւանից Պօղոսի որբացած զօրամասը յանձնում եմ շտաբու կապիտան Թորոսեանին, որին արդէն հրամայուած է անցնել Սիսեան: Լիայոյս եմ, որ դուք, քաջանուն Սիսեանցիներդ, թև ու թիկունք կը հանդիսանաք Ձեր նոր հրամանատարին:*

*Աստուած և իմ հոգին Ձեզ հետ»:*

Հրամանատար ՆԺԴԵՅ

Ղափանի Հանքեր, 5 Դեկտեմբեր 1920

Դեկտեմբեր 12-ին Դարապասի ծորերու շրջանին հայ կին-երը և օրհորդները հետևեալ խանդավառ խօսքերով կ'ընդունին Ջանգեզուրի հրամանատարը.

*«Քաջարի հերոս Նժդեհին,*

*Ողջունում ենք ձեզ և բարի գալուստ ցանկանում: Երկար կեանք ու յաջողութիւն ձեզ: Չորս ամսուայ ընթացքին մեր կրած տանջանքներից ու բարբարոսների գազանային վերաբերմունքից յետոյ վերջապէս ձեր գալուստը բերեց մեզ մեծ աւետիք: Հայ կինը՝ դարերէ ի վեր գտնուելով ստրկութեան լծի տակ, չէ կարողացել ազատ արտայատուել: Այսօր նա պարտաւոր է ազատ շնորհակալութիւն յայտնել իր քաջարի հրամանատարին, որովհետև նա եղաւ նրանց պատիւը վերականգնողը:*

*Կեցցէ՛ք քաջ հրամանատարը.*

*Կեցցէ՛ն նրա քաջարի զինուորները»:*

Ազատագրուած շրջաններու մէջ կարգն ու անդորրութիւնը հաստատելու և ապագայ շահադիտական ձեռնարկներու առաջքն առնելու նպատակով Դեկտեմբեր 15-ին Նժդեհ հետևեալ հրամանը կ'ուղղէ Ջանգեզուրցիներուն.

*«Այսօրուանից Ջանգեզուրը յայտարարում եմ զինուորական դրութեան մէջ: Ընդսմին, սահմանում եմ մահուան պատիժ դաւաճանութեան, լրտեսութեան, պրօվազացիայի, սպեկուլացիայի, կաշառակերութեան և նման քրեական ու քաղաքական յանցանքների համար: Հրամայում եմ բոլոր պաշտօնեաններին՝ զինուորական թէ քաղաքացիական՝ լինել արթուն աշխատել օրուայ ընթացքում 24 ժամ և կանգնել իրանց կոչման բարձրութեան վրայ»:*

Ջանգեզուր-Գողթանի հրամանատար ՆժԴԵՀ

Գորիս, 1920 Դեկտեմբեր 15

Հայ Մեծամասնականներ Երևանի կառավարութիւնը իրենց ձեռքը անցընելէ վերջ՝ Խորհրդային Հայաստանի Կարմիր զօրքերու հրամանատար Դրօն և Զին. կոմիսար Աւիս հետևեալ կոչը կ'ուղղեն Ջանգեզուրի գիւղացիութեան և հրամանատարութեան.

ԿՈՉ ՈՒՂԻՉ ՀԵՌԱԳՐԱԹԵԼՈՎ ԵՐԵՎԱՆ-ՔԷՇԻՇՔԵՆԴ  
ՁԱՆԳԵԶՈՒՐԻ ԳԻՒՂԱՑԻՈՒԹԵԱՆ ԵՒ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹԵԱՆ

Թող յայտնի լինի բովանդակ Ձանգեզուրին, որ Հայաստանը յայտարարուած է սովետական յեղափոխական հանրապետութիւն: Հին կառավարութիւնը նետել է երկիրը արեան ու արցունքի անդունդը: Ձանգեզուրի բարձունքներում կռուելով կարմիր բանակի դէմ՝ դուք այդպիսով անգիտակցաբար խորացնում էք վիշտ ու դժբախտութիւնը ձեր ժողովրդի, որի միակ փրկութիւնը կախուած է կարմիր բանակի ու Սով. Ռուսաստանի օգնութիւնից:

Սով. Ատրբէջանը զիջել է Սով. Հայաստանի Ձանգեզուրը, Ղարաբաղն ու Նախիջևանը: Սով. Ռուսաստանը՝ միմիայն նա է ընդունակ կանխելու այն վտանգը, որը սպառնում է դրսի ոյժերի կողմից և հաշտեցնելու ձեր ժողովրդին իր հարևանների հետ՝ վերականգնելով նրա իրաւունքները:

Հայաստանը քայքայուած է, մենք կարող ենք վերականգնել միայն այն օգնութեան միջոցներով, որը ցոյց կը տայ մեզ խորհրդային Ռուսաստանը և խորհրդային Ատրբէջանը, առաջինն իր ուժեղ բանակով, իսկ երկրորդն իր նաւթով:

Սովետական Ատրբէջանը հրաժարուեց Ձանգեզուրից, Լեռնային Ղարաբաղից և Նախիջևանից: Մեր ժողովուրդը սուր կարիք է զգում երկաթուղագծերի բացման և Սով. Իշխանութեան ամրապնդման Անդրկովկասում: Ներկայումս ամբողջ Հայաստանում կազմակերպուած է Սով. Իշխանութիւն: Քաղաքական հակառակորդներից ոչ ոք չէ հետապնդում՝ բացի հին կառավարութեան անդամներից, որոնք Յեղկոմի ձեռքով ձերբակալուած ու յանձնուած են ժողովրդական դատի:

Մենք համոզուած ենք, որ մեր բոլորի հարազատ Ձանգեզուրն ևս կը մտնի խորհրդային Հայաստանի մէջ, որպէսզի վերջ տրուի անէն մի թշնամական գործողութեան կարմիրների դէմ, որոնք բարեկամական և եղբայրական յարաբերութեան մէջ են գտնուում խորհրդային Հայաստանի կարմիր զօրքի հետ: Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը դիմել է կարմիր զօրքի հրամանատարութեանը, որպէսզի իւր զօրքը յետ քաշէ Ձանգեզուրի շրջաններից այն հաւատով, որ Ձանգեզուրի գիւղացիութիւնը վերջ կը տայ կարմիրների դէմ՝ թշնամական գործողութեան:

*Խորհրդային Հայաստանի անունից մենք յայտնում ենք բոլոր կռիւների մասնակցողներին ամնիստեա, համարելով այդ կռիւը կործանարար մեր ժողովրդի համար:*

*Մենք կոչ ենք անում Զանգեզուրին Խորհրդային Հայաստանի Իշխանութեան դրօշակի տակ կանգնել, մերձենալ Ռուսաստանին և Խորհրդային Ատրբէջանին: Մենք ազնութեամբ, բաց սրտով յայտարարում ենք մեր ժողովրդին, որ կարմիր զօրքի դէմ յետագայ կռիւները ձեռնտու են միայն հայ ժողովրդի թշնամիներին:*

*Խորհրդային Հայաստանի անունից մենք կոչ ենք անում Զանգեզուրին դիմել խաղաղ աշխատանքի: Պահանջում ենք անմիջապէս դադարեցնել ամեն տեսակի պատերազմական գործողութիւն և ենթարկուել Հայաստանի Խորհրդային Իշխանութեան: Սոյն հրամանը խախտելը մեր կողմից կը նկատուի իբրև թշնամական գործողութիւն՝ ուղղուած Խորհրդային Հայաստանի և նրա դաշնակից Խորհրդային Ռուսաստանի և նրա կարմիր զօրքի դէմ:*

Խորհրդային Հայաստանի Հանրապետութեան  
Զինուորական Կոմիսար ԱԻԿՍ  
Խորհրդային Հայաստանի Կարմիր զօրքերի  
Հրամանատար ԴԻՕ

## IX ԻՆՔՆԱՎԱՐ ՍԻՆԻՔ

*Տաթևի համազանգեզուրեան առաջին համագումարը և իր որոշումները.– Ղարաբաղի կցումը.– Տէր-Պետրոսեան Դիզակի մէջ.– Հաղորութի մօտ կրիւ մը 1921 Մարտ 8-ին.– Մեծամասնականներու դէպի Գողթան արշաւանքը.– Գողթանի ականայ խորհրդայնացումը.– Դրօհ, Մեծամասնական Ջինուորական Իշխանութեան և Նժդէհի միջև փոխանակուած պատմական գրութիւններ:*

Դրօ-Աւիսեան կոչը տարբեր պայմաններու մէջ յառաջ բերել գուցէ որոշ տրամադրութիւններ, բայց Ջանգեզուր յաղթական՝ չէր կրնար լսել իրեն եղած խոստումներն ու սպառնալիքները, հաւասարապէս:

Մինչև դրութեան վերջնական պարզուիլը երկիրը իր սեփական օրէնքներով կառավարելու համար համագումարի մը պէտքը ասելի քան զգալի էր, մնաց որ ատիկա առիթ պիտի ըլլար անդրադառնալու մէկ տարուայ ռազմական գործողութեանց վրայ՝ զօժելու համար ապագայ աշխատութիւններու ուղղութիւնը:

Այդ համագումարին մէջ ժողովուրդը յանձին իր ներկայացուցիչներու՝ պիտի գտներ գործունէութեան և ոգևորութեան նոր աղբիւրներ:

Դեկտեմբեր 25-ին Տաթևի պատմական վանքին մէջ տեղի ունեցաւ համազանգեզուրեան այդ ժողովը, ուր ներկայ էին Ջանգեզուրի բոլոր շրջաններու գիւղերէն ընտրուած 100 պատգամաւորներ, հրամանատար Նժդէհ, բոլոր շրջանային խորհուրդներու ներկայացուցիչները, 118 հոգի ընդամենը:

Համագումարը կ'որոշէ Ջանգեզուրը յայտարարել ժամանակաւորապէս ինքնավար, մտցնելով հանրապետական իրաւակարգ, մնալով անկախ մինչև քաղաքական հնարաւորութիւն կ'ունենայ միանալու իր մայր երկրի՝ Հայաստանի հետ:

Ինքնավար Սիւնիքի սահմաններն են Ջանգեզուրի նախկին սահմանները:

Ջանգեզուրի վերաբերմունքը դէպի Ատրբէջանի կառավարութիւնը լինելու է բարեկամական, բայց նա առայժմ չէ կարող սերտ յարաբերութիւնների և երթևեկութեան մէջ մտնել Ատրբէջանի հետ, մինչև հարևան ժողովուրդների փոխադարձ վստահութիւնը կատարեալ չը լինի:

Զանգեզուրի փոխյարաբերութիւնը Պարսկաստանի հետ եղել է միանգամայն սերտ և բարեկամական և կը մնայ: Նա Պարսկաստանում ունենալու է իր ներկայացուցիչը, որ աւելի քան սերտ յարաբերութիւնների մէջ պէտք է մտնի այդ կառավարութեան հետ առևտրական և հաղորդակցութեան տեսակէտներից:

Ընդունուած է մասնաւոր խոշոր սեփականութիւնների պետականացումը, ինչպէս վանքապատկան, եկեղեցական և բեզական, նոյնպէս և ուրիշ խոշոր կալւածատէրերի: Համագումարը միաձայն որոշում է՝ հրաւիրել իր ազատարար, իր հերոս Նժդեհին որպէս **ՍԻՒՆԵԱՑ ՍՊԱՐԱՊԵՏ** և բուռն ծափահարութիւններով իր կատարեալ վստահութեան քուէն տալով նրան իր բախտն է յանձնում նրան<sup>1</sup>:

## ՂԱՐԱՔԱՂԻ ԿՑՈՒՄԸ

Զանգեզուրի վերջին յաղթութիւններու լուրը հասած էր Ղարաբաղ: Խորհրդային Ատրբէջանի զօրքերու ներկայութիւնը մեծապէս կը ճնշէր տեղացի ազգաբնակչութեան վրայ, որ պատեհ առիթ մը կը փնտռէր թշնամի լուծը թօթափելու համար:

Դեկտեմբեր 29-ին տեղացիներու ըմբոստական մէկ շարժումը խեղդելու համար Մեծամասնականներու կատարած փորձերը կը ձախողէին:

Ղարաբաղի ժողովուրդը ընդվզած էր:

Կ'ուզէր ազատ ապրիլ: Ահաւասիկ իր պահանջը:

Դիզակէն 1921 Յունվար 3 թուակիր իր սպարապետ Նժդեհի ուղղած մէկ երկտողով Ղարաբաղի ապստամբ ուժերու ղեկավար Թևան կը գրէր.

*«Խնդրում եմ ձեզանից, խնայել Ղարաբաղի ապստամբ ժողովրդին, որ սպասում է ձեզ գիշեր ցերեկ»:*

Սիւնիքի ինքնավար յայտարարուելէ վերջ Նժդեհի համար Ղարաբաղի գրաւումը վճռուած խնդիր մըն էր ալ:

Դէպի Ղարաբաղ զինուորական նոր արշաւանքի մը սկսելէ և տեղացի ապստամբ խումբերուն օգնութեան հասնելէ առաջ, Նժդեհ կը ջանայ դարձի բերել Մեծամասնականներուն հպատակութիւն յայտնող հայերը, այդ նպատակով Փետրվար 25-ին և 27-ին անոնց կ'ուղղէ երկու կոչեր, ուր կ'ըսուէր ի մէջ այլոց.

---

<sup>1</sup> Ազատ Սիւնիք, էջ 48-60:

*Շատերը, խաբուածներն ու մոլորուածները, անկեղծ զղջմամբ արդէն վերադառնում են իրենց հարազատ ժողովրդի գիրկը:*

*Իսկ Բոլշևիկների չեկերին ծախուած անհոգի ուրացողները յամառում են մնալ մթութեան մէջ ու շարունակել իրենց մութ գործերը:*

*Էհ, առաջիններին բարի գալուստ, վերջիններին բարի երթ դէպ մահ ու մոռացում:*

Սպարապետ ՆԺՂԵՅ

Սիւնեցիներէ կազմուած զօրամաս մը հրամանատարութեամբ սպայ Տէր-Պետրոսեանին և մի քանի գործիչներու ուղեկցութեամբ 1921 Փետրվար 28-ին կ'անցնի Դիզակ:

Միացած տեղական ուժերու՝ Սիւնեցիք քանի մը օրուայ մէջ գրեթէ կը վանեն Մեծամասնական զօրքը Լեռնային Ղարաբաղէն:

Մարտ 8-ին թշնամին յամառ դիմադրութիւն մը ցոյց տալէ յետոյ կը նահանջէ՝ Հայերուն ձեռքը ձգելով Հադրութն ու իր շրջակայ գիւղերը:

Այս կռուի ընթացքին Մեծամասնականներ կ'ունենան 100-էն աւելի սպաննուած և 150 գերի, հայերու կորուստը կ'ըլլայ երեք սպաննուած և երկու վիրաւոր:

\* \* \*

1921 Փետրվար 12-ին Մեծամասնականներ միացած թուրքերու կը յարձակին Գողթանի վրայ, այդ շրջանի հայ ուժերու հրամանատար տեղակալ Ղազար տեղեկագրելով դէպքի մասին՝ շարժման մէջ կը դնէ իր վաշտերը և Փետրվար 13-ին (կռուի Բ. օրը) մեծ ջարդ տալով թշնամիին՝ նահանջի կը մատնէ զայն:

Այդ ժամանակ Գողթան կը նեղուէր հաւասարապէս զէնքի ու կենսամթերքի պակասէն: Կռիւներու ընթացքին կիներ, դպրոցական աշակերտներ, մինչև իսկ մանուկներ փրկութեան գործին սատարելու համար խանդավառութեամբ կը լծուին աշխատանքի՝ մաքրելով ժանգոտած փամփուշտներ կռուի վտանգաւոր պահուն դիրքէ դիրք փոխադրելով զանոնք:

Երևանի առաջին անկումէն վերջ՝ Գողթանի զէնքի այս յաղթութիւնը սակայն տեղի պիտի տար առանց զինաթափութեան իր ակամայ խորհրդայնացումին: Իր աշխարհագրական դիրքին պատճառով Գողթան ամբողջ 6-7 ամիս կը զրկուէր արտաքին



աշխարհի հաղորդակցութենէն. մենակ և առանց սնունդի՝ իր պատուաւոր խորհրդայնացման մէջ կը փորձէր գտնել փրկութիւնը, յորմէհետէ մանաւանդ, երբ Երևան չէր ուզած հասնիլ անոր կիսաքաղց աղաղակներուն:

Յունվար 21-ին Բագուէն Գորիս կը հասնէր Խորհրդային Իշխանութեան մէկ պատգամաւորութիւնը Գրիգոր Վարդանեանի նախագահութեամբ, բերելով Դրօսի և ԺԱ. Կարմիր Բանակի հրամանատարութեան կողմէ Ձանգեզուրի անգէն հաշտութեան և խորհրդայնացման հետևեալ գրութիւնները.

### ՁԱՆԳԵԶՈՒՐԻ ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՊԱՏՃԵՆԸ ՆԺՂԵՅԻՆ

*Հայրենակիցներ, երկու տարի ու կէսուայ դառը փորձերը բաւականին համոզեցուցիչ էր, որ իզուր էր հայ ժողովուրդը յոյսերը դրել Եւրոպայի վրայ, որն ամենաքրիտիքական մոմենտում մամարդի նման թողեց ամբողջ ժողովուրդը թշնամու գրկում, որովհետև իր շահերը այդ էին պահանջում:*

*Վերջին ըրպէին պետութեան գլուխը անցած Դաշնակցութեան կուսակցութեան պատասխանատու ընկերները 26-ին Նոյեմբերի ժողովում խոշոր մեծամասնութեամբ որոշեցին ընդունիլ Ռուսաստանի օրիէնտացիան:*

*Հայաստանը յայտարարուեց խորհրդային, հիմնուած այն համոզմունքի վրայ, որ միակ յեղափոխական Ռուսաստանը կը գայ անկեղծ կերպով պաշտպանելու հայ աշխատաւորութեան շահերը և յետ կը շարտի մեր հայրենիքից Քէմալական դժխային ծրագիրներ կազմող բանակը:*

*Ներկայումս Մոսկւայում հաւաքուում է կօնֆերենցիա, որտեղ պէտք է լուծուի Հայաստանի սահմանների խնդիրը Ռուսաստանի, Տաճկաստանի և Հայաստանի մասնակցութեամբ:*

*1. Ձանգեզուրի չճանաչելը խորհրդային Հայաստանը խանգարելու է մեզ լուծել Նախիջևանի, Շարուրի և Ղարաբաղի խնդիրները:*

*2. Պատճառ է դառնում Ձանգեզուրի այդ բռնած դիրքը և գործիք է տալիս տաճիկների ձեռքը չհեռացնել իրենց զօրքերը մեր երկրից, պատճառաբանելով, թէ Հայաստանի խորհրդային իշխանութիւնը կեղծ է, որ մօտիկ ապագայում Հայաստանը նորից կը լինի գործիք Եւրոպական իմպերիալիզմի ձեռքը:*

3. Քանի Ձանգեզուրը չի ճանաչել խորհրդային իշխանութիւնը՝ դեռ պիտի կասկածով վերաբերուեն Չայաստանին, չի սկսուիլ խաղաղ և շինարար աշխատանք մեր արիւնաքամ եղած երկրում:

4. Դժուար է խոստովանել և հաշտել այն մտքի հետ, որ կատարուած է մի շարք քաղաքական սխալներ, բայց դժբախտաբար դա դառն իրողութիւն է:

Ուստի, դիմելով ձեզ ուզում եմ հաւատալ, որ Ձանգեզուրը և նրա ղեկավարները վերջ կը տան իրենց բռնած քաղաքականութեանը և կը միանան իրենց մայր երկրին, Չայաստանին, Մոսկւայի տաճիկների հետ բանակցութիւնը կը գայ ապացուցանելու, որ սովետական Ռուսաստանը պաշտպանելու է հայ աշխատաւորութեան շահերը:

Ա. Ուստի ձեզ պէտք է անմիջապէս յայտարարել խորհրդային և միանալ խորհրդային Չայաստանի հետ:

Բ. Եթէ որևէք բան ունիք պարզաբանելու առանց ուշացնելու պէտք է ներկայացուցիչներ ուղարկէք Յեղկոմ ԺԱ.-որ բանակի և Չայաստանի կառավարութեան մօտ:

ԴՐՕ

Բագու, 21 Յունւար 1921

Նոյն օրը, լիազօրուած Սեծամասնական գերագոյն զինուորական հրամանատարութեան կողմէ, Շուշիի զինուորական կոմիսար Ս. Պօտեշին և քաղաքի ու շրջակայքի կայազօրի պետ Վայցեխովսկի, ինչպէս նաև առանձին գրութեամբ մը հրամանատար Սեմենով, կը դիմէին Ինքնավար Ձանգեզուրի կառավարութեան բարեկանական կապ հաստատելու համար. «Չետնելով իմ դաւանած գաղափարներուն,- կը գրէր հրամանատար Սեմենով Յունվար 22-ին,- ես կ'առաջարկեմ ձեզ դադրեցնել ամէն տեսակ ռազմական գործողութիւններ, կապ հաստատել մեզ հետ և փոխադարձաբար գտնել ընդհանուր լեզու: Ես համոզուած եմ, որ մեր բարիդրացիական յարաբերութիւնները կ'ամրապնդուին ու կը դադորի ոչնչացումը անոնց, որ կը փափաքին դիմել իրենց ապագայ խաղաղ ու շինարար կեանքին»:

Չաշտութեան բանակցութեանց մասին իրեն եղած հրաւերին դրական արդիւնքին նկատմամբ յեռետես՝ Նժդեհ Սեծամասնական ԺԱ. բանակի հրամանատարին կը պատասխանէ իր հետագայ գրութեամբ.

## ԺԱ. ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ

Ձեր նամակով Դուք խնդրում էք, որ մենք Ձեզ հետ հաստատենք բարեկամական յարաբերություններ: Ես սկզբունքով հակառակ չեմ այդ առաջարկին, սակայն ներկայ հանգամանքներում հաստատել անկեղծ բարեկամական յարաբերություններ միանգամայն համարում եմ աննպատակայարմար, համոզուած լինելով, որ այդ հանգամանքը դրական և ցանկալի հետևանքներ չպիտի ունենայ: Դժբախտ Հայաստանում տեղի ունեցող այժմեան Ձեր բարձր հրամանատարութեան և Հայաստանի կոմունիստական կուսակցութեան կեդրոնական կոմիտեի գործունեութիւնը գալիս է ապացուցելու և խախտելու իմ հաւատն ու վստահութիւնը դէպի Ձեր առաջարկն ու անկեղծութիւնը: Ինչպէս ինձ, այնպէս և Ձեզ համար գաղտնիք չէ, որ շնորհիւ Ձեր բարձր հրամանատարութեան վարած քաղաքականութեան Հայաստանը դարձաւ սոսկումնների և արեան թատերաբեմ: Ձեր բարձր հրամանատարութեան թելադրանքովն էր, որ Քէմալիստները գրաւեցին Սարիղամիշը, Կաղզւանը, Ղարսը: Ալէքսանդրապոլը և Իգտիլը տնտեսապէս քայքայեցին և սոցիալապէս մեռցրին այդ ծաղկած երկիրը և ժողովրդին բեռնակիր ամասուններ դարձնելով՝ նոցա իսկ մէջքով ռազմամթերքն ու հարստութիւնը փոխադրեցին Տաճկահայաստանի խորքերը: Հայաստանը աշխարհագրական իւր դիրքով գտնւելով այն մեծ ճանապարհի վրայ, որով միանում է Եւրոպան Ասիայի հետ, շարունակ ենթակայ է եղել բարբարոսների ասպատակութեան, և դժբախտ աշխատաւոր հայ ժողովուրդը հազարաւոր զոհեր է տուել վանդալների այդ ասպատակութեան ժամանակ, որոնք արշաւել են Արևմուտքից և Արևելքից: Այժմ պատմութիւնը կրկնւում է նոյնութեամբ, միայն այն տարբերութեամբ, որ այժմ հայութիւնը գլխատւում է սոցիալիզմի դիմակի տակ և ինչպէս ինձ, նոյնպէս Ձեզ համար գաղտնիք չէ, որ Հայաստանի այն մասերում, որոնք գրաւուած չեն տաճիկներով և գտնւում են խորհրդային իշխանութեան ներքոյ, ստեղծուած է այնպիսի կացութիւն, որ սպառնում է հայ գիւղացիութեան ֆիզիքական գոյութեան և, որ ամենագլխաւորն է, գլխատւում, սպանւում է ժողովրդի կենդանի խօսքը: Հարիւրներով հայ յեղափոխական դեմոկրատիայի ներկայացուցիչները բանտարկւում են, զնդակահարւում և աքսորւում,

ո՞ր, յայտնի չէ: Այդ բանում ես տեսնում եմ խորհրդային իշխանութեան դեկավար շրջանների ակնյայտ նենգամիտ միտումները՝ գլխատել Հայաստանի աշխատաւոր գիւղացիութիւնը և մեռցնել նորա անկեղծ յեղափոխական-սոցիալիստական միտքը: Այն պայքարը, որ այժմ մղւում է Հայաստանում՝ նա դասակարգային բնոյթ չէ կրում և բոլշևիկները, մանաւանդ հայ բոլշևիկները, միմիայն տիրապետելու տենչանքով բռնուած, ձգտում են հեռացնել ասպարիզից միւս սոցիալիստական կուսակցութիւններին, որպիսիք են դաշնակցականները, էսէրները, մենշևիկները և այլն: Միք մոռանա, որ այն բարձր գաղափարների, սոցիալիզմի իրականացումը, որը դուք այժմ կեղծ ճանապարհով էք տանում, վերջ ի վերջոյ պիտի իւր գաղափարական պայքարով իրականացնի այն յեղափոխական դեմոկրատիան, որոնց այժմ Դուք հետապնդում և գլխատում էք: Միք մոռանա, որ Ձեր կուսակցական հայ աշխատաւորների մեծագոյն մասն իրենց յեղափոխական դաստիարակութիւնն ու միտքը ստացել է մեզանից, մեր միջից, որ յեղափոխական մտքի այդ ու բենը ստացել են Դաշնակցութիւնից, որը տասնեակ տարիների ընթացքում պաշտպանել է Արևելքի աշխատաւոր գիւղացիութեան շահերը և շնորհիւ այդ կուսակցութեանն էր, որ յառաջ եկաւ յեղափոխութիւն թէ Թիւրքիայում և թէ Պարսկաստանում: Այժմ այդ կուսակցութեան լաւագոյն գործիչները, որոնք անիծեալ բռնակալութեան օրերում հիւժուում էին բանտերում և հեռաւոր Սիբիրի տունդրաներում, կանդալները մաշում, այժմ նոքա բանտարկւում են ու հրացանազարկ են լինում Ձեր կողմից: Այսպիսի պայմաններում խօսել բարեկամական յարաբերութիւնների մասին՝ աւելի քան միամտութիւն է:

Անկեղծ բարեկամական յարաբերութիւն մեր մէջ կարող է ստեղծուել այն դէպքում, երբ հայ մտաւորականութիւնը կազատուի բանտերից, երբ կը դադարէք նրան հալածելուց, երբ Ձեր բարձր իրամանատարութիւնը իրական և կտրուկ միջոցներ ձեռք կ'առնի մաքրել այն հողամասերը, որոնք զրաւուած են Քէմալականներից, և վերջապէս, երբ կը դադարէք Չանգեզուր ուղարկել զանազան մութ անձնաւորութիւններ «գաղտնի և շտապ գործերով», ինչպէս այդ անում է ԺԱ. բանակի ռեզիստրացիայի<sup>1</sup> բաժինը: Երբ ես կը համոզուեմ, որ Դուք կ'սկսէք իրականացնել Չանգեզու-

---

<sup>1</sup> Հետախուզական: Խմբ.:

րի աշխատաւոր գիւղացիութեան ցանկութիւնները, որի հաւաքական կամքը արտայայտուած է եւս, երբ ես կը կամոզուեմ, որ Դուք յանձինս հայ յեղափոխական դեմոկրատիայի տեսնուած էք ոչ թէ Ձեր թշնամու, այլ նրանց, որոնք կոչուած են շարունակել ընդհանուր յեղափոխական գործը, այն ժամանակ միայն ես կարող եմ հաւատալ Ձեր անկեղծութեանը և Ձեր մեկնած ձեռքը չի կախուի օդում: Իմացէք և յիշէք, որ ես և Ջանգեզուրի ժողովուրդը, որն ինձ է յանձնել իւր բախտը, ներկայացնում է իրենից մի պատկառելի իրական ոյժ, որը, ինչպէս ես առաջ էլ գրել եմ, մի օր Ձեզ պէտք պիտի գայ:

Ջանգեզուրի կարմիր բանակի օգտակար գործունէութեան մասին թոյլ տուէք կասկածել, որովհետև Դուք ևս լաւ գիտէք, որ Ջանգեզուրի աշխատաւոր գիւղացիութեան պաշտպանութեան և մարդասիրութեան ամենատարրական օրէնքներն անգամ ոտնահարուած են, տնտեսապէս քայքայուած Ջանգեզուրում գտնուած կարմիր բանակի կողմից: Կրկնում եմ, որ ինչպէս մինչև բոլշևիկների գալը, նոյնպէս և այժմ, ես բացառապէս զբաղուած եմ հայ աշխատաւոր ժողովրդի ֆիզիքական գոյութեան և նրա յեղափոխական սոցիալիստական զաղափարների պաշտպանութեան հոգսով: Երբ գործով ապացուցէք, որ Դուք միանգամայն թշնամի չէք դժբախտ հայ ժողովրդին, որն ապրում է Արևելքի և Արևմուտքի մեծ ճանապարհի վրայ, այն ժամանակ միայն կարելի է բարեկամական փոխյարաբերութիւն ստեղծել մեր և Ձեր միջև:

Իմ կոնկրետ ցանկութիւններն են.

1. Երբ Դուք ազատէք բանտերից Հայաստանի յեղափոխական-սոցիալիստական կուսակցութիւնների անդամներին:

2. Մաքրէք Քէմալականներից այն հողամասերը, որոնք գրաւուած են նրանց կողմից:

3. Հրաժարուէք Ջանգեզուրում գաղտնի, ստորերկրեայ աշխատանք կատարելուց, այն ժամանակ միայն կարելի է ստեղծել բարեկամական յարաբերութիւններ ինքնավար Սիւնիքի և խորհրդային իշխանութեան միջև:

Սպարապետ Սիւնիքի և Գողթանի ՆժԴԵՅ

Գորիս, 25 Յունւար 1921

Թէ խորհրդային Մոսկւայի թոյլատու ընթացքը իրահրած էր Քէմալական ուժերու դէպի Հայաստան արշաւանքը, թէ յեղափոխ-

ական Ռուսիոյ մեծամասնական դիւանագիտութիւնը՝ երբեմնի երդուեալ հակառակորդը զաղտնի դաշնագրերու, նոյնքան և աւելի թագուն ծրագիրներու ի խնդիր նահատակուած ժողովուրդի մը յոգնած դիակին վրայէն կը սեղմէր արիւնոտ ձեռքը ենկիւրիի նոր աշխարհակալներուն, վեր էր ու կը մնայ ամէն տարակուսանքէ:

Իր ապագայ քաղաքական նպատակներու յաջողութեան համար խորհրդային Մոսկւայի կեցուածքը շատ հասկանալի էր, պարագայ մը, որ սակայն ան կը ջանար ծածկել, թիրիմացութիւններ փնտռելով քաղաքական հայ դեկավար մտածելակերպի մէջ:

Ի պատասխան Նժդեհի գրութեան այդ ոգին պարփակող հետևեալ պատասխանը կը գրէր Յեկկեր, լիագօր անդամը մեծամասնական զինուորական իշխանութեան.

### ՔԱՂԱՔԱՅԻ ՆԺՂԵՅ ԵՒ ՔԱՂԱՔԱՅԻ ՏԵՐ ՄԻՆԱՍԵԱՆ<sup>1</sup>

*Բրիգատայի հրամանատարը ի պատասխան իր դիմումին (իր նախաձեռնութեամբ) ձեզմէ ստացած պատասխանը ինձ յանձնեց, հաղորդելով ինձ ձեր յայտարարութեան բովանդակութիւնը. ԺԱ. բանակի յեղ. զին. խորհուրդի և Մեծամասնական գերագոյն իշխանութեան կողմէ ես լիագօրուած եմ պատասխանելու ձեզ:*

*Ձեր նամակներէն կ'եզրակացնեն, որ դուք մի քանի խնդիրներու նկատմամբ թիրիմացութեան մէջ ինկած էք:*

*Եթէ դուք կը մեղադրէք մեզ Ղարսն ու Ալեքսանդրապոլը գրաւուելու խնդրին մէջ որպէս թուրքերու արշաւանքի օժանդակող (և մինչև իսկ նախաձեռնող) ու այդ հանգամանքը կը ծառայեցնէք ոչ թէ միայն բրոպականտայի միջոց, այլ ատիկա ձեր համոզմունքն իսկ է, այդ պարագային պէտք է պարզ ու որոշ կերպով ըսեն, թէ թիրիմացութեան մէջ էք դուք: Այն օրէն, որ Անդրկովկաս եւ մտած Մեծամասնական Ռուսաստանի զօրքերը՝ մեզ համար իբրև օրէնք ընդունած ենք, որ քաղաքական և դասակարգային ոչ մէկ հանգամանք մեզ պէտք չէ մղէ խորացնելու ազգայնական թշնամութիւնը: Այդ խնդրին մէջ մեր հետևողական ըլլալը դուք կրնաք նկատել Գանձակի և Ջաքաթալայի ապստամբութեան վերաբերող գործին մէջ: Հայաստանի նախկին կառավարութեան զօրքերու հետ ունե-*

<sup>1</sup> Տէր Մինասեան այդ ժամանակ նախագահ էր Ինքնավար Սիւնիքի կառավարութեան:

ցած մեր կռիւներու մէջ, ուր մենք Անդրկովկասի աշխատաւոր մասսաներու ստրկացման պայքարի անմիջական ծանրութիւնը վերցուցեր ենք մեր վրան, ամէն կերպ կռուին ազգայնական բնոյթ տալէ խուսափելով: Մանաւանդ, հայերու վերաբերմամբ եղած ենք զգոյշ՝ գիտակցելով, թէ որքան տառապանք է կրած այդ ժողովուրդը: Մինչև անգամ ամենապարզ հաշիւը պէտք է մեզ ստիպէր զգուշութեամբ վերաբերուելու հայ ժողովուրդին հետ, որովհետև մենք չենք մոռնար, թէ որքան խոր է անոր համակրանքը դէպի մեծամասնական յեղափոխութիւնը, և թէ ամէն տեսակ պարագաներ կ'ստիպեն այդ ժողովուրդը՝ հակելու դէպի Ռուսական օրիանտասիոնը: Մեր զօրքերու մուտքը Հայաստան նպատակ ունեցեր է Սով. Հայաստանը պաշտպանել վերջնական անկումէ և թուրքերու յետագայ առաջխաղացման առաջքն առնիլ և դուր կը տեսնէք, որ այդ գործին մէջ մենք յաջողութիւն ունեցանք, կարմիր զօրամասերու ներկայութիւնը միայն ստիպեց տաճիկներուն կանգ առնել ներկայ սահմանագծի վրայ, որ աւելի բարւոք է, քան այն, զոր գծած էին տեղի տուող դաշնակցականները:

Մենք շտապեցինք կրճատելու տաճիկներու ազդեցութեան շրջանը և Մոսկուայի ռուս-տաճկական կոնֆերանսի նախապայմաններէն մէկն ևս այն է, որ (տաճիկներ) մաքրեն Ալէքսանդրապոլի շրջանը և բանակցութեանց պայմաններէն մէկն ևս Ղարսի շրջանի մաքրումն է: Ինձ յայտնի չէ, թէ ինչով վերջացան այդ բանակցութիւնները, բայց մէկ բան մեզ համար կասկած դուրս է, որ ձեր շարժումը խորհրդային Հայաստանի դիրքը՝ իր տերրիտորիան պաշտպանելու խնդրին մէջ, խիստ կը թուլցնէ ձեր նկարագրած տմարդի գործերը, որ թոյլ տուած են իրենց (տաճիկները) գրաւած իրենց վայրերու մէջ, ձեզ պիտի ստիպէր զօրավիզ հանդիսանալու խորհրդային Հայաստանին իր բռնած դիրքին ոչ թէ հարուած հասցնել անոր թիկունքին:

Ձեր միւս մեղադրանքը՝ մեր զօրամասերու Հայաստանի սահմաններուն մէջ ցոյց տրուած անբարեյոյս վարքի ու բարքի մասին, նմանապէս պարզ չէ: Համոզուած կրնամ ըսել, որ մեր կարմիր զօրամասերու վրայ անմիջապէս այդ մեղադրանքները կարելի չէ բարդել, որովհետև մենք ունինք շարք մը փաստեր Անդրկովկասի և մասնաւորապէս թոպէիս Հայաստանի մէջ անոնց ցոյց տուած անբասիր վարք ու բարքի մասին: Չանգեզուրի մէջ

յիրաւի տեղի ունեցեր է ամօթալի դէպք մը, որուն համար մեզ չենք գովեր, և զոր ժամանակին աշխատած ենք հաշուեյարդութեան ենթարկել: Խօսքս տաճկական գունդին մասին է, զոր մենք ուղարկած ենք Ջանգեզուրի ուղղութեամբ Քէմալի մօտ: Այդ ժամանակ ուրիշ ծանապարհ չիկար: Գունդին կարգադրուած է եղեր անցնիլ Նախիջևան. ամէն մէկի համար ակնյայտնի է, որ այդ գունդի ներկայութիւնը տաճկական զօրամասերու մէջ անհրաժեշտ է եղած անոնց միմիմայլ յեղափոխական ըլլալը հաստատելու համար:

Ո՞վ կրնար ենթադրել, որ տեղի կ'ունենան դժբախտ դէպքեր կամ թիրիմացութիւններ, որ թէ՛ ազգաբնակութիւնը և թէ՛ այդ գունդը իրարու դէմ գէնք կը բարձրացնեն, այն ալ կարմիր զօրքի անունով: Որ մենք վճռականօրէն հաշուեյարդարութեան ենթարկեցինք այդ դէպքը, աստոր ապացոյց կրնայ ծառայել զօրաբաժնի պետի հեռացումը իր պաշտօնէն, որ այդ գործի մէջ ցոյց տուած է դանդաղկոտութիւն: Ուրիշ որևէ գործի մէջ թերևս մեզ վրայ լուրջ մեղադրանք բարդել կարելի չէ: Դէ լաւ, դուք չէք կամենար մեզի հետ որևէ գործ ունենալ, իսկ ո՞վ կ'օգնէ ձեզ գիւղացիութիւնը ազատելու ֆիզիքական կործանումէ: (Դուք թոյլ էք) Համաձայնականները, անոնց գործակալ Վրաստանը: Ես նոր վերադարձայ Լօռուի չէզոք գօտիէն և եթէ կը կամենաք՝ կ'ուղարկեմ ձեզ մօտ երկու գիւղացիներ, որոնք կը պատմեն ձեզ, թէ ինչ կը կատարուի այնտեղ: Տաճկական սարսափները կարող են շառագունիլ հոն կատարուածներու մօտ:

Ի վերջոյ կը դառնամ հալածանքի խնդրին: Ծիշտը խօսելով՝ դուք տգեղօրէն կը չափազանցէք: Ինձ յայտնի չէ հրացանագարութեան և ոչ մէկ դէպք. ընդհակառակը երեկ ուղիղ հեռագրաթելով Բագուի հետ խօսելու ժամանակ ինձ յայտնեցին, որ Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը յայտարարած է կատարեալ քաղաքական ամնիստիա: Ես կրնայի նաև յիշել ձեզ շարք մը նախկին կառավարութեան առաջնորդներու, որոնք Խորհրդային Հայաստանի կառավարութեան որոշումով մեր զօրամասերու կողմէ թոյլատրուած են անցնիլ արտասահման: Ի վերջոյ, ինչ վերաբերում է Ջանգեզուրի շրջանի ներկայ գործիչներուն, ես լիազօրուած եմ յայտնելու Ձեզ, որ Հայաստանի Խորհրդային կառավարութիւնը և բարձր հրամանատարութիւնն կ'երաշխաւորեն ձեզ կատարեալ և անպայման անձեռնմխելիութիւն, եթէ Դուք Ձեր յօժար կամքով կը



հրաժարուիք խորհրդային Հայաստանի գոյութեան հիմքը խախտել:

Կը գրեն ձեզ հաւատացած ըլլալով, որ դուք կը հրաժարիք աննպատակ և անյոյս կռիւ, որովհետև թէ ինձ և թէ ձեզ բաւականաչափ պարզ յայտնի է, որ ոչ թէ միայն սոցիալիստները, այլ Հայաստանի բուրժուա-ազգայնականները, եթէ անոնք առաջնորդուին այն ցանկութեամբ, թէ պետք է պաշտպանել և ամրապնդել հայ ժողովուրդը, պատմականօրէն պիտի միանան խորհրդային Ռուսաստանին և խորհրդային Ատրբէջանին, որովհետև միակ այդ շաղկապունն է (բլոկ), որը կրնայ հիմնաւոր կերպով ապահովել խաղաղութիւնը և տնտեսական յառաջդիմութիւնը Անդրկովկասի մէջ: Եթէ մենք յամառօրէն ամէն անգամ ձեռք կը մեկնենք ձեզ՝ ատիկա կ'ապացուցանէ միայն այն փաստը, որ մենք համոզուած ենք, թէ ձեր շարժումները ոչ մէկ հիմք չունին և միայն ցոյց կու տայ մեր ազնիւ ցանկութիւնը վերջ տալու արիւնահեղութեան, քանի որ ձեզ ևս շատ պարզ յայտնի է, որ եթէ կարմիր բանակը չունենար ալ ժԱ. զօրաբանակը, Ատրբէջանի և Հայաստանի զօրամասերը, բաւական էին աննշան զօրաճակատէ մը զօրաբաժին մը շարտել՝ զէնքի ոյժով վճռելու խնդիրը և ատիկա մեզ համար ոչ մէկ դժուարութիւն չներկայացներ: Մենք ազնուաբար կը ցանկանք առանց արիւնահեղութեան վերջ դնելու այդ պատմական թիրիմացութեան: Եթէ ես իմ սոյն նամակով ձեզ հետաքրքրող բոլոր հարցերը չեմ շօշափեր, այլև Ջանգեզուրն խորհրդային Հայաստանի հետ միացնելու պայմանները ճշտութեամբ գծելու համար կը խնդրեմ ձեզմէ որևէ մէկը ուղարկել Շուշի, ուր ես կը սպասեմ ձեր գալստեան: Ինքնըստինքեան հասկանալի է, որ ես ժԱ. զօրաբանակի պատուով կ'երաշխաւորեմ եկող ընկերին կատարեալ անձեռնմխելիութիւն և վերադարձ Գորիս:

ԺԱ. զօրաբանակի Զինուորա-յեղափոխական խորհրդի անդամ  
ՅԵԿԿԵՐ

15 Փետրուար 1921

«Կարմիրներու լիազօրուած անդամի հեռագրով ստացած տեղեկութիւնը միանգամայն զուրկ է ճշմարտութենէ, որովհետև մինչև Փետրուար 15 արդէն բանտարկուած էին Հայաստանի բոլոր ականաւոր գործիչները ու աչքի ինկող սպաները և գնդակահար-

ուած կամ սպաննուած էին 22 հոգի, որոնց անունները Երևանի կոմմունիստները թռուցիկով յայտարարեցին դեռ Փետրուար 14-ին»<sup>1</sup>:

1921 Փետրուար 24-ին ի պատասխան ԺԱ. Կարմիր բանակի հրամանատարութեան գրութեան Նժդեհի հետևեալ բաց նամակը կը դրկէ.

**ԲԱՏ ՆԱՄԱԿ**  
**ԺԱ. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԶՕՐԱՅՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ**

Բաքու

*Մոռանանք, մի վայրկեան մոռանանք, որ մենք կռուող կողմեր ենք:*

*Մոռանանք, որ այն դուք էիք, որ խաբելով աւարի ու աւերածութեան մատնեցիք ըմբոստ ու ազատասէր Ղարաբաղը, Սիւնիքն ու Վայոց-Ձորը, սոցիալական քայքայումի հետ անաստածօրէն առաջ տարաք այդ լեռնաշխարհը լցնող ժողովրդի գլխատման տխուր գործը:*

*Մոռանանք և այն, որ Դուք էիք, Դուք, որ արհամարհելով յեղափոխական էտիկայի ամենատարրական պահանջները՝ զինակցելով Արևելքի գերազանցօրէն թէակցիոն, կուլտուրաւեր ու հայաջինջ ուժերի հետ՝ երեկուայ հանրապետական շայաստանը Քենալստան դարձրիք:*

*Մոռանանք նաև այն, որ Ձեր հայ աշխատաւորութեան հասցրած չարիքից ու հայահալած և հակա-յեղափոխական քաղաքականութիւնից խթանուած Սիւնեաց, Արցախի ու Վայոց-Ձորի ռազմական ուժերը մի գիշեր իջան լեռներից ու մաքրեցին իրանց երկիրը, աշխարհի չորս քամիներին տալով Ձեր բարբարոս զօրամասերը:*

*Մոռանանք այդ բոլորը, չնայած որ պատմութիւնն ու Ձեր ձեռքով խաչուած հայ ժողովուրդն երբեք չի մոռանայ, մոռանանք, կրկնում են, և խօսենք որպէս երկու օրեկտիւ կողմեր:*

*Սկսում են, լսէք:*

*Ձեր վերջին նամակի մէջ դուք առաջարկում էք ինձ բարեկամանալ սովետական շայաստանի կառավարութեան հետ և միամտօրէն հարց էք տալիս՝ թէ ո՞ւմ վրայ են դրել յոյսս:*

---

<sup>1</sup> Արնոտ գիրք, էջ 105:

Սովետական Հայաստան չկայ: Կայ քաղաքականապես բռնաբարւած Երևան անունով մի քաղաք և մէկ ու կէս տասնեակ գիւղեր՝ այսինքն տերրիտորիայ մի արտուրդ:

Ձեր դավադրութեամբ Հայաստան երկիրը դարձաւ Քէմալ-ստան: Միամիտ չլինենք ենթադրելու, որ Մոսկուայի Ձեր վերջին կոնֆերանսը մուկ չի ծնելու: Ձեր ցանկութեամբ տաճիկները մտան Հայաստան, սակայն Ձեր հրամանով նրանք չպիտի հեռանան և խոստովանենք, որ եթէ Քէմալիստները քաղաքական հնարաւորութիւն ունենան շարժելու դպէ Երևան՝ Ձեր, միայն թալանի մէջ մարզուած և Ղարաբաղում կին ու երախաներ կոտորելու գործում մասնագիտացած զօրքերը չեն, որ պիտ պաշտպանեն Ձեր ձեռքով գլխատուած ու զինաթափ եղած հայ աշխատաւորութիւնը: Չգիտեմ նման պայմաններում արտուրդային Սովետական Հայաստանի հետ բարեկամանալը միտք կունենա՞յ: Թւում է, որ իմ՝ Երևանի կառավարութեան հետ բարեկամանալուց կը շահի միմիայն Ձեր երեկւայ «բարեկամ», այսօրւայ «թշնամի» Քէմալը, որովհետև հայ զինուորն անմարտունակ փալաս է դառնում, երբ անգամ ձևականօրէն դառնում է կամ կարմիր, բոլշևիկեան, սովետական: Ձեր հարցին, թէ ո՞ւմ վրայ են դրել յոյսս, Անտանտայի, թէ Վրաստանի, պատասխանում եմ – միայն իմ ազատասէր ժողովրդի յաղթական ռազմունակութեան՝ իմ երկրի բարձր լեռների և իմ պաշտպանված Արդար Դատի վրայ:

Ուժեղը նա չէ, որ ուտող բերաններ, երկոտանի մեքենաներ, թալանչիներ կամ թնդանօթներ ու արձիճ շատ ունի, բայց սիրտ ու հոգի չունի և սրբութիւններ չէ ճանաչում:

Ուժեղը նա չէ, որն ոչնչով չէ տարբերում կարմիր ցարերից, սուլթաններից, որը խաբեբայութեամբ դրախտ և հազար ու մի բարիքներ բերելու խոստումներով մտնում է մի երկիր, թալանում, սոցիալապէս զլխատում, ապստամբութեան մղում ժողովրդին և թողնում, փախչում...

Ուժեղը նա չէ, որ ամբողջ բրիգադաներով յարձակում է Շիւան-Չոր անունով մի գիւղի վրայ և քառասուն օր անընդհատ թնդանօթներից և գնդացիրներից արձիճ ու կրակ է թափում հարիւրի հասնող ապստամբների գլխին և նահանջելուց առաջ ասպետութիւն չի ունենում ծունկի գալու ապստամբների դիրքերի

առաջ և ասելու. «Փառք Ձեզ, ապստամբներ, որ այդպես կռուել և ձեր երկիրն ու մարդկային իրաւունքները պաշտպանել գիտէք»:

Ուժեղը նա չէ, որի ուժերի ականգարողը կազմում են՝ կարմիր սուտը, խաբէքայութիւնն ու պրովակացիան, որը չգիտէ, որ գերմանական զրահապատ բռունցքը ջարդ ու փշուր դառաւ, զինաթափ եղաւ բէլգիական տրագիկ ու հերոսական հոգու առաջ:

Ուժեղը նա չէ, որ յանուն իր աննշան յաջողութիւնների, իր Պիւռոսեան յաղթութիւնների դաշնակցում է անգամ սատանայի հետ, որը լինելով Նաբոլէոնի խեղանկարը՝ Մաքիավելին է իսկական:

Ուժեղը նա չէ, որը կազմակերպուած մեծ թալանն ու մեծագոյն ոճիրն անուանում է Ռուսական Մեծ Յեղափոխութիւն, որը խելագար հալածանք ու տերրոր է յարուցել անգամ սոցիալիստական ինտելիգենցիայի դէմ, որն առանց ամօթի ու խղճի խայթի իր ամենավուրգար-քրեական գործիչներին, ինչպիսիք են սադիստ Ատթարբէգեանն ու քծնող Ալիսը - անուանում է ռուսական Մարաթ:

Ուժեղը նա չէ, որը օրական եօթն անգամ վերև ու ներքև թքել գիտէ, բայց կրծքի վրայ, գրպանի խորքում ռուսական խաչն ու Տիրամօր պատկերն ունի:

Ուժեղը նա չէ, որի յաղթութիւնները ռազմական լինելով՝ բարոյական չեն:

Դուք չգիտէք, թէ ո՞վ, ինչպէ՞ս և ինչո՞վ է յաղթում:

Լսէ՛ք, ասեմ:

Գիշեր է: Մի քանի զինուորներ Գորիսի մի այգում սուր խրամատաշինական գործիքներով փոսեր են փորում: Գերեզմանները պատրաստ են: Ահա բանտի դռներից դուրս նետեցին երկու ականաւոր սոցիալիստների: Դատապարտուածները գիտեն, որ իրենց տանում են հորին յանձնելու, բայց չգիտէին, որ պիտի մորթեն: Սօսեցրին փոսերին:

Մի քանի սրեր բարձրացան մթութեան մէջ ու իջան: Սոցիալիստներից մէկը գլխատուած էր, իսկ միւսի ձախ թևը կտրուած:

«Սրիկաներ, սպանէք, կտրէք միւս թևս էլ, բայց գիտցէք, որ դուք ձեզ էք սպանում: Ցարն էլ ձեզ պէս վարուեց ժողովրդի պաշտպանների հետ ու մեռաւ բռնաբար»:

- Սրիկաներ, մարդասպաններ,- վերջին անգամ գոռաց Շիրինն ու սրերի ծանր հարուածներից գլորուեց փոսը:

- Սրիկաներ, մարդասպաններ,- վախվխելով ու կամացուկ կրկնեց խաբուած ժողովուրդն ու սեղմեց բռունցքը:

\* \* \*

Կռիւ էր: Ձերոնք, միացած Խալիլ-փաշայի թափուրներին, թնդանօթների ու գնդացիոնների հետ կախուել էին Ալանգեագից Կարճևան գիւղի վրայ: Երրորդ օրն էր, ինչ ապստամբները հեգնում էին թշնամու բոլոր ճիգերն ու փորձերը և առատ հունձ անում:

Ջուր չկար, ծարաւ էինք: Կարճևանցի հայ կինը, կուժը լիքը սառը ջրով բարձրանում էր դէպ մեր դիրքերը. թշնամին նկատելով՝ գնդացիրային կրակ բացեց նրա վրայ: Հարիւրաւոր գնդակներից մէկը փշրեց հայ կնոջ կուժը: Կինը նորից իջաւ Արաքսի ափը, վերցրեց մի ուրիշ կուժ, լցրեց ջրով ու շարժուեց դէպ մեր դիրքերը: Էլի նա ընկաւ կրակի տակ, թեթև վիրաւորուեց ու կորցրեց իւր կուժը: Հաւատացած էինք, որ նա այլևս չի վերադառնայ, բայց մի քիչ անց, նորից պաշտելի հերոսուհին, կուժն ուսին, բարձրացաւ սարը:

Վիրաւորուած հայ կնոջ ներկայութիւնը կրակով ու վրէժով լցրեց ապստամբների հոգիները: Կէս ժամ անց թշնամին մեր սարերից կրկնակոխ փախչում էր:

Ահա իմ ուժը:

\* \* \*

Կուրոչկին իր հեծելազօրքով եկել, պաշարել էր Երիցվանիկ գիւղը: Հրամայուած էր ցերեկը չպատասխանել թշնամուն: Ապստամբները սրտատրոփ սպասում էին խաւարն իջնելուն, իրենց հարագատ տարերթին, երբ հայտտ Ղափանցին թշնամու քանակի մասին հարց տալու փոխարէն, հարցնում է՝ ուր է թշնամին:

Գիշեր է: Գայլավաշտերը սպասում են ազդանշանին՝ սկսելու իրենց ուժանակային գրոհը: Լռութեան մէջ բարձրացաւ ապստամբներից մէկի մահն արհամարհող, վտանգն անգիտացող երգը: Վաշտերն դուրս թռան իրենց խրամատներից, գոռ ուռռան, որին հետևեցին դինամիտային պայթիւնները:

- Յանձնուում ենք, յանձնուում ենք,- գրեթէ ճչաց պանիկայի մատնուած թշնամին:

*Լոյսը բացուեց: Մեր ձեռքն էր մնացել թշնամու ուժերի կիսից աւելին, մի քանի հարիւր հրացան ու երկու տասնեակից աւելի գնդացիներ:*

*Մենք այսպէս շատ անգամ ԵՐԳՈՎ ենք յաղթում:*

\* \* \*

*Միւնիքի երկնքի տակ բացօթեայ հաւաքուած են հազարաւոր կանայք քաղաքից ու գիւղերից: Միտինգ է: Խօսում է մէկը: Դիմենք Սպարապետին, եթէ նա այսօր մինչև երեկոյ չը քշի թշնամուն Ջաբուղից էլ դէն, մենք կը յարձակուենք դեղատների վրայ՝ մեր մէջ կը բաժանենք եղած թոյնը և անձնասպանութեամբ վերջ կը տանք մեր կեանքին, որ մէկ էլ կարմիր գինուորի կամ սև ասկեարի երեսը չտեսնենք:*

*Չերոսական այդ որոշումը յայտնուեց զօրքին:*

*Մութը դեռ չէր ընկել, երբ սուրհանդակն աւետեց, որ ջարդուած թշնամին ետ է շարտուած Աւդալլար:*

*Ահա՛ թէ ինչով և ինչպէս ենք յաղթում մենք:*

\* \* \*

*Այսպէս, եկաք, խաբեցիք, թալանեցիք, ապստամբեցրիք ժողովրդին ու քշուեցիք: Դուք պարտուեցիք, որովհետև պէտք է պարտուէիք, որովհետև դա պատմութեան վճիռն է, որովհետև մարդկութիւնն է այդպէս ցանկանում:*

*Դուք պարտուեցիք, որովհետև Դուք բարոյապէս պարտուած էք եղել հէնց ձեր քանդուած ու գլխատուած բուն հայրենիքում – Ռուսաստանում, որովհետև ձեր ամէն մի քայլը, ամէն մի գործը բարոյական մի պարտութիւն է, էտիքական մի անձնասպանութիւն:*

*Միւնիքը յաղթեց ձեզ, նա պէտք է յաղթէր, որովհետև վարձկան գինուորականների տեղ նա ունի երկու հարիւրի չափ ժողովրդական ուխտուած վաշտապետներ, նոյնքան Դաւիթ-բէգեան գայլավաշտեր, իրեն ապաստան բարձր լեռներ, որքան բարձունք, այնքան գնդացի (միմիայն ձեր զօրքերից խլուած 200-ը), խոր ձորեր թշնամու համար գերեզման, թնդանօթներ, առատ ռազմամթերք, հազարաւոր փթերով ուժանակ, ծով ատելութիւն դէպ իր թշնամին, ծով սէր դէպ հայրենի երկիրն ու արիւնով ձեռք բերուած*

ազատութիւնը. բոլոր ճակատներում անյատակ մեշօկներ, որոնք բերանբաց սպասում են մեր երկրի թշնամիներին ու գրանիտէ հաւատ, որ ապստամբուած ժողովրդին միայն Աստուած կարող է յաղթել:

Խորամանկ Սաքիավելին էլ չի օգնի Ձեզ: Ձեր լաւագոյն մոտեռն զէնքերը – կարմիր սուտն, չեղած դրախտն էլ չեն փրկիլ Ձեզ, որովհետև այդ զէնքերով միայն մի անգամ կարելի է յաջողել: Ձեր մեղրամիսն անցած համարէք: Խոստացած դրախտի տեղ դժոխք, հազար ու մի բարիքների փոխարէն սով, սիֆիլիս, արիւն, արցունք կոտորած, Քէմալ, Քէմալստան բերիք հայ աշխատաւոր-ուրօքան համար:

Եզրելով նամակս, աւելցնում եմ. իզուր էք ենթադրում, որ ես ցանկութիւն ունեմ պայթեցնելու Երևանն ու մէկ ու կէս տասնեակ գիւղերը, որոնց վզին զոռով է դրուած սովետական լուծը, եթէ Ձեր Ղարաբաղում սկսած բարբարոսութիւններով չստիպէք ինձ անելու այդ քայլը<sup>1</sup>:

Ց'գրութիւն:

Ինքնավար Սիւնիքի Սպարապետ ՆժԴԵՅ

Գորիս, 24 Փետրուար 1921

---

<sup>1</sup> Սպարապետ Նժդեհի սոյն և նախընթաց երկու նամակները ֆրանսերէն առանձին գրքոյկով հրատարակուած են Թէիրան, 1921:

## X ՎԱՅՈՑ ՁՈՐԻ Ա. ԳՐԱԻՈՒՄԸ

*Կոչ ազատ արձակուած մեծամասնական ռուս գերիներու.– Վայոց-Ձորի առաջին գրաւումը.– Մեծամասնական ինը հարիւր գերի.– Խանդավառ և պատմական հանդիսադրութիւն մը Գորիսի մէջ.– Ինքնավար Սիւնիքի կառավարութեան մէկ յայտարարութիւնը.– 3.3. Դաշնակցութեան Գորիսի Կոմիտէին մէկ հեռախօսագիրը սպարապետ Նժդեհից.– Վայոց-Ձորի զիւղացիական համագումարի նախագահութեան շնորհաւորականը.– Համօ Օհանջանեանի մէկ նամակը.– Փետրուարեան յեղափոխութիւնը և Վրացեանի մէկ նամակը.– Երևանի Բ. անկումը.– 12.000 զաղթականութիւն Սիւնիքի մէջ.– Սպարապետ Նժդեհի կոչը Գեղուազցիներու.– Դարաբաղ տեղի կու տայ.– Ի նպաստ զաղթականներու դիմում Պարսից Շահին:*

Երևանի Հանրապետական կառավարութեան անկումէն յետոյ Գեղուազ-Սիւնիքի հիւսիս-արևմտեան այս ճակատը լուրջ սպառնալիքի տակ կ'իյնար:

Գերի ինկած Մեծամասնական զօրքեր շնորհիւ սպարապետ Նժդեհի ներողամիտ և անյիշաչար ոգիին՝ իր դէմ անգամ մըն ալ զէնք չվերցնելու խոստումով ազատ կ'արձակուէին. հակառակ ատոր նոր շարժումը արձակուած զինուորներով է, որ տեղի կ'ունենար սակայն, որոնց Նժդեհ իր հետևեալ կոչը կ'ուղղէ.

### ԿԱՐՄԻՐ ԿՈՉԻԱԾ ԶԻՆԻՐՈՒՆԵՐ

*Դուք գիտէք, դուք ծանաչում էք ինձ: Դուք գիտէք իմ մեծահոգութիւնը, որի շնորհիւ դուք կենդանի մնացիք:*

*Ես նա եմ, որը ջարդել է ձեր ԺԱ. բանակի 28-րդ հետևակ դիվիզեան, քսաներորդ բրիգատան, Կուրոչկինի հեծեալ դիվիզիան, մի քանի կոմունիստական զօրամասեր և տաճկական կեղծ կարմիր ասկետների զօրախումբը:*

*Ես նա եմ, որ հազարաւոր գերիների հետ ձեզնից վերցրել է 100-ից աւելի զնդացիներ, միլիոնաւոր փամփուշտ և տասնեակ հազարաւոր հրանօթներ: Ես նա եմ, որը ձեր ընկնելուց յետոյ խղճաց ձեզ, որպէս ռուս աշխատաւոր զիւղացիութեան զաւակների և փրկեց ձեզ, խլելով ձեզ ապստամբուած և զազազած Ձանգեզուրի խաբուած ժողովրդի ձեռքէն և ուղարկեց Հայաստան:*



Այժմ պարզուրում է, որ ձեզ նորէն հազցրել, զինել և ուղարկել են Դարալագեազ:

Նորէն դուք կոյր գործիք էք դառել մի խումբ քաղաքական շառլատանների ձեռքին:

Նորէն խաբուած ձեր պարագլուխներից՝ դուք ուղղուում էք հայ աշխատաւոր գիւղացիութեան դէմ, այն խաբուած, զխատուած ու տնտեսապէս քայքայուած գիւղացիութեան, որը առանց զգուանքի ու զայրոյթի չի կարողանում յիշել սովետական իշխանութեան սև ուժիւնը:

### ՌՈՒՍ ԲՈԼՇԵՒԻԿՆԵՐ

Քանդուած ու զխատուած Ռուսաստանում, ուր ձեր ժողովրդի արհւն քրտինքով հարստացած ու ճարպակալած պարագլուխները վարձկան չինացիների և լատիշների շտիկներով աշխատաւոր մասսաների ձեռքից ցվերջին պատառ հաց ու վերջին անասունն են խլում, ձեր հայրերն ու եղբայրները, անգամ կանայք, կացիներով ու մահակներով են քշում կարմիր գառնազգեստ զայլերին, մեծամասնականներին:

Այնտեղ, Ռուսաստանում ապստամբած ժողովուրդը արհւն է թափում և ձեզ սպասում օրէցոր, իսկ դուք, խեղճ խաբուածներ, դուք շարունակում էք նեղել, տանջել, կոտորել ձեր բախտակիցներին:

Զգոյ՛շ, զգոյ՛շ եղէք, եթէ մի անգամ էլ անբախտութիւն ունենաք հանդիպելու իմ յաղթական ժողովրդին, գիտցէ՛ք, այլևս իմ մեծահոգութիւնը չի փրկիլ ձեզ:

Զանգեզուրի աշխատասէր, արստամբ ու մինչև ատամները զինուած ժողովուրդը այլևս ձեզ գերի չի վերցնի, այլ ձեզնից խլած գնդացիրներով ձեր մինչև վերջին զինուորը կը կոտորի:

Զգոյ՛շ, ձեր Զանգեզուրի սահմանների մօտենալու նոր փորձերը կը ստիպեն ինձ անցնել Դարալագեազ և այն ժամանակ վա՛յ ձեզ:

Զգոյ՛շ, ինքնավար Սիւնիքի բոլոր ծակատներում իմ անյատակ մեշոկներն են սպասում հայ աշխատաւորութեան բոլոր տեսակի թշնամիներին:

Զգոյ՛շ:

Սպարապետ ՆժԴԵՅ

Գորիս, 1 Փետրուար 1921

Նժդեհ 1921 Փետրուար 14-ին Սիսեանի մէջ զօրահաւաք կը յայտարարէ, 15-ին իր ուժերը կը կեդրոնանան Բազարչայ և 16-ի լուսաբացին արևմտեան ճակատի զօրահրամանատար Եապօնի ղեկավարութեամբ կը շարժուին առաջ, ու գրեթէ առանց գնտակ մը իսկ արձակելու կը գրաւեն Դարալագեազը (Վայոց-Ձոր): Վայոց-Ձորի գրաւումով Սիւնիքի մարտական ուժերը բաց պատուհան մը կը բանային խորհրդային Չայաստանի վրայ:

Նոյն օրը Չայերու ձեռքը կ'իյնան 900 մօտ մեծամասնական գերիներ:

Վայոց-Ձորի գրաւումը խանդավառութեամբ կը լեցնէ Սիւնիքի ազգաբնակչութեան հոգին:

1921 Փետրուար 21-ին Գորիսի Ս. Լուսաւորիչ Եկեղեցիին մէջ շքեղօրէն տեղի կ'ունենայ Սիւնիքի սպարապետութեան յանձնուելիք դրօշակի հանդիսադրութիւնը: Յոգնախումբ բազմութեան մը ներկայութեան սպարապետ Նժդեհի մէջքը կը կապեն օծուած գօտին ու անոր կը յանձնեն Չայկական եռագոյնը, մակագրութեամբ՝ **ԻՆՔՆԱՎԱՐ ՍԻՒՆԻՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԻՑ ԱՆՅԱՂԹ ԱՊԱՐԱՊԵՏ ՆՇՐԵՅԻՆ:**

Նոյն օրը Ինքնավար Սիւնիքի կառավարութիւնը հետագայ կողք կը հրատարակէ.

### ՍԻՒՆԻՔԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՉԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ

*Ամսոյս 21-ին, Գորիսի Ս. Լուսաւորիչ եկեղեցում, հանդիսաւոր մաղթանքից յետոյ, ժողովրդի հոծ բազմութեան և զինուորական վաշտերի ներկայութեամբ, օծուեցաւ Սիւնիքի կառավարութեան կողմից Սպարապետին ղրկուելիք գօտին և դրօշակը, որից յետոյ նախագահը օծած գօտին կապեց Սպարապետի մէջքը և դրօշակը յանձնեց նրան: Չայ՝ ժողովուրդ, այդ օրը և այդ փառաւոր տօնը եզակի տեղ պիտի ունենայ Սիւնիքի համար: Կառավարութիւնը ժողովուրդի անունից յանձնելով Սպարապետին Ազատ Սիւնիքի եռագոյն դրօշակը, դրա հետ նրան յանձնեց և ձեր քաղաքական բախտը, ձեր պատիւը, նամուսի պաշտպանութիւնը, համոզուած լինելով, որ ձեր Սպարապետը, ինչպէս մինչև այսօր, այսուհետև ևս իր հերոսական քաջութեամբ կը շարունակէ փառաւոր յաղթութիւններով ապացուցել աշխարհին, որ հայ ժողովուրդը տոգորուած ազատ և անկախ հայրենիք ունենալու տենչով, պատ-*

րաստ է զոհաբերել այն ամէնը, ինչ հարկաւոր կը լինի՝ հասնելու ցանկացած նպատակին:

Սպարապետն ընդունելով Սիւնիքի պաշտպանութեան դրօշակը, ուխտեց ու երդուեց՝ միշտ բարձր պահել կառավարութեան և ժողովրդի կողմից իրենց յանձնուած դրօշակը:

Սիւնիքի ժողովուրդ, բոլորեցէք ձեր սիրելի Սպարապետի շուրջը, թև ու թիկունք հանդիսացէք նրան, որ կարողանայ կատարել այն ծանր պարտականութիւնը, որը դրուած է նրա վրայ ձեր և իր Հայրենիքի կողմից:

Կեցցէ՛ Սիւնիքի ազատարար Սպարապետ Նժդէհը

Կեցցէ՛ Սիւնիքի ազատարար Հայ ժողովուրդը:

Ինքնավար Սիւնիքի Կառավարութիւն

Գորիս, 1921 Փետրուար 23

Վայոց-Ձորի գրաւման առթիւ Հ.Յ.Դաշնակցութեան Գորիսի կոմիտէն հետևեալ գնահատականը կ'ուղղէ սպարապետ Նժդէհին.

ՀԵՌԱՆՕՍԱԳԻՐ

ՍԻՒՆԻՔԻ-ԳՈՂՁԱՆԻ-ՎԱՅՈՑ-ՁՈՐԻ ՍՊԱՐԱՊԵՏ ՆՃԴԵՀԻՆ  
ԵՒ ԱՐԵՄՏԵԱՆ ՃԱԿՍԻ ԶՕՐԱՅՐԱՄԱՆԱՏԱՐ ԵԱՊՕՆԻՆ

Հ.Յ.Դաշնակցութեան Գորիսի կոմիտէն յանձինս Սիւնիքի բովանդակ հայ աշխատաւորութեան՝ ողջունում է Հայաստանի ազատագրումը Հիւսիսային արջից և Հարաւի բորենուց: Ի զուր չանցան Խուստուպեան լեռներում և Վայոց ձորում գիշեր ու ցերեկ ձեր անդուլ աշխատանքը: Պատմական այս ակտը թող ոսկի տառերով գրուի հայութեան ազատագրութեան փառաւոր պատմութեան մէջ: Բոլոր ընկերներով ողբում ենք ազատագրութեան ճամբին զոհուած մեր անփոխարինելի ընկերներ Վահանի, Սերգէյի, Համազասպի և ուրիշների մահը:

Կեցցէ՛ Հայաստանի ժողովրդական հանրապետութիւնը, կեցցէ՛ մեր անկախութիւնը, կեցցէ՛ ազգի միակ պաշտպան Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, կեցցէ՛ Դաւիթ-բէգեան անյաղթ և քաջարի զինուորութիւնը, կեցցէ՛ Սիւնեաց երկրի արծիւ Նժդէհը:

Հ. Յ. Դաշնակցութեան Գորիսի կոմիտէ

25 Փետրուար, 1921

Փետրուար 25-ին ազատագրուած Վայոց-Ձորի առաջին համագումարի նախագահութիւնը հետագայ խանդավառ տողերը կը գրէ Սիւնիքի սպարապետութեան.

**ԻՆՔՆԱՎԱՐ ՍԻՒՆԻՔԻ ԱԶԱՏԱՐԱՐ ՄՊԱՐԱՊԵՏ  
ՅԵՐՈՍ ՆԺԴԵՅԻՆ**

*Սիրելի սպարապետ, դուք երկար ամիսների ընթացքում և հարազատ Հայկական հանրապետութեան անկումից յետո բարձր և ամուր պահեցիք ձեր ուժեղ ձեռքում ազատ և անկախ Հայաստանի սրբազան դրօշը, որը ծածանուում էր Սիւնեաց Լեռնաշխարհում և դէպի որը ուղղուած էր ամբողջ Հայութեան ուշադրութիւնը: Դուք գերմարդկային ճիգեր թափելով ազատագրեցիք ամբողջ Զանգեզուր-Ղարաբաղը Հայ դաւաճանների և դրսի բռնակալ ուժերի տիրապետութիւնից:*

*Ազատագրուած Վայոց-Ձորի Ա. գիւղացիական համագումարը իր ողջոյնը ուղղելով ձեզ և ձեր զինակիցներին, ցանկանում է ձեզ ոյժ և կորով, նոյն ոգով շարունակելու հայ հայրենիքի ազատագրման և հաւաքման գործը:*

*Կեցցէ՛ք մեր հայրենիքի ազատարար հերոս սպարապետ և ձեր զինակիցները:*

Նախագահ համագումարի  
ԵՂԻՇԷ ԻՇԽԱՆԵԱՆ

Քէշիշքէնդ, 1921 Մարտ 5

Վայոց-Ձորի գրաւումը կը դառնար լաւագոյն առիթը Երևանը իր ապստամբական ձեռնարկին մղելու համար: Իր անձկութեան օրերուն Հայաստանի ժողովուրդը խանդավառութեամբ կը հետևէր Լեռնաշխարհի մղած հերոսական կռիւներուն:

Այդ թուականներուն գրուած Հայաստանի երրորդ վարչապետ Համօ Օհանջանեանի մէկ նամակը պերճախօսօրէն կ'արտայայտէր այդ զգացումը.

*«Սիրելի՛ ընկեր Նժդէհ,*

*Ստացայ 3 Մարտ նամակդ և իսկոյն ուղարկեցի Երևան իբրև առաջին պաշտօնական կտայ Լեռնահայաստանի և Մայր Հայաստանի: Վերջինս հիացմունքով հետևում էր քո և ընկերների հերոսական ըմբոստ կռիւներին և գտնում էր, որ դուք կարողացաք վառ*

*պահել Հայաստանի անկախութեան կայծը, որը այժմ դառաւ մի մեծ բոց և կրակեց ամբողջ Հայաստանը»:*

Ընկերական ջերմ բարևներով  
Քո՝ ՀԱՍՕ ՕՅԱՆՁԱՆԵԱՆ

Ներքին Ախտա, 1921 Մարտ 8

Երևանի Հ. Հանրապետութեան անկումէն վերջ մեծամասնականներու ձեռք առած զսպողական ծայրայեղ միջոցները բաւական չեղան կրաւորական վիճակի մէջ պահելու ժողովուրդը, որ առաջին օրերուն իսկ փորձեց տապալել կարմիր ռեժիմը և անձամբ վարել իր ճակատագիրը:

Հալածանքը որ մեծամասնական կարմիր աղանդաւորներ շղթայազերծած էին քաղաքական և տնտեսական գետնի վրայ արդի իրաւակարգերէ իրենց չափ դժգոհ հոսանքի մը դէմ՝ վրդոված էր ժողովուրդը, որ փետրվարեան յեղափոխութեամբ կը տապալէր խորհրդային նոր կառավարութիւնը:

Փետրուար 20-ին Վրացեան խօսելով Երևանի վերջին դէպքերու մասին Ռուբէն Տէր-Մինասեանի և Նժդեհի հետևեալը կը գրէր.

*«Միրելի Ռուբէն և Նժդեհ,*

*Բոլշևիկները ստեղծած դժոխքը Հայաստանում մի հետևանք ունեցաւ՝ ամբողջ ժողովուրդը ապստամբուեց և տապալուեց նրանց եռապետութիւնը:*

*Ժողովուրդն ամէն տեղ խանդավառ է, և մեզ հետ է: Կազմուած է Հայրենիքի Փրկութեան Կօմիտէ իմ նախագահութեամբ, որ երկրի գերագոյն վարիչն է:*

*Մեր երկրի ամենացաւոտ հարցը պարենաւորումն է և զօրքի կազմակերպումը. բոլշևիկները ամէն բան քանդեցին: Սակայն հաւատում ենք, որ այդ ծանրութեան տակից էլ դուրս կը գանք, ամենայն դէպս վերադարձ դէպի բոլշևիզմը չկայ:*

*Ամբողջ ժողովուրդը կը կոտորւի, բայց էլ չի ենթարկուի բոլշևիկեան ծաղրելի լուծիւն:*

*Եթէ այդտեղ առանձին անհրաժեշտութիւն չկայ, շատ լաւ կլինէր, որ Նժդեհն մի քանի հարիւր Ձանգեգուր-Ղարաբաղցի մարտիկներով անցնէր Երևան ժողովրդի բարոյական թափը ամրացնելու համար: Կը կամենայի, որ Նժդեհն այստեղ պաշտօն ստանձնէր»:*

Ս. ՎՐԱՅԵԱՆ

Երևան, 1921, Փետրուար 20

Մեծամասնականներու ժամանակաւոր պարտութիւնը վերջ կը գտնէր շնորհիւ կարմիր զօրամասերու, որոնք որոշած էին ամէն զնով Երևանը իրենց ձեռքը պահել, և այդ նպատակով կը քալէին առաջ:

Փրկութեան Կոմիտէի կառավարութեան մեծամասնականներու հետ ունենալիք ընդհարումներու աննպաստ ելքը՝ Չանգեզուրի ուղղութեամբ միայն կրնար փրկութեան ուղի մը բանալ իրեն, ատոր խորհապէս գիտակցելով՝ Վրացեան Մարտ 25-ին հետևեալ գրութիւնը կը փութացնէր սպարապետ Նժդեհին և Դարալագեազի ուժերու հրամանատար Եապօին.

ՍԻՒՆԵԱՅ ՍՊԱՐԱՊԵՏ ՆԺԴԵՅԻՆ ԵՒ  
ԴԱՐԱԼԱԳԵԱԶԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ԵԱՊՕՆԻՆ

*Գրաբերներս լիազօրուած են ձեզ տեղեկացնելու այստեղի կացութեան մասին և մեր կողմից անելու մի շարք առաջարկութիւններ: Ես խնդրում եմ նրանց հաւատալ և ամենայն լրջութեամբ վերաբերուել:*

*Մի բանի վրայ միայն առանձնապէս շեշտում և խնդրում եմ ուշադրութեան առնել. Դարալագեազ-Չանգեզուր-Երևան գծի բացումը մեզ համար շատ է կենսական և անյետաձգելի, ինչպէս նաև մարտական օժանդակութիւն հասցնելը: Ամէն զնով պէտք է կապւէք մեզ հետ և ճանապարհ ապահովէք:*

*Մնացեալը կը պատմեն:*

Ձերդ՝ Ս. ՎՐԱՑԵԱՆ

Երևան, 25 Մարտ 1921

Սոյն գրութիւնը կ'ստիպէ սպարապետութեան Սիսեանի և Դարալագեազի ուժերով տեղահանել Դարալագեազի և Չանախչուի միջև ինկած թուրք գիւղերը և այսպէսով ապահովել ճանապարհը Երևանի նահանջող զօրքի և մտաւորականութեան համար:

Արդարև, Երևանի ուժերի 40 օրուայ կռիւներէ յետոյ ստիպուած տեղի կու տային մեծամասնական զօրքին առջև և իրենց հետ միասին հայ մտաւորականութեան ստուար մէկ մասը՝ 12000 հոգի, Երևան-Դարալագեազ գծով կը քաշուէին Սիւնիք:

Հայաստանի Հ. Կառավարութեան առաջին անկման նախօրեակին Սիւնիքի սպարապետութեան և կամիր հրամանատարու-

թեան միջև տեղի ունեցող բանակցութիւնները կը մնային անհետևանք: «Միւնիքը չէր կարող տեղի տալ,- կը գրէ Նժդեհ,- քանի դեռ տաճկական զօրքերը գտնուում էին Ալէքսանդրապոլում, Շարուրում, Նախիջևանում, միշտ պատրաստ՝ ցանկութեան դէպքում շարժուելու Միւնիքի վրայ: Չէր կարող նաև տեղի տալ այն պատճառով, որ ամբողջ հայ մտաւորականութիւնը գտնուում էր բանտերում՝ մահուան սպառնալիքի տակ»<sup>1</sup>:

Մինչև այդ 12000 գաղթականութիւնը կու գար տխուր և անխուսափելի անակնկալներու մատնելու Միւնիքը, որ երկու տարիէ վեր շարունակ՝ բոլոր ճակատներու վրայ կը կռուէր գերազանց ուժերու դէմ:

Ստեղծուած կացութիւնը բաւական լուրջ էր: Տնտեսապէս քայքայուած՝ Միւնիքին այժմ վիճակուած էր իր եղբայրական գիրկը բանալ հայ մտաւորականութեան, որ նահանջի ուղիին բռնած՝ կը հեռանար այն հողէն, որուն վրայ ծնած էր և որուն ազատագրութեան ի խնդիր պայքարած ու տառապած էր տարիներ շարունակ:

Ստեղծուած նոր կացութիւնը խորապէս կը մտահոգէր Ջանգեզուրի օրուայ ղեկավարները:

Գաղթականութեան կարաւանը Գենուազ կանգ առած էր ու կը պատրաստուէր անցնիլ Երասխի վրայով Պարսկաստան:

Նժդեհ 1921 Ապրիլ 15-ին հետևեալ կոչը կ'ուղղէ Գենուազի ղեկավար մարմիններուն ու ժողովուրդին.

ԳԵՆՈՒԱԶԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԶԻՆԻՈՐՆԵՐԻՆ,  
ԳՈՐԾԱԴԻՐԻՆ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԻՆ

*Երևանի շուրջը տեղի ունեցած կռիւների պատճառով կառավարութիւնը քաղաքից դուրս է բերել անգէն ու կռուի անընդունակ հասարակութեան մի մասը, դուրս եկածների մէջ է հայ ինտելիգենցիայի հարիւրին իննսունը: Հարիւրներով ուսուցիչներ, ինժիններներ, տեխնիկներ, փաստաբաններ, քաղաքական գործիչներ, ուսանողներ և այլն:*

---

<sup>1</sup> Տես «Իմ խօսքը թէ ինչո՞ւ զէնք բարձրացրի խորհրդային զօրքերի դէմ», «Նոր Արշալոյս», 1923, Բ. տարի, թիւ 11-12:

*Ամիսներ առաջ հերոսական Գեներալը փրկեց հայ ցեղի ու պատմութեան պրէստիժը, այսօր նա պէտք է փրկէ հայ ժողովրդի սիրտն ու ուղեղը՝ նրա մտաւորականութիւնը: Այդ պատմական ու վեհ խնդիրն հայ ինտելիգենցիայի սովից ու թշնամու սրից փրկելու սրբազան գործը Ձեզ է տրոււմ:*

*Յաջողութիւն ձեզ:*

Զօրավար ՆԺՂԵՅ

Տաթևի վանք, 1921 Ապրիլ 15

Խրախուսական ոչինչ կար նոյնպէս Ղարաբաղի ճակատին վրայ: Երևանի երկրորդ անկումով խորտակած էր ապստամբ Ղարաբաղի կռուելու տրամադրութիւնը:

Մեծամասնականներու հետ սկսուած բանակցութիւնները և Երևանի նահանջին հետևանքով գաղթականներու ներկայութեամբ երկրին ներսը ստեղծուած շփոթ կացութիւնը հնարաւորութիւն չէր տար Սիւնիքի սպարապետին՝ անձամբ այդ շրջանը անցնելու և կռիւներ ղեկավարելու, իսկ տեղացիք կողմնակից էին զիջելու:

Ապրիլ 8 թուակիր իրենց հաղորդագրութեամբ Լեռնային Ղարաբաղի զինուորական հրամանատարն ու նահանգապետը կը գրէին սպարապետ Նժդեհին.

*«Տեղական ապստամբ զինուորութեան մի մաս արդէն փախել և միացել է թշնամուն, նոյնիսկ ականաւոր մարդիկ, իսկ մի մասն էլ զբաղուած են իրենց դաշտային աշխատանքներով: Դիրք-ապահութիւնը տանոււմ են Ձանգեզուրի զինուորութիւնը և տեղական հին հալածուած և փախստական 20-30 հոգի»:*

Փոխ-Գլխապետ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ

Սարինշէն, 8 Ապրիլ 1921

Սոյն գրութեան ետին Ա. Բ. Սիւնեցի կ'աւելցնէ. *«Հաստատոււմ են փոխգլխապետի ներկայ զեկուցումը: Վտանգը մեծ է և մօտ, միմիայն դուք կարող էք ճանապարհը հարթել և երկրին տիրանալ, բաւական է ձեր անունը, որից սոսկոււմ է ամբողջ Կովկասը...»:*

Ղարաբաղ ականայ ինքզինքը պիտի ենթարկէր մեծամասնական մականին: Սիւնիքի ոյժերը հետզհետէ կը պարտաւորուէին քաշուիլ դէպի Ձանգեզուր:

Ապրիլ 19-ին Բուճ Ձանգեզուրի ուժերու հրամանատար փոխ-գնդապետ Ա. Ղարաբաղ գտնուող Ձանգեզուրեան չորս վաշ-



տերու նահանջի գիծը ապահովելու համար կը յարձակի Ղարաբաղի և Ջանգեզուրի միջև ինկած շրջանի թաթարական քանի մը գիւղերու վրայ, որոնք աւելի քան սպառնական կեցուածք մը ցոյց տալ սկսած էին վերջին տեսնները:

Սպարապետութեան շտաբի պետը նոյն օրը կը հեռագրախօսէր իր սպարապետին.

ՀԵՌԱԽՕՍԱԳԻՐ  
(268)

Բագարչայ Պ. Սպարապետին

*Առաւօտեան մեր քաջարի զինուորները մի գոռ ուռայով գրաւեցին մեծամասնականներին օժանդակող և դէպի մեզ վատ տրամադրուած Չինարլու, Մազրթտու, Բալտրդան և Թուրաբի գիւղերը: Փախչող թշնամին հետապնդուում է:*

Գլխապետ ՆԱՐԻՆԵԱՆ

Կոռնձոր, 19 Ապրիլ 1921  
(առաւօտ, ժամը 7-ին)

Այս յաղթութենէն վերջ Ղարաբաղ գտնուող չորս վաշտերը անվտանգ կ'անցնին Ջաբուղ գետը<sup>1</sup> և կը քաշուին Ջանգեզուր:

Ստեղծուած անել դրութեան վերջ մը տալու և գաղթականութիւնը Արաքսի Պարսկական ափը փոխադրելու և Սիւնիքի սպառնացող վերահաս վտանգը կանխելու համար սպարապետ Նժդեհի հետևեալ գրութեամբ թոյլտուութիւն կը խնդրէ Պարսից Շահէն.<sup>2</sup>

ՆՈՐԻՆ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻՆ  
ՆՈՐԻՆ ԱՐԵԳՆԱՓԱՅԼ ՇԱՅՆՇԱՅԻՆ ՅԱՏՐՊԱՏԱԿԱՆ  
ՇԵՐԴ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ

*Ձերդ Արքայական Բարձրութեան քաջ յայտնի է, որ մօտ մի տարի է ինչ իմ ժողովրդի ազատագրութեան համար ես անողոք կռիւ եմ մղում Անդրկովկասի շէն, վաճառաշահ քաղաքներն ու*

<sup>1</sup> Ջաբուղ գետը սահման կը կազմէ Ղարաբաղի և Ջանգեզուրի:

<sup>2</sup> Նոյն նպատակով դիմումներ կը կատարուին նաև Պարսկաստանի Եւրոպական պետութեանց ներկայացուցիչներուն:

աւաններն աւերակների վերածող և բոլոր ժողովուրդներին ստրկացնող բոլշևիկ կոչուած տարրի դէմ: Ռուսական դիւիզիաները միացած տեղական վատահոգի և հայրենիքին դաւաճանող ժողովրդի տականքների հետ, յոխորտանքով ուռք դրին Լեռնահայաստանի սահմաններում, բայց իմ քաջ և աներկիւղ ժողովրդի գոռ վաշտերին բախուելով՝ հազարներով իրանց դիակները փռեցին մեր լեռներում և անդնդախոր ձորերում, նրանց թշուառ մնացորդները հազիւ հազ կարողացան փախչելով իրանց կեանքն ազատել ժողովրդի ցասումից: Վերջնականապէս մաքրելով Լեռնահայաստանը բոլշևիկ բանդաներից և ազատելով երկիրն վերջնական կործանումից՝ իմ կուռ բանակ կազմող ժողովուրդը միաժամանակ ազատում է և մեր դարաւոր հարևան, յաւէտ համակրանքի արժանի Պարսկաստանի բարեկեցութիւնը և անսասանութիւնը պաշտպանելով նրա հիւսիսային սահմանները բոլշևիկների աւերածութիւնից ու սոսկումներից: Իմ ժողովրդի հետ ես ուխտել եմ և անդառնալիօրէն վճռել, ինչ զնով ուզում է թող լինի, մինչև վերջին շունչը մաքառել այդ մարդ բորենիների դէմ, զերծ պահել մեր երկիրն ու դրկից դարաւոր հարևան ու չքնաղ Պարսկաստանը նոր վանդալների - բոլշևիկների ներսխուծումից:

Ես կարծում եմ, որ Ձերդ Արքայական Բարձրութիւնը աչքի առաջ ունենալով մօտ անցեալի իմ գործունէութիւնը ամբողջ կուլտուրական աշխարհի այդ նոր թշնամիների դէմ, համոզուած կը լինի, որ անսասան և անշեղ ես պիտի շարունակեմ իմ բռնած ընթացքն և ապագայում յօգուտ երկու հարևան ժողովրդների:

Ձերդ Արքայական Բարձրութեան պատկերացնելով Լեռնահայաստանի ներկայ դրութիւնը՝ միաժամանակ ես դիմում եմ Ձերդ Բարձրութեան մի խոնարհ խնդրով և հաւատացած եմ, որ երկու երկիրների փրկութեան և շահի տեսակէտից բարի կը լինէք առանձին ուշադրութիւն դարձնել իմ խնդրին և Ձերդ Արքայական Բարձրութեան վեհանձնութեամբ ու բարեսրտութեամբ կը բարեհաճէք յաջող ընթացք տալ:

Երևանի շրջանի այն մասերից, ուր դեռևս բոլշևիկներն իրանց աւերածութիւնն են կատարում և սրածութիւնը տարածում, հայ ինտելիգենտ մտաւոր ոյժը, որ մինչև այսօր աննկուն պայքար է մղել նրանց դէմ, չկարողանալով տանել բոլշևիկների կոտորածն ու լլկանքները, հեռացել և պատսպարուել է Լեռնահայաստանում:

Բայց որովհետև Լեռնահայաստանը այս տարի բուշահիվանդների թալանի և բռնագրաւումների շնորհիւ գրկուել է իւր քրտինքով աշխատած հացի և այլ մթերքների պաշարից, ուստի այդ գաղթած մտաւորականութիւնն իւր մէջ պահելու և կերակրելու հնարաւորութիւնը չունի. այդ պատճառով խոնարհաբար խնդրում են Ձերդ Արքայական Բարձրութեան, կարգադրել թոյլ տալու այդ ինտելիգենտ ոյժերին, որոնք թւով 5000 հոգի են և բաղկացած են մեծամասամբ պրոֆեսսորներից, ինժինեըներից, տեխնիքներից, ուսուցիչներից, բժիշկներից և իրաւաբաններից, անցնելու հիւրընկալ Պարսկաստանի հողն և ժամանակաւորապէս պատսպարուելու Ձերդ Արքայական Բարձրութեան վեհաշուք հովանու տակ, Թաւրիզում և նրա շրջակայքում, մինչև որ հանգամանքները թոյլ կը տան նրանց կրկին անգամ վերադառնալ իրանց հայրենիքը: Հարկաւոր են համարում աւելացնել, որ այդ ինտելիգենտ ոյժերը ծանր բեռը չեն լինել մեր բարեկամ Պարսկաստանի համար, որովհետև դոքա ունեն նիւթական ապահովութիւն իրանց միջոցներով ապրելու: Բացի այդ Պարսկաստան գաղթող ինտելիգենցիան ամբողջապէս համակուած լինելով հակաբուշահիվանդ ուղղութեամբ և նրանց հակառակորդը լինելով՝ նոյն տրամադրութիւնը կը տարածեն նաև Ձեր երկրում, որով մեծապէս նպաստած կը լինեն Ձեր խաղաղատէր ժողովրդին գերծ մնալու բուշահիվանդներից և թոյնից:

Ես յոյս ունիմ, որ ինչպէս դարերի ընթացքում անմոռաց Պարսկաստանի Շահնշահերի սիրեցեալ հայրենիքը միշտ սրտաբաց հիւրընկալել է հայ տառապեալ ժողովրդին, ներկայ պատմական հանգամանքներում ևս, երբ երկու երկիրների քաղաքական շահը պահանջում է միասին համերաշխ գործելու ընդդէմ ընդհանուր թշնամու, նրա վեհաշուք Արքայական Բարձրութիւնը թոյլ կը տայ այդ ինտելիգենտ գաղթական ոյժերին ժամանակաւորապէս վայելելու Պարսկաստանի հիւրընկալութիւնը, որով միջոց տուած կը լինիք ինձ աւելի ազատ և համարձակ գործելու մարդկութեան թշնամի բուշահիվանդների դէմ:

Լեռնահայաստանի Սպարապետ ՆժԴԵՅ  
Գլխաւոր շտապի պետ ՆԱՐԻՆԵԱՆ

Գորիս, 26 Ապրիլ 1921

Մինչև թեիրանի կառավարութենէն գաղթականութեան Պարսկաստան անցնելու մասին պաշտօնական արտօնութիւն սպասելը՝ Մեհտի Խան բացարձակապէս ապահով իր կառավարութեան դէպի սպարապետ Նժդեհը ունեցած լաւագոյն տրամադրութիւններուն, կը բանայ գաղթականութեան առջև Պարսկաստանի դուռները իր հետագայ գրութեամբ.

*«Մեծանուն գօրավար Պ. Նժդեհին,*

*Ներկայ գաղթականութիւնը ամէն մի յարմարութեամբ ես տեղափոխում եմ Պարսից տերիտորեան ոչ թէ համաձայն բարձրից ստացուած հրահանգների ու ցուցմունքների, այլ ինքս ինքնաբերաբար խոր և բարձր գնահատելով Ձեր հռչակաւոր անունը և պրեստիժը, որովհետև ես եմ եղել ականատեսը և այն միակ ներկայացուցիչը Պարսից կառավարութեան, որ գտնուելով այստեղ տեսել և իմացել եմ Ձեր կատարած մեծ քաջագործութիւնները: Ես պատրաստ եմ մատուցելու Ձեզ ամէն մի ծառայութիւն, ինչ որ վայել է Ձեր անուան վեհութեան»<sup>1</sup>:*

Խորին Յարգանքով  
ՄԵՂՏԻ ԽԱՆ

Դուզալ

Ապրիլ 21-ին Վրացեան կը հաղորդէր Նժդեհին.

*Սիրելի Նժդեհ,*

*Որոշեց.*

*1. Հայաստանի բոլոր ռազմական ուժերը և զոյքերը յանձնել Լեռնահայաստանի կառավարութեան, այդպիսով, ուրեմն, մեր սպարապետն էլ, ամբողջ հրամանատարութիւնն էլ, ենթարկում է Սիւնեաց սպարապետութեան: Կարծում եմ, լաւագոյն կը լինի նշանակել Կուրօին քեզ օգնական և արևմտեան ճակատի հրամանատար:*

---

<sup>1</sup> Խօսելով տիրող այդ տրամադրութեանց մասին Ապրիլ 8-ին Ռէն կը գրէր Նժդեհի. «Դու Պարսկաստանում աւելի ժողովրդականութիւն ես վայելում: Պարսիկները քեզ նոյնքան քաջ գիտեն, ինչպէս Լեռնահայաստանցին: Նրանք յաճախ ասում են, որ քանի Նժդեհը Չանգեզուր է, բոլշևիկներն չեն կարող և չեն յամարձակի ներս խուժել Պարսկաստան-Թաւրիզ:

2. Հայաստանի Հայրենիքի Փրկութեան Կօմիտէն ընտրում է իմ տեղը փոքրակազմ մի կառավարութիւն խնդիրները լուծելու, իսկ Հայր. Փրկութեան Կօմիտէն ենթարկւում է լիկլիտացիայի:

3. Կառավարութեան նախագահութիւնը յանձնեցին ինձ:

4. Կառավարութիւնը կը մնայ այստեղ և կ'օգնէ տեղական իշխանութեան, գաղթականութեան, էվակուացիայի և այլ խնդիրներով:

5. Ես և Քաջազնունին վաղը մեկնում ենք Թաւրիզ քեզ ծանօթ միսիայով:

Մանրամասնութիւնների մասին կը խօսենք առաւօտ, երբ պէտք է գրես անցագիր ինձ:

Ս. ՎՐԱՅԵԱՆ

1921 Ապրիլ 21

Ապրիլ 26-ին Վրացեան կը գրեր Արաքսի Պարսկական ափէն.

«Սիրելի Նժդէհ,

Հենց հիմա Քաջազնունու և Յակոբի<sup>1</sup> հետ հասանք Մեղրի: Ամբողջ ճանապարհին լաւ տրամադրութիւն տեսայ, բայց գաղթականի միջի երիտասարդները լաւ չեն ազդում, հարկաւոր է երիտասարդներին առ այժմ թոյլ չտալ անցնել»:

---

<sup>1</sup> Հակոբ Տեր-Հակոբյան: Խմբ.:

## XI ՏԱԹԵԻ Բ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

*Լեռնահայաստան և իր կառավարութիւնը.– Լեռնահայաստանի կառավարութեան դեկլարացիան.– Մայիս 28-ի անկախութեան տարեդարձը Սիւնիքի մէջ.– Լեռնահայաստանը՝ Հայաստան.– Դաւիթ Անանունի և Արտաշէս Կարինեանի պատգամաւորութիւնը.– Նոր յաղթութիւն մը և 800 զերի.– Բարկուշատի թրքութեան հպատակութիւնը.– Կառավարութիւնը կը շնորհաւորէ Նժդեհը.– Երեք հազար թաթար քոչւորներ Սիսեանի մէջ.– Վիատութեան հովեր.– Երևանեան զօրքին անձնատուութիւնը.– Նժդեհի մէկ գրութիւնը Մինիստրական Խորհուրդին.– Ներսէս Արքեպիսկոպոս Մելիք-Թանգեանի միջնորդութիւնները.– Օրտուբադ-Գենուազ ճակատի վրայ նոր յաղթութիւններ.– Նոր տրամադրութիւններ.– Նժդեհ իր պայմանները կը ներկայացնէ Երևանի.– Յաղթական հեռացում:*

Վրաստանի խորհրդայնացմամբ և Հայաստանի երկրորդ անկումով Սիւնիքի ներքին կեանքը կ'ալեկոծէր: Այս պատճառով Ապրիլ 27-ին պատմական Տաթևի Վանքին մէջ կը կայակայ Տաթևի երկրորդ համագումարը, ուր կ'որոշուի երկիրը յայտարարել **ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆ** և իր կառավարութիւնը՝ **ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ**:

Համագումարը միաձայն կ'որոշէ.

*«Քանի որ Սիւնիքի ամբողջ բախտը և հայ ազգաբնակչութեան ֆիզիքական գոյութիւնը հաւատացած և վստահացած են Նժդեհին, որն իր ամբողջ գործունեութեամբ միշտ էլ հանդես է եկել որպէս մի անձնագոհ, տոկուն և նախանձախնդիր ղեկավար, ապագայ լինելիք կառավարութեան կազմը ևս վերապահել նրան: Կառավարութիւն կազմելու համար վարչապետ ընտրել Պ. Սպարապետին՝ տալով նրան զօրավարի աստիճան և պարզևատրելով զայն «Խուստուպեան արծիւ»-ի երկաթ շքանշանով»:*

Որոշումը կ'ընդունուի բուն ծափահարութիւններով:

Մայիս 1-ին նորընտիր կառավարութիւնը կը հրատարակէ իր առաջին պաշտօնական յայտարարութիւնը.

## ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԵԿԼԱՐԱՑԻԱՆ

Լեռնահայաստանի ժողովրդական ներկայացուցիչների համագումարը Ապրիլ 27-ի նիստում Տաթևի պատմական վանքում, ընտրեց Լեռնահայաստանի նոր կառավարութիւն եօթ նախարարներից բաղկացած՝ սպարապետ Նժդեհի նախարարապետութեամբ:

Նոր կառավարութիւնն իր առաջնակարգ պարտքն է համարում լարել երկրի բոլոր ուժերը՝ զօրեղացնելու մեր հայրենիքի ինքնապաշտպանութեան ռազմական կորովը:

Մեր զօրամասերին, պաշտօնէութիւնը և եկած գաղթականութիւնը պարենաւորելու համար Լեռնահայաստանի ժողովուրդը զոհաբերում է իր վերջին պաշարները, սակայն մեծ կարիքը բաւարարելու նպատակով կառավարութիւնը հարկադրուած է նաև միջոցներ ձեռք առնել, շտապ կերպով մեր հարևան երկիրներից պարենաւորման մթերքներ գնել և փոխադրել մեր երկրի ներսը: Փոխադրութեան գործը դիւրացնելու և արագացնելու համար կառավարութիւնը կազմակերպում է սեփական փոխադրութեան միջոցներ-տրանսպորտ:

Լեռնահայաստանի կառավարութիւնը պէտք է ջանայ սերտ բարեկամական, բարիդրացիական յարաբերութիւններ հաստատել մեր երկրի սահմաններում բնակող սահմանամերձ ազգութիւնների, մանաւանդ թիւրք ժողովրդի հետ: Տնտեսական և առևտրական փոխյարաբերութիւնների զարգացումը աւելի ևս կը նպաստի հայ ժողովրդի մերձեցումին Թաթար, Պարսիկ և Տաճիկ ժողովուրդների: Կառավարութիւնը պիտի ձգտի նաև ապահովել միջազգային բոլոր բարեկամ ուժերի օժանդակութիւնը մեր ազգային դատի բարեյաջող լուծման համար: Կառավարութիւնը ամէն կերպ պէտք է ձգտի, որ բոլոր ազատ հողերը օգտագործուեն հնարաւորութիւն տալով սակաւահող և հողազուրկ գիւղացիներին մշակել այդպիսի հողերը: Ընդհանրապէս, կառավարութիւնը պէտք է աշխատի հնարաւորութեան չափ աշխատաւոր չքաւոր գիւղացիութեան նպաստել սերմանման և գիւղատնտեսութեան զանազան գործերում:

Միաժամանակ, կառավարութիւնը պէտք է ձգտի զարկ տալ ժողովրդի լուսաւորութեան գործին, կազմակերպելով նորանոր

դպրոցներ, անգրագետների դասընթացներ, դասախօսութիւններ, զրոյցներ, երեկոյթներ և տարածելով գրաւոր հրատարակութիւններ:

Լիայոյս լինելով, որ Լեռնահայաստանի ազատատենչ ժողովուրդը և պարտաճանաչ պաշտօնէութիւնը ոչ մի ջանք չի խնայի ընդառաջ գնալու և բոլոր ոյժերով աջակցելու կառավարութեանը՝ համագումարի կողմից նրա վրայ դրած պարտականութիւնները կատարելիս, նաև վստահ լինելով, որ Սիւնեաց աշխարհի հերոսացած Դաւիթ-Քէզեան զօրքերը՝ միացած բուն Հայաստանի զօրամասերի հետ, նորանոր սխրագործութիւններով պիտի զօրավիզ հանդիսանան կառավարութեանը իրենց սպարապետի ղեկավարութեամբ, Լեռնահայաստանի կառավարութիւնը ստանձնում է երկրի ծանր դէպը:

Նախարարապետ և արտաքին գործերի և զինուորական նախարար Գ. ՆժԴԵՅ  
Ներքին գործերի նախարար Ս. ՄԵԼԻՔ-ԵՕԼՉԵԱՆ  
Հաղորդակցութեան նախարար Ա. ՕՅԱՆՋԱՆԵԱՆ  
Արդարադատութեան լուսաւոր. նախարար Յ. ՏԵՎԵՃԵԱՆ  
Պարենավորման նախարար Յ. ՏԵՐ-ՅԱԿՈՒԲԵԱՆ  
Խնամատարութեան նախարար ԲԺ. ՄԻՆԱՍԵԱՆ  
Ֆինանսների նախարար ԲԺ. Ս. ԵՂԻԱՋԱՐԵԱՆ  
Պետ. վերահսկիչ նախարար Գ. ՏԵՐ-ՄԻՆԱՍԵԱՆ

Ինչ որ ըլլային զօրքն ու ժողովուրդը խանդավառելու նպատակով նորընտիր կառավարութեան ըրած ջանքները՝ կացութիւնը կը մնար աւելի քան կնճռոտ ու բարդ:

Դէպի Ջանգեզուր Երևանեան գաղթականութեան ներխուժումն ու ինքզինքը Պարսկաստան նետելու անոր վրդոված փութկոտութիւնը պարագայ մըն էր, որ աննկատ պիտի չմնար Սիւնիքի ժողովուրդին համար, որ բնազօրէն կը տարուէր այդ շարժումին կապուած արտաքին լուրջ վտանգներ նշմարելու:

Ձէնք կրելու անընդունակ գաղթականութիւնը չէր, որ կը հեռանար միայն, այլ և երիտասարդութիւնը: Մեղրիէն գրած իր Ապրիլ 26 թուակիր նամակով Վրացեան արդէն նոյն միտքը կ'արտայ-



այստր. «Գաղթականի միջի երիտասարդները լաւ չեն ազդում, հարկաւոր է երիտասարդներին առայժմ թոյլ չտալ անցնել»:

Թէ ինչ օգուտ կրնար ունենալ խուճապահար երիտասարդութեան մը ներկայութիւնը Սիւնիքի հողին վրայ՝ հասկնալի էր, երբ տարագիր զօրքը գէնքը ձեռքը ունենալով հանդերձ՝ հեռու էր անհրաժեշտ կորովը ցոյց տալէ:

Իրերու այս կացութեան մէջ վրայ կը հասներ Մայիս 28-ի Զ.[այաստանի] Անկախութեան տարեդարձը, զոր հանդիսաւորապէս կը տօնէր Լեռնահայաստանի կառավարութիւնը Գորիսի մէջ:

Յակառակ տիրող մռայլ կացութեան՝ ժողովուրդը խանդավառ և բարձր տրամադրութիւններով կը մասնակցէր Զ. Անկախութեան տարեդարձին: «Մարդ ականայ կը յիշէր,- կը գրէ «Այգ»,- Աւարայրի դաշտի հերոսամարտն, սպարապետ Վարդան Զօրավարն ու վերջինս կը համեմատէր մեր նորագոյն պատմութեան պատիւը փրկող սպարապետ Նժդեհի հետ: Եթէ առաջինը կը մղէր կրօնական կռիւ, երկրորդը կը մղէր գերազանցօրէն քաղաքական կռիւ, յանուն հայ ժողովուրդի ազատութեան և անկախութեան, յանուն իսկական յեղափոխութեան»<sup>1</sup>:

Այդ օրը Նժդեհ յարգանքի իր հարկը կը բերէ գէնքի իր ընկերներուն, որոնք կառչած Սիւնիքի անմատչելի լեռներուն, իրենց մասնակցութիւնն էին բերած Լեռնաշխարհի հայութեան ինքնապաշտպանութեան գործին: Գնդապետի աստիճան կ'ստանայ գլխապետ Նարինեան, իսկ փոխգնդապետի աստիճան՝ Մելիք Օհանջանեան, Ամիրջանեան, Թորոսեան, Ամիրխանեան և Գրիգորեան: Աստիճանի բարձրացում կ'ունենան նաև կրտսեր սպաներ, վաշտապետներ և խմբապետներ<sup>2</sup>:

<sup>1</sup> «Այգ» շաբաթաթերթ, N 25, 1921 Յունիս 16, Թաւրիզ:

<sup>2</sup> Իր գէնքի քաջարի ընկերներուն մասին սպարապետ Նժդեհի օրագրէն կը քաղենք հետևեալ տողերը.

«Ամէն գիւղ Սիւնիքում իր վաշտն ունէր, ուրեմն և իր վաշտապետը: Դա մեր գիտցած կաստայական զինուորականը չէ, գլուխը լի զանազան մեռեալ կանոններով ու տեսութիւններով: Իր որոշ առաքինութիւններով ժողովրդի մէջ աչքի ինկած երիտասարդը, կռիւներուն անուն հանած արի զինուորը, հայրենի դար ու դաշտերին ծանօթ նախկին որսորդն է դա կամ ժողովրդական սպան, որը զինուորական անպէտք կանոնագրերի փոխարէն իր կրօնքի տակ ազգասիրութեամբ ու անձնուիրութեամբ զեղուն մի տաք, մի հարուստ սիրտ ունի:

Յունիս 1-ին Լեռնահայաստանը կը յայտարարուի Յայաստան: Կը նշանակուի նոր կառավարութիւն վարչապետութեամբ Վրացեանի: Նժդէի կ'ստանձնէ զինուորական նախարարի և սպարապետութեան պաշտօններ:

Այս քայլը կ'առնուի քաղաքական նկատումներով<sup>1</sup>, բայց աւելի ևս կը բարդացնէ հայ Լեռնաշխարհի դրութիւնը:

Երևանի խորհրդայնացումէն վերջ՝ Լեռնաշխարհի կառավարութիւնը իբրև Յայաստանի կառավարութիւն ճանչնալ կարելի չէր: Միննոյն ժամանակ երկու ուրոյն Յայաստան ու այդ անունով երկու կառավարութիւն գոյութիւն ունենալ չէր կրնար: Մնաց, որ խորհրդային Իշխանութիւնը պատրաստ էր ամէն զնով մէջտեղէն վերցնել Սիւնիքը - «Յայկական Սպարտան»:

Առժամապէս Լեռնահայաստանի սահմաններու դէմ արտաքին յարձակումները դադրած էին:

Երևանի նահանջող զօրքը հազիւ Ձանգեզուր էր հասած, երբ Մայիս 1-ին Մեծամասնականներ Դարալագեազ կը փութացնէին Դաւիթ Անանունի և Արտաշէս Կարինեանի պատգամաւորութիւնը՝ Ձանգեզուր ապաստանած զօրքը Երևան հրաւիրելու համար:

---

Կռուի արուեստը նա իւրացրել է գրքերից դուրս, կռադաշտերում:

Կռիւր ո՛չ շախմատային խաղ է, ոչ էլ թւաբանական խնդիր, այլ բարոյական ուժերի մի կատաղի բաղխում, մի արնոտ դրամա, որի մէջ առաջին դերերը կատարում են հրաշէկ զգացումը և յաղթական կամքը: Դրա համար էլ նա իր զինուորների նախապատրաստութեան գործում զգացումների մշակումը գերադասում է ձեռքերի, ոտքերի, անգամ բանականութեան մարզանքներից: Միայն նա իրաւունք ունի դէպ վտանգ ու մահ առաջնորդելու ուրիշներին, որը ինքը ևս չէ խուսափում մահից:

Ահա՛ նրա մօրալը: Միայն դեկավար չէ նա, այլև զինուոր, որին շատ անգամ կարելի է տեսնել կրակի գծից առաջ մի բուռ խիզախների հետ:

Իր երկու զինուորը փրկելու համար՝ նա միշտ էլ պատրաստ է հեզնելու մահը, համոզուած, որ իւր վիրաւորուելու կամ սպանուելու դէպքում երկուսից մէկը կ'անցնի իր տեղը:

Կռիւր՝ յաղթութիւն, մահը յարութիւն է նրա համար»:

<sup>1</sup> Մեր Եւրոպայի գործիչները խոստովանում են, որ քանի Ձանգեզուրը կանգուն էր, Եւրոպայում շատ աւելի ամուր էր մեր դիրքը: Ձանգեզուրը խորհրդանշանն է Յայաստանի անկախութեան,- կը գրէ Վրացեան: «Յայրենիք» Անսագիր, Ա. տարի, թիւ 3, Յունվար, 1923, Պոսթըն:

Խորհրդային Հայաստանի պատգամաւորութիւնը նոյն ատեն կը բանակցէր Լեռնահայաստանը խաղաղեցնելու և Երևանի ենթարկելու հարցով:

*«Մեծամասնականները որոշած էին անպայմանօրէն տիրել Սիւնիքին, ապահովելու համար իրենց թիկունքը, փրկելու իրենց արատաւորուած պատիւը: Երկու ճամբայ կար բաց – խաղաղ բանակցութեան և զինական ուժի ճամբաները: Եւ Խորհրդային Հայաստանը առաջին ճամբան էր ընտրած:*

*Կարիւնեանի պահանջները Սիւնիքը թէ թևաթափ կ'ընէին և թէ իրաւունք կու տային տարիներէ իր վեր հեռացող թրքութեանը՝ ետ գալու և նորէն խանգարելու հազիւ խաղաղած կեանքը Հայկ. Լեռնաշխարհին»<sup>1</sup>:*

\* \* \*

Բանակցութեանց պահուն Մեծամասնական զօրքերը կ'սկսին քալել Օրտուբադ-Վայոց-Չորի վրայ: Ձեռնոցը նետուած էր, հակառակորդը վերջին անգամ մըն ալ կը տարուէր իր սուրին գօրութիւնը փորձելու:

Գնդեվասի բարձունքներուն վրայ թառած հայ զօրքը քառասունըութը ժամուայ ընթացքին (15-16 Յունիս) ահաւոր հարուածով մը կը խորտակէ թշնամի յարձակման թափը:

Նոյն օրը կարմիր զօրքը Սիւնիք ուժերու ձեռքը կը ձգէր 800 զերի, թնդանօթներ, ռազմամթերք և պատերազմական աւարներ:

Վայոց-Չորի արշաւանքի Բ. օրը Նժդեհ թշնամիին (արևելեան ճակատի վրայ) հաւանական հակայարձակումը կանխելու նպատակով Ղափանէն թեթև զօրամասով մը առանց գնդակ մը իսկ արձակելու՝ թուրք շրջաններով կ'անցնի Գորիս: Բարկուշատի թրքութիւնը, որ ամբողջ տարի մը կը գտնուէր մեծամասնական իշխանութեան տակ, Նժդեհի յայտնուելէն յանկարծակիի եկած ու սարսափած, աղ ու հացով կ'ընդունի զայն և կը յայտնէ հպատակութիւն: Նժդեհ թուրք կոմիսար մը կը նշանակէ այդ շրջանի համար: Տեղական խորհրդային միլիցեան կը փախի Խանլը:

Այս նոր յաղթանակի առթիւ նորակազմ կառավարութեան անունով Ս. Մելիք-Եօլչեան շնորհաւորութեան հետևեալ գրութիւնը կ'ուղղէր սպարապետ Նժդեհին.

---

<sup>1</sup> Վահէ Արծրունի, Սիւնիքը պարտուած, «Հայրենիք» օրաթերթ, N 2897, 1921 Նոյեմբեր 8, Պօսթըն:

*«Ապարապետ Ջօրավար Նժդեհին,*

*Հայաստանի կառավարութիւնը լսելով ձեր կազմակերպած, ձեր հոգով սնուած և ձեր գաղափարներով ոգևորուած քաջարի արևմտեան բանակի Վայոց-Ձորում տարած մեծ յաղթութեան մասին՝ պարտք է համարում յայտնել ձեզ շնորհակալութիւն և յոյս տածել, որ դուք մնալով հաւատարիմ ձեր որոշումներին և ընդունած գաղափարներին, կը շարունակէք նոյն թափով տանել հայ ժողովրդի ազատագրման գործը և ցոյց տալ համայն աշխարհին, որ հայը իրաւունք ունի ապրելու իր հարազատ երկրում, այն էլ ազատ և անկախ:*

*Կեցցէ՛ք դուք, կեցցէ՛ն ձեր օգնականները, կեցցէ՛ հայ անձնուէր գաղափարական զինուորը:*

Ի դիմաց վարչապետի  
Ս. ՄԵԼԻՔ ԵՕԼՉԵԱՆ

Եթէ ռազմաճակատի վերջին նոր յաղթութիւններ փառքի էջ մը ևս կ'աւելցնէին Սիւնեաց ժամանակակից պատմութեան վրայ, վարչական մարզին մէջ նորակազմ կառավարութեան երևան բերած անշրջահայեաց գործունէութիւնը սակայն կու գար գլխովին փոթորկելու Լեռնաշխարհի ներքին ճակատը:

Անձանօթ Սիւնիքի տեղական և ռազմական պայմաններուն և առանց նոյնիսկ սպայակոյտի գիտակցութեան, կառավարութիւնը Սիսեանի պատերազմական կարևոր ճակատներէն մէկը վարձու կու տայ թաթար քոչլորներու:

«Այգ»-ի մէջ երևցած թղթակցութիւն մը ահաւասիկ ինչպէս կը բացատրէ կատարուած այդ իրողութիւնը.

#### ԼԵՌՆԱՅԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Մեր փոխյարաբերութիւնները Բարկուշատի հովտի թուրք բնակչութեան և Միմքենտի բարձունքներն ամառանոց եկող թուրք քոչլորների հետ միանգամայն բարեկամական է: Վերջիների ներկայացուցիչներն երկու օր է, ինչ Գորիսումն են և դիմել են Հայաստանի կառավարութեան, բարիդրացիական կապ ստեղծել իրենց հետ: Ստքերի փոխանակութիւնից պարզուեց, որ նրանք դուրս գալով Ղարաբաղի տափաստանից, մեծ դժուարութիւններով անցել են հայկական և թուրքական շրջաններն, ենթարկուել թալանի և ուժեղ ընդհարումներ են ունեցեր թուրքերի և կոմունիստների

հետ: Այժմ վախենալով նոյն գծով վերադառնալ իրենց վայրերը՝ հարց են բարձրացրել ծայրայեղ դէպքում, երբ նրանց թիկունքի ճանապարհը կտրուած կը լինի, անցնել Գորիսի վրայով Բարկուշատ, խնդրել են հնարաւորութիւն տալ իրենց կառավարութեան նշանակած տեղում բաց անել շուկայ, որ կարողանան իրենց մթերքները վաճառել կամ փոխանակել Լեռնահայաստանցուն: Խնդրել, որ եթէ բոլշևիկների պատճառով հնարաւորութիւն չունենան վերադառնալ իրենց բնակավայրը թոյլտուութիւն են խնդրում Յայաստանի կառավարութիւնից անցնել Նախիջևան կամ Պարսկաստան: Խնդրել էին նմանապէս Գորիսի վրայով իրենց տրանսպորտով (ուղտերով) ստանալ Բարկուշատից հացահատիկներ և այլ մթերքներ: Կառավարութիւնը պատասխանել է, որ կառավարութիւնն իր ծագման օրից իր առաջ դրել է Կովկասեան ազգերի եղբայրութեան և համերաշխութեան բարձր սկզբունքն և ամէն ջանք գործ է դնում իրագործելու կեանքի մէջ. ապացոյց, որ վերջերս արել է մի շարք աջքի ընկնող փաստեր: Կառավարութիւնը համաձայն է յայտարարել լեռնային շրջանի թրքութիւնն իրեն բարեկամ և ընդառաջ գնալ նրանց բոլոր արդարացի կարիքներին ու խնդիրներին, թոյլատրուած է խճուղուց չորս վերստ հեռաւորութեան վրայ բաց անել շուկայ, որտեղ կարող են առևտուր անել հայ թուրք եղբայրներ հետևեալ պայմաններով. *առևտուրը կատարուած է հայկական-սովետական դրամով, հաւասար կուրսով, հայկական դրամի ընդունելութիւնը պարտադիր է բոլորի համար*: Այդ առևտուրը կատարուած է յատուկ նշանակուած հայկական միլիցիայի և թուրքական մի ներկայացուցչի հսկողութեան տակ: Քոչւորներին տրամադրուած արօտատեղիների համար նրանք պարտաւոր են վճարել 50 մլն հայկական դրամով պետական տուրք: Թուրքական քարաւաններով հացահատիկներ տեղափոխելու հարցը նոյնպէս լուծուած է դրականապէս այն պայմանով, որ բերուած հացահատիկների և առհասարակ մթերքի 30 տոկոսը տրուի իբրև տուրք:

Նրանց տրամադրութիւնն ընդհանրապէս հակաբոլշևիկեան է, իսկ Ղարաբաղից գաղթածներինը՝ շեշտուած թշնամական<sup>1</sup>:

Գորիս, 18 Յունիս

---

<sup>1</sup> «Այգ» շաբաթաթերթ, N 33-34, 1921, Յունիս 7:

Մինքեանտի երեք հազար քոչւորները իրականին մէջ ԵՐԵՔ ՅԱԶԱՐ ԾՊՏՈՒԱԾ ԱՏՐԲԷԶԱՆԵԱՆ ՈՒԺԵՐ ԷԻՆ, որոնք առիթէն օգտուելով՝ քանի մը օր վերջ կ'սպառնային Սիւնիքին:

Ընդհանուր տրտունջի հետ խոր վհատութեան խորշակ մըն էր, որ կ'անցնէր ժողովուրդի հոգիին մէջէն:

Ամիսներէ ի վեր զէնքը ձեռքը՝ իր փրկութեան սիրոյն մարտնչող ժողովուրդին համար անստոյգ իր սպասումը ստեղծուած անորոշ պայմաններու մէջ՝ խիստ ծանր էր:

Վայոց-Չորի կռիւներէն քանի մը օր վերջ Երևանի զօրքի կամաւոր անձնատուութեան մասին սպարապետ Նժդեհի հետևեալ հաղորդագրութիւնը կ'ստանայ Կուռօէն.

*«Սպարապետ Նժդեհին,*

*Արևմտեան քաջարի հրամանատարը տեղեկացնում է, որ իրենք Քէշիշքէնտից յետ քաշուելու ժամանակ Երևանի զօրամասի զինուորները չցանկացան յետ գալ, և ինչպէս պարզուեց բրօքականտայի միջոցով երեք օր առաջ վճռած է եղել անցնել կարմիրների կողմը: Սևանի գումարտակը իր հրամանատար Աղաբէկի հետ անցել է կարմիրների կողմը: Երևանի գումարտակը ցրուել է»:*

Սպարապետի օգնական  
ԿՈՒՈՕ

1921 Յունիս 22

Լեռնահայաստանի ներքին ազգային կեանքը թունաւորման վտանգաւոր ախտանիշներ ցոյց կու տար:

Հոգիներու աշխարհը մռայլ ստուերերով սևնալ սկսած էր:

Մէկ կողմէ մեծամասնականներու շարունակական և անդադրում խոստումները, միւս կողմէ վերջին տարիներու կռիւներուն ազդած յոգնութիւնը, ինչպէս նաև կենսամթերքի պակասը, և երրորդ, Երևան եկած ներքին վարչական խաչաձևումները, յառաջ կը բերէին ժողովուրդին կենսայորդ տրամադրութիւններուն տեղատուութիւնը:

Սթնոլորտին մէջ ժանգոտած քամիներ կը փչէին:

Հերոսական երէկի խոյանքներուն տապանաքարն էր, որ կը տրուէր անոնց կողմէ կամաց կամաց, որոնց հայրենասիրութենէն աւելի վարչական ու քաղաքական հասունութիւնը կը դառնար վիճելի և որոնք իրենց փրկութիւնը կը պարտէին լեռներու այդ հսկայ կարկառներուն:

Յունիսի 26-ին հրամանատար Նժդեհ կը գրէ.

ՀՀ ՄԻՆԻՍՏՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ  
Պատճենը՝ վարչապետ ՎՐԱՑԵԱՆԻՆ

*Քանի դեռ ինքնավար Լեռնահայաստան կայ՝ Սովետական Արարատեան Հայաստանը իրեն ապահով զգալ չէ կարող: Այսպէս է մտածել ու գործի անցել Երևանի Յեղկումը:*

*Քանի դեռ ինքնավար Լեռնահայաստան կայ՝ Նախիջևանն ու Շարուրը չեն կարող կցուել Ատրբէջանին, Հայկական Ղարաբաղը չի ատրբէջանանայ, այսպէս է ըմբռնել իրերու դրութիւնը մեր կողքին ապրող մուսուլմանութիւնը և նոյնպէս գործի անցել:*

*Ինչպէս տեսնում էք Կարմիրների և թրքութեան շահերը նոյնանում են ու հէնց այդ հողի վրայ էլ տեղի է ունեցել երկու կողմերի մեր դէմ ուղղուած լուրջ զինակցութիւնը:*

*Ամսիս 20-ից սկսած թրքութիւնը առայժմ Նախիջևանի և Մինքենդի, ակտիւ գործողութիւններին է դիմել:*

*Հաւանական են համարում, արդէն նշաններ էլ կան, և Բարկուշատի Հաքեարու-Խանլի թրքութեան թշնամական գործողութիւնները մօտ օրերում:*

*Տեղական թրքութեան և բօլշևիկների շարքերը խտացնում են նաև եկուր թուրք քոչւորները:*

*Այսպէս, ուրեմն Մուսավաթի և Նարիմանովի միջև ստեղծուած ռազմա-քաղաքական կօնտակտը կատարեալ է ու աւելի քան հասկանալի:*

*Թաթար հատուածների հաւաքական վառ ցանկութիւնը, ամբողջ թրքութիւնը, առանց կուսակցութեան ու դասակարգի խտրութեան, զինել ու հանել է մեր դէմ:*

*Այդ պարագան զգալիօրէն դժուարացնում է մեր՝ Կարմիրների դէմ մղած անհաւասար կռիւր, բայց չէ յուսազրկում ինձ, որ մենք ցանկութեան դէպքում, եթէ շատ չնեղուենք ռազմամթերքի ու հացի պակասութիւնից, կարող կը լինենք շարունակելու մեր հերոսական դիմադրութիւնը:*

ՀՀ Զինուորական Նախարար-Ապարապետ  
Զօրավար ՆԺԴԵՂ

Հանքեր, 1921 Յունիս 26

Ատրպատականի Հայոց առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոս Մելիք-Թանգեան փափաքելով միջնորդել Լեռնահայաստանի և Խորհրդային Հայաստանի կառավարութեանց միջև՝ Յուլիս 1-ին Նժդեհի կը դրկէ պատճէնը Մեասնիկեանին ուղղած մէկ հեռագրին.

(Հեռագիր երևան)

ԺՂՂՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՅ ՔԱՂԱՔԱՅԻ  
ՄԵԱՍՆԻԿԵԱՆԻՆ, ՊԱՏՃԵՆԸ՝ ՄՊԱՐԱՊԵՏ ՆԺԴԵԻՆ

*«Ստանալով Կոմիսարներիդ Խորհրդի 1921 թիւ Յունիս 13 հրատարակած դեկլարացիան Ձանգեզուրի մասին՝ Վրացեանի համաձայնութեամբ սուրհանդակ ուղարկեցիք Նժդեհի մօտ պատերազմական գործողութիւնները դադարեցնելու և հաշտութեան բանակցութիւններ սկսելու առաջարկութեամբ, սրա հետ միասին այդ հարցի առթիւ Գրիգոր Օհանջանեանին յանձնեցի իմ գրաւոր առաջարկութիւնը ձեզ»:*

Ատրպատականի Թեմական առաջնորդ Արքեպիսկոպոս  
ՆԵՐՍԷՍ

Թաւրիզ, 1 Յուլիս 1921

Յուլիս 5-ին Նժդեհ կ'ստանայ հաշտութեան վերաբերեալ ակնարկուած գրութիւնը.

ԼԵՌՆԱՐԱՅԱՍԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՅՆ  
ԶՕՐՔԵՐԻ ՂԵՄԱԴՈՐ ՀՐԱՄԱՆԱՍԱՐ ՆԺԴԵԻՆ

*Իբրև Ատրպատականի Հայոց հոգևոր հովիւ, որ մօտիկ կանգնած Կովկասի հայոց շրջանին, դիտում է նրա վերջին տարիների կեանքը, նրա քաղաքական ելևէջները, ապրում է նոյն ցաւերով, խոր խոցուած նկատում է այն տառապանքները, որ կրում է հայոց ժողովուրդը, որի մէջ վաղուց անհետացել է վստահութիւնը դէպի միմեանց, թշնամութիւնը արմատացած երկու հատուածների մէջ կրծում է այդ հազարամեայ տանջանքներով լի ժողովրդի սիրտն ու հոգին, մաշում, հիւծում է այդ ցաւատանջ ժողովուրդը, հեռու հրելով հանգիստ աշխատանքի ուղիից դէպի մութ անորոշ ապագան:*

*Արդ, խոր ցաւ զգալով իմ 4000-ամեայ հայրենիքիս մնացորդ գաւակների այդպիսի վիճակի պատկերով, նոյնպէս և միանգա-*



մայն հակառակ լինելով զէնքի ոյժով, արեան հեղեղներով, և բռնութեամբ խնդիրները լուծելու եղանակին, հոգուս ներքին թելադրանքով, իբրև հարագատ զաւակն այդ երկրի, դիմում եմ Ձեզ՝ երկու կողմերիդ. Ա. Խ. Հայաստանի կառավարութեան՝ հիմք ունենալով նրա այն դեկլարացիան, որ ուղղուած էր Լեռնահայաստանին, հրաւիրելով վերջինիս խաղաղ ճանապարհով հարթելու բոլոր վէճերը և հաշտութեամբ վերջացնելու խոչընդոտ հանդիսացած խնդիրները, որպիսին բանակցութիւնները ընդհատուեցին Դարաւազեագի ընդհարումներով, և Բ. Լեռնահայաստանի կառավարութեան, խնդրելով.

Ա. Զինադադար նշանակել երկու կողմերի համար այս դիմումներին տեղ հասնելուց յետոյ մօտաւորապէս Յուլիսի 13-14 թուերին, զինադադարի բանազնացները նոյն թուերին պիտի լինին Նախիջևան-Սիսեան գծի ուղղութեամբ Բիջանակ մալական գիւղի շրջակայքում:

Բ. Վերսկսիլ ընդհատուած բանակցութիւնները երկու կողմերի մէջ, նախաձեռնութեամբ Խորհրդային Հայաստանի կառավարութեան, աւելի լայն չափակերտով և աւելի խոր մտածելակերպով Լեռնահայաստանի ուրոյն կեանքի պայմանները ի նկատի առնելով՝ հարկերը վճռել յօգուտ գիւղացիական մասսաների:

Յոյս ունիմ Լեռնահայաստանի կառավարութիւնը անտես չի անել իմ միջնորդութիւնը և հնարաւորութիւն կը տայ իւր ժողովրդին ամառային ցանքսերը ժողովելու և դաշտային աշխատանքները անարգել կատարելու:

Առաջնորդ հայոց Ատրպատականի  
ՆԵՐՍԷՍ ԱՐՔ. ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ

Թաւրիզ, 2 Յուլիս 1921

Յունիս 5-ին թշնամին պատերազմական նոր գործողութիւններ կ'սկսի Օրտուբադ-Գենուազ ճակատի դէմ. կռուի երկրորդ օրը, երեկոյեան դէմ, սակայն պարտուած մեծ կորուստներով կը նահանջէ, Սիւնիքի ժողովրդական վաշտերը կը հալածեն զայն մինչև Օրտուբադ:

«Թշնամին ջախջախուած փախուստի է դիմել, մեր զօրքերի տրամադրութիւնը աւելի քան բարձր է», - կը գրէ գնդապետ Օհանջանեան:

Երևանի զօրքին անձնատուութիւնը, սխալ քաղաքականութեամբ մը երեք հազար ատրքէջանեան ուժերու Լեռնահայաստանի սահմաններէն ներս սպրդիլը, անգամ այն ծանր պայմանները, որոնց տակ շնչահեղծ կ'ըլլար երկրի ազգաբնակչութիւնը՝ Սիւնիք կը մնար իր զինուորական բարձր հրամանատարութեան հետ, ի հարկին մինչև վերջին թոպէն կռուելու պատրաստ:

Երբ թուրքին և թաթարին, երբ օտարին դէմ հայրենի հողը պաշտպանել անհրաժեշտ էր, Սիւնիքը կանգնեցաւ պարտականութեան պատնէշին վրայ, այժմ մեծամասնական հայն էր եկողը և խոստումներով:

Պէ՞տք էր հաւատալ այդ խոստումներուն:

Այդպէս էր տրամադրուած ժողովուրդը:

Ու սպարապետը չուզեց միջամուխ ըլլալ ժողովուրդին զգումներուն, բայց որպէս զինուորական, որպէս երկու տարուայ անհաւասար կռիւներու հերոսը՝ իր այնքան սիրած ժողովուրդին պատւին ու փառքին նախանձախնդիր, երկիրը խաղաղօրէն և առանց արիւնահեղութեան հայ մեծամասնականներուն յանձնելու հետևեալ պայմանները ներկայացուց Խորհրդային Չայաստանի վարիչներուն.

### ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԵՂԿՈՄԻՆ

Որպէսզի հայ աշխատաւորութիւնը և նրա ինտելիգենցիան այսպէս թէ այնպէս հաշտուին Չայաստանում ստեղծուած Խորհրդային իրաւակարգի հետ և նոր ընդվզումներով չփորձեն ազատագրուելու ձեր լծից, ընդվզումներ, որոնք պիտ թուլացնեն սոցիալապէս արնաքամ եղած հայ աշխատաւորութիւնը և Ձեզ, ես կը ցանկանայի տեսնել Խորհրդային Չայաստանում այնպիսի բարեփոխութիւններ քաղաքական և տնտեսական հողի վրայ, որոնք համապատասխանէին մեր ժողովրդի լաւ հասկացած շահերին:

Այդ բարեփոխութիւնները հետևեալներն են.

Ա. Յարգումն և անձեռնմխելիութիւնն զիւղացիական և առհասարակ մանր սեփականութեան: Ազատ առևտուր: Բռնագրաւումների կատարեալ վերացումն: Գօօպերացիայի անբռնադատ զարգացումն: Ներքին վերաբնակութեան կազմակերպումն:

Բ. Նախկին թուրքահայերը ստանում են հողաբաժիններ:

Գ. Ազգայնական բաշխումների վերացման համար կատարում է հայերի և թուրքերի տեղափոխությունն Հայաստան ու Ատրբեջան:

Դ. Անձի և բնակարանի անձեռնմխելիություն: Մամուլի, խօսքի ու ժողովների ազատություն:

Ե. Արտակարգ յանձնաժողովների վերացումն: Պատասխանատվություն միայն դատարանի առաջ:

Զ. Հայ լեզուի պետական իրաւունքի վերականգնումն և նրա պարտադիր գործածությունը պետական հիմնարկություններում և գործի մէջ:

Է. Հայ բանակի առանձին կազմակերպումն իր ազգային ղեկավարների գլխաւորութեամբ, հայ սպայութեան վերադարձումն հայրենիք և նրա պաշտօնընկալութիւնը հայ բանակում:

Գալով Լեռնահայաստանի առանձնայատուկ վիճակին, ես կը ցանկանայի հետևեալ պայմանների ընդունելութիւնը Խորհրդային Հայաստանի կողմից:

Ա. Լեռնահայաստանը պարփակում է իր մէջ ամբողջ Ձանգեզուրի գաւառը, Լեռնային Ղարաբաղը, Վայոց-Ձորն ու Գողթանը:

Բ. Լեռնահայաստանը իբրև մի վարչական միաւոր և Հայաստանի անբաժան ինքնավար մասը կառավարւում է իր ընտրովի կենդրոնական և տեղական իշխանութիւնների միջոցով ու ենթարկւում է Հայաստանի կենդրոնական կառավարութեանը:

Գ. Լեռնահայաստանը չի զինաթափւում, այլ ստանում է զէնքի ու ռազմամթերքի նոր պաշար Հայաստանի կենդրոնական կառավարութիւնից: Լեռնահայաստանում կարմիր բանակ չի կազմակերպւում, այլ ընդունւում է ժողովրդական ընդհանուր զինման միլիցիօն սիստէմը: Նրա զինուած ուժերը չեն հանւում երկրի սահմաններից: Դրսից ուժեր չեն բերւում Լեռնահայաստան:

Դ. Լեռնահայաստանի գիւղացիութեան սակաւահողութեան պատճառով թուրք փախստականների վերադարձը վերջնականապէս խափանւում է և լքուած գիւղերը յանձնվում են մնացած սակաւահող գիւղացիներին:

Ե. Թուրք քոչւորների խնդիրը յարգւում է Լեռնահայաստանի իշխանութեան կողմից, ըստ որում քոչւորները սար են բարձրանում անզէն:

Որպեսզի Լեռնահայաստանի աշխատաւոր ժողովուրդը հաշտ աչքով նայի սովետական իշխանութեան վրայ, բացի առաջադրածս բոլոր կետերի կիրառումը, ցանկալի է, որ Լեռնահայաստանի սահմաններուն չերևան ու չգործեն այս երկրի աչքուն իրենց այլանդակ գործունեութեամբ արատաւորուած հայ կոմունիստները:

Տէր դառնալ մի երկրի դեռ չի նշանակում յաղթել այդ երկիրը լցնող ժողովրդին և նրա ազատ ապրելու ուժեղ ցանկութիւնը: Ձեր առաջխաղացումը արարատեան զօրամասի ծանօթ քայլից յետոյ կարելի է համարել ամէն ինչ – միայն ոչ ռազմական յաջողութիւն, յաղթութիւն: Դուք գիտէք, որ ցանկութեան դէպքուն ես միշտ էլ հնարաւորութիւն կ'ունենամ մի քանի տասնեակ զինուորներով վերագրաւել Լեռնահայաստանը: Որպեսզի այս երկրի աշխատաւոր գիւղացիութիւնը ստիպուած չլինի մէկ էլ ինձ օգնութեան կանչելու, աշխատէք բաւարարել հայ գիւղացիութեան և նրա մտաւորականութեան այդ արդար պահանջին:

ՀՀ Սպարապետ Զօր. ՆՇՂԵՀ

Ղափանի Հանքեր  
1921 Յունիս 8

Վերոյիշեալ պաշտօնագրէն վերջ Նժդեհ կը յայտարարէ ժողովուրդին, որ ինք ընդմիշտ չի հեռանար Լեռնահայաստանէն, ուր պիտի վերադառնայ, եթէ Երևանի փոխարէն Բագուն ըլլայ Սիւնիքի հողին վրայ ոտք դնողը:

Այնուհետև, իր հետ վերցուցած երկու թնդանօթ և հեծելազօրաց գումարտակ մը, կ'անցնի Արաքսի Պարսկական ափը, սպասելով իր պայմաններու յարգուելուն:

Երբ այդ պայմանները յարգուեցան<sup>1</sup> Նժդեհ իր պարտականութիւնը կատարող զինուորի զոհունակութեամբ՝ այլ Սիւնիքի հպարտ լեռներուն անդիմադրելու կարօտովը զեղուն, դարձուց իր աչքերը դէպի օտար հորիզոններ, համոզուած, որ վերջին երկու տարիներու անհաւասար պայքարները Լեռնահայաստանի քաջարի ժողովուրդին հոգիին մէջ դրած էին ազատ և անկախ ապրելու հօր և անշէջ կրակը:

---

<sup>1</sup> Յունիս 18-ին Նժդեհ կ'ստանար հետևեալ գրութիւնը. «Սիրելի Նժդեհ, Տաճկական վտանգի լուրերը դեռևս չեն հաստատուած, ոչ էլ ատրքէջանական պրետնճգիաները Ձանգեզուրի նկատմամբ»: Ս. Վրացեան:

## XII ԳՈՅԱՄԱՐՏԻՆ ԱՐԺԷՔԸ ԵՒ ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԼԵՈՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԻ ՏԱԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Լեռնահայաստանի տեղի տալու գլխավոր պատճառներ կարելի է նկատել.

Ա. Վրաստանի և Հայաստանի Հանր. կառավարութեանց անկումով Անդրկովկասի մէջ յառաջ եկած քաղաքական նոր գոյավիճակը, որ հոգեբանօրէն կ'ազդէր նոյն երկիրներու ազգաբնակչութեանց տրամադրութիւններուն վրայ:

Բ. Արարատեան 12.000 գաղթականութեան դէպի Սիւնիք նահանջով առաջ եկած բարոյալքիչ և յռի ազդեցութիւնը<sup>1</sup>:

Գ. Նահանջող մտաւորականութեան և երիտասարդութեան վաղաժամ անցքը Պարսկաստան:

Դ. Պարենաւորման սուր անձկութիւնը: Վերջին կռուի օր պահեստներու մէջ հազիւ քսան փութ հացահատիկ կար, իսկ Ղափանի, Տաթևի և Դարապասի Ձորերու մէջ և ոչ մէկ ֆունդ հաց: Շատ տեղեր ժողովուրդը կ'ապրէր բոյսերով և արմտիքով: Հայաստանի կառավարութեան խոստացած նիւթական օժանդակութիւնը մնաց միշտ խոստում ու ժողովուրդը հնարաւորութիւն չունեցաւ ցորեն գնելու:

Ե. Հայկական չէքերու իրական արժէքն իյնալու հետևանքով կառավարութեան կրած վարկի անկումը: Վերջերը գիւղացիութիւնը այլևս չէր ընդուներ հայկական չէքերը, իսկ թուրքերը շատոնց կը մերժէին արդէն անոնց արժէքը:

Զ. Երկուութիւն վարչա-գինուորական գործելակերպի մէջ:

Է. Երեք հազար թաթար ուժերու իբր քոչւոր ազատօրէն Սիսեան մուտքը:

---

<sup>1</sup> «Երևանէն եկող տասը հազարանոց բազմութիւնը, բնականաբար, վատ ազդեց և զանգեզուրցու տրամադրութեան»: Ս. Վրացեան: «Հայրենիք» ամս., էջ 44-45, թիւ 3, 1923:

Ը. Արարատեան հայութիւնը և մասնաւորապէս երկիր մնացած հայ մտաւորականութիւնը Լեռնահայաստանի պատճառով հալածանքներու չենթարկելու ցանկութիւնը, և կարգ մը այլ պատճառներ, որոնց մասին զանց կ'առնենք խօսիլ առայժմ քաղաքական նկատումներով:

\* \* \*

Լեռնահայաստան իր երկու տարուայ կռիւներու ընթացքին ունեցած է ընդամենը 28 սպաննուած և քիչ մը աւելի վիրաւոր:

Թշնամիին կորուստները եղած են. 15.000 սպաննուած, 7.000 գերի, 200-ի չափ գնդացիր, 7 թնդանօթ, 10 հազարի մօտ հրացան, մեծ քանակութեամբ ռազմամթերք, կենդանիներ, դրօշակներ և պատերազմական իրեր:

1919-1921 թշնամի 200-ի հասնող գիւղեր փճացած կամ տեղահանուած են և այդ շրջանները վերադարձուած են իրենց պատմական և բուն տէրերուն – Հայերուն:

Շնորհիւ այդ կռիւներուն կ'ապրի այսօր Ջանգեզուրի և Ղարաբաղի հայութիւնը:

Հերոսական այդ պայքարներու հետևանքով է, որ Սիւնիքը ներկայիս կը կազմէ Հայաստանի անբաժան մասը: Անոնց կը պարտին նոյնպէս իրենց գոյութիւնը՝ մեծագոյն տոկոսը արևելահայ մեր մտաւորականներուն, ինչպէս և 4000-ի մօտ հայ զօրամաս մը իր ղեկավարներով: Եւ աւելին, այդ կռիւներուն վերապահուած է գրաւել փառքի նոր էջեր ժամանակակից հայ ազատագրութեան պատմութեան մէջ:

Նժդեհի ծանրութեան կեդրոնն է այդ պայքարներուն, իսկ իր կեանքի երկու տարիներու դրուագները (1919-1921) անկորչելիօրէն կապուած պիտի մնան Լեռնահայաստանի նորագոյն պատմութեան փառահեղ այդ շրջանին հետ:

### **ԿԱՐԾԻՔՆԵՐ ԵՒ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ**

Լեռնահայաստանի կռիւներուն առթիւ հրատարակուած կամ Ջօրավար Նժդեհի ուղղուած գնահատական բազմաթիւ գրութիւններուն մէկ մասը թուականի կարգով կը զետեղենք այս էջերուն մէջ, ցոյց տալու համար օտար և հայազգի մարմիններու և անձե-

րու կարծիքը՝ իր անձին ու վարած հերոսական պայքարին նկատմամբ:

Ողբացեալ Աշոտի գրութենէն՝ Գեղուածորի արշաւանքի առիթով.

*Գարէ ջան,*

*Քո բախտը կապիր Գողթանի բախտին, Գողթանը՝ ինչպէս և ամբողջ Ղափանն ու Գենուազը, իրենց գոյութեամբ շատ բան են քեզ պարտական: Արա և այս անգամ: Գուցէ մարդիկ քեզ գնահատել չի կարողանան, բայց հաւատայ սիրելիս, որ կան անհատներ, որ իրենց ողջ էութեամբ խոնարհուում են քո հայրենասիրութեան անօրինակ մեծութեան առաջ:*

Բիստ, 3 Ղեկտեմբեր 1919

Գրուած Ղափանի վերագրաւումէն յետոյ.

*Ղափանի հերոսական պայքարը անցեալներում թրքական հրոսակների և այժմ բոլշևիզմի դէմ՝ հայ ժողովրդի պայքարն է բռնակալական ձգտումներով առաջնորդվող չար ոգիների դէմ: Ղափանի հերոսամարտը հայ գիւղացիութեան իտէլական զգացմունքների մարմնացումն է, որի մասին խօսում են Եւրոպական մեծահամբաւ թերթերը: Քսաներորդ դարու Ղաւիթ Բէգի հարազատ ժառանգ մարտատենչ Նժդէհի փառունակ գործն է հայ ժողովրդի մշտատև ոգևորութեան անսպառ աղբիւրը:*

Պարլամենդի անդամ ԳԵՐԱՍԻՍ ՔԵԱԼԱՇԵԱՆ

Քէշիշքէնդ, 2 Սեպտեմբեր 1920

*Սիրելի Նժդէհ,*

*Այսօր ցնծում է ամբողջ Թաւրիզը Սեդրու և Ղափանի յաջողութեան լուրերից: Ղափանի վերագրաւումը և ձեռք բերած գինամթերքի և աւարի լուրը ուղղակի յուզեց մեզ բոլորիս: Ամենուրեք, ամենքի բերանում հողովում է Նժդէհ անունը: Մեր սիրտը պայթում է, որ այդ պատմական թուպներուն քո կողքին չենք...*

Գ. ՏԵՐ ՄԻՆԱՍԵԱՆ

Թաւրիզ, 16 հոկտեմբեր 1920

*Թանկագին Նժդեհ,*

*Մեր ընկերական ջերմագին ողջոյնի հետ միասին ուղարկում ենք քեզ և քո զինակիցների մեր անխառն հիացմունքը այն անձնւէր և տոկուն պայքարի համար, որ ամիսներից ի վեր, ամենատաժանելի պայմաններում, մեծ արիութեամբ տանում էք՝ փառքի աննախընթաց դափնիներով զարդարելով հերոսական ժողովրդի, հայ զինուորի և հայ դէկավարի ճակատը: Ձեր յամառ կռիւը, ձեր փառաւոր յաղթանակները շարունակում են յոյսի և ոգևորութեան աղբիւր դառնալ բոլոր լքուածների, բոլոր թերահաւատների համար, այն բոլոր վայրերում, ուր որ հասնում են ձեր հերոսամարտի ձայները: Իսկապէս գիտակցում ենք այն ծառայութիւնը, որ մատուցում էք մեր վերածնող հայրենիքին, պահպանելով նրա անկապտելի իրաւունքները իր երկաթ դարպասների վրայ: Ցաւում ենք, որ մեր օժանդակութիւնը միայն բարոյական նշանակութիւն ունի, և շնորհիւ տիրող պայմանների՝ ցանկալի չափով չենք կարողացած օգնել ձեր վարած պատմական նշանակութիւն ունեցող մեծ գործին: Համբուրում ենք քեզ և քո հաւատարիմ զինակիցներին:*

Հ.Յ.Դ. Ատրպատականի Կ. Կոմիտ

1920 Հոկտեմբեր 22

Թաւրիզի երիտասարդ դաշնակցականները կը գրեն.

*«Ձենք կարող չիիանալ ձեր այդ փառաւոր գործունէութեան առթիւ, որ փառքով ու պարծանքով պիտի պսակի Արևիքի արիւնոտ ու ողբերգական պատմութիւնը... Հայ աշխատաւորութեան դարաւոր և արդարացի ընդվզումն էր հոկտեմբերեան (10-ին) գոյամարտը, որը յանձին ձեզ ըմբոստացաւ «կարմիր» բանակների դէմ: Եւ մենք, Թաւրիզի մի խումբ պատանի և երիտասարդ դաշնակցականներս, մեծ հաճոյքով ու սրտի անկեղծ զգացումով ենք արձանագրում այդ փաստը և ձեր անունը այն գեղեցիկ ու վառ գիտակցութեամբ, որ գոյամարտը մեր կուսակցութիւնն է իր ուսերի վրայ առել և որ մեր կուսակցութիւնն է տալիս ձեզ նման հաւատարիմ, անկեղծ և քաջարի մարտիկը»:*

27 հոկտեմբեր 1921



Ի պատասխան Նժդեհի 1 Հոկտեմբեր 1920 թուակիր գրութեան Հ. Յ. Գ. Բիւրօն կը գրէ.

*...«Ինչպէս տեսնում էք՝ ստեղծուած այս կացութեան մէջ, կառավարութիւնը անկարող է որևէ զգալի օգնութիւն հասցնել ձեզ գիտակցելով անգամ վարած հերոսական պայքարի պատմական նշանակութիւնը՝ մեր պետութեան կազմակերպման համար: Այս բոլորը նկատի ունենալով Բիւրօն մանրամասն քննութեան առաւ ձեր վիճակը և ձեր առաջարկած բոլոր հարցերը և եկաւ հետևեալ եզրակացութեան. Ա. Ձեր շարժումը համարել խիստ կարևոր և անհարժեշտ և մեզ համար բացարձակապէս օգտակար, Բ. Ելնելով այս տեսակէտից և նկատի ունենալով մեր կացութիւնը, Ձանգեզուրի ամբողջ գործի ղեկավարութիւնը թողնել ձեզ՝ թէ զինուորական և թէ քաղաքացիական: Բոլոր այն անձնաւորութիւնները զինուորական թէ քաղաքացիական գործի համար, որ կ'ուղարկուին Բիւրօսի կողմից ձեզ օգնութեան, կը լինեն ձեր տրամադրութեան տակ և դուք էք, որ նրանց պիտի տաք այս կամ այն պաշտօնը: Ձեր և Բիւրօսի մէջ կապ պահելու համար Քէշիշքէնդում նշանակում ենք ընկ. Ե. Ի.<sup>1</sup>-ն և խնդրում ենք միայն նրա միջոցաւ կապ պահել Բիւրօսի հետ: Ձեր տրամադրութեան տակ են նաև Սիսեան ուղարկուած ուժերը: Վստահ Ձեր և ձեր ընկերներու անձնագոհութեան և շրջանիդ քաջարի ժողովրդի անձնագոհութեան ու հայրենասէր ոգիին, յոյս ունինք, որ ոչ մի թոպէ չպիտի վարանիք շարունակելու սրբազան կռիւը մեր դարաւոր թշնամիին դէմ»:*

Լաւագոյն մաղթանքներով  
Հ. Յ. Գ. Բիւրօսի հերթապահ Ս. ԱՐԱՐԱՏԵԱՆ  
քարտուղար Յ. ՏԵՎԷՃԵԱՆ

1920, 3 Նոյեմբեր

Իր զինակիցներու ցաւակցական գրութիւնը ձիւ արկածի մը առթիւ.

*Սիրելի Սպարապետ,*

---

<sup>1</sup> Եղիշե Իշխանյան: Խմբ.:

*Սրտի անհուն կսկիծով լսեցինք ձեզ հետ պատահած դժբախտութեան մասին: Այնչափ ուրախ ենք, որ մեր սիրելի Սպարապետը այս պատահական փորձանքից էլ ազատուեց անփորձ:*

*Հաւատում ենք, որ սա երրորդ և վերջին պատահարն է, որ լինում է ձեզ հետ և դուք այսուհետև անփորձ ու անյաղթ կը լինեք, որովհետև ձեզի համար աղօթում է համայն Ձանգեզուրի ժողովուրդը և մենք՝ ձեր զինակիցները:*

*Ձեզ են յառած բոլորի աչքերը և Ձեզնից է սպասում Սիւնիքը վերջնական փրկութիւնը: Ուղարկում ենք մեր ջերմ բարեմաղթութիւնները և խնդրում նախախնամութիւնից ձեզ երկար ու անփորձ կեանք:*

*Ձեր առողջութեան մասին հաւաստիանալու համար ուղարկում ենք փոխ-սպայ Արշակ Տորոդեանին:*

Գլխապետ Նարինեան, տեղակալ Տէր-Պետրոսեան, զին. աստիճան. Լ. Ալեքսանեան, միլիցիապետ Ա. Պարոնեան, փոխ-գլխ. Ամիրջանեան, Գերասիմ

Գորիս, 12 Փետրվար 1921

Վայոց-Ձորի առաջին գրաւումէն յետոյ Լեռնահայաստանի սպարապետութեան սպայակոյտի պետ Նարինեանի շնորհաւորականը.

*Ինքնավար Սիւնիքի, Գողթանի և Վայոց Ձորի Սպարապետ Նժդեհին,*

*Անսահման ուրախութիւն պատճառեց մեզ Հայաստանի վերագրաւումը: Ողջունելով ապաքինուած Մայր Հայաստանի ազատագրումը՝ հաւատում ենք, որ մօտ ապագայում կ'իրականան ձեր փափաքած իղձերը լիովին:*

*Քսաներորդ դարում կարծես պիտ հնչէր մեր տարաբախտ Հայրենիքի կարապի երգը, սակայն այս անգամ էլ դուք եղաք նրա վերածննդի ռահվիրան, ինչպէս Գարիբալդիին Իտալիոյի համար:*

Գլխապետ ՆԱՐԻՆԵԱՆ  
Զին. աստիճ. Լ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

1920 Փետրուար 18

Միևնոյն դէպքերու առիթով Հ. Օհանջանեան կը գրէր.

*Սիրելի Նժդէհ,*

*Այն, ինչ որ ես գիտեմ և ես եմ տեսել մինչև Մայիսի 16-ը, ինձ ոչ մի առիթ չի տալիս փոխելու իմ հիացմունքի վերաբերմունքը դէպի այն գործը, որ դու կատարել ես Զանգեզուրում վերջի երկու տարուայ ընթացքում և նոյն իսկ վերջին դէպքերի ժամանակ, երբ մայր Հայաստանի մտաւորականութիւնը և զինուորականութիւնը քո ստեղծած դրութեան շնորհիւ կարողացաւ ազատել իսպառ բնաջինջ լինելու վտանգից:*

ՀԱՍՕ ՕՐԱՆՁԱՆԵԱՆ

Թեհրան, 12 Դեկտեմբեր 1921

Պարսկաստան մասնաւոր հետաքրքրութեամբ հետևած է Լեռնահայաստանի շարժումներու, որուն յաղթականները նկատած է իրեն համար օգտակար՝ հետևապէս և իրը, ու տրամադրուած բարեկամական զգացումներով.

*«Սպարապետ Նժդէհին,*

*Յույսով եմ Աստուծոյ և ձեր շնորհիւ, որ շարունակ յաղթութիւնը մերն է լինելու, միայն խնդրում եմ Ձեր Բարձրութիւնից Հօդիի հասարակութիւնը (թուրք) իրենց գիւղից փախցնէք: Նրանք վտանգաւոր են շարունակ: Որպէսզի Կարմիրներից մենք և դուք այդ ուղղութեամբ ազատ և ապահով լինինք՝ պէտք է այդ հասարակութիւնը ցրել այդ տեղից:*

*Ես մեծ յոյս ունիմ Ձեր մեծութեան վրայ, շնորհիւ ձեզ ինձ վրայ եկած Կարմիրներին պատրաստ եմ քարոզելու ուժերս ներածին չափ: Ուխտս ուխտ է, ձեզ հետ պատրաստ եմ կռուելու և մեռնելու»:*

ՂԱՀՐԱՄԱՆ ԽԱՆ

5 Մայիս 1921

*Ն. Գերազանցութիւն Յարգելի բարեկամ Նժդէհին,*

*Շնորհիդ և բախտդ մեծ,*

*Քանի որ Մոհթամիտ Սուլթան Մուքալիմ խան Սահրանկը և Թաղի խանը ճանապարհուում էին, հարկաւոր համարեցի երկտողովս ձեզ նեղութիւն պատճառել:*

*Յոյս առ Աստուած, որ Ձերդ Գերագանցութեան տրամադրութիւնը լաւ լինի և տկարութիւն չունենայ:*

*Յատկապէս Մութալիմ խանին և Թաղի խանին անձամբ պատուիրած են հարկաւորելուց ցորեն և ուրիշ պիտոյքներ, իմ բարեկամ հայերի համար չի մերժի, և ամենայն կերպ ու ամենայն դէպքում, այն ինչ որ հարկաւոր է հայերին, որ նորանք ապահով և հանգիստ լինին, ձեռք բերել ու հասցնել: Աւելի լաւ է ինչ ժամանակ պահանջներ ունենաք՝ իմ ներկայացուցիչներից պահանջէք, անմիջապէս կը կատարուի:*

*Էլ սրանից աւելի նեղութիւն չունիմ ձեզ տալու:*

Յարգանքներով  
ՍԱՍ ԶԱԶԻ ԱԼԻԼՈՒ

7 Մայիս 1921

Փափաքելով Լեռնահայաստանի վաւերական պատմութիւնը հրատարակել՝ Ա. Ղազարեան կը դիմէ Նժդեհին.

*«Սիրելի Նժդեհ,*

*Ես չստացայ մինչև օրս նիւթերը, լաւ կը լինի Լեռնահայաստանի հերոսամարտի տոքումէնտները և քո մասին տեղեկութիւններ որքան կարելի է շուտ և լրիւ ուղարկես: Թաւրիզում կ'ուզենայի Լեռնահայաստանի գոյամարտի պատկերը լրիւ և տոքումէնտալ կերպով տալ: Դու հերոսի անուն ես իրաւամբ վայելում»:*

ԱՐՇԱԿ ՂԱԶԱՐԵԱՆ

Թաւրիզ, 10 Մայիս 1921

Պարսիկ բանւորական կուսակցութեան պարագլուխի մը կարծիքը՝ Նժդեհի սպաներէն Մ. Օհանջանեանի ուղղուած.

*Յարգելի գնդապետ Մ. Սելիք-Օհանջանեան,*

*Յաջողեցիր պարսիկ բանւորական կուսակցութեան շէֆի կարծիքն իմանալ Նժդեհի մասին: Նա պարզ և որոշ ասաց. Նժդեհը թող գայ Թաւրիզ, ես իմ մի տունը յատկացնում եմ իր բոլոր յարմարութիւններով նրան և նրա 20-30 թիկնապահներին: Գնարաւորութիւն ունիմ ամբողջին էի իմ ծախքով պահել և դա ինձ համար մեծ պատիւ կի լինի, որ այդպիսի հերոսը կը լինի իմ ցանկալի*

հիւրը: Եւ եթէ որևէ երկիւղ լինի, ինքս էլ 20-30 զինուած մարդիկ կը  
դնեն պահպանելու:

Յարգանքներով՝  
ԻՍԱՀԱԿ

Թաւրիզ, 23 Յուլիս 1921

Համակրանքի և գնահատութեան այդ գրութիւնները կը  
շարունակուին նոյնիսկ Նժդէի Լեռնահայաստանէն հեռանալէ  
ետք: Հ. Յ. Դ. Ուսանողական Անդրկովկասի Բիւրօն կը գրէ կուսակ-  
ցական իր գերագոյն մարմնին – պատճենը՝ Ջօր. Նժդէիին.

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՕԻՆ  
Պատճենը՝ Նժդէիին

*«Դաշնակցական երիտասարդ սերունդը չի կարող չգնահա-  
տել արժէքն այն ծանր պայքարի, որ վարել է Նժդէիը, նաև յեղա-  
փոխական այն գործը, որ կատարել է նա՝ Հայաստանի անկախ-  
ութեան գաղափարը դրոշմելով մի ամբողջ և թարմ լեռնաժո-  
ղովրդի հոգում: Նժդէիի հետ է մեր բովանդակ համակրանքը և երբ  
հարկ լինի՝ նրա հետ կը լինի նաև մեր յեղափոխական խիղճն ու  
կամքը»:*

Հ.Յ.Դ. Ուսանողներու Անդրկովկասի Բիւրօի կողմից՝  
Հ. ԱՍԱՏՐԵԱՆ

Թաւրիզ, 1921 Հոկտեմբեր

Այդ է համոզումը նաև մտաւորականներու և երէց ընկեր-  
ներու.

*Գնահատում ենք ընկեր Նժդէիի երկու տարուայ յեղափոխա-  
կան շիտակ ու աննկուն պայքարը յանուն մեր պետական, ազգա-  
յին-քաղաքական դաշտին, մի պայքար՝ համակուած կուսակցա-  
կան աւանդական էնտուզիազմով, հարուստ հերոսական ընդվզ-  
ումներով՝ համարեայ եզակի վերջին տարիների մեր պատմու-  
թեան մէջ:*

Աւետիք Սահակեան, Միրզաեան, Դ. Քոչարեան, Մեսրոբ Ս.  
Յարութիւնեան, Արշալիր Գ. Հացագործեան, Ն. Պառեան,  
Գ. Մելիք-Քարամեան, Լ. Նաւասարդեան, Գ. Գաբրիէլեան,

Ա. Պահլաւունի, Ե. Ս. Պետրոսեան, Վ. Գ. Խանամիրեան,  
Մելիք Վարդանեան, Աղաբէգեան, Վ. Գովեան, Ս. Տէր-Թովմասեան,  
Վ. Արծրունի, Խնգօ, Թ. Թադէոսեան

Թաւրիզ, 30 Հոկտեմբեր 1921

*Ամբողջ հոգով ողջունում եմ քո արծիւների գալուստը Արարատեան Հայաստանի սահմանները: Մեծ յոյսեր ունիմ, որ ձեր գալուստը պիտի ոգևորէ և քաջալերէ և այստեղի ուժերին... Ձեր կողմի նշեցրի և մասնաւորապէս քո արծիւների ներկայութիւնը, մեծ մորալ ազդեցութիւնը շատ հարկաւոր է մեր այս ֆրոնտի յաջողութեան համար:*

Հ. ՕՅԱՆՁԱՆԵԱՆ

10 Մարտ 1921

Լեռնահայաստանի հերոսական կռիւներու համառօտ իր մէկ հրատարակութեան՝ «Արմուտ Գիրք»-ի հետ, հեղինակը Ասլան Շահնազարեան, հետևեալ խանդավառ ուղերձը կ'ուղղէ իր պատմութեան հերոսին.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ԶՕՐԱՎԱՐ ՆԺԴԵՀԻՆ

*Սիրելի Ապարապետ,*

*Մեր Հանրապետութեան ինտելիգենցիայի և քաղաքական գործիչների տարագրումից, Ռուսաստանի և Անդրկովկասի հայ գրական ուժերի վտարանդի վիճակի ենթարկելուց և լեզուները փակի տակ դնելուց յետոյ միակ վայրը, ուր դեռ եռում է հայ կեանքը, ուր գրիչն ազատ կարող է շարժուել մեր վշտի ու ուրախութեան շուրջը և որից ապագայում գրականութեան և պատմութեան ուշագրաւ էջերը պիտի հիւսւին՝ դա Լեռնահայաստանն է, ուր շնորհիւ ձեր հեռատես գործունէութեան, տեղական ժողովուրդի միահամուռ կամքի և դէպի ձեզ տածած անհուն սիրոյ, կարողացաք խորը կերպով ըմբռնել հայ գիւղացի ժողովուրդի հոգեբանութիւնն ու ձգտումները և նրանց մարմնացնել կեանքի մէջ: Անշուշտ պատմութիւնը, հերոսական և անձնագրհոութեամբ այնքան աղքատ մեր վերջին շրջանի պատմութիւնը, իւր փառաւոր էջերը*

կը նուիրէ 20-րդ դարու առաջին քառորդի այդ, կարծէք, դիւցազն-ական շրջանին և իւր արժանավայել տեղը կը յատկացնէ: Ներկայումս, քանի որ հայի քաղաքական և հասարակական կեանքը տեղափոխուել է ձեր ջանքերի շնորհիւ ստեղծուած Լեռնահայաստան, որտեղից ապագայում իւր նիւթը պիտի քաղէ հայ գրագէտը, պատմաբանը և բանաստեղծը, անհրաժեշտ է, քանի դեռ ուշ չէ, բոլոր աչքի ընկնող երևոյթները գրի առնել և թողնել յիշատակ գալոց սերնդի...

Այս երկտողով ձեզ եմ նուէր բերում, սիրելի սպարապետ, ձեր անխոնջ և անշահասէր գործունէութեան պատմական յիշատակարան «Արնոտ Գիրք»-ը:

Միշտ Ձեզ սիրող  
ԱՍԼԱՆ

Գորիս, 1921, Դեկտեմբեր 21

Գ. Նայիրեան «Խուստուպեան Կանչեր»-ու յառաջաբանին մէջ խօսելով Նժդեհի կատարած գործին նշանակութեան մասին՝ կ'անդրադառնայ ի մէջ այլոց կռուի հասարակական արժէքին վրայ.

«Այն բոլոր կռիւները, որոնք բռնկել են մեր Լեռնաշխարհում, նոքա մղուել են յանուն աշխատանքի պաշտպանութեան, վասնզի ասպատական էին հիւսիսն ու հարաւը, մեր երկիրը և հայ շինականը հնար չունէր խոփի մօտ քրտնելու, ապա նա քրտնում էր լեռներում, հրացանի տակ:

Նժդեհը ոչ միայն հմուտ ռազմավար է, այլ նաև ժողովրդատէր և ժողովրդավար, որի համար կռիւը ամենից առաջ և ամենից յետոյ մեր ժողովրդի ստեղծած բարոյական արժէքների ինքնապաշտպանութիւն է»:

«Խուստուպեան կանչեր» (Յառաջաբան)  
Գ. Նայիրեան

Գորիս, 1921

Տողեր՝ գրուած Սիւնիքի վերջին դէպքերու առիթով.

Նժդեհը ոչ միայն տաղանդաւոր կռուող է ու դէկավար, նա անզուգական է նաև որպէս կազմակերպող:

Ազատ Սիւնիք, էջ 38, 1921, Գորիս

Լեռնահայաստանի հերոսամարտին ու Զօրավար Նժդեհի պատմական ձեռնարկին նուիրուած այս էջերը կը գոցենք այն բարձր գնահատականով, զոր ըրաւ Զ.Յ. Դաշնակցութեան Արտասահմանեան Մարմիններու արտակարգ ժողովը վերջերս, ընդունելով որ.

«Զանգեզուրի ապստամբական շարժումները և անոնց շարունակութիւնը ունեցած են արտակարգ նշանակութիւն.

Ա. Մեծամասնականներ զգաստացնելու, անոնց բռնութեանց եռանդը չափաւորելու,

Բ. Փետրուարեան յեղափոխութենէն յետոյ նահանջող ընկերներու, բանակի ու գաղթականութեան թիկունքը ապահովելու և անոնց Պարսկաստան անցնելը դիւրացնելու,

Գ. Զանգեզուրի ամբողջ գաւառը Զայաստանի Զանրապետութեան միացնելու,

Դ. Աշխարհի մէջ մեր հարցի քաղաքական դիրքը ամրացնելու տեսակէտէն»:



## ՑԱՆԿ

|   |     |
|---|-----|
| ՅԱՌԱՋԱԲԱՆ .....                           | 5   |
| Տարերային շարժումներ .....                | 12  |
| Կրաւորական շրջան .....                    | 19  |
| Կռիւներու շրջան .....                     | 26  |
| Ղարաբաղի դէպքերը .....                    | 45  |
| Ապստամբ Կապարգողթ .....                   | 56  |
| Գեմուազ մինակ բայց... ..                  | 64  |
| Ղափանի վերագրավումը .....                 | 69  |
| Մեծ կռիւներու շրջան .....                 | 83  |
| Ինքնավար Սիւնիք .....                     | 110 |
| Վայոց Ձորի Ա. գրաւումը .....              | 128 |
| Տաթևի Բ. համագումարը .....                | 142 |
| Գոյամարտին արժէքը և գնահատութիւններ ..... | 157 |